ՀԱՐՑԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԻՆ

ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ

ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՀԱՐՑԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԻՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ «ՆՈՅ»
2013

ԵՐԱՆԻ ՈՐ ՈՒՆԻՑԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՆ

ՍՈՅՆ ԳԻՐՔԸ ՆՈՒԻՐՈՒՄ ԵՄ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ՁԻՆՈՒՈՐԵԱԼ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԲՈԼՈՐ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐԻ ԱՆՄՈՌԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ, ՈՐՈՆՔ ԱՆՍԱՍԱՆ ՊԱՀԵՑԻՆ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ

Գրքի հրատարակութիւնը կարելի եղաւ մեկենասութեամբ
Տէր եւ Տիկին Արգար եւ Ալիս Զաքարեանների,
Տէր եւ Տիկին Լեւոն եւ Անուշ Երիցեանների

Սոյն գրքի նպատակն է օգնել նրանց, ովքեր իրենց առաջին քայլերն են անում հաւատքի մէջ եւ նրանց, ովքեր հետաքրքրուած են Հայ Առաքելական Եկեղեցւոյ ուսմունքով:

E-mail: fr.ghevond@gmail.com
FB - Ghevond Vardapet
Tw. - @GhevondVardapet

© Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան

ՍՈՒՐԲ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՎԱՆՔ

ՆԱԽԱԲԱՆ

Գրքի յղացումը սկսեց եօթ տարի առաջ, երբ հայկական ռուսալեզու **www.hayastan.com** կայքում թեմա բացեցի, «*Հարցեր Հոգևորականին*» վերնագրով: Այդ ժամանակ մտադիր էլ չէի գիրք գրելու: Շատ չանցած, մեր հայորդիների խնդրանքով, նման թեմա բացեցի նաեւ այլ հայկական կայքերում: Հարցերը շատ էին եւ բազմաբնոյթ: Դա բնական էր, որովհետեւ յետ Խորհրդային շրջանում, երբ յառաջացած էր հոգեւոր գիտելիքների պակաս, հայերի մօտ առաջ եկան յուզող շատ հարցեր կապուած քրիստոնէութեան եւ Հայ Եկեղեցւոյ հետ: Իրենց հետքաքրքրում էր, թէ ի՞նչ է հաւատքը, հոգին, մեղքը, առաքինութիւնը, դրախտը, դժոխքը, ինչպէս նաեւ՝ թէ ի՞նչ տարբերութիւններ գոյութիւն ունեն Հայ Եկեղեցւոյ եւ այլ Եկեղեցիների միջեւ:

Նշեմ, որ հարցնողների հիմնական մասը ռուսաբնակ հայերն էին, որոնք հայերէն չգիտէին (եւ սա էր պատճառը, որ գիրքը գրուեց ռուսերէն լեզուով):

Այնտեղ ակնյայտ էր, որ նրանք փնտռում էին եւ ծարաւ էին գտնելու իրենց հոգեւոր եւ ազգային գիտակցութիւնը: Դա երեւում էր նրանից, որ շատերը, որոնք մկրտուել էին Ռուս Եկեղեցում, ցանկացան վերադառնալ իրենց ակունքներին: Շատերի մօտ արթնացաւ հայերէն սովորելու փափաքը, որպէսզի Սուրբ Գիրքը հայերէնով կարդան եւ Աստուծոյ հետ հայերէնով խօսէին...

2009ի վերջում որոշեցի կայքերից հաւաքել այդ հարց ու պատասխանները եւ վերածել գրքի, եւ աւելի մատչելի դարձնելու համար բաժանեցի թեմաների: Փորձեցի ամբողջացնել, ստեղծելով նոր հարցեր եւ պատասխաններ:

Իր կառուցուածքով գիրքը նման է Սուրբ Գրիգոր Տաթեւացիի «Գիրք Հարցմանց» աշխատութեանը, ինչպէս որ եւ անուանել էի սոյն գրքի ռուսերէն հրատարակութիւնը՝ «Книга Вопрошений»: Այստեղ ուզում եմ արտայայտուել, որ Սուրբ Գրիգոր Տաթեւացին միշտ եղած է իմ առաջնորդը հոգեւոր կեանքիս մէջ եւ որոշ հարցերի պատասխանները տուել եմ, օգտուելով իր գրքերից:

Ռուսերէն լեզուով գիրքը լոյս տեսաւ Երուսաղէմում 2011ին: Մինչայդ պահանջք եղաւ հայերէնով հրատարակել եւ միաժամանակ հաւատացեալների կողմից առաջարկ՝ թարգմա-

նելու: Թարգմանութեան դժուար գործը յանձն առին Երեւանաբընակ Մարի Կարապետեանը եւ Նարինէ Աղաբեկեանը:

Կարեւոր նկատեցի հայերէն թարգմանութիւնը հրատարակել դասական ուղղագրութեամբ, որ սիրով իր վրայ առաւ Սաղիմաբնակ Տիկին Արփինէ Նագգաշեանը եւ վերջնական սրբագրութիւնը դարձեալ Սաղիմաբնակ Պարոն Նազարէթ Չափարեանը: Իսկ հրատարակման ծախսը՝ Սաղիմաբնակ Քաղաքացի Տէր եւ Տիկին Աբգար Ալիս Ջաքարեանները եւ Մոսկուաբնակ Տէր եւ Տիկին Լեւոն Անուշ Երիցեանները:

Դասական ուղղագրութեամբ հրատարակելու նպատակը այն է, որ սփիւռքահայ ընթերցողի համար դիւրընթեռնելի ըլլայ, իսկ հայրենաբնակ մեր ընթերցողի համար փեղադրեցի դասական լեզուի ուղղագրութեան օրէնքները:

Անկեղծ շնորհակալութիւն եմ յայտնում բոլոր նրանց, որոնք՝ իրենց հարցերով, աղոթքներով եւ այլ ձեւերով սատար կանգնեցին գրքիս հրատարակմանը:

Սիրով եւ լաւագոյն մաղթանք՝
Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան
Սբ. Հրեշտակապետաց Վանք
Երուսաղէմ, 2013

ՕԳՆԵԱ՛ ՀՈԳԻԴ ՍՈՒՐԲ
ԱՍՑՈՒԱԾ ԾՇՄԱՐԻՑ:
ԵՒ ՀԱՍՈ՛ ԶԸՍԿՍԵԱԼՆ ՄԵՐ ՅԱՒԱՐՑ:
ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՄԲ ՍՐԲՈՒՀՒՈՅ
ԱՍՑՈՒԱԾԱԾՆԻՆ ԵՒ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ
ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ո՞ՐՆ Է ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐԸ

Քրիստոնէական դաւանութեան աղբիւրը Աստուածային Յայտնութիւնն է:

Ի՞նչ ենք հասկանում «Աստուածային Յայտնութիւն» ասելով

Աստուածային Յայտնութիւնն այն է, ինչ Աստուած Ինքը կամեցաւ բացայայտել մարդկանց, որպէսզի նրանք կարողանան հաւատալ Իրեն ճշմարիտ եւ փրկչական հաւատով եւ մեծարեն Իրեն ըստ արժանւոյն:

Ամէնքի՞ն է արդեօք տրուած եղել Աստուածային Յայտնութիւնը

Աստուած անհրաժեշտ փրկչական յայտնութիւնը տուել է բոլորին, բայց քանի որ ոչ բոլորը կարող են անմիջականօրէն ընդունել յայտնութիւնն Աստծուց, ապա Նա ընտրել է յատուկ պատգամաբերների, ովքեր Աստուածային Յայտնութիւնը փոխանցել են այն ընդունել կամեցողներին:

Ինչո՞ւ ոչ բոլորն են ի վիճակի ընդունելու յայտնութիւնն Աստծուց

Ոչ բոլոր մարդիկ են ի վիճակի անմիջականօրէն ընդունելու յայտնութիւնն Աստծուց իրենց մեղսական անմաքրութեան եւ հոգու ու մարմնի տկարութեան պատճառով:

Ովքե՞ր էին Աստուածային Յայտնութեան պատգամաբերները

Աստուածային Յայտնութեան պատգամաբերներն էին Ադամը, Նոյը, Աբրահամը, Մովսէսը եւ այլ Մարգարէներ: Նրանք ընդունել եւ քարոզել են Աստուածային Յայտնութեան հիմունքները, սակայն լիովին եւ կատարելապէս

Աստուածային Յայտնութիւնը երկիր բերեց մարմնացած Աստուծոյ Որդին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսը, եւ այն աշխարհով մէկ տարածեց Իր աշակերտների եւ Առաքեալների միջոցով:

Պօղոս առաքեալն ասում է. «*Աստուած բազմապիսի ձևերով և այլազան օրինակներով խօսեց մեր հայրերի հետ մարգարէների միջոցով. այս վերջին օրերին մեզ հետ խօսեց իր Որդու միջոցով, որին ժառանգ նշանակեց ամէն ինչի, և որի միջոցով ստեղծեց տիեզերքը*» /Եբր. 1:1-2/: «*...այլ քարոզում ենք Աստուծոյ խորհրդաւոր, թաքուն իմաստութիւնը, որը ծածկուած է մարդկանցից և որն Աստուած սահմանել էր մեր փառքի համար նախքան յաւիտեանները. և այս աշխարհի իշխաններից ոչ մէկը չճանաչեց այն. որովհետև, եթէ ճանաչուած լինէր, արդար փառքի Տիրոջը չէին խաչի... Բայց Աստուած մեզ յայտնեց այն իր Հոգով. որովհետև Հոգին քննում է ամէն ինչ, նոյնիսկ՝ Աստուծոյ խորունկ ծրագրերը*» /Ա Կորնթ. 2:7-8,10/:

Յովհաննէս Աւետարանիչը գրում է. «*Աստծուն ոչ ոք երբէք չի տեսել, բացի միայն միածին Որդուց, որ Հօր ծոցում է. նա՛ յայտնեց Նրան*» /Յովհ. 1:18/:

Ինքը Յիսուս Քրիստոս ասում է. «*Ամենայն ինչ տրուեց ինձ իմ Հօրից. և ոչ ոք չի ճանաչում Հօրը, եթէ ոչ՝ Որդին, և նա, ում Որդին ուզենայ յայտնել*» /Մատթ. 11:27/:

Ինչպէ՞ս է պահպանւում եւ տարածւում Աստուածային Յայտնութիւնը

Աստուածային Յայտնութիւնը տարածւում է մարդկանց մէջ եւ պահպանւում Եկեղեցում երկու կերպ՝ Սրբազան Աւանդութեան եւ Սուրբ Գրքի միջոցով:

Ի՞նչն ենք մենք անուանում «Սրբազան Աւանդութիւն»

Սրբազան Աւանդութիւն ասելով՝ հասկանում ենք այն, ինչը ճշմարիտ հաւատացեալները եւ աստուածապաշտ մարդիկ ու նախնիները խօսքով եւ օրինակով փոխանցում են մէկմէկու եւ իրենց սերունդներին՝ հաւատքի ուսմունքը, Աստուծոյ օրէնքը, Խորհուրդները եւ սրբազան ծէսերը:

Որտե՞ղ է պահպանում Սրբազան Աւանդութիւնը

Բոլոր ճշմարիտ հաւատացեալները՝ միաւորուած Սրբազան Աւանդութեամբ, Աստուծոյ նախասահմանմամբ՝ յաջորդաբար եւ միասնաբար, կազմում են Եկեղեցին, որը եւ Սրբազան Աւանդութեան պահապանն է, կամ, Պօղոս Առաքեալի ձեւակերպմամբ՝ «*Իսկ եթէ ուշանամ, դու կ'իմանաս, թէ ինչպէս պէտք է վարուես Աստուծոյ տան մէջ, որ կենդանի Աստուծոյ եկեղեցին է՝ սիւն և հաստատութիւն ճշմարտութեան*» /Ա Տիմ. 3:15/:

Ի՞նչն ենք մենք անուանում Սուրբ Գիրք

Սուրբ Գիրք են կոչւում Աստծուց սրբուած մարդկանց՝ Մարգարէների եւ Առաքեալների միջոցով, Սուրբ Հոգով գրուած գրքերը: Սովորաբար այս գրքերն անուանում են «Բիբլիա»: «*...քանի որ մարգարէութիւնը ոչ թէ ըստ մարդկանց կամքի տրուեց երբեւէ, այլ Սուրբ Հոգուց մղուած է, որ խօսեցին Աստուծոյ սուրբ մարդիկ*» /Բ Պետրոս 1:21/:

Ի՞նչ է նշանակում «Բիբլիա» բառը

«Բիբլիա» բառը յունարէնից թարգմանաբար նշանակում է գրքեր: Այս անուանումը վկայում է այն մասին, որ սրբազան գրքերն այլ գրքերի համեմատ արժանի են յատուկ ուշադրութեան: «Բիբլիան» հայերէն կոչւում է Աստուածաշունչ՝ Աստուծոյ շունչ: «*Աստուծոյ շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու և արդարութեան մէջ խրատելու համար*» /Բ Տիմ. 3:16/:

Որն է աւելի հին՝ Սրբազան Աւանդութի՞ւնը, թէ՞ Սուրբ Գիրքը

Աստուածային Յայտնութեան տարածման հնագոյն եւ նախասկիզբ միջոցը Սրբազան Աւանդութիւնն է: Ադամից մինչեւ Մովսէս՝ սրբազան գրքեր չեն եղել: Ինքը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, Իր Աստուածային ուսմունքն ու կարգերն Իր աշակերտներին փոխանցեց խօսքով եւ օրինակով, այլ ոչ՝ գրքով: Նոյն կերպ եւ Առաքեալներն էին սկզբ-

բում փարածում հաւատքն ու հաստատում Քրիստոսի Եկեղեցին: Ամէն ոք չէ, որ կարող է օգտուել գրքերից, իսկ աւանդութիւնից կարող են օգտուել բոլորը (ա՛յս է նաեւ Սրբազան Աւանդութեան անհրաժեշտութեան պատճառը):

Ինչի՞ համար է գրուած Սուրբ Գիրքը

Սուրբ Գիրքը գրուած է նրա համար, որ Աստուածային Յայտնութիւնը պահպանուի առաւել ճշգրտութեամբ եւ անխաթարութեամբ: Սուրբ Գրքում մենք Մարգարէների ու Առաքեալների խօսքերը կարդում ենք ճիշտ այնպէս, ասես մենք ինքներս նրանց հետ ապրել ենք եւ լսել նրանց՝ թէեւ սրբազան գրքերը գրուած են մեզնից դարեր կամ հազարամեակներ առաջ:

Հա՞րկ է արդեօք հետեւել Սրբազան Աւանդութեանը, եթէ կայ Սուրբ Գիրքը

Մենք պարտաւոր ենք հետեւել Սրբազան Աւանդութեանը, որ համահունչ է Աստուածային Յայտնութեանը եւ Սուրբ Գրքին, ինչպէս այդ ուսուցանում է Սուրբ Գիրքն ինքը: Պօղոս Առաքեալը գրում է. «*Ուրեմն, եղբայրնե՛ր, հաստա՛տ մնացէք և պի՛նդ պահեցէք ա՛յն աւանդութիւնները, որ սովորեցիք թէ՛ խօսքով և թէ՛ մեր թղթով*» /Բ Թեսաղ. 2:14/:

Ինչպէ՞ս մեր օրերում օգտուել Սրբազան Աւանդութիւնից

Սրբազան Աւանդութիւնն անհրաժեշտ է նաեւ մեր օրերում՝ Սուրբ Գիրքը ճշգրտօրէն հասկանալու, Խորհուրդները ճշգրտօրէն կատարելու եւ սրբազան ծէսերին իրենց նախահաստատ անաղարտութեան մէջ հետեւելու համար:

Սուրբ Բարսեղ Մեծն այդ մասին հետեւեալն է ասում. «*Եկեղեցու պահած բոլոր ուսմունքներից և աւանդոյթներից որոշները գրաւոր աղբիւրներից են ստացուած, իսկ միւսներն ընդունուել են խորհրդաւոր կերպով փոխանցուած Առաքելական աւանդութիւնից: Բարեպաշտութեան համար թէ՛ մէկը, թէ՛ միւսը նոյն ուժն ունեն.*

և սրան չի առարկի ոչ ոք, որ փոքրիշատէ իմանում է եկեղեցական կանոնները: Քանզի, եթէ մենք համարձակուենք մերժել չգրուած սովորոյթները՝ իբրև մեծ նշանակութիւն չունեցող բաների, ապա անպայման կը վնասենք Աւետարանը ամենակարևորում, աւելին՝ առաքելական քարոզներից կը թողնենք միմիայն արտաքին թաղանթը: Այսպէս օրինակ՝ որտե՞ղ է գրուած, որ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի անուանն ապաւինողները խաչակնքուեն: Ո՞ր գրուածքն է մեզ սովորեցրել աղօթքի ժամանակ հայել արևելք: Ո՞վ է սրբերից գրառել մեզ համար Հաղորդութեան Հացի ու Օրհնութեան Գաւաթի փոխարկման կոչի խօսքերը: Չէ՞ որ մենք օգտւում ենք ոչ միայն Առաքելական Թղթերի և Աւետարանի խօսքերից, այլև նրանցից առաջ և յետոյ արտասանում ենք բառեր՝ վերցուած չգրուած ուսմունքից, բառեր, որ հզօրագոյն ուժ ունեն Խորհուրդների հա-մար: Ո՞ր գրուածքի համաձայն ենք մենք օրհնում Մկրտութեան ջուրը, Օծման ձիթաիւղը, իրեն՝ մկրտուողին: Արդեօ՞ք ոչ՝ խորհրդաւոր և չգրուած աւանդութեամբ: Էլ ի՞նչ: Ձիթաիւղով օծելու մասին ո՞ր գրուած խօսքն է ուսուցանել մեզ: Որտեղի՞ց՝ երեք անգամ մարդուն ջրի մէջ ընկղմելը: Իսկ Մկրտութեանը վերաբերող՝ սատանայից և նրա հրեշտակներից հրաժարուելը. ո՞ր գրուածքից է այն վերցուած: Ո՞չ արդեօք անհրապարակելի և անլուր այն ուսմունքից, որ մեր հայրերը, հիմնաւորապէս ուսանած լինելով, լռութեամբ պահել են Խորհուրդների սրբութիւնը, պահպանել են այն հետաքրքրասիրութեանը և ինչ-որ բան կորզելուն անհասանելի լռութեան մէջ: Քանզի անարժան կը լինէր գրով տարփողել ուսմունքն առ այն, ինչին չմկրտուածներին անթոյլատրելի է հայեացք գցելն անգամ» /Կանոն 97-րդ, Սուրբ Հոգու մասին, գլուխ 27-րդ/:

Ե՞րբ են գրուել Սուրբ Գրքերը

Սուրբ Գրքերը գրուել են տարբեր ժամանակներում: Որոշները՝ Քրիստոսի ծննդից առաջ, միւսները՝ յետոյ:

Ինչպէ՞ս են դասակարգւում Սուրբ Գրքերը

Երկու մաս է առանձնացւում: Այն Սուրբ Գրքերը, որոնք գրուել են Քրիստոսի ծննդից առաջ, կոչւում են Հին Ուխ-

փի գրքեր, իսկ նրանք, որոնք գրուել են Քրիստոսի ծնընդից յետոյ, կոչւում են Նոր Ուխտի գրքեր:

Ի՞նչ է Հին եւ Նոր ուխտը

Հին եւ Նոր Ուխտը Աստուծոյ հին եւ նոր միութիւնն է մարդու հետ:

Ո՞րն էր Հին Ուխտի խորհուրդը

Հին Ուխտի խորհուրդն այն էր, որ Աստուած խոստացել էր մարդկանց պարգեւել Աստուածային Փրկչին, եւ նրանց պատրաստում էր Վերջինիս ընդունելու:

Ինչպէ՞ս էր Աստուած մարդկանց պատրաստում Փրկչին ընդունելու

Աստուած մարդկանց Փրկչին ընդունելու էր պատրաստում իրար յաջորդող յայտնութիւնների, մարգարէութիւնների եւ նախատիպերի միջոցով:

Ո՞րն է Նոր Ուխտի խորհուրդը

Նոր Ուխտի խորհուրդն այն է, որ Աստուած իրապէս մարդկանց պարգեւեց Աստուածային Փրկչին, Իր Միածին Որդի Յիսուս Քրիստոսին:

Քանի՞ գրքից են բաղկացած Հին եւ Նոր Կտակարանները

Հին Կտակարանը բաղկացած է 48 գրքից, իսկ Նոր Կտակարանը՝ 27: Աստուածաշունչն ամբողջութեամբ պարունակում է 75 գիրք:

Ինչպէ՞ս են դասակարգւում Հին Կտակարանի գրքերը

Բովանդակային առումով հինկտակարանեան գրքերը կարելի է բաժանել չորս կարգի. 1. Օրէնսդրական գրքեր, կամ Հնգամատեան Մովսէս մարգարէի, որոնք Հին Կտակարանի գլխաւոր հիմքն են կազմում, 2. Պատմական, որոնք առաւելապէս ներկայացնում են բարեպաշտու-

թեան պատմութիւնը, 3. Ուսուցողական, որոնք ներկայացնում են բարեպաշտութեան ուսմունքը, 4. Մարգարէական, որոնք բովանդակում են մարգարէութիւններ կամ կանխասացութիւններ ապագայի, եւ յատկապէս՝ Յիսուս Քրիստոսի մասին:

Ո՞ր գրքերից է բաղկացած Հին Կտակարանը

Ծննդոց, Ելք, Ղեւտական, Թուեր, Երկրորդ Օրէնք, Նաւէեան Յեսու, Դատաւորներ, Հռութ, Ա, Բ, Գ, Դ Թագաւորութիւններ, Ա, Բ Մնացորդաց, Ա, Բ Եզրաս, Նէեմի, Եսթեր, Յոբ, Սաղմոս, Առակներ, Ժողովող, Երգ Երգոց, Եսայի, Երեմիա, Երեմիայի ողբը, Եզեկիէլ, Դանիէլ, Օսէէ, Յովէլ, Ամոս, Աբդիու, Յովնան, Միքիա, Նաւում, Ամբակում, Սոփոնիա, Անգէ, Զաքարիա, Մաղաքիա:
Ա, Բ, Գ Մակաբայեցիներ, Բարուք, Յուդիթ, Իմաստութիւն Սողոմոնի, Սիրաք, Տոբիթ:

Ինչպէ՞ս են դասակարգւում Նոր Կտակարանի գրքերը

Ինչպէս հինկտակարանեան գրքերը, այնպէս էլ նորկտակարանեան գրքերը կարելի է բաժանել չորս կարգի. 1. Օրէնսդրական գրքեր՝ չորս Աւետարանները, որոնք աւետում են մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածութեան մասին, Նրա աշխարհգալստեան մասին, Նրա երկրային կեանքի մասին, Նրա հրաշքների ու փրկչական ուսմունքի եւ վերջապէս, Նրա՝ խաչի վրայ մահուան, փառահեղ յարութեան եւ երկինք համբարձման մասին, 2. Պատմական, որոնք հիմնականում բովանդակում են Սուրբ Առաքեալների գործերը եւ պատմում նրանց միջոցով քրիստոնէական Եկեղեցու տարածման մասին, 3. Ուսուցողական. սրանք Սուրբ Առաքեալների՝ քրիստոնեաներին ուղղուած թղթերն են բարեպաշտութեան ուսմունքի վերաբերեալ, 4. Մարգարէական. սա Յայտնութեան (յունարէն՝ ἀποκάλυψις) գիրքն է: Այս գիրքն իր մէջ ամփոփում է Քրիստոսի Եկեղեցու եւ ողջ աշխարհի հետագայ ճակատագրի խորհրդաւոր նկարագրութիւնը:

Ի՞նչ է նշանակում «Աւետարան» բառը

«Աւետարան» բառը (յունարէն՝ εὐαγγέλιον) նշանակում է բարի կամ ուրախալի լուր՝աւետիս յայտնող գիրք:

Ինչու՞ է Աւետարանն այսպիսի անուանում ստացել

Այս գրքերը կոչուել են Աւետարան, որովհետեւ մարդկանց համար աւելի լաւ եւ աւելի ուրախալի լուր չի կարող լինել, քան Աստուածային Փրկչի եւ յաւիտենական փրկութեան մասին աւետիսն է:

Ո՞ր գրքերից է բաղկացած Նոր Կտակարանը

Աւետարան ըստ Մատթէոսի, Աւետարան ըստ Մարկոսի, Աւետարան ըստ Ղուկասի, Աւետարան ըստ Յովհաննէսի:
Գործք Առաքելոց:
Թղթեր. Յակոբոս Առաքեալի, Պետրոսի՝ երկու, Յովհաննէսի՝ երեք, Յուդայի՝ մէկ:
Պօղոս Առաքեալի 14 թղթերը. Հռոմէացիներին, Կորնթացիներին՝ երկուսը, Գաղատացիներին, Եփեսացիներին, Փիլիպեցիներին, Կողոսացիներին, Թեսաղոնիկեցիներին՝ երկուսը, Տիմոթէոսին՝ երկուսը, Տիտոսին, Փիլիմոնին եւ Եբրայեցիներին:
Յայտնութեան գիրք:

Ինչպէ՞ս պէտք է կարդալ Սուրբ Գիրքը

Ինչպէս ասում է Սբ. Գրիգոր Տաթեւացին. «*Երբ կարդում ես Սուրբ Գրքերը, Աստուած է խօսում Քեզ հետ, իսկ երբ աղօթում ես, դու ինքդ ես խօսում Աստծու հետ*»: Ուստի, Սուրբ Գրքի ընթերցանութեան ժամանակ պէտք է լցուել երկիւղածութեամբ եւ աղօթել՝ այն ճիշտ հասկանալու խնդրանքով, մաքուր մտքով, հաւատքի մէջ կոփուելու եւ բարի գործեր անելու մղումով. այն պէտք է ընկալել Հայ Առաքելական Եկեղեցու եւ Սուրբ Հայրերի մեկնութիւնների եւ ուսմունքների համաձայն:

Անհրաժե՞շտ է արդեօք ունենալ հաւատք՝ Սուրբ Գիրքը կարդալու եւ հասկանալու համար

Հաւատքն անհրաժեշտ է, որովհետեւ, ինչպէս Աստուծոյ խօսքն է վկայում, «*...առանց հաւատի անհնար է հաճելի լինել Աստծուն*» /Եբր.11:6/:

Ուստի, հարկաւոր է հաւատալ Խօսքերին եւ Յայտնութիւններին, որոնք Սուրբ Հոգին խօսել է Մարգարէների եւ Առաքեալների բերնով: Հաւատալ, այլ ոչ՝ «*սին հէքիաթ կամ սուտ համարել*»: Հաւատալ պէտք է այնպէս, «*...ասես սեփական աչքերով տեսնում ես անցածը և այն, ինչ պէտք է լինի և այն, ինչ հիմա կայ»:* Հաւատալ, այլ ոչ՝ քննել, քանզի ինչպէս Սբ. Յովհան Ոսկեբերանն է ասում. *«Հաւատքը հնազանդութիւն է պահանջում, ոչ թէ՝ հետաքրքրասիրութիւն, և երբ Աստուած պատուիրում է, պէտք է ենթարկուել, ոչ թէ՝ քննել»*:

Հաւատալ պէտք է նաեւ ա՛յն գրաւոր ժառանգութեանը, որը մեզ թողել են Եկեղեցու Սուրբ Վարդապետները:

Ի՞նչն ենք մենք անուանում հաւատք

Հաւատքը, համաձայն առաքելական խօսքի, «*...յուսացուած բաների հաստատումը և ապացոյցն [է] այն բաների, որոնք չեն երևում*» (Եբր. 11:1), այսինքն՝ «*Հաւատքը մեր մէջ հաստատում է յաւիտենական կեանքի սպասուած բարիքները*,- խորհում է Սբ. Գրիգոր Տաթեւացին,- *և Աստծուն՝ մեզ բարիքներ տուողին*»: Եւ այն, ինչ չենք տեսնում մարմնական աչքերով, դրանում համոզւում ենք հաւատքով, հաւատքն անտեսանելին տեսանելի է դարձնում մեզ: Եւ ինչպէս արեւից բխող լոյսի շնորհիւ մենք տեսնում ենք մեզ շրջապատող աշխարհը, այնպէս էլ Աստծուց բխող հաւատքի լոյսի շնորհիւ մենք կարող ենք տեսնել յաւիտենական կեանքը, արդարների փառքը, մեղաւորների տանջանքները եւ Իրեն՝ Քրիստոսին՝ նըստած Հօր աջ կողմում:

Ո՞ր տեսութիւնն է աւելի մեծ՝ հաւատքի՞, բանականութեա՞ն, թէ՞ մարմնական աչքերի

Հաւատքի տեսութիւնն աւելի մեծ է, քան բանականութեան եւ աչքերինը, քանզի աչքերով մենք միայն մեզ շրջապատող աշխարհն ենք տեսնում, բանականութեամբ կարող ենք նաեւ հրեշտակներին տեսնել, բայց ոչ՝ Աստծուն:

Բայց ինչու՞ բանականութիւնը չի կարող տեսնել Աստծուն

Որովհետեւ բանականութիւնը եղական է (ստեղծուած), իսկ Աստուած՝Անեղ, եւ եղականը չի կարող տեսնել Անեղին… Բանականութիւնը չափ ունի, մինչդեռ Աստուած Անչափ է, եւ չի կարող չափելին ընկալել եւ տեսնել Անչափը…, ինչն ակնյայտ է փիլիսոփաների շրջանում, ովքեր, ունենալով բանականութեան ճանաչողութիւն, չկարողացան ընկալել Աստծուն: Դրա համար էլ Աստուած մեզ տուել է հաւատք, որ հաւատքով տեսնենք Աստծուն, իսկ հաւատքն Աստծուց ստանում ենք հենց այն պահին, երբ մկրտւում ենք Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Նաեւ՝ բանականութեան ճանաչողութիւնը չի կարող արդարացնել մարդուն, մինչդեռ հաւատքն արդարացնում է. «*Հաւատաց Աբրահամն Աստծուն, և այդ որպէս արդարութիւն համարուեց նրա համար*» /Հռոմ. 4:3/:

Ինչի՞ միջոցով է դրսեւորւում հաւատքի մասին ուսմունքը

Եկեղեցին հաւատքի մասին ուսմունքի մէջ մեզ ուղղորդում է «Հաւատոյ Հանգանակի» միջոցով:

Ի՞նչ է «Հաւատոյ Հանգանակը»

«Հաւատոյ Հանգանակը» քրիստոնեաների հաւատքի հակիրճ եւ յստակ նկարագրուած առարկան է:

Ովքե՞ր են կազմել «Հաւատոյ Հանգանակը»

Ըստ աւանդութեան՝ առաջին եւ կարճ «Հաւատոյ Հանգանակը» կազմել են Սուրբ Առաքեալները, եւ այն կոչուել է

«Առաքելական Հաւատոյ Հանգանակ»: Առաւել ընդարձակ Հաւատամք կազմուել է 325թ.՝ Նիկիական առաջին Տիեզերական Ժողովին, իսկ երկրորդ՝ 381թ. Կոստանդնուպոլսոյ Տիեզերական Ժողովին, այն լրամշակուել է՝ Սուրբ Հոգու մասին ձեւակերպման յաւելմամբ:

Ի՞նչ է Տիեզերական Ժողովը

Տիեզերական Ժողովը Ընդհանրական Եկեղեցու՝ հնարաւորինս ողջ աշխարհից հաւաքուած հովիւների եւ վարդապետների ժողովն է՝ ի հաստատումն քրիստոնեաների միջեւ ճշմարիտ ուսմունքի եւ բարեկարգման:

Քանի՞ Տիեզերական Ժողով է տեղի ունեցել

Տիեզերական երեք ժողով է եղել. առաջինը՝ Նիկիայում 325թ., երկրորդը՝ Կոստանդնուպոլսում 381թ., երրորդը՝ Եփեսոսում՝ 431թ.:

Ի՞նչ կարեւորութիւն ունի «Հաւատոյ Հանգանակը»

«Հաւատոյ Հանգանակի» կարեւորութիւնը չափազանց մեծ է, քանի որ Սուրբ Գրքում, մասնաւորապէս՝ Աւետարաններում, տարբեր պատմութիւններ եւ արտայայտութիւններ կան, որոնց ճիշտ ընկալման եւ տարաձայնութիւններից ու թիւրիմացութիւններից խուսափելու համար պաշտօնական հեղինակային մեկնութիւն է անհրաժեշտ:

Այսինքն՝ «Հաւատոյ Հանգանակի» իմացութիւնը եւ ընդունումը Եկեղեցու անդամների համար անհրաժեշտ նախապայմա՞ն է

Այո, եւ դա անվիճելի է: Բայց, ցաւօք, հաւատացեալներից ոմանք «Հաւատոյ Հանգանակին» պատշաճ նշանակութիւն չեն տալիս, ոմանք էլ շեղւում են նրա ճիշտ ընկալումից: Այդ պատճառով «Հաւատոյ Հանգանակը» ցանկալի կը լինէր անգիր սովորել:

«Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր՝ Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ո՛չ արարած:

Նոյն Ինքն ի բնութենէ Հօր, Որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր՝ մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով:

Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մամնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, Որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս:

Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց. յԱրքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս»:

Եկեղեցական ո՞ր արարողութիւնների ժամանակ է ընթերցվում «Հաւատոյ Հանգանակը»

Սուրբ Մկրտութեան եւ Սուրբ Պսակի Խորհուրդների ժամանակ, ինչպէս նաեւ Սուրբ Պատարագի եւ Իններորդ ժամի ժամերգութեան ընթացքին:

Հայ Առաքելական Եկեղեցին ունի՞ արդեօք այլ «Հաւատամքներ»

Այո՛: Դա «Առաքելական Հաւատոյ Հանգանակն» է, որը, ինչպէս Նիկիականը, ընթերցւում է Սուրբ Մկրտութեան խորհրդի ժամանակ.

Հաւատամք յԱմենասուրբ Երրորդութիւնն՝ ի Հայր, և յՈրդի, և ի Սուրբ Հոգի, զաւետումն Գաբրիելի, զծընունդն Քրիստոսի, զմկրտութիւնն, զչարչարանսն, զխաչելութիւնն,զասպուածապէս համբարձումն, զնըստիլն ընդ աջմէ Հօր, զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն՝ խոստովանիմք և հաւատամք:

Բացի այդ՝ կայ նաեւ մէկ այլ «Հաւատոյ Հանգանակ»՝ **«Դաւանութիւն Հայոց Հաւատքի**», որն ընթերցւում է քահանայից (եւ եպիսկոպոսաց) ձեռնադրութեան ժամանակ՝ ձեռնադրուողի կողմից, եւ ամէն օր՝ Գիշերային ժամերգութեան սկզբում. Սբ. Գրիգոր Տաթեւացին այս դաւանութիւնը պատրաստել է ի հակադարձումն Հայոց եկեղեցուն ուղղուած այն զրպարտանքների, ըստ որոնց՝ հայերն իբր յարում են «միաբնակ» հերետիկոսութեանը, այսինքն՝ հետեւորդներն են Եւտիքեսի ուսմունքի, ով իր ուսմունքը սեղմ ու յստակ ձեւակերպել է այսպէս. «*Բանն Աստուծոյ մարմնացումից յետոյ երկրպագում եմ մի բնութեան՝ Աստուծոյ բնութեանը...*»:

Այսպիսով՝

Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած անեղ, անծին եւ անսկիզբն, այլեւ ծնող Որդւոյ եւ բղխող Հոգւոյն Սրբոյ:

Հաւատամք զԲանն Աստուած անեղ, ծնեալ եւ սկսեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս, ո'չ յետոյ եւ ո'չ կրտսեր, այլ որքան Հայրն Հայր, ընդ նմին եւ Որդին Որդի:

Հաւատամք զՍուրբ Հոգին Աստուած անեղ, անժամանակ, ոչ ծնեալ, այլ բղխեալ ի Հօրէ, էակից Հօր եւ փառակից Որդւոյ:Հաւատամք զԵրրորդութիւնն Սուրբ մի բընութիւն, մի Աստուածութիւն. ոչ երեք

Աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, Արարիչ երեւելեաց եւ աներեւութից:

Հաւատամք յԵկեղեցի սուրբ, զթողութիւն մեղաց, հաղորդութեամբ սրբոց:

Հաւատամք զՄինն յԵրից Անձանց զԲանն Աստուած ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս, ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյսն Մարիամ, առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում Աստուածութեանն, իննամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ Կուսին, եւ եղեւ Աստուածն կատարեալ մարդ կատարեալ հոգւով եւ մտօք եւ մարմնով, մի անձն, մի դէմ եւ միաւորեալ մի բնութիւն:

Աստուածն մարդացեալ առանց փոփոխման եւ առանց այլայլութեան, անսերմն յղութիւն եւ անապական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն Աստուածութեան նորա, եւ ոչ վախճան մարդկութեան նորա (զի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեան):

Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս շրջեալ ի վերայ երկրի, յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն: Հայր ի վերուստ վկայեալ. Դա՛ է Որդի իմ սիրելի, եւ Հոգին Սուրբ աղաւնակերպ իջեալ ի վերայ նորա: Փորձեալ ի սատանայէ եւ յաղթեալ նմա, քարոզեալ մարդկան զփրկութիւն, աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ եւ ծարաւեալ, յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս, խաչեալ եւ մեռեալ մարմնովն եւ կենդանի Աստուածութեամբն: Մարմինն եղեալ ի գերեզմանի միաւորեալ Աստուածութեամբն, եւ Հոգւովն իջեալ ի դժոխս անբաժանելի Աստուածութեամբն, քարոզեալ հոգւոցն՝ աւերեալ զդժոխս եւ ազատեալ զհոգիս: Յետ երից աւուրց յարուցեալ ի մեռելոց եւ երեւեալ աշակերտացն:

Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն համբարձեալ յերկինս եւ նստեալ ընդ աջմէ Հօր: Այլեւ գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որ եւ յարութիւն ամենայն մարդկան:

Հաւատամք եւ զհատուցումն գործոց. Արդարոցն՝ կեանք յաւիտենական, եւ մեղաւորացն՝ տանջանք յաւիտենական:

ՄԻ ԱՍՏՈՒԱԾ
ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է նշանակում հաւատալ Աստծուն

Աստծուն հաւատալ՝ նշանակում է կենդանի համոզում ունենալ Աստուծոյ գոյութեան մէջ, Նրա յատկութիւնների ու ներգործութիւնների մէջ եւ ամբողջ սրտով ընդունել Նրա յայտնութիւնը մարդկային ցեղի փրկութեան մասին:

Կա՞ն մարդիկ, որ չեն հաւատում Աստծուն

Ինչպէս եւ բոլոր ժամանակներում, այժմ էլ գոյութիւն ունեն նման մարդիկ՝ աթէիստները: Աթէիստ բառը յունարէն աթէոս (άθεος) բառից է, որը նշանակում է «անաստուած», «Աստծու գոյութիւնը ժխտող»: Սուրբ Գիրքը նման մարդկանց անուանում է անզգամներ՝ «*Անզգամն ասաց իր սրտում, թէ չկայ Աստուած*» /Սաղմ. 13:1/:

Իսկ ի՞նչ պատճառներով են նրանք ժխտում Աստուծոյ գոյութիւնը

Համաձայն Եկեղեցու Վարդապետների՝ երկու պատճառով: Առաջին պատճառը՝ նրանք հաւատում են միայն նրան, ինչ ընկալում են զգայարաններով, եւ քանի որ Աստծուն չեն տեսնում, ապա, ըստ իրենց կարծիքի, Նա գոյութիւն չունի:

Երկրորդ պատճառը՝ նրանք ասում են՝ եթէ Աստրուած կայ, ապա ինչո՞ւ այսքան չարիք կայ աշխարհում:

Ի՞նչ պատասխան կարելի է տալ նման պատճառաբանութիւններին

1. Աստուած չի կարող ընկալուել զգայարանների միջոցով, քանզի Նա Հոգի է /Յովհ.4:24/: Մարդը կենդանուց տարբերւում է հենց նրանով, որ բանական էակ է եւ չի

ուղղորդում միայն զգայարաններով եւ բնազդներով, ինչպէս կենդանիները. այդ իսկ պատճառով Աստուծոյ գոյութիւնը ժխտողները կենդանիներից վատթար են. «*Բայց դէ՛ կ ու հարցրու՛ գազանին՝ թէ կը տայ պատասխան, երկնքի թռչունին՝ թէ մի բան կ'ասի քեզ. ու պատմի՛ր դու երկրին, թէ մի բան հասկացնի. կամ ձկները ծովի կը պատմե՞ն մի բան քեզ: Սակայն ո՞վ է, որ չիմացաւ, թէ Տիրոջ ձեռքն է ստեղծել ամէն ինչ*» /Յոբ 12:7-9/:

Ամէն մարդ հաւատում է իր ծնողների վկայութեանը, թէեւ իր ծնունդը չի տեսել: Աշխարհում շատ են երեւոյթները, որոնք մենք չենք կարող տեսնել աչքերով եւ չենք կարող շօշափել, օրինակ՝ ճառագայթումը, ուլտրաձայնը կամ ինֆրակարմիր ճառագայթները: Սակայն դրանց գոյութեան մասին մենք տեղեկանում ենք յատուկ մեթոդների եւ սարքերի միջոցով: Ճիշտ այդպէս էլ հոգեւոր աշխարհը եւ Տէրը ճանաչւում են որոշակի մեթոդներով: Դրանք Աստուածային Յայտնութիւններն են, եւ մարգարէութիւնները, հրաշքները եւ փիլիսոփաների, գիտնականների ու եկեղեցու հայրերի բազմաթիւ վկայութիւնները:

2. Պատճառաբանութիւնն ինքնին խօսում է Աստուծոյ գոյութեան մասին: Ինչպէս ասում են փիլիսոփաները, չարը բարու բացակայութիւնն է, եւ եթէ կայ չարը, ապա կայ եւ բարին: Եւ հետեւաբար, եթէ գոյութիւն ունի որեւէ բարի բան, ապա պէտք է գոյութիւն ունենայ նաեւ բացարձակ բարին, որն էլ Աստուած է:

Բացի դրանից, մեղքերն ու անօրինութիւնները, որ լցրել են այս աշխարհը, նոյնպէս խօսում են Աստուծոյ գոյութեան մասին: Մեղքն ու անօրինութիւնն Աստուծոյ օրէնքների խախտումն են, իսկ եթէ Աստուած գոյութիւն չունի, ապա գոյութիւն չունեն նաեւ օրէնքն ու մեղքը: Իսկ եթէ կան մեղքեր, ապա կայ եւ Աստուած:

Ինչո՞վ կարելի է հաստատել Աստուծոյ գոյութիւնը

1. Բանականութեան բնական ուսումնասիրութեամբ: Օրինակ՝ ինչպէս որ ասում է Արիստոտէլը, նախ եւ առաջ պէտք է առանձնացնել արդարութիւնը, այնուհետեւ՝ արդարին, քանզի արդարութիւնն իր բնութեամբ ինքնին

արդար է: Իսկ արդարը արդար եւ բարի է ոչ իր բնութեամբ, այլ արդարութիւնն ու բարութիւնը սպանում է ուրիշից: Այդ պատճառով պէտք է ինչ-որ Մէկը, Ով իր բնութեամբ ունի արդարութիւն ու բարութիւն: Եւ այդ Մէկը Աստուած է:

Ահա, այսպէս էին հին աշխարհի փիլիսոփաներն ուսումնասիրութիւնների միջոցով եզրակացութեան հանգում, որ Աստուած գոյութիւն ունի:

2. Հաւատքով: Աստուծոյ գոյութեան մասին վկայում է Ընդհանրական եկեղեցու հաւատքը, քանզի այն (եկեղեցին) «հաւատում է Աստուած», «հաւատում է Աստուծոյ մէջ» եւ «հաւատում է Աստծուն»: Հաւատալ Աստուած՝ նշանակում է հաւատալ Նրա գոյութեանը: Հաւատալ Աստուծոյ մէջ՝ նշանակում է սիրել Նրան եւ հաւատով մօտենալ Նրան: Հաւատալ Աստծուն՝ նշանակում է հաւատալ Նրա խօսքերին:

3. Սուրբ Գրքով: Սուրբ Գրքում վկայութիւնները բազմաթիւ են: Օրինակ՝ «*Ի սկզբանէ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը*» /Ծննդ. 1:1/, «*Աստուած ասաց Մովսէսին. «Ես այն Աստուածն եմ, որ է*» /Ելք 3:14/, «*Ի սկզբանէ էր Բանն, Բանն էր առ Աստուած, Աստուած էր Բանը*» /Յովհ. 1:1/:

4. Մարմնեղէնների վկայութեամբ: Արարչագործութիւնն ինքնին վկայում է, որ Աստուած գոյութիւն ունի: Եկեղեցու Վարդապետներն ասում են, որ Աստուծոյ մասին հարցնում են արեւին, լուսնին, աստղերին ու բոլոր արարածներին, իսկ նրանք պատասխանում են, թէ մենք այն չենք, ինչ փնտռում էք, մենք Աստուծոյ արարածն ենք. «*...իմացէ՛ք, որ Նա է Տէր Աստուածը մեր. Նա ստեղծեց մեզ, և ոչ թէ մենք եղանք*» /Սաղմ. 99:3/: Կամ, ինչպէս ասում է Պօղոս Առաքեալը. «*Նրա մշտնջենաւորութիւնը և զօրութիւնը և աստուածութիւնը իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մէջ, այնպէս որ, ամենևին արդարանալ չեն կարող*» /Հռոմ. 1:20/:

Ինչու՞ է «Հաւատոյ Հանգանակի» մէջ խօսւում Մի Աստուծոյ [հանդէպ] հաւատքի մասին

Մի Աստուծոյ հանդէպ հաւատքի մասին ասւում է նրա համար, որպէսզի հերքուի հեթանոսների կեղծ ուսմունքը, ովքեր, համարելով Աստուծոյ Արարչագործութիւնը, որպէս Աստուած, մտածում են, թէ բազում աստուածներ կան:

Ինչո՞վ կարելի է հաստատել Մի Աստուծոյ գոյութիւնը

1. Բնական առարկաների ուսումնասիրութեամբ: Հին յոյների համար մէկը (եզակին) թիւ չէր, այլ միայն թուերի սաղմն էր, այսինքն՝ նա էր «ծնում» բոլոր թուերի բազմութիւնը: Ուստի, բազում սկիզբներ չեն կարող լինել, այլ՝ մէկը: Այն ամէնը, ինչ ունի սկիզբ եւ վերջ, պէտք է ունենայ Մէկ Սկիզբ: Հետեւաբար, ամենայն ինչի համար, որ գոյութիւն ունի, հարկաւոր է Մէկ Սկիզբ, որն է Մի Աստուած, եւ ոչ՝ բազում Աստուածներ: Մէկը՝ Եզակին, ցոյց է տալիս Մի Աստուածային Էութիւնը:

2. Սուրբգրային վկայութիւններով: Սուրբ Գրքում բազում են վկայութիւնները՝ «*Լսի՛ր, Իսրայէ՛լ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր է*» /Երկր. 6:4/: «*Մէ՛կ Տէր կայ, մէ՛կ հաւատ, մէ՛կ մկրտութիւն, մէ՛կ Աստուած, Հա՛յր բոլորի, որ է բոլորի վրայ, բոլորի հետ և մեր բոլորի մէջ*» /Եփես. 4:5-6/:

Ինչպէ՞ս հասկանալ «հաւատամք ի Հայրն ամենակալ» խօսքերը

Այս խօսքերը հարկաւոր է հասկանալ Սուրբ Երրորդութեան խորհրդին վերաբերւող իմաստով, քանի որ Աստուած Մի է ըստ Իր Էութեան, սակայն ունի երեք Դէմք՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի: Երրորդութիւնը համագոյ է եւ անբաժանելի:

Ինչու՞ է Աստուած կոչւում «Ամենակալ»

Աստուած Ամենակալ է կոչւում, քանի որ ամենայն ինչ, որ կայ, Նա Իր զօրութեան եւ կամքի մէջ է պահում:

Ինչո՞վ կարելի է հաստատել հաւատքն առ Սուրբ Երրորդութիւն

1. Սուրբ Գրքի վկայութեամբ: Հայր Աստուծոյ մասին ասւում է. «*Ի սկզբանէ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը*» /Ծնն. 1:1/: Որդի Աստուծոյ մասին ասւում է. «*Թող լոյս լինի: Եւ լոյս եղաւ*» /Ծնն. 1:3/: Սուրբ Հոգու մասին ասւում է. «*Երկիրն անձև ու անկազմ էր, խաւար էր տիրում անհունի վրայ, և Աստուծոյ հոգին շրջում էր ջրերի վրայ*» /Ծնն. 1:2/:
Այնուհետեւ Աստուած ասաց. «*Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութեամբ*» /Ծնն. 1:26/:
Տէր Աստուած ասաց. «*Ահա, Ադամը դարձաւ մեզ նման մէկը*» /Ծնն. 3:22/; Տէրն ասաց. «*Արի իջնենք և խառնենք նրանց լեզուն այնպէս, որ ոչ մէկը չհասկանայ իր ընկերոջ ասածը*» /Ծնն. 11:6-7/:
«*Աբրահամը բարձրացրեց աչքերը և իր դիմաց տեսաւ երեք տղամարդկանց: Տեսնելով նրանց՝ նա իր վրանի դրան մօտից ընդառաջ գնաց, գլուխը խոնարհեց մինչև գետին ու ասաց նրանց. «Տէր, եթէ շնորհ գտայ քո առաջ, քո ծառային անտես մի՛ արա»: Եւ Տէրը վերջացնելով Աբրահամի հետ իր խօսակցութիւնը, գնաց, իսկ Աբրահամը վերադարձաւ իր բնակատեղին*» /Ծնն. 18/:
«*Տէրը երկնքից ծծումբ ու կրակ թափեց Սոդոմի ու Գոմորի վրայ*» /Ծնն. 19:24/:
Ինչպէս նաեւ՝ «*Անձովս եմ երդւում,- ասում է Տէրը*» /Ծնն. 22:14/, որտեղ ասւում է Հօր մասին: Դաւիթ թագաւորը, դիմելով Հայր Աստծուն, խօսում է Որդու մասին. «*Քոնն է բազուկը և քոնն է կարողութիւնը, թող զօրանայ քո աջը և բարձր լինի քո ձեռքը*» /Սաղմ. 88:14/, իսկ Պօղոս Առաքեալը հաստատում է այդ խօսքերն՝ ասելով. «*Քրիստոսը Աստուծոյ զօրութիւնն ու Աստուծոյ իմաստութիւնն է*» /Ա Կորնթ. 1:24/:

Սուրբ Հոգու մասին խօսում էին նաեւ եգիպտացիները. «*Մոգերն ասացին փարաւոնին. «Սրա մէջ Աստուծոյ մատը խառն է*» /Ելք 8:19/: Նոյնն է ասում Աստուած Ինքը. «*Իսկ եթէ Աստուծոյ մատով եմ հանում դեւերին, ապա Աստուծոյ արքայութիւնը հասել է ձեր վրայ*» /Ղուկ. 11:20/:

Զօրութիւնն ու Մատը ցոյց են տալիս Որդու Սուրբ Հոգու Դէմքերը: «*Լսի՛ր Իսրայէ՛լ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր է*» /Երկր. Օր. 6:4./: Ասելով «Տէր», «Աստուած»՝ Տէրը ցոյց է տալիս Երրորդութեան երեք Դէմքերը, իսկ ասելով «մի»՝ ցոյց է տալիս Երրորդութեան միասնական Էութիւնը:

«*Տէրն ասաց ինձ. «Դու իմ որդին ես, ես այսօր ծնեցի քեզ*» /Սաղմ. 2:7/: «*Դրա համար քո՛ Աստուածն օծեց քեզ ուրախութեան իւղով*» /Սաղմ. 44:8/: «*Տէրն իմ Տիրոջն ասաց. «Նստի՛ր իմ աջ կողմում: Երդուեց Տէրը և չի զղջայ, որ դու յաւիտենական քահանայ ես ըստ Մելքիսեդեկի կարգի: Եւ Տէրը, որ քո աջ կողմում է, բարկութեան օրը կը կործանի թագաւորներին*» /Սաղմ. 109/: Այս տողերում խօսւում է Հօր եւ Որդու մասին:

«*Ու՞ր գնամ ես քո հոգուց, կամ քո դէմքից ու՞ր փախչեմ*» /Սաղմ 138:7/, «*...քո բարի հոգին ինձ պիտի առաջնորդի դէպի արդար երկիրը*» /Սաղմ. 142:10/. խօսւում է Հօր եւ Սուրբ Հոգու մասին: «*Եւ այժմ Տէրն ինձ ուղարկեց, Տէրը և նրա Հոգին*» /Ես. 48:16/, ասւում է Երրորդութեան մասին:

«*Սո՛րբ, սո՛րբ, սո՛րբ է Զօրութիւնների Տէրը*» /Ես. 6:3 /, երեք անգամ կրկնուող «սուրբ» բառը խօսում է Երեք Դէմքերի մասին, իսկ մէկ անգամ «Տէր»՝ խօսում է Մի Աստուածային Էութեան մասին:

Ինքը՝ Տէրն ասում է. «*Գնացէ՛ք ուրեմն, աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունով*» /Մատթ. 28:19/:

«*Սրանք երեքը միասին են վկայում՝ Հոգին, ջուրը և արիւնը. Եւ երեքը վկայութեան մէջ մէ՛կ են*» /Ա Յովհ. 5:8/:

Սուրբ Գրքում նման օրինակները շատ շատ են:

2. Եկեղեցու Վարդապետների բերած օրինակներով: Մարդու տկար բանականութեանն օգնելու համար Եկեղեցու Սուրբ Վարդապետները բերում են բազմաթիւ օրինակներ, որոնք հաստատում են հաւատքն առ Սուրբ Երրորդութիւն: Օրինակ՝ ինչպէս որ արեգակն ունի իր կլոր ձեւը, լոյսն ու ջերմութիւնը, այնպէս էլ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին Մի են: Կամ՝ խնձորն ունի երեք յատկութիւն՝ համ, հոտ եւ գոյն: Մարմինը, ձեռքն ու մատն ունեն Մի բնութիւն, սակայն երեք յատկութիւն: Ծովը, գետն ու աղբիւրն ունեն ջրի Մի բնութիւն: Արմատը, ծառը եւ պտուղը ունեն Մի բնութիւն:

Հնարաւո՞ր է արդեօք ըմբռնել Սուրբ Երրորդութիւնը

Ըմբռնել, որ Աստուած Մի է՝ Երեք Դէմքերով, կամ որ Մէկը Երեք է, եւ Երեքը Մէկ, անհնարին է, քանի որ Սուրբ Երրորդութիւնը հրեշտակների եւ մարդկանց բանականութիւնից վեր է: Եւ միայն Աստուած է ճանաչում Ինքն Իրեն. «*Նոյնպէս և ոչ ոք չգիտէ Աստուծոյ խորհուրդները, եթէ ոչ՝ Աստուծոյ Հոգին*» /Ա Կորնթ. 2:11/: Իսկ մեզ մնում է Սուրբ Գրքի միջոցով եւ Սուրբ Հայրերի օրինակներով հաւատալ Սուրբ Երրորդութեանը, եւ ոչ թէ՝ քննել: Քանզի քննելը յանդգնութիւն է, իսկ հաւատքը՝ փրկութիւն եւ յաւիտենական կեանք:

Ի՞նչ տարբերութիւն կայ Սուրբ Երրորդութեան Դէմքերի միջեւ

Սուրբ Երրորդութեան Դէմքերի միջեւ տարբերութիւնն այն է, որ Հայր Աստուած չի ծնւում եւ չի բխում, Որդի Աստուած նախքան յաւիտեանները ծնւում է Հօրից, եւ Սուրբ Հոգին նախքան յաւիտեանները բխում է Հօրից:

Ինչպիսի՞ արժանիքներ ունեն Սուրբ Երրորդութեան Դէմքերը

Սուրբ Երրորդութեան Դէմքերն ունեն բացարձակապէս համահաւասար Աստուածային արժանիքներ: Ինչպէս Հայրն է ճշմարիտ Աստուած, այնպէս էլ հաւասարապէս

Որդին է ճշմարիտ Աստուած, հաւասարապէս եւ Սուրբ Հոգին է ճշմարիտ Աստուած:

Ինչու՞ ենք Աստծուն անուանում երկնքի եւ երկրի, երեւելիների եւ աներեւոյթների Արարիչ

Որովհետեւ ամէն ինչ արարուել է Աստուծոյ կողմից, եւ ոչինչ չի կարող գոյութիւն ունենալ առանց Աստուծոյ:

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է ասում Սուրբ Գիրքն Աշխարհի արարման մասին

Սուրբ Գիրքը «Ծննդոց» գրքի առաջին գլխում աշխարհի արարման մասին մեզ յայտնում է, որ սկզբում (աշխարհի գոյութեան առաջին օրը) Աստուած ոչնչից ստեղծեց երկինքն ու երկիրը (տարերքները): Երկիրը անձեւ էր ու դատարկ: Ապա՝ Աստուած ստեղծեց լոյսը եւ Հրեշտակներին: Երկրորդ օրը՝ երկնքի հաստատութիւնը, կամ երեւացող երկինքը: Երրորդ օրը՝ ջրերի զետեղարանները երկրի վրայ, ցամաքը, բուսական աշխարհը եւ Դրախտը: Չորրորդ օրը՝ արեգակը, լուսինը եւ աստղերը: Հինգերորդ օրը՝ ձկներին ու թռչուններին: Վեցերորդ օրը՝ ցամաքի վրայ ապրող կենդանիներին, եւ, վերջապէս, ողջ արարման պսակը՝ մարդուն: Մարդու ստեղծմամբ արարչագործութիւնն աւարտուեց, եւ Եօթներորդ օրն Աստուած դադարեցրեց արարման Իր գործերը:

Ո՞ւմ ենք ենթադրում «աներեւոյթներ» անուան տակ

«Հաւատոյ Հանգանակի» մէջ «աներեւոյթներ» անուանման տակ հարկ է հասկանալ աներեւոյթ կամ հոգեւոր աշխարհը, որին պատկանում են Հրեշտակները:

Ովքե՞ր են հրեշտակները եւ ի՞նչ է նշանակում «Հրեշտակ» բառը

Հրեշտակներն անմարմին հոգիներ են՝ օժտուած մտքով, կամքով եւ զօրութեամբ: «Հրեշտակ» բառը նշանակում է Պատգամաբեր: Այս բառից հիմնականում պարզ է դառնում նրանց սպասաւորութիւնը մարդկային ցեղին: Իրենց բնութեամբ հրեշտակները գործող հոգիներ են, որոնք ունեն բանականութիւն, կամք, իմացութիւն. նրանք ծառայում են Աստծուն, կատարում Նրա նախախնամ կամքը եւ փառաբանում Նրան: Նրանք անմարմին հոգիներ են եւ, քանի որ պատկանում են աներեւոյթ աշխարհին, ենթակայ չեն մեր մարմնական աչքերի տեսութեանը: Հրեշտակ-

ների աշխարհը Սուրբ Գրքում արտասովոր մեծ է ներկայանում, եւ եթէ գրուած է. «*հազար-հազարաւորներ պաշտում էին նրան, և բիւր-բիւրաւորներ կային նրա առջև*» /Դան. 7:10/, ապա միայն այն պատճառով, որ աւելի մեծ թիւ Մարգարէն չէր կարող բարբառել:

Քանի՞ հրեշտակային աստիճան կայ

Հրեշտակային աստիճանները դասակարգւում են նուիրապետական երեք եռեակների, իւրաքանչիւրում՝ երեք աստիճան:

1. **Աթոռներ, Քերովբէներ եւ Սերովբէներ**
2. **Տէրութիւններ, Զօրութիւններ եւ Իշխանութիւններ**
3. **Պետութիւններ, Հրեշտակապետեր եւ Հրեշտակներ**

Ովքե՞ր են Պահապան Հրեշտակները

«Պահապան Հրեշտակ» անուանումը վերցուած է Սուրբ Գրքի հետեւեալ խօսքերից. «*Իր հրեշտակներին հրամայուած է քո մասին, որ պահպանեն քեզ քո բոլոր ճանապարհներին*» /Սաղմ. 90:11/: Պահապան Հրեշտակը սիրում է մեզ, տալիս է մեզ բարի մտքեր եւ ցանկութիւններ, իր աղօթքով օգնում է մեզ հեռու մնալ չարից եւ ուրախանում է, երբ այդ չարը չենք գործում, օգնում է մեզ բարի գործերում եւ պահպանում մեզ փորձանքներից: Պահապան Հրեշտակը մշտապէս աղօթում է մեզ հետ միասին: Նա մեր ամենամօտ եւ հաւատարիմ ընկերն է, ումից միշտ պէտք է օգնութիւն խնդրել, քանի որ երկնքում նրանք մշտապէս տեսնում են Տիրոջը. «*Զգո՛յշ եղէք, որ այս փոքրիկներից մէկին չարհամարհէք. ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապէս տեսնում են երեսն իմ Հօր, որ երկնքում է*» /Մատթ. 18:10/:

Ամէն քրիստոնեայ ունի երկու Պահապան Հրեշտակ: Մէկը՝մարմնի, միւսը՝ հոգու համար: Մահուանից յետոյ մի Հրեշտակը մնում է շիրիմի մօտ, միւսը հոգին ուղեկցում է Երկինք:

Ինչպէ՞ս են հրեշտակների դասերը փառաբանում Տիրոջը Երկընքում

Հրեշտակները փառաբանում են՝ ասելով. «*Փա՜ռք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրայ խաղաղութի՜ւն և հաշտութի՜ւն՝ մարդկանց մէջ*» /Ղուկ. 2:14/:
Հրեշտակապետերը՝ «*Ողորմեա՛ Տէր, Քո արարածներին*»:
Պետութիւնները ՝ «...*Դու յաւիտենական քահանայ ես ըստ Մելքիսեդեկի կարգի*» /Սաղմ. 109:4/:

Իշխանութիւնները՝ «...*և հեթանոսներին քեզ կը տամ որպէս ժառանգութիւն, ու իշխանութիւն՝ երկրի բոլոր ծագերում*» /Սաղմ. 2:8/:
Զօրութիւնները՝ «...*կարողութեամբ հզօր Տէրն է նա, պատերազմում զօրեղ Տէրը*» /Սաղմ. 23:8/:
Տէրութիւնները՝ «*Քո արքայութիւնը ողջ յաւիտենութեան արքայութիւնն է, և քո տէրութիւնը՝սերնդից սերունդ*» /Սաղմ. 144:13/:

Սերովբէները՝ «*Սո՛ւրբ, սո՛ւրբ. սո՛ւրբ է Զօրութիւնների Տէրը, և ամբողջ երկիրը լի է նրա փառքովը*» /Ես. 6:3/:
Քերովբէները՝ «*Եւ օրհնեալ է յաւիտեան սուրբ անունը նրա փառքի, թող նրա փառքով ողջ երկիրը լցուի*» /Սաղմ. 71:19/:
Աթոռները՝ «*Քո գահը յաւիտեանս յաւիտենից է, Աստուած, քո արքայական գաւազանն արդարութեան գաւազան է*» /Սաղմ. 44:7/:

Ովքե՞ր են դեւերը

Ոչ բոլոր Հրեշտակներն են բարի եւ բարերար: Դեւերը չար հրեշտակներն են, որոնց անուանում են նաեւ սատանաներ կամ չարքեր: Ըստ արարման՝ նրանք բարի են եղել, ինչպէս եւ բոլոր Հրեշտակները, բայց խախտել են Աստուծոյ հանդէպ բացարձակ հնազանդութեան պարտաւորութիւնը եւ այդպիսով հեռացել Նրանից՝ ընկնելով ինքնասիրութեան, հպարտութեան եւ չարութեան մէջ: Համաձայն Յուդա Առաքեալի՝ դրանք այն հրեշտակներն են, «...*որ չպահեցին իրենց իշխանութիւնը, այլ լքեցին իրենց բնակութեան տեղը*» /Յուդա 1:6/:

Ո՞րն էր նրանց յանցանքը

Եսայի Մարգարէի խօսքերից՝ «*Արդ, ինչպէ՞ս երկնքից ընկաւ արուսեակը, որ ծագում էր առաւօտեան. նա, որ ուղարկւում էր բոլոր ազգերին, ընկաւ գետին և խորտակուեց: Մտքիդ մէջ ասում էիր. «Երկինք կը բարձրանամ, իմ գահը կը դնեմ երկնային աստղերից աւելի վեր. կը նստեմ բարձր լերան վրայ, հիւսիսի բարձր լեռների վրայ. կը բարձրանամ ամպերից էլ վեր, կը նմանուեմ Բարձրեալին»: Բայց ահաւասիկ դժոխք ես իջնելու և երկրի խորքերը*», կարելի է եզրակացնել, որ արուսեակը՝ սատանան, հպարտացաւ եւ որոշեց նմանուել Աստծուն ու գրաւել Նրա տեղը: Նրան ենթարկուեց Հրեշտակների մէկ երրորդը:

Յետոյ ի՞նչ եղաւ նրանց հետ

Նրանք վտարուեցին Երկնքից: «*Եւ երկնքում կռիւ եղաւ: Միքայէլը և իր հրեշտակները կռւում էին վիշապի դէմ. Վիշապը կռւում էր իր զօրքերով, բայց նրանք չկարողացան դիմադրել. և երկնքում նրանց համար տեղ չգտնուեց: Եւ ընկաւ մեծ վիշապը՝ առաջին օձը, որ կոչւում է Բէեղզեբուղ և Սատանայ և որ մոլորեցրեց ամբողջ տիեզերքը. և նրա հետ ընկան նաև նրա հրեշտակները*» /Յայտն. 12:7-9/:

Դրա հետ մէկտեղ՝ նրանք բարուց չարի մէջ ընկան, լոյսից ընկան խաւարի մէջ, սրբութիւնից՝ մեղքի մէջ, սիրուց՝ ատելութեան:

Գիտէի՞ն արդեօք նրանք իրենց անկման մասին

Ոչ, չգիտէին:

Ինչու՞ են նրանք պայքարում մարդու դէմ

Անկեալ Հրեշտակները ոչ այնքան մտահոգւում են իրենց անկմամբ, որքան նախանձում են մարդու փառքին, եւ քանի որ չեն կարող պայքարել Աստուծոյ դէմ, իրենց ողջ ատելութիւնը հեղում են Աստուծոյ պատկերի՝ մարդու վրայ, որպէսզի նաեւ նրան կործանեն:

Քանի՞ փարերք է ստեղծել Տէր Աստուած

Հողի, ջրի, օդի եւ կրակի փարերքները: Առանց հողի շօշափում չէր լինի: Առանց ջրի հնարաւոր չէր լինի շաղախել: Առանց օդի անհնար կը լինէր շարժումը: Առանց կրակի հնարաւոր չէր լինի տեսնել:

Ինչպէ՞ս են նրանք զետեղուած եւ ի՞նչ յատկութիւններ ունեն

Հողը ջրից ծանր է, այդ պատճառով էլ նրանից ցած է գտնւում: Ջուրն օդից ներքեւ է, քանի որ ծանր է վերջինից, օդն էլ ցած է կրակից: Տարերքներից իւրաքանչիւրն ունի երկու յատկութիւն: Հողը չոր է եւ սառը: Ջուրը խոնաւ է եւ սառը: Օդը խոնաւ է եւ տաք: Կրակը տաք է եւ չոր:

Տաքն ու սառը թշնամիներ են, ինչպէս չորութիւնն ու խոնաւութիւնը: Եւ ինչպէս չորս մարդիկ՝ ձեռք ձեռքի բռնած, շրջան են կազմում, այնպէս էլ փարերքները գնդաձեւ միաւորուած են միմեանց հետ:

Հողը սառնութեամբ միաւորուած է ջրին: Ջուրը խոնաւութեամբ՝օդին: Օդը տաքութեամբ միաւորուած է կրակին: Իսկ կրակը չորութեամբ՝ հողին:

Երկնքի ի՞նչ ձեւեր գոյութիւն ունեն

Մարմնեղէն Երկինք, որը մենք տեսնում ենք: Հոգեւոր Երկինք, որտեղ բնակւում են Հրեշտակները: Եւ Սուրբ Երրորդութիւնը՝ Երկնքի նախատիպը, քանզի անիմանալի է եւ վեր՝ ողջ արարչագործութիւնից:

Լոյսի ի՞նչ ձեւեր գոյութիւն ունեն

Անեղ եւ եղական: Անեղ լոյսն անիմանալի Սուրբ Երրորդութիւնն է: Եղական լոյսն իր հերթին լինում է զգացական եւ իմանալի: Իմանալի լոյսը Հրեշտակներն են եւ մարդկանց հոգիները: Զգացականը բաժանւում է երկնայինի եւ մարմնեղէնի: Երկնայինը Արեւն է, Լուսինը եւ Աստղերը: Մարմնեղէնը կանթեղների եւ ջահերի լոյսն է, վճիտ օդը եւ մեր աչքերի լոյսը:

Ի՞նչ է խաւարից լոյսի զատումը

Լոյսի պատճառն Արեւն է, իսկ խաւարի պատճառը՝ Երկրի սպուերը: Մինչ Երկրի մի մասը լուսաւորուած է, միւս կէսը գտնւում է խաւարում:

Ինչու՞ են ջրերն այսքան շատ

Որ երկնային լուսատուների տաքութիւնը չայրի Երկիրը՝ վնասելով այն: Քանի որ Հողը չոր է եւ չի կարող բերք տալ, եթէ ջուր չկայ: Ջուրն անհրաժեշտ է նաեւ խմելու համար, ինչպէս մարդկանց, այնպէս էլ՝ կենդանիներին:

Ի՞նչ է Երկիրը

«Երկ» - «իր»՝ երկու իր, այսինքն թէ՝ երկիրը բաղկացած է երկու տարերքից՝ հողից եւ ջրից: Հողը մեզ համար մայր է, ով ծնում է մեզ, իսկ մահուանից յետոյ՝ կրկին ընդունում: Նա մեր դաստիարակն է ու կերակրողը: Սա վայր է, որտեղ մենք իմաստութիւն ենք ձեռք բերում, սովորում առաքինութիւններ եւ բազմապիսի արուեստներ: Երկիրը բոլոր շինուածքների հիմքն է:

Ի՞նչ են նշանակում «*Թող երկիրը դալար բոյս աճեցնի*» /Ծննդ. 1:11/ խօսքերը

Աճեցնելն արարել է նշանակում, լիառատ մեծաքանակութիւն եւ յարատեւ աճ:

Ի՞նչ է Դրախտը

«Դրախտ» բառը նշանակում է պարտէզ: Այսպէս է անւանուել առաջին մարդու սքանչելի եւ երանելի բնակավայրը, որն Աստուածաշնչի «Ծննդոց» գրքում նկարագրրուած է պարտէզի նմանութեամբ:

Ի՞նչ է Կենաց Ծառը

Կենաց Ծառն այն ծառն է, որի պտուղներով սնուելով՝ մարդու մարմինն անցաւ եւ անմահ կը լինէր:

Ի՞նչ է բարու եւ չարի ճանաչողութեան Ծառը

Իր էութեամբ այս ծառը ո՛չ բարի է եղել, ո՛չ չար: Երբ Ադամը հնազանդութիւն էր ցուցաբերում եւ նրանից չէր ճաշակում, այն բարու պտղաճառ էր, իսկ երբ խախտեց Պատուիրանը, ծառը չարիքի պտղաճառ դարձաւ:

Յատկապէս ո՞ր պտուղը ճաշակեց Ադամը

Ոմանք ասում են, թէ՝ թուզ, քանզի Տէրը հետագայում անիծեց այն, միւսներն ասում են՝ խաղող կամ խնձոր: Եւ այնուամենայնիւ, եթէ Սուրբ Գիրքն ինքը չի ասում, թէ յատկապէս ինչ պտուղ է, ապա մենք՝ մարդիկս, չարժէ, որ խօսենք այդ մասին:

Ինչի՞ց են ստեղծուել երկնային լուսատուները

Երկնային լուսատուները՝ արեւը, լուսինը եւ աստղերը, ստեղծուել են օդի տարերքից: Նրանք, ասես անօթներ լինելով, իրենց մէջ են ընդունել լոյսը, որն ստեղծուել էր առաջին օրը:

Ո՞վ է կենդանական աշխարհի արքան

Ջրայինների արքան լեւիաթանն է: Թռչունների արքան՝ արծիւը: Գիշատիչների արքան առիւծն է: Անասունների արքան՝ ցուլը: Դէ իսկ կենդանի արարածների արքան մարդն է: Նա արքայ է, քանզի ինքնին ստեղծուած է Արարչի, Ով ամենայն Գոյութեան Արքան է, պատկերով եւ նմանութեամբ:

Եթէ մարդն արքայ է, ապա ինչո՞ւ բոլոր կենդանիները նրան չեն ենթարկւում

Երբ մարդը հնազանդ էր Աստծուն, կենդանիներն էլ իրեն էին հնազանդւում, բայց երբ մարդն անհնազանդ գտնուեց իր Տիրոջ հանդէպ, կենդանիներն էլ սկսեցին չհնազանդուել մարդուն:

Ինչո՞ւ Ադամն ստեղծուեց վերջում

Տէր Աստուած սկզբում նախապատրաստեց «արքայական ապարանքը»՝ Երկինքն ու Երկիրը: «Գահն» այս ապարանքում Դրախտն է: Լուսատուների լոյսով լուսաւորեց ապարանքը եւ պճնեց բուսական աշխարհի գեղեցկութեամբ: Ծառաներ կարգեց՝ կենդանական աշխարհը: Եւ այդ ամէնից յետոյ, բերեց մարդուն ապարանք եւ նստեցրրեց նրան «Գահին»՝ դրանով իսկ արքայական պատուի արժանացնելով նրան:

Ինչո՞ւ Ադամն ստեղծուեց Հողից

Խոնարհութեան համար, քանի որ Հողը խոնարհութիւն է նշանակում: Եթէ մարդը, իր մէջ դիտարկելով Աստուծոյ պատկերը, կարող էր մեծամտանալ, ապա՝ տեսնելով Հողը, որ մշտապէս իր ոտքերի տակ է, կը խոնարհեցնէր իրեն:

Ո՞րն է ստեղծուել առաջինը՝ հոգի՞ն, թե՞ մարմինը

Ասել, թէ առաջինը ստեղծուել է հոգին կամ մարմինը, սխալ է, քանի որ Տէրը եւ հոգին, եւ մարմինը ստեղծել է միաժամանակ:

Այդ դէպքում ի՞նչ են նշանակում «*նրա դէմքին կենդանութեան շունչ փչեց*» /Ծննդ. 2:7/ խօսքերը

«Կենդանութեան շունչը» Սուրբ Հոգու շնորհն է, որը մարդը կորցրեց մեղանչելուց յետոյ: «*Իմ ոգին յաւիտեան թող չմնայ այդ մարդկանց մէջ, որովհետև նրանք մարմնաւոր են*» /Ծննդ. 6:3/:

Ի՞նչ է նշանակում Աստուծոյ պատկեր

Աստուած ունի կամքի ազատութիւն, նա Տէր է եւ Արքայ՝ ողջ արարչագործութեան վրայ, նոյնպէս եւ մարդու մէջ դրեց կամքի ազատութիւն եւ իշխանութիւն տուեց կենդանի արարածների վրայ: Նաեւ՝ մարդն Աստծուն նման է ստեղծագործելով, սիրով եւ բանականութեամբ: Ստեղ-

ծագործելով՝մարդն արարչակից է դառնում Աստծուն: Սիրոյ միջոցով ձգտում է ստանալ ըղձալին: Բանականութեամբ՝ հասնել կատարեալ գարիքի եւ ճանաչողութեան:

Ինչո՞ւ Եւան ստեղծուեց Ադամի կողից

Եւան ստեղծուեց Ադամի կողից, որպէսզի ողջ մարդկային ցեղն իր ծագմամբ մի մարմին լինէր եւ որպէսզի դրա շնորհիւ մարդիկ բնականօրէն հակուած լինէին սիրել եւ պահպանել միմեանց:

Սուրբ Հոգու ի՞նչ շնորհներ ստացաւ Ադամը

1.Կարող էր տեսնել Աստծուն:
2. Հաղորդակցութիւն Աստուծոյ հետ:
3. Անմահութիւն:
4. Ունէր լուսեղէն պատմուճան:
5. Անբասիր կեանք:
6. Չծերացող գարիք:
7. Արժանապատուութիւն:
8. Աստուծոյ մշակ:
9. Սէր եւ Աստուծոյ ողորմածութիւն:
10. Արքայական իշխանութիւն ողջ արարչագործութեան վրայ:
11. Քահանայութիւն:
12. Մարգարէութիւն:

Մինչեւ պտղի ճաշակելն Ադամը չգիտէ՞ր արդեօք՝ որն է բարի, որը՝ չար

Մինչեւ ճաշակելը Ադամը բարին գիտէր փորձով, իսկ չարն՝ գիտութեամբ: Իսկ երբ կերաւ պտղից, չարը ճանաչեց փորձով, իսկ բարին՝ իմացութեամբ:

Կարո՞ղ էր արդեօք Ադամը չմեղանչել

Դեռ անկումից առաջ Ադամը կարող էր մեղանչել, կարող էր եւ չմեղանչել: Կարող էր մահանալ, բայց կարող էր նաեւ չմահանալ: Ադամը մարմնով անապական էր, իսկ հոգով՝ անմեղ:

Ամաչո՞ւմ էին արդեօք Ադամն ու Եւան

Մինչեւ անկումը նրանք չունէին ամօթ, քանի որ պարզամիտ էին երեխաների նման եւ անմեղ: Նաեւ՝ որպէս հագուստ նրանց ծառայում էր լուսէ պատմուճանը: Միայն անկումից յետոյ նրանց մէջ առաջացաւ ամօթը:

Ինչպէ՞ս մեղանչեց Ադամը

1. Ցանկացաւ ասպուածանալ:
2. Հաւատաց օձին:
3. Առաւել հնազանդուեց իր կնոջը, քան՝ Աստծուն:
4. Ճաշակեց պտուղը:
5. Թաքնուեց Աստծուց:
6. Չզղջաց Աստուծոյ առաջ:
7. Մեղադրեց Աստծուն իր մեղքի համար՝ասելով. «*Այս կինը, որ տուեցիր ինձ, նա՛ տուեց ինձ ծառի պտղից, և ես կերայ*»:

Ի՞նչ պատիժներ կրեց Ադամը մեղանչելուց յետոյ

Մեղանչելով՝ Ադամը կորցրեց Սուրբ Հոգու բոլոր շնորհները: Վտարուեց Դրախտից, եւ դրա համար իր ողջ կեանքում սրիպուած եղաւ իր քրտինքով վաստակել իր հանապազօրեայ հացը, ապրել վշտի եւ տառապանքների մէջ: Մինչեւ որ չվերադարձաւ հողին, որից վերցուել էր. «...*որովհետև հող էիր և հող էլ կը դառնաս*»:

Ի՞նչ է նշանակում՝ «մահով մահանալ»

Մահով մահանալ՝ նշանակում է մահանալ հոգով, այսինքն՝ մահանալ մեղքով: Ինչպէս եւ ասում է Պօղոս Առաքեալը. «...*քանի որ մեղքի վարձը մահն է*» /Հռոմ. 6.23/: Հոգեւոր մահուամբ առաջացաւ նաեւ մարմնական մահը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ

Ինչպէ՞ս է պէտք հասկանալ «Յիսուս», «Քրիստոս», «Աստուծոյ Որդի» անունները

Աստուծոյ Որդի է անուանւում Սուրբ Երրորդութեան երկրորդ Դէմքը, Ում Գաբրիէլ հրեշտակապետն անուանեց Յիսուս, որ նշանակում է Փրկիչ, քանզի Նա՝ Կոյսից երկրի վրայ ծնուեց, որպէսզի փրկի մարդկանց: Իսկ Քրիստոս անունը նշանակում է Օծեալ:

Ինչու՞ է Յիսուս Քրիստոս անուանւում Աստուծոյ Միածին Որդի

Յիսուս Քրիստոս Աստուծոյ Միածին Որդի է անուանւում, քանզի միայն Նա է Աստուծոյ Որդին՝ ծնուած Հայր Աստուծոյ էութիւնից, ուստի եւ համագոյ Հայր Աստծուն, հետեւաբար, առանց որեւէ համեմատութեան առաւել է բոլոր սուրբ հրեշտակներից եւ սուրբ մարդ-կանցից, ովքեր կոչւում են Աստուծոյ որդիներ ըստ շնորհի (տե՛ս Յովհ. 1.12)

Արդեօ՞ք Սուրբ Գիրքը Յիսուս Քրիստոսին «Միածին» է կոչում

Սուրբ Գիրքը Յիսուս Քրիստոսին Միածին է կոչում: Օրինակ՝ Յովհաննէս Աւետարանչի հետեւեալ խօսքերում՝ «*Եւ Բանը մարմին եղաւ ու բնակուեց մեր մէջ, և տեսանք նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս Միածնին՝ լի շնորհով և ճշմարտութեամբ*»: /Յովհ. 1:14/: «*Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, բացի միայն միածին Որդուց, որ Հօր ծոցում է. նա՛ յայտնեց Նրան*» /Յովհ. 1:18/:

Ի՞նչ է նշանակում «Եւ ի Մի Տէր»

Յիսուս Քրիստոս անուանւում է «Մի Տէր» այն իմաստով, որ Նա է ճշմարիտ Մի Աստուածը, ինչպէս եւ Հայրը

եւ Սուրբ Հոգին, քանզի «Տէր» անունը Աստուծոյ անուններից մէկն է: Ինչի մասին եւ վկայում է Սուրբ Գիրքը. «*Լսի՛ր, Իսրայէ՛լ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր է*» -/Երկր. Օր. 6:4/, կամ «*Մէ՛կ Տէր կայ, մէ՛կ հաւատ, մէ՛կ մկրտութիւն, մէ՛կ Աստուած, Հայր բոլորի, որ է բոլորի վրայ, բոլորի հետ և մեր բոլորի մէջ*» /Եփես. 4:5-6/:

Ինչու՞ է Աստուծոյ Որդին անուանուել Օծեալ

Որովհետեւ Նրա Աստուածային բնութիւնը՝ Սուրբ Աստուածածնի որովայնում, միաւորուելով մարդկային բնութեան հետ, օծեց այն (մարդկային բնութիւնը), ուստի եւ Նա է Օծեալը, այսինքն՝ Քրիստոս: Ինչպէս ասւում է Ղուկասի Աւետարանում. «...*որովհետև այսօր Դաւթի քաղաքում ձեզ համար ծնուեց մի Փրկիչ, որ օծեալ Տէրն է*»: Ինչպէս հինկտակարանեան ժամանակներում օծեալները մարգարէներն էին, քահանաները եւ թագաւորները, այնպէս էլ Յիսուս Քրիստոս Մարգարէ է, Թագաւոր եւ Քահանայապետ:

Ե՞րբ է ծնուել Աստուծոյ Որդին

Նրա համար է ասուած, որ Նա ծնուել է բոլոր դարերից առաջ (նախքան յաւիտեանները), որպէսզի ոեւէ մէկը չմտածի, թէ եղել է ժամանակ, երբ Նա չի եղել:

Սրանով մատնանշւում է այն, որ Յիսուս Քրիստոս յաւիտեան Որդին է Աստուծոյ, ինչպէս եւ Հայր Աստուածն է յաւիտեան:

Ի՞նչ են նշանակում «Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ» բառերը

Այս բառերը նշանակում են, որ Աստուծոյ Որդին Ճշմարիտ Աստուած է անուանւում, այն նոյն իմաստով, ինչպէս եւ Հայր Աստուած: «Լոյս՝ լոյսից» բառերը ինչ-որ առումով բացատրում են Աստուծոյ Որդու անըմբռնելի ծնունդը Հօրից: Արեւին նայելով մենք լոյս ենք տեսնում: Այդ լոյսից ծնւում է տեսանելի լոյսը ողջ մերձարեգակնային տարածութեան մէջ, սակայն եւ՛ առաջինը, եւ՛ երկրորդը նոյն լոյսն են՝ անբաժանելի եւ բնութեամբ մի:

Սրա նման էլ Հայր Աստուած յաւիտենական Լոյսն է (տե՛ս Յովհ. 1.5), Նրանից ծնւում է Աստուծոյ Որդին, Ով նոյնպէս յաւիտենական Լոյսն է: Սակայն Հայր Աստուած եւ Աստուծոյ Որդին մի յաւիտենական անբաժանելի Լոյս են մի Աստուածային Բնութեան:

Սուրբ Գրքում կա՞ն օրինակներ, որ ցոյց են տալիս, որ Յիսուս Քրիստոս Աստուած է

Նման օրինակները բազում են: Ահա դրանցից մի քանիսը. «*Սկզբից էր Բանը, և Բանը Աստուծոյ մօտ էր, և Բանն Աստուած էր*» /Յովհ. 1:1/, «*Եւ գիտենք, որ Աստուծոյ Որդին եկաւ և մեզ տուեց խելք, որպէսզի ճանաչենք նրան, ով ճշմարիտն է. և մենք ճշմարտի՝ նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի մէջ ենք. որովհետև նա՛ է ճշմարիտ Աստուած և յաւիտենական կեանք*» /Ա Յովհ. 5:20/, «*...նրանցն են նահապետները, նրանցից է նա Քրիստոս՝ ըստ մարմնի. և նա՛ է բոլորի վրայ յաւիտեանս օրհնեալ Աստուած: Ամէն*» /Հռոմ. 9:5/:

Արդեո՞ք Աստուծոյ Որդին արարուել էր

«Հաւատոյ Հանգանակի» մէջ ասւում է, որ Աստուծոյ Որդին ծնուած է, այլ ոչ՝ արարուած: Դա ասուել է Արիոսին մերկացնելու համար, ով սրբապղծօրէն ուսուցանում էր, թէ Աստուծոյ Որդին արարուած է:

Ի՞նչ են նշանակում «Նոյն Ինքն ի բնութենէ Հօր» բառերը

Այս բառերը ցոյց են տալիս, որ Աստուծոյ Որդին ունի միեւնոյն Աստուածային բնութիւնը, ինչ որ Հայր Աստուած: Սուրբ Գրքում Յիսուս Քրիստոս Ինքն Իր մասին եւ Հայր Աստուծոյ մասին ասում է. «*Ես և իմ Հայրը մի ենք*» /Յովհ. 10:30/:

Ի՞նչ են նշանակում « Որով ամենայն ինչ եղեւ» բառերը

«Հաւատոյ Հանգանակի» այս բառերը ցոյց են տալիս, որ Հայր Աստուած ամէն ինչ ստեղծեց Իր Որդու՝ որպէս Իր յաւիտեան իմաստութեան եւ Իր յաւիտեան Բանի

միջոցով: «*Ամէն ինչ նրանով եղաւ. և առանց նրան չեղաւ ոչինչ, որ եղել է*» /Յովհ. 1:3/, «*Բայց մեզ համար միայն մէ՛կ Աստուած կայ, Հայր, որ ստեղծել է ամէն բան, և մենք ապրում ենք նրանով.և՝ մէ՛կ Տէր Յիսուս Քրիստոս, որի միջոցով ստեղծուեց ամէն ինչ, և մենք ապրում ենք նրանով*» /Ա Կորնթ. 8:6/:

Ինչպէ՞ս կարող էր Աստուծոյ Որդին իջնել երկնքից, եթէ Նա, ինչպէս եւ Հայրը, Ամենագոյ է

Լինելով ամենագոյ՝ Աստուած միշտ գտնւում է երկնքում եւ միշտ՝ երկրի վրայ: Սակայն երկրի վրայ Նա սկզբում աներեւոյթ էր, ապա յայտնուեց մարմնով, ուսքի եւ ասւում է, որ Նա իջաւ երկնքից: «*Արդ, ոչ ոք երկնքից չի ելել, եթէ ոչ նա, որ իջաւ երկնքից՝ մարդու Որդին, որ երկնքից էր*» /Յովհ. 3:13/:

Ինչի՞ համար Աստուծոյ Որդին իջաւ Երկնքից

Աստուծոյ Որդին իջաւ երկնքից յանուն մեզ՝ մարդկանցս, եւ յանուն մեր փրկութեան, ինչպէս եւ ասւում է «Հաւատոյ Հանգանակում»: Նա երկիր եկաւ ոչ թէ ռեւէ ժողովրդի կամ որոշ մարդկանց համար, այլ մեր բոլորի՝ ընդհանրապէս մարդկանց փրկութեան համար:

Մարդկանց ինչի՞ց փրկելու համար եկաւ Աստուծոյ Որդին

Աստուծոյ Որդին եկաւ երկիր՝ մարդկանց փրկելու.

1. Մեղքից. «*Նա մի որդի պիտի ծնի, և նրա անունը Յիսուս պիտի դնես, քանի որ նա պիտի փրկի իր ժողովրդին՝ իր մեղքերից*» /Մատթ. 1:21/,
2. Օրէնքի անէծքից. «*Իսկ երբ ժամանակը իր լրումին հասաւ, Աստուած ուղարկեց իր Որդուն, որը ծնուեց կնոջից և մտաւ օրէնքի տակ՝ փրկելու համար նրանց, որ օրէնքի տակ էին...*» /Գաղ. 4:4-5/; «*Քրիստոս մեզ վերստին գնեց օրէնքի անէծքից՝ անէծք դառնալով մեզ համար (որովհետև գրուած է, թէ՝ «Անիծեալ է այն մարդը, որը կախուած է փայտից*» /Գաղ. 3:13/,

3. Սատանային ծառայելուց. «...նա փրկեց մեզ խաւարի իշխանութիւնից եւ մեզ փոխադրեց արքայութիւնն իր սիրելի Որդու» /Կող. 1:13/,

4. Մահից. «*Արդ, որովհետև զաւակները հաղորդակից եղան արեան և մարմնին, ինքն էլ մարդկային բնութեամբ մասնակից եղաւ նրանց, որպէսզի իր մահով կործանի նրան, որ մահուան իշխանութիւն ունէր, այսինքն՝ Սատանային, և ազատի նրանց, որ, մահուան երկիւղով, միշտ գերութեան վիճակում էին*» /Եբր. 2:14-15/,

5. Դժոխքից. «*...դրա համար էլ ասում է. «Ելաւ բարձունքը, գերիների բազմութիւն գերեվարեց և մարդկանց պարգևներ տուեց»: «Ելաւ»-ն ի՞նչ է, եթէ ոչ այն, որ իջաւ նախ երկրի ստորին կողմը: Նա, որ իջաւ, նոյն ինքն է, որ բարձրացաւ երկինքներից աւելի վեր, որպէսզի լցնի ամբողջ տիեզերքը*» /Եփես. 4:8-10/, «*Կամ ինչպէ՞ս կարող է մէկը մտնել հզօր մի մարդու տունը և յափշտակել նրա գոյքերը, եթէ նախ չկապի հզօրին և ապա նրա տունը կողոպտի*» /Մատթ. 12:29/,

6. Կուռքերին ծառայելուց. «*Գնացէ՛ք ուրեմն, աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցէ՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի...*» /Մատթ. 28:19-20/:

Ի՞նչ ենք հասկանում «մարմնացում» ասելով

«Մարմնացում» բառը ենթադրում է, որ Աստուծոյ Որդին ընդունեց մարդկային մարմինը, բացի մեղքից, եւ դարձաւ մարդ՝ չդադարելով լինել Աստուած, ինչպէս եւ ասւում է Աւետարանում. «*Եւ Բանը մարմին եղաւ*» /Յովհ. 1:14/:

Ինչու՞ է նաեւ ասւում, որ Նա «մարդացաւ»

Սա ասւում է նրա համար, որպէսզի ինչ-որ մէկը չմտածի, թէ Աստուծոյ Որդին միայն մարմին ընդունեց, այլ որպէսզի Նրան ընդունեն որպէս կատարեալ մարդ: Ի հաստատումն դրա՝ «Հաւատոյ Հանգանակի» մէջ ասւում են նաեւ այս խօսքերը՝ «*Որով էառ զմարմին, զհո-*

գի և զմիտ, և զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և ո՛չ կարծեօք»:

Ի՞նչ է ասւում Սուրբ Գրքում Աստուծոյ Որդու՝ Սուրբ Հոգուց եւ սուրբ Կոյս Մարիամից մարմնանալու մասին

Սուրբ Գրքում Աստուծոյ Որդու՝ Սուրբ Հոգուց եւ սուրբ Կոյս Մարիամից մարմնանալու մասին պատմում է Ղուկաս Աւետարանիչը: Երբ Կոյս Մարիամը Յիսուսով յղիանալու աւետիսն Իրեն տուող Հրեշտակապետին հարցրեց. «*Ինչպէ՞ս այդ կը պատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում*», Հրեշտակապետն ի պատասխան ասաց. «*Սուրբ Հոգին կը գայ քո վրայ, և Բարձրեալի զօրութիւնը հովանի կը լինի քեզ, որովհետև նա, որ քեզնից ծնուելու է, սուրբ է և Աստուծոյ որդի կը կոչուի*» - /Ղուկ. 1:34-35/:

Ինչու՞ Հրեշտակապետն աւետեց Կոյսին, եւ ոչ՝ ոեւէ մարդ

Քանի որ Կոյսը պիտի ծնէր Աստուծոյ Որդուն, ապա աւետիսը պիտի տար Աստուծոյ Հրեշտակը եւ ոչ թէ՝ մարդը:

Ի՞նչ ցեղից էր սերում Մարիամ Աստուածածինը

Ամենասուրբ Կոյս Մարիամը սերում էր Դաւթի թագաւորական ցեղից, որից եւ պէտք է սերէր Փրկիչը՝ ըստ Աստուծոյ աւետման. «*Տէրը ճշմարտութեամբ երդուեց Դաւթին ու չստեց նրան. Քո որովայնի պտղից պիտի նստեցնեմ քո գահին*» /Սղ. 131:11/:

Նա նշանուած էր միեւնոյն ցեղից՝ Յովսէփի հետ, որպէսզի նա Կոյսի պահապանը լինէր, քանզի նրան նուիրաբերել էին Աստծուն՝ ընդմիշտ Կոյս մնալու խոստմամբ:

Ինչու՞ ենք Նրան անուանում Ընդմիշտ Կոյս

Ըստ Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետութեան՝ Ամենասուրբ Մարիամը միշտ եղել էր եւ մնում է Կոյս մինչեւ ծնունդը (*Ահա կոյսը պիտի յղիանայ և մի որդի*

պիտի ծնի, և նրան պիտի կոչեն Էմմանուէլ...), ծնունդի ժամանակ եւ նոյնիսկ Փրկչի ծնունդից յետոյ, Նրա կուսութեան կնիքը չխախտուեց, ուստի եւ Նա կոչւում է Ընդմիշտ Կոյս: Նա Կոյս է՝ լինելով Մայր, եւ Նա Մայր է՝ լինելով Կոյս:

Ինչու՞ ենք մենք Նրան կոչում նաեւ Աստուածածին

Քանի որ նա ծնեց Աստուծոյ Որդուն, ապա, բնականաբար, Նա Աստուածածին է. «*...որովհետև նա, որ քեզնից ծնուելու է, սուրբ է և Աստուծոյ որդի կը կոչուի*» /Ղուկ. 1:34-35/: Այնուհետեւ, Եսայի մարգարէի հետեւեալ խօսքերից երեւում է, որ Կոյս Մարիամը Աստուածածին է. «*Ահա կոյսը պիտի յղիանայ ու որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմմանուէլ*» /Ես. 7:14/ (Էմմանուէլ հին եբրայերէնից թարգմանած նշանակում է «Աստուած մեզ հետ է»): Նաեւ արդար Եղիսաբէթը՝ Կոյս Մարիամի ազգականուհին, նոյնպէս անուանում է Նրան Տիրոջ Մայր: Եւ այդ անուանումը համազօր է «Աստուածածին» անուանը: «*Որտեղի՞ց ինձ այս ուրախութիւնը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մօտ գայ*» /Ղուկ. 1:43/:

Ինչու՞ Տէր Յիսուս Քրիստոս մատնուեց մահուան

Տէր Յիսուս Քրիստոս մահուան մատնուեց ոչ թէ որովհետեւ չէր կարող խուսափել մահից, այլ որովհետեւ Ինքն էր կամենում դա. «*...ես իմ կեանքն եմ տալիս, որպէսզի վերստին այն առնեմ: Այն ինձնից ոչ ոք չի վերցնի, այլ ես ինքս եմ այն տալիս. իշխանութիւն ունեմ այն տալու և իշխանութիւն ունեմ այն վերստին առնելու*» /Յովհ. 10:17-18/, «*Եւ ինչպէս որ Մովսէսը անապատում բարձրացրեց օձը, այնպէս էլ մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի, ով նրան հաւատում է, յաւիտենական կեանքն ընդունի. քանի որ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տուեց, որպէսզի, ով նրան հաւատում է չկորչի, այլ ընդունի յաւիտենական կեանքը*» /Յովհ. 3:14-16/:

Ո՞վ դատապարտեց Նրան մահուան

Հրեայ աւագանին եւ դպիրներն ատում էին Նրան այն բանի համար, որ Նա մերկացնում էր նրանց կեղծ ուսմունքն ու անօրինական կեանքը, եւ նախանձում էին Նրան, քանզի ժողովուրդը ուսմունքի եւ հրաշքների համար Նրան աւելի էր յարգում, քան իրենց: Այդ պատճառով էլ նրանք զրպարտեցին Յիսուսին եւ դատապարտեցին Նրան մահուան. «*Քահանայապետը խօսեց և նրան ասաց. «Երդուեցնում եմ քեզ կենդանի Աստուծով, որ մեզ ասես, թէ դու՞ ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին»: Յիսուս նրան ասաց. «Դու ասացիր: Բայց ասում եմ ձեզ. այսուհետև մարդու Որդուն կը տեսնէք նստած ամենազօր Աստուծոյ աջ կողմում և եկած երկնքի ամպերի վրայով»: Այն ժամանակ քահանայապետը պատռեց իր զգեստներն ու ասաց. «Հայհոյեց, էլ ինչի՞ են պէտք մեզ վկաներ. ահա հիմա լսեցիք նրա հայհոյանքը: Ի՞նչ է ձեր կամքը»: Նրանք պատասխանեցին ու ասացին՝ մահապարտ է*» /Մատթ. 26:63-66/:

Ինչու՞ է «Հաւատոյ Հանգանակում» ասւում, որ Յիսուս Քրիստոս չարչարուեց

«Հաւատոյ Հանգանակում» ոչ միայն ասւում է, որ Յիսուս Քրիստոս խաչուեց, այլեւ աւելացուած է, որ Նա չարչարուեց, որպէսզի ցոյց տրուի, որ Նրա խաչելութիւնը ոչ թէ ընդամէնը առերեւոյթ չարչարանքներ եւ մահ էր, ինչպէս ասում էին որոշ սուտ վարդապետներ, այլ իրական չարչարանք էր եւ մահ:

Քրիստոսի չարչարանքների մասին խօսում է Եսայի Մարգարէն. «*Նրա տեսքն աւելի անարգ էր ու նսեմ, քան բոլոր մարդկանց որդիներինը: Նա հարուածների ենթակայ մի մարդ եղաւ, որ ցաւերին համբերել գիտէ. իր երեսը դարձնելով՝ արհամարհուեց ու բանի տեղ չդրուեց: Նա՝ մեր մեղքերն էր վերցնում և մեզ համար չարչարւում, սակայն մենք նրա ցաւերը, հարուածներն ու չարչարանքները համարեցինք իբրև Աստծուց եկած բան: Բայց նա խոցուեց մեր մեղքերի համար և մեր անօրէնութիւնների համար դատապարտուեց. մեր խաղաղութեան համար նա՛ պատիժ կրեց, նրա՛*

վէրքերով մենք բժշկուեցինք: Ամէնքն էլ մոլորուած ոչխարներ են. մարդն իր ճանապարհին մոլորուեց, բայց Տէրը նրա՛ն մատնեց մեր մեղքերի համար: Ու նա վշտից իր բերանն անգամ չի բացում: Ինչպէս ոչխար՝ նա մորթուելու տարուեց, ինչպէս գառ՝ անմռունչ կանգնած է խուզողի առաջ և նրա նման իր բերանը չի բացում» /Ես. 53:3-7/:

Ինչու՞ Յիսուս Քրիստոս մէկ անգամ մեռաւ

Որովհետեւ խաչի վրայ Նա՝ Իր մահով իրագործեց կատարեալ փրկութիւնը ողջ մարդկային ցեղի համար, ինչի մասին է ասում Պօղոս Առաքեալը. «*...քանզի Քրիստոս ոչ թէ ճշմարտութեան օրինակ եղող ձեռակերտ սրբարանը մտաւ, այլ՝ բուն իսկ երկինքը, որպէսզի մեզ համար ներկայանայ Աստուծոյ առաջ: Ոչ թէ նրա համար, որ շատ անգամ ինքն իրե՛ն պատարագ մատուցի, ինչպէս քահանայապետը, որ Սրբութիւնների Սրբութիւնն էր մտնում ամէն տարի իրը չեղած արիւնով. այլապէս նա բազում անգամ պէտք է չարչարուէր աշխարհի սկզբից ի վեր: Բայց այժմ, դարերի վախճանին, նա մէկ անգամ ընդմիշտ յայտնուեց՝ իր անձի պատարագումով մեղքը ջնջելու համար: Եւ ինչպէս որ մարդկանցից սահմանուած է մէ՛կ անգամ մեռնել և այնուհետև դատաստան, նոյնպէս և Քրիստոս մէ՛կ անգամ որպէս պատարագ մատուցուեց՝ շատերի մեղքերը վերացնելու համար. իսկ երկրորդ անգամ, առանց մեղքի, պիտի յայտնուի նրանց, որոնք սպասում են իրեն՝ հաւատով փրկուելու համար*» /Եբր. 9:24-28/, «*Այդ կամքով էլ մենք սրբուեցինք Յիսուս Քրիստոսի մարմնի մէկընդմիշտ պատարագումով*» /Եբր. 10:10/:

Ինչու՞ Յիսուս Քրիստոս մահացաւ՝ թափելով Իր Արիւնը

Պօղոս Առաքեալի խօսքերով՝ առանց արեան չի լինում թողութիւն. «*Եւ գրեթէ ամէն ինչ արիւնով էր մաքրւում ըստ օրէնքի, և առանց արիւն թափելու թողութիւն չի լինում*» /Եբր. 9:22/, այսինքն՝ Քրիստոսի Արեամբ մենք Հօր հետ հաշտութիւն ստացանք: Իր Արեամբ Տէրը հաստատեց Նոր Ուխտը, յաւերժ քաւութիւնը եւ մեղքե-

ից մաքրումը. «...*ո՛չ էլ նոխազների և զուարակների արիւնով, մի անգամ ընդմիշտ իր իսկ արեամբ մտաւ սրբարան՝ յաւիտենական փրկութիւն ապահովելով... որչա՞փ ևս առաւել արիւնը Քրիստոսի, - որ յաւիտենական Հոգու միջոցով ինքն իրեն որպէս անարատ պատարագ մատուցեց Աստծուն, - կը մաքրի ձեր խղճմտանքը մեռած գործերից, որպէսզի ծառայէք կենդանի Աստծուն: Ահա թէ ինչու նա նոր ուխտի միջնորդ է, քանի որ իր մահը առաջին ուխտի ժամանակ գործուած յանցանքների քաւութեան համար եղաւ, որպէսզի կանչուածները յաւիտենական ժառանգութեան խոստումն ստանան... Ուստի և առաջին ուխտը առանց արեան չէր նուիրագործուի*» /Եբր. 9:12-18/: «*Իմացէ՛ք, որ ապականացու արծաթեղէնով և ոսկեղէնով չէ, որ փրկուեցիք ձեր հայրենաւանդ ունայն ընթացքից, այլ՝ թանկագին արեամբ Քրիստոսի, որ անբիծ և անարատ է, ինչպէս մի գառ*» /Ա Պետր. 1:18-19/:

Ինչու՞ Յիսուս Քրիստոս խաչուեց

Խաչը՝ որպէս տանջանքների եւ մահուան գործիք, հնարել էին հռոմէացիները, ուստի՝ խաչի վրայ մահը նրանց համար ամենաամօթալի մահապատիժն էր, որին դատապարտում էին միայն անուղղելի չարագործներին եւ դաւաճաններին: Հռոմէացիները համարում էին, որ խաչելութեան մասին պարզ յիշատակումն անգամ պղծում է Հռոմի քաղաքացու շուրթերը:

Իսրայէլացիների համար խաչի վրայ մահը նոյնպէս համարւում էր ամենաամօթալի մահապատիժը, ինչպէս որ գրուած է Հին Կտակարանում. «...*որովհետև Աստծուց անիծուած է նա, ով կախուած է ծառից*» /Երկր. Օր. 21:23/: Այդ պատճառով էլ Տէրը մահուան դատապարտուեց խաչի վրայ:

Ի՞նչ վիճակում էր Յիսուս Քրիստոս Իր մահից յետոյ մինչեւ յարութիւն

Նրա Մարմինը մահացած էր, քանի որ հոգին բաժանուել էր նրանից, սակայն այդ նոյն Մարմինը կենդանի էր Աստուածութեամբ: Եւ այդ Մարմինը,

Աստուածութեան հետ միաւորուած, թաղուեց եւ մնաց անապական: Իսկ հոգին, Աստուածութեան հետ միաւորուած, իջաւ դժոխք:

Ինչու՞ Յիսուս Քրիստոս թաղուեց

Քանի որ Տէր Աստուած Ադամին ասաց. «*Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ, որովհետև հող էիր և հող էլ կը դառնաս*» /Ծննդ. 3:19/, ապա հարկաւոր էր Քրիստոսին մտնել հողի մէջ, որպէսզի վերացնէր դատապարտութիւնը: Ինչպէս փշէ պսակով ու Իր քրտինքով վերացրեց փուշն ու քրտինքը, այնպէս էլ հողի մէջ թաղուելով՝ մահը:

Ինչու՞ է ասւում , որ Յիսուս Քրիստոս թաղուեց

Յիշատակումը, որ Նա թաղուեց, բերւում է, որպէսզի զօրանայ հաւատքը առ այն, որ Նա իրօք մահացաւ եւ յարութիւն առաւ, քանզի թշնամիներն անգամ պահակներ կարգեցին Նրա գերեզմանին, իսկ գերեզմանը կնքեցին /տե՛ս Մատթ. 27:65-66/: Թաղման մասին խօսում է նաեւ Եսայի Մարգարէն. «*Նրա գերեզմանի համար՝ չարութեամբ, իսկ նրա մահուան համար մեծամեծ հարուածներով պիտի վրէժխնդիր լինեմ, որովհետև նա անօրէնութիւն չգործեց, և նենգութիւնը տեղ չգտաւ նրա բերանում*» /Ես. 53:9/:

Ինչի՞ համար Յիսուս Քրիստոս իջաւ դժոխք

Տէր Յիսուս Քրիստոս իջաւ դժոխք, որպէսզի այնտեղ քարոզի մահուան հանդէպ յաղթանակի մասին եւ Իր գալստեանը հաւատով սպասող մարդկանց հոգիներն ազատի սատանայի իշխանութիւնից, դժոխքից եւ մահուանից: «*Արդարև, մեր բոլորի համար, մեղքերի պատճառով, մէկ անգամ մեռաւ և ինքը Քրիստոս՝ Արդարը՝ անարդարների համար, որպէսզի մեզ մօտեցնի Աստծուն. նա թէպէտև մարմնով մեռաւ, բայց կենդանի է Հոգով, որով և գնաց, քարոզեց բանտում եղած այն հոգիներին*» /Ա Պետր. 3:18-19/, «*...դրա համար էլ ասում է. «Ելաւ բարձունքը, գերիների բազմութիւն գերեվարեց և*

մարդկանց պարգևներ տուեց»: «Ելաւ»-ն ի՞նչ է, եթէ ոչ այն, որ իջաւ նախ երկրի ստորին կողմը: Նա, որ իջաւ, նոյն ինքն է, որ բարձրացաւ երկինքներից աւելի վեր, որպէսզի լցնի ամբողջ տիեզերքը» /Եփես. 4:8-10/, «*Կամ ինչպէ՞ս կարող է մէկը մտնել հզօր մի մարդու տունը և յափշտակել նրա գոյքերը, եթէ նախ չկապի հզօրին և ապա նրա տունը կողոպտի*» /Մատթ. 12:19/:

Ե՞րբ յարութիւն առաւ Յիսուս Քրիստոս

Երրորդ օրը, ինչպէս եւ ասւում է «Հաւատոյ Հանգանակում». «*...յերրորդ աւուր յարուցեալ*»: Երրորդ օրը յարութիւն առնելու մասին ասում էր նաեւ Տէրը. «*Մարդու Որդին մատնուելու է մարդկանց ձեռքը, նրանք պիտի սպանեն նրան. և երբ նա սպանուի, երրորդ օրը յարութիւն պիտի առնի*» /Մարկ. 9:30/: Երրորդ օրը յարութիւն առնելու մասին վկայում է նաեւ Պօղոս Առաքեալը. «*...որովհետև ես ձեզ աւանդեցի նախ այն, ինչը ես ինքս ընդունեցի. թէ՝ Քրիստոս մեռաւ մեր մեղքերի համար՝ ըստ Գրքերի և թէ՝ թաղուեց և թէ՝ յարութիւն առաւ երրորդ օրը՝ ըստ Գրքերի*» /Ա Կորնթ. 15:4-5/: Հին Կտակարանում նոյնպէս մատնանշւում է, որ Յիսուս Քրիստոս պէտք է յարութիւն առնէր հենց երրորդ օրը: Դրա պատկերը տալիս է Յովնան Մարգարէն. «*Երեք ցերեկ, երեք գիշեր Յովնանը կէտի փորում էր*» /Յովն. 2:1/, ինչի մասին Տէրն Ինքն էլ է ասում. «*...որովհետև, ինչպէս Յովնանը երեք օր ու երեք գիշեր կէտի փորի մէջ էր, նոյնպէս և մարդու Որդին երկրի ընդերքում՝ երեք օր ու երեք գիշեր*» /Մատթ. 12:40/:

Ինչպէ՞ս մարդիկ իմացան, որ Յիսուս Քրիստոս յարութիւն է առել

Գերեզմանը հսկող զինուորները սարսափով իմացան Քրիստոսի յարութեան մասին, երբ Աստուծոյ հրեշտակը մի կողմ գլորեց քարը, որով փակուած էր Նրա Գերեզմանը, եւ միաժամանակ տեղի ունեցաւ մեծ երկրաշարժ: Հրեշտակներն աւետեցին Քրիստոսի յարութեան մասին Մարիամ Մագդաղենացուն եւ մի քանի հոգու (տե՛ս Մատթ. 28:1-7): Յիսուս Քրիստոս Ինքը Իր

յարութեան օրը երեւաց շատերին՝ իւղաբեր կանանց, Պետրոս Առաքեալին, Էմմաուս գնացող երկու աշակերտներին, եւ, ի վերջոյ, բոլոր աշակերտներին երեւաց այն տանը, որի դռները փակ էին: Այնուհետեւ, Նա բազմիցս երեւաց նրանց քառասուն օրուայ ընթացքում. այդ օրերից մէկում Նա միանգամից երեւաց Իրեն հաւատարիմ աւելի քան հինգ հարիւր մարդու (տե՛ս Կորնթ. 15:6):

Յարութիւնից յետոյ քանի՞ օր Յիսուս Քրիստոս երեւաց Առաքեալներին

Յիսուս Քրիստոս Իր յարութիւնից յետոյ քառասուն օր երեւաց իր Առաքեալներին, որպէսզի շարունակի ուսուցանել նրանց Աստուծոյ արքայութեան գաղտնիքները, ինչպէս եւ ասւում է «Գործք Առաքելոցում». «*Նա իր շարչարանքներից յետոյ իրեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ շատ ապացոյցներով՝ քառասուն օրերի ընթացքում երևալով նրանց և խօսելով Աստուծոյ արքայութեան մասին*» /Գործք 1:3/:

Ինչու՞ Յիսուս Քրիստոս համբարձուեց

Որպէսզի Երկնքում մեզ համար տեղ պատրաստի. «*...գնում եմ ձեզ համար էլ տեղ պատրաստելու*» /Յովհ. 14:2/ եւ որպէսզի Սուրբ Հոգուն ուղարկի. «*Բայց ես ճշմարիտն եմ ասում ձեզ. լաւ է ձեզ համար, որ ես գնամ. որովհետև եթէ ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մօտ չի գայ. իսկ եթէ գնամ, նրան կ'ուղարկեմ ձեզ մօտ*» /Յովհ. 16:7/:

Ինչպէ՞ս համբարձուեց Յիսուս Քրիստոս

Ինչպէս ասւում է «Հաւատոյ Հանգանակում»՝ «նոյն մարմնով», այսինքն՝ Նրա մարմինը յարութիւնից յետոյ էլ փոփոխութեան չենթարկուեց:

Ինչպէ՞ս պէտք է հասկանալ «նստեց Հօր աջ կողմում» բառերը

Ասուած է, որ Յիսուս Քրիստոս նստած է Հօր աջ կողմում (այսինքն՝ Հօր կողքին): Սակայն Աստուած ամենագոյ է: Այս խօսքերը պէտք է հասկանալ հոգեւոր առումով. Յիսուս Քրիստոս ունի Հայր Աստուծոյ զօրութեանը հաւասար զօրութիւն:

ԲԱՆԻ ՄԱՐԴԵՂԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ճի՞շտ է ասելը, թէ Քրիստոս ծնուեց, մեռաւ, յարութիւն առաւ իբրեւ մարդ

Ճիշտ չէ այդպէս ասելը, քանի որ այդպէս ասում են Քրիստոսի՝ ըստ էութեան Ճշմարիտ Աստուած լինելուն չհաւատացողները:

«Իբրեւ մարդ» արտայայտութիւնն ինքնին քննութեան է առնում երեք կերպ՝ աչքերով, մտքով եւ հաւատքով, քանզի աչքերով տեսնում ենք զգալիները, մտքով՝ իմանալին, իսկ հաւատքով՝ անիմանալին: Եւ այսպէս՝ աչքը սխալւում է, երբ, օրինակ, ջրի մէջ նաւի ղեկը բեկուած է տեսնում: Նոյնպէս եւ միտքն է սխալւում Աստծուն քննելիս, ինչպէս օրինակ՝ իմաստունների դէպքում, ովքեր չկարողացան մտքով ճանաչել Աստծուն: Բայց հենց Հաւատքով է, որն է Աստուծոյ լոյսն ու շնորհը՝ իջած մարդկանց վրայ, որ ճանաչում ենք Աստծուն: Եւ այսպէս՝ ով չունի հաւատքի լոյսը, նա չի ճանաչում Քրիստոսին՝ որպէս Ճշմարիտ Աստուծոյ, այլ հրեաների պէս տեսնում է միայն տեսանելին. «*...որ դու մարդ ես, բայց ինքդ քեզ Աստուծոյ տեղ ես դնում*» /Յովհ. 10:33/: Ինչպէս եւ այլադաւանները (մուսուլմաններ), տեսնելով Քրիստոսի մարմինը, Նրան ընդունում են իբրեւ մարդու կամ Մարգարէի:

Եւ քանի որ նախ տեսնում ենք մարդու մարմինը, յետոյ միայն՝ ճանաչում նրա հոգին, այդպէս էլ նախ տեսնում ենք Քրիստոսի Մարմինը, իսկ յետոյ եւ ճանաչում Նրա Աստուածութիւնը:

Այսպիսով՝ Քրիստոս Մարդ է ճշմարիտ մարմնով, հոգով եւ մտքով, նոյնիսկ՝ աւելին, քան մարդը, քանզի Նա մարդացած Աստուած է:

Տարբերո՞ւմ է արդեօք մեր Տիրոջ ծնունդը մարդկանց ծնունդից

Այո, տարբերւում է: Պէտք է ասել, որ ծննդեան չորս տեսակ կայ. 1. ոչ մօրից եւ ոչ հօրից, ինչպէս Ադամինը, 2.

հօրից, բայց ոչ մօրից, ինչպէս Եւայինը, 3. հօրից եւ մօրից, ինչպէս բոլոր մարդկանցը, եւ 4. մօրից, բայց ոչ հօրից, ինչպէս Քրիստոսի ծնունդն էր:

Այսպիսով՝ մեր Տիրոջ ծնունդը տարբերւում է միւս ծնունդներից: Նախեւառաջ՝ քանզի Սուրբ Հոգուց էր. «...*որովհետեւ նրա մէջ յղացուածը Սուրբ Հոգուց է*» /Մատթ. 1:20/: Երկրորդ՝ Նրա ծնունդն առանց սկզբնական մեղքի էր. «...*որովհետեւ նա, որ քեզնից է ծնուելու, սուրբ է և Աստուծոյ որդի կը կոչուի*» /Ղուկ. 1:35/: Ծնունդն առանց սերմի էր. «*Բայց նրան չէր մօտենում, մինչև Մարիամը ծնեց իր անդրանիկ որդուն*» /Մատթ. 1:25/: Բացի այդ՝ անապական էր, քանզի Նա Ինքն անապական էր, իսկ Կոյս Մարիամը ծննդեան ժամանակ մնաց Անարատ Կոյս, քանզի «...*ահա կոյսը կը յղանայ և կը ծնի մի որդի*» /Ես. 7:14/: Քանզի Նրա Մարմինն անարատ էր, անմեղ, անապական, կերակրի կարիք չունէր, չնայած նրան, որ յանուն մեզ նա սնուեց կուսական սփինքներից, եւ զերծ էր բնական ախտերից: Բացի այդ՝ Նրա ծնունդն աւետել է Հրեշտակը:

Բայց չէ՞ որ Յովհաննէս Մկրտչի ծնունդը նոյնպէս աւետել է Հրեշտակը

Ասենք, որ այո, բայց ամէն դէպքում այս երկու աւետիսները տարբերւում են: Հրեշտակը Քրիստոսի մասին աւետեց որպէս Աստուծոյ Որդու, իսկ Յովհաննէսի մասին խօսեց որպէս Զաքարիայի որդու: Քրիստոսին անուանեց յաւիտենական Թագաւոր, իսկ Յովհաննէսին՝ ծառայ: Յետոյ՝ Քրիստոս ծնուեց Կոյսից, իսկ Յովհաննէսն՝ անպտուղ կնոջից: Յովհաննէսը, լինելով իր մօր արգանդում, երկրպագեց Յիսուսին. «...*մանուկը խաղաց նրա որովայնում*» /Ղուկ. 1:41/, իսկ երեսուն տարուց յետոյ, լսուեց որպէս «*Անապատում կանչողի ձայն*» /Ես. 40:3/: Այսպէս ուրեմն՝ Կոյսից ծնուածն ինքը Տէր Աստուած էր, Հրեշտակի խօսքով. «...*որովհետեւ, այսօր Դաւթի քաղաքում ձեզ համար ծնուեց մի Փրկիչ, որ օծեալ Տէրն է*» /Ղուկ. 2:11/: Եւ Աստուծոյ Սուրբ Եկեղեցին խոստովանում է Կոյսին՝ Աստուածածնին, Եղիսաբէթի՝ Յովհաննէսի մօր խօսքերով. «*Որտեղի՞ց*

ինձ այս ուրախութիւնը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մօտ գայ» /Ղուկ. 1:43/, քանի որ Աստծուն ծնեց Մարմնով:

Ինչո՞ւ Քրիստոս թլփատուեց, եթէ անմեղ էր

Քանզի Նա ամենայն սրբութեան պատճառն էր, եւ հարկ էր, որ սրբութեան գործը Նա տանէր եւ Իր մէջ: Նաեւ, որ վկայէր Իր ճշմարիտ մարդեղութիւնը, որ չմտածէին, թէ Նրա Մարմինը երեւութական էր: Այն օրէնքներին, որ Նրա իսկ կողմից հաստատուած էին, հարկ էր, որ Ինքն էլ հետեւէր, որպէսզի ամէնքը հաւատային, որ այդ օրէնքները հենց Ինքն էր սահմանել: Որպէսզի վերցնէր մեր միջից մեղքի լուծը, որը ներկայ էր օրէնքի լուծի մէջ: Նաեւ, որպէսզի ցոյց տար, որ Ինքն Աբրահամի Որդին է. «*Գիրք ծննդեան Յիսուս Քրիստոսի՝ Դաւթի որդու, Աբրահամի որդու*» /Մատթ. 1:1/: Բայց ամենագլխաւորը՝ այն բանի համար թլփատուեց, որ մեզնից հանի օրէնքի լուծը. «*Աստուած ուղարկեց իր Որդուն, որը ծնուեց կնոջից և մտաւ օրէնքի տակ՝ գնելու համար նրանց, որ օրէնքի տակ էին, որպէսզի մենք որդեգրութիւն ընդունենք*» /Գաղ. 4:4, 5/:

Եթէ Քրիստոս թլփատուեց, ինչո՞ւ ուրեմն մենք չենք թլփատուում

Թլփատուելով՝ Քրիստոս հետեւեց Հին Ուխտին, իսկ մեզ համար հաստատեց մկրտութեան նոր օրէնքը. «*Գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունով*» /Մատթ. 28:19/: Երբ Քրիստոս թլփատուում էր, օրէնքը դեռ ուժ ունէր, եւ պէտք էր թլփատուել, բայց հիմա այլ ժամանակներ են, քանի որ օրէնքը կատարուեց, իսկ թլփատութիւնը խարխլուեց: Եւ մենք ոչ թէ չենք թլփատուում, որպէսզի տարբերուենք հրեաներից, այլ մկրտուում ենք, որ տարբերուենք հեթանոսներից: Նաեւ որովհետեւ, ինչպէս ասում է Պօղոս Առաքեալը. «*...եթէ թլփատուէք, Քրիստոս ձեզ ոչնչով չի օգնի*» /Գաղ. 5:2/:

Ինչո՞ւ Յիսուս Քրիստոս մկրտուեց

Քրիստոս մկրտուեց, ոչ որովհետեւ սրբութեան կարիք ունէր. եւ սա երեւում է հետեւեալից. 1. բնութեամբ Նա Սուրբ էր, ինչպէս Աստուած, 2. Սուրբ էր նաեւ Մարմնով, քանզի Նրա Արիւնը մաքրուած էր Սուրբ Հոգով. «*...որովհետեւ նա, որ քեզնից է ծնուելու, սուրբ է և Աստուծոյ որդի կը կոչուի*», 3. Սուրբ էր եւ արդարութեան գործերով. «*...նա, որ մեղք չգործեց, և նրա բերանում նենգութիւնը տեղ չգտաւ*» /Ա Պետր. 2:22/:

Այսպիսով՝ թէ ինչու մկրտուեց, մի շարք պատճառներ կան. 1. որպէսզի իր վրայ վերցնի մեր սրբութիւնը, ինչպէս եւ փրկչական ամբողջ տնօրինութիւնը, 2. որպէսզի ջրում ջախջախի օձի գլուխը, 3. որպէսզի լուանայ մեր մեղքերը եւ ջրի մէջ ընկղմի հին Ադամին, 4. որպէսզի մաքրի Մկրտչին եւ ջուրը, 5. որպէսզի զօրացնի ջուրը՝ վերստին ծնելով մեզ, 6. որպէսզի կատարի օրէնքը, 7. որպէսզի մեզ համար օրինակ լինի (որպէսզի մենք նոյնպէս մկրտուենք), 8. որպէսզի այնտեղ յայտնի Սուրբ Երրորդութեան խորհուրդը, 9. որպէսզի ցոյց տայ Իր խոնարհութիւնը, որը երեւում է Մատթէոսի Աւետարանում /3:13/. «*Յիսուս Գալիլիայից Յորդանան եկաւ, Յովհաննէսի մօտ՝ նրանից մկրտուելու*»: «Յիսուս եկաւ», այսինքն՝ փրկութիւն Շնորհողը, այլ ոչ՝ փրկութեան կարիք ունեցողը: «Յորդանան եկաւ» , այսինքն՝ Նա, Ով բոլոր տարերքների Արարիչն է, խոնարհեցրեց Իրեն ջրի տարերքի մէջ: «Յովհաննէսի մօտ», այսինքն՝ Տէրը՝ ծառայի մօտ, Արքան՝ սպասաւորի մօտ, Արեւը՝ արուսեակի մօտ: «նրանից մկրտուելու», այսինքն՝ Աղբիւրը՝ առուից, Լիութիւնը՝ ջրի կաթիլից, Մաքուրը՝ մաքրուած կաւից, Արեւը՝ կանթեղից:

Ի՞նչ կրքեր կրեց Յիսուս Քրիստոս

Քրիստոս կրեց բոլոր մարդկային կրքերը, բացի մեղքից, այսինքն՝ ապականութիւնից, աւելորդ ծորումից եւ հիւանդութիւնից: Նա կրեց մարդկային բնութեան բնական կրքերը, բայց ոչ՝ ներմուծուածները, այսինքն՝ բնութեանը խորթ կրքերը: Ոչ արհամարհելի կրքերը կրեց, իսկ արհամարհելիները՝ ոչ: Տարաւ բնութեանն օգտա-

կար կրքեր, իսկ անօգուտները՝ ոչ: Յետոյ՝ Ադամի դատապարտութեան կիրքը կրեց, բայց այն, որ սատանայից էր, չկրեց:

Իսկ Յիսուս Քրիստոս կերակրի ծորում ունէ՞ր

Ոչ, չունէր, քանզի 1. դա ապականութեան մաս է համարւում, 2. արհամարհելի է եւ անպէտք, 3. աւելորդ է համարւում, եւ Քրիստոսի մէջ այն չկար:

Հապա ի՞նչ էր լինում կերած սնունդը

1. Ինչպէս Նա, անմարմին լինելով, Աբրահամի հետ ճաշակեց, եւ ծորում չունէր, այնպէս էլ Մարմնի մէջ լինելով՝ չունեցաւ, 2. չէր ուտում եւ չէր խմում անչափ, այլ՝ չափաւոր, որպէսզի միմիայն սնէր Իր Մարմինը, 3. ինչպէս Առաքեալների հետ յարութիւնից յետոյ ճաշակեց եւ ծորում չունեցաւ, այնպէս էլ մինչեւ Խաչը չունէր ծորում, 4. ինչպէս, օրինակ, կապարով կնքուած ապակէ անօթի մէջ ջուրն արեւի ջերմութիւնից նուազում է, այնպէս էլ Աստուածութեան հրից նուազում է մարմնի ծորումը:

Ինչո՞ւ Քրիստոս կրեց ոչ արհամարհելի կրքեր

1. որպէսզի ցոյց տայ՝ ճշմարիտ մարդ է Նա, այլ ոչ՝առերեւոյթ, 2. որպէսզի ծածկի իր Աստուածութիւնը՝ չարին անհաղորդ մնալու նպատակով, 3. որպէսզի ցոյց տայ, որ Ինքը վեր է բոլոր կրքերից, քանզի յօժար կամքով կրեց դրանք, այլ ոչ՝ մեզ պէս՝ անհրաժեշտութիւնից ելելով կամ բնութեան հարկադրումով, 4. որպէսզի բժշկի Ադամի եւ Եւայի կրքերը, այսինքն՝ քաղցը, ծարաւը, քրտնաթորութիւնը, աշխատութիւնը եւ այլն: Եւ ինչպէս կրակն այրում է խռիւը եւ հալում է մոմը, այնպէս էլ ամէն տեսակ կիրք, որ մերձենում է Քրիստոսին, կորչում կամ այլափոխւում է:

Ինչպէ՞ս Քրիստոս վերացրեց մեղքը, ապականութիւնը եւ այլ բաներ

Նա բժշկեց ճիշտ այնպէս, ինչպէս բժիշկն է բժշկում հիւանդներին՝ նմանով՝ նմանին, ինչպէս օրինակ՝ ջերմութիւնը ջերմութեամբ են հանում, եւ սառնութիւնը՝ սառնութեամբ: Նոյնպէս եւ հակառակ կերպ, ինչպէս ջերմութիւնը սառնութեամբ, սառնութիւնը՝ ջերմութեամբ: Այդպէս էլ Քրիստոս՝ նմանը նմանով, ինչպէս քաղցով քաղցը բժշկեց, մահուամբ մահը վերացրեց: Եւ հակառակը, այսինքն՝ արդարութեամբ՝ մեղքը եւ ապականութիւնը վերացրեց եւ մեր բնութեան հիւանդութիւնը բժշկեց:

Քրիստոս ի՞նչու էր աղօթում

Քրիստոս աղօթում էր ոչ թէ ինչպէս մենք՝ անհրաժեշտաբար կամ հարկադրաբար, այլ առանց կարիքի, այսինքն՝ նա կարիք չունէր աղօթելու այնպէս, ինչպէս կարիք չունէր սրբութեան, բայց մկրտուեց Յովհաննէսից, կարիք չունէր կրքերի, բայց կրեց դրանք: Այսպիսով՝ Քրիստոս աղօթեց, որպէսզի ցոյց տայ, որ Ինքը ճշմարիտ մարդ է եւ որ մեզ համար ճշմարիտ փրկութիւն արարեց, 2. որպէսզի սանձի հերձուածների լեզուն, որոնցից ոմանք մերժում են Բանի մարդեղացումը, միւսներն ասում էին, որ Նրա Մարմինը առերեւոյթ է, երրորդներն էլ ասում էին, որ Նրա Մարմինը բերուած է երկնքից, 3. որպէսզի մեզ սովորեցնի փրկուել հանապազ աղօթքով, 4. որպէսզի քօղարկի Իր Աստուածութիւնը՝ չարին անհաղորդ մնալու նպատակով, քանզի սատանան, երբ Հօր ձայնը լսեց եւ տեսաւ Սուրբ Հոգու էջքը, ցանկացաւ իմանալ՝ Յիսուս Աստուծոյ Որդի՞ն է արդեօք, 5. որպէսզի չկարծեն, թէ Նա առաքուած է ուրիշ աստծուց, 6. որպէսզի հրեաները չկարծեն, թէ Նա հակառակ է Հօրը, 7. որպէսզի Նրան չանուանեն օրէնքը լուծարող, 8. որպէսզի մարի հրեաների նախանձը, 9. քանզի մէկ Աստուած էր օրէնքը տուել, ուստի աղօթում էր, որպէսզի չկարծեն, թէ երկու Աստուածներ կան, 10. որպէսզի ցոյց տայ Իր Հօր հետ միակամ լինելը:

Ինչո՞ւ Յիսուս Քրիստոս մեռաւ

1. որպէսզի ցոյց տայ Աստուծոյ սէրը, քանզի այդ սէրը յայտնի դարձաւ Հօր սիրով, Ով մարդկութեան փրկութեան համար Իր Որդուն տուեց մահուան. «*...քանի որ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տուեց*» /Յովհ. 3:16/: 2. որպէսզի ցոյց տայ Որդու հնազանդութիւնը. «*խոնարհեցրեց ինքն իրեն՝հնազանդ լինելով մինչև մահ և այն էլ մահուան՝ խաչի վրայ*» /Փիլ. 2:8/: 3. Քանզի Ադամին ասուել էր. «*մահկանացու կը դառնաք*» /Ծննդ. 2:17/, այսինքն՝ մեռաւ մարմնով, իսկ հոգով տանջուեց դժոխքում, եւ ոչ ոք չէր կարող ազատուել դժոխքից, ինչի մասին եւ ասում է Առաքեալը. «*...սակայն մահը թագաւորեց Ադամից մինչև Մովսէս նոյնիսկ նրանց վրայ, որոնք Ադամի յանցանքի նման յանցանք չգործեցին*» / Հռոմ. 5:14/: Դրա համար էլ Յիսուս եկաւ, դարձաւ Ադամի որդին, մեռաւ մարմնով, հոգով իջաւ դժոխք եւ ազատեց Ադամին: 4. Քրիստոս մեռաւ եւ մահուամբ մահը ոտնատակ արեց, իսկ մեզ կենդանացրեց, քանզի Քրիստոսի մահը հենց մահուան համար մահ դարձաւ, իսկ մեզ՝ մահկանացուներիս համար՝ կեանք: Իջաւ դժոխք եւ ազատագրեց հոգիները, յարութիւն առաւ մեռելներից եւ մեզի յարութիւն պարգեւեց: 5. Քրիստոս մեռաւ, որպէսզի կատարուեն Մարգարէների խօսքերը. «*Եւ հնարաւոր չէ, որ Գիրքը եղծուի*» /Յովհ. 10:35/, քանզի Մարգարէները հնուց ի վեր բարբառել են, իսկ Քրիստոս ամէնը կատարեց. մէկն ասել է Կոյսից ծնուելու մասին, միւսը՝ խաչի, երրորդը՝ թաղման, յարութեան, համբարձման եւ Երկրորդ գալստեան մասին:

Ինչո՞ւ Տիրոջ մահն արեամբ եղաւ

Առաջին հերթին՝ Հին Կտակարանում սրբւում էին կենդանիների արեամբ, իսկ Քրիստոս մեզ սրբեց Իր արեամբ: 2. Արեամբ մեզ հաշտեցրեց Իր Հօր հետ: 3. Արեամբ մեզ գնեց: 4. Իր Արեամբ մեր անունները գրեց Կենաց Գրքում: 5. Իր Արեամբ Հին Ուխտի փոխարէն մեզի հետ Նոր Ուխտ կնքեց:

Իսկ ինչո՞ւ Նա մեռաւ Խաչի վրայ

1. Քանզի խաչն ամէնից առաւել է հակադրւում Ադամական մեղքին, քանզի Ադամը ոտքով գնաց ծառի մօտ եւ ձեռքերը երկարեց դէպի պտուղը, որը եւ կերաւ, այդ պատճառով էլ պղծեց մարդկային ողջ բնութիւնը: Այդպէս էլ Քրիստոս, ոտքով գնաց դէպի Խաչը, ձեռքերը մեխեց փայտին, լեղի ճաշակեց եւ այդպէս փրկեց մարդկութեանը: 2. Քանզի ամօթալի էր խաչի վրայ մահը, ինչպէս գրուած էր Օրէնքում. «*...որովհետև Աստծուց անիծուած է նա, ով կախուած է ծառից*» /Երկր. Օր. 21:23/, ահա թէ ինչու Քրիստոս կախուեց փայտից, վերցրեց մեր մեղքերը եւ օրհնեց մեզ: 3. Քրիստոսի Ճշմարիտ Խաչի նախատիպը Սաբէկի ծառն էր, որի վրայ կախուեց Իսահակի խոյը:

Ի՞նչ տարբերութիւն կայ Քրիստոսի, Ադամի եւ բոլոր մարդկանց մահուան միջեւ

Եբրայեցիներին ուղղուած թղթի երկրորդ գլխում Պօղոս Առաքեալն ասում է. «*որպէսզի Աստուծոյ շնորհով բոլորի համար մահը ճաշակի*»: Աստուծոյ շնորհով, այսինքն՝ Որդին մահ ճաշակեց ըստ Աստուծոյ մարդասիրութեան: Նաեւ՝ «ըստ շնորհի» Բանն Աստուծոյ մեռաւ մարմնով: Իսկ երբ ասում ենք՝ «ճաշակեց», երեք բան է նշանակում. 1. քանզի մեր մահը տեղի ունեցաւ Ադամի՝ պտուղ ճաշակելուց, 2. «ճաշակեց» նշանակում է կամաւոր մահ, 3. «ճաշակեց» նշանակում է նաեւ չափաւոր մահ, քանզի Քրիստոս մահուան մէջ եւ մեռած էր, եւ կենդանի: Նրա Մարմինը մեռած էր ըստ հոգու բաժանման, եւ Նոյն Մարմինը նաեւ կենդանի էր, անբաժանելի Աստուածութեամբ: Սրա մասին վկայում են, ինչպէս երկու աղբիւրներ, որոնք բխում են Նրա կողերից (տես՝ Յովհ. 19:34), ջուրը, քանզի մեռած էր, արիւնը, քանզի կենդանի էր, քանի որ մեռածի մէջ արիւն չկայ: Այդպէս էլ Սողոմոնը. «*Ես քնած եմ, բայց իմ սիրտն արթուն է*» /Երգ Երգոց 5:2/, այսինքն՝ Աստուածութիւնը, որը Մարմնի մէջ գերեզմանում է եւ հոգու մէջ՝ դժոխքում:

Այսպիսով՝ Քրիստոսի մահը տարբեր է, քանզի մահուան երեք տեսակ կայ. 1. բնութեամբ, 2. կամքով, 3.

ներգործութեամբ: Բնութեամբ մեռնում ենք մենք, ներգործութեամբ մեռաւ Ադամը, իսկ Քրիստոս մեռաւ կամքով: Յեպոյ՝ Ադամի մահը իր կապարած մեղքի պատիժն էր: Քրիստոսի մահը այլոց մեղքերի պատիժն էր, իսկ մեր մահը թէ՛ ուրիշի մեղքի, այսինքն՝ Ադամի մեղքի, թէ՛ սեփական մեղքերի պատիժն է:

Ինչո՞ւ թաղուեց Յիսուս Քրիստոս

Նախ՝ քանզի Ադամին ասաց. «*...որովհետև հող էիր և հող էլ կը դառնաս*» /Ծնն. 3:19/, եւ այդ պատճառով Նա՝ Ինքը հող մտաւ, որպէսզի վերացնի այդ դատապարտութիւնը: Եւ ինչպէս փշէ պսակով վերացրեց փշերը, քրտինքով՝ քրտինքը, այնպէս էլ թաղմամբ՝ մահուան հողը վերացրեց: 2. Ադամի արարքով անիծուել էին հողը եւ բոլոր տարերքները, այդ պատճառով երբ Քրիստոս մտաւ Յորդանանի ջրի մէջ, մաքրեց այն, երբ դրուեց Գերեզման, օրհնեց հողը: Յարութիւնից յետոյ եւ Համբարձումից առաջ մաքրեց օդը, իսկ կրակը մաքրեց, երբ Սուրբ Հոգին իջաւ հրէ լեզուների պատկերով: 3. Մարմնով Գերեզման դրուեց, որպէսզի բժշկի մեր մարմնի թերութիւնները, իսկ հոգով դժոխք իջաւ, որ մեր հոգիներն ազատի յաւիտենական տանջանքներից: 4. Յարութիւն առաւ Գերեզմանից, որպէսզի մեզ յարութիւն շնորհի, դրա օրինակն է, որ «*...ննջեցեալ սրբերի բազում մարմիններ յարութիւն առան ու նրա յարութիւնից յետոյ գերեզմաններից ելելով, մտան սուրբ քաղաքը և շատերին երևացին*» /Մատթ. 27:52, 53/, իսկ Քրիստոսի յարութեան մասին վկայում էին, որ դժոխքն աւերեց եւ հոգիներ բարձրացրեց երկինք՝ դրանից առաջ կապելով սատանային, քանզի Քրիստոսի Խաչից յետոյ, սատանան այլեւս ի զօրու չէ մարդկանց հոգիները բռնի դժոխք տանելու:

Ինչպիսի՞ն է լինում մեռելներից յարութիւնը

Յարութիւնը երկակի է լինում՝ կատարեալ եւ անկատար: Անկատար յարութիւնն այն է, երբ յարութիւնից յետոյ կրկին մեռնում են, զորօրինակ՝ վեց մեռելները: Երեքին յարութիւն տուեցին Եղիան եւ Եղիսէն, երեքին

էլ յարութիւն տուեց Քրիստոս: Իսկ կատարեալն այն է, երբ արդէն այլեւս չեն մեռնում: Նախ Քրիստոսն էր, Ով Անդրանիկը եղաւ մեռածներից եւ ննջեցեալների առաջին պտուղը, իսկ յետոյ արդէն՝ սրբերից առաջինը: Ոմանք յարութիւն առան Քրիստոսի հետ եւ մտան Երուսաղէմ, միւսները յարութիւն կ'առնեն Քրիստոսի Երկրորդ Գալստեան ժամանակ: Քանզի գրուած է. «*Քրիստոս մեռելներից յարութիւն առած լինելով՝ այսուհետև չի մեռնի, և մահը նրան այլևս չի տիրի*» /Հռոմ. 6:9/: Նաեւ, ինչպէս գրուած է. «*Եւ ինչպէս որ մարդկանց համար մէ՛կ անգամ մեռնել կայ և այնուհետև՝ դատաստան, նոյնպէս և Քրիստոս մէ՛կ անգամ որպէս պատարագ մատուցուեց՝ շատերի մեղքերը վերացնելու համար*» /Եբ. 9:27, 28/, իսկ երկրորդ անգամ կու գայ դատելու կենդանեաց եւ մեռելոց՝ հատուցելով ըստ իւրաքանչիւրի գործերի: Քանզի Քրիստոսի յարութիւնը բոլոր մարդկանց յարութեան պատճառն է, «*Ինչպէս Ադամով բոլորը մեռնում են, նոյնպէս և Քրիստոսով ամէնքը պիտի կենդանանան*» /Ա Կորնթ. 15:22/, քանզի՝ «*Նա՛, որ սկիզբ է, անդրանիկը՝ մեռելների միջից*» /Կող. 1:18/:

Յիսուս Քրիստոս Ի՞նքը յարութիւն առաւ, թէ՞ Հայրը Նրան յարութիւն տուեց

Ինքը Տէրն ասում է. «...*իշխանութիւն ունեմ այն տալու և իշխանութիւն ունեմ վերստին այն առնելու*» /Յովհ. 10:18/, այսինքն՝ յառնել Գերեզմանից: Եւ ինչպէս Նա՝ Ինքն Իր կամքով եկաւ տանջուելու եւ մեռաւ, այնպէս էլ Ինքն Իր կամքով յարութիւն առաւ, ինչի մասին կրկին ասում է. «...*թէ պէտք է, որ մարդու Որդին մեղաւոր մարդկանց ձեռքը մատնուի, խաչուի և երրորդ օրը յարութիւն առնի*» /Ղուկ. 24:7/, կամ էլ, ինչպէս հրեշտակներն են ասում. «*Ինչո՞ւ ողջին մեռելների մէջ էք փնտռում: Այստեղ չէ, այլ՝ յարեաւ*» /Ղուկ. 24:5, 6/:

Այդ դէպքում ինչո՞ւ է Պօղոս Առաքեալն ասում. «*Աստուած նրան յարութիւն տուեց մեռելներից*» /Հռոմ. 10:9, Ա Թեսաղ. 1:10/

Դա խօսում է այն մասին, որ Երրորդութեան երեք Անձերի՝ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու ներգործութիւնն ու ուժը միեւնոյնն է: Ուստի, երբ ասում է, թէ Որդուն յարութիւն տուեցին Հայրը կամ Սուրբ Հոգին, նշանակում է, որ միեւնոյն ուժը յարութիւն տուեց Որդուն:

Յարութեամբ Քրիստոսի մէջ փոփոխութիւններ տեղի ունեցա՞ն

Ոչ, ոչ մի փոփոխութիւն տեղի չունեցաւ: «*...տեսէ՛ք իմ ձեռքերն ու ոտքերը, որովհետև նոյն ինքն ես եմ. շօշափեցէ՛ք ինձ և տեսէ՛ք*» /Ղուկ. 24:39/, այսինքն՝ Ես նոյնն եմ՝ չեմ փոխուել: «*Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր և յաւիտեան*» /Եբր. 13:8/, - ասում է Պօղոս Առաքեալը: Երէկ, այսինքն՝ անցեալում, այսօր, այսինքն՝ ներկայում եւ յաւիտեանս՝ գալիք կեանքում: Այդ մասին բարբառում է նաեւ Մարգարէն. «*Բայց դու միշտ նոյնն ես, քո տարիները չեն պակասելու*» /Եբր. 1:12/: Այդ մասին ասել են նաեւ Եկեղեցու սուրբ հայրերը Նիկիական փիեզերական Ժողովում. «*Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդին, կամ էլ երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զՍուրբ Հոգին, և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթուղիկէ և Առաքելական Սուրբ Եկեղեցի*»: Յարութեամբ փոփոխութիւններ տեղի են ունենում միայն մարդկանց մէջ:

Իսկ ի՞նչ փոփոխութիւններ են դրանք

Բոլոր մարդկանց մէջ կան եօթ թերութիւններ. երեքը՝ հոգում՝ տգիտութիւն, մոռացութիւն եւ տրտմութիւն, եւ չորս մարմնական թերութիւններ. 1. մահկանացիութիւն եւ չարչարելիութիւն, 2. աղտեղութիւն եւ սեւութիւն, 3. ծանրութիւն եւ ծուլութիւն, 4. թանձրութիւն եւ կոպտութիւն: Եւ այս բոլոր թերութիւնները յարութեան

ժամանակ կը վերացուեն: Այսպիսով՝ կ'անհետանայ տգիտութիւնը, եւ մարդիկ կ'ունենան լուսաւոր իմացութիւն, երբ կը տեսնեն Աստծուն դէմ առ դէմ. «*Այժմ՝ տեսնում ենք աղօտ, ինչպէս պատկերը հայելու մէջ. իսկ այն ժամանակ պիտի լինի դէմառդէմ: Այժմ՝ խելամիտ եմ փոքրիշատէ, իսկ այն ժամանակ կը գիտենամ՝ ինչպէս որ նա ճանաչեց ինձ*»: /Ա Կորնթ. 13:12/: Կ'անհետանայ նաեւ մոռացութիւնը, քանզի մշտապէս կը տեսնեն Նրան. «*...նրանք տեսնում էին նրա երեսը, և նրա անունը գրուած էր իրենց ճակատների վրայ*» /Յայտն. 22:4/, իսկ երբ տեսնեն, կը չքուի նաեւ տրտմութիւնը. «*Դուք էլ այժմ տրտմութիւն ունէք, բայց ես դարձեալ ձեզ պիտի տեսնեմ, ու ձեր սրտերը ուրախ պիտի լինեն. և ձեր ուրախութիւնը ոչ ոք ձեզնից պիտի չխլի*» /Յովհ. 16:22/: Կը դառնան անմահ եւ անապական. «*...քանի որ այլևս մեռնել անգամ չեն կարող, որովհետև հրեշտակներին հաւասար են և Աստուծոյ որդիներ*» /Ղուկ. 20:36/ եւ «*...որովհետև պէտք է, որ այս ապականութիւնը անապականութիւն կրի, և այս մահկանացու գոյութիւնը կրի անմահութիւն*» /Ա Կորնթ. 15:53/: Կ'անհետանան աղտեղութիւնն ու սեւութիւնը, քանզի կը շողշողան ինչպէս Արեւը. «*Այն ժամանակ արդարները երկնքի արքայութեան մէջ կը ծագեն ինչպէս արեգակը*» /Մատթ. 13:43/: Մարմինները թեթեւ կը լինեն եւ բարի գործեր անելուն արագահաս, եւ ուր հոգին ցանկանայ, այնտեղ կը լինի եւ մարմնով. «*քամին ուր ուզում է՝ փչում է*» /Յովհ. 3:8/: Կը լինեն թափանցիկ, եւ ինչպէս Արեւի շողն անցնում է օդի միջով, այնպէս էլ նրանց համար խոչընդոտներ չեն լինի: Եւ ինչպէս Քրիստոս, Ով յարութիւն առաւ, քարով կնքուած, գերեզմանից, իսկ յարութիւնից յետոյ, աշակերտներին յայտնուեց փակ դռների միջով (տես՝ Յովհ. 20:19), այնպէս էլ արդարների մարմինները կը հասնեն մինչեւ հրէ երկինքներ: Այսպիսով՝ հոգու եւ մարմնի վերոթուարկեալ զարդարանքները կ'ունենան միայն արդարները. «*Ես պիտի հրճուեմ Տիրոջով, որովհետև նա ինձ փրկութեան զգեստ և ուրախութեան պատմուճան հագցրեց, որպէս փեսայի՝ պսակ դրեց իմ գլխին և որպէս հարսի՝ զուգեց ինձ զարդով*» /Ես. 61:10/: Մինչդեռ մեղաւորները յարութիւնից յետոյ, այս ամէնը չեն ունենայ, քանզի մեղաւորների հոգիները գտնուում են

անգիտութեան խաւարում եւ յաւիտենական տրտմութեան մէջ, եւ հեռացած են Աստծուց: Նրանց մարմինները կը դառնան աւելի կոպիտ, ծանր եւ անմաքուր...

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Ի՞նչ իմաստով է Սուրբ Հոգին անուանւում Տէր Աստուած

Սուրբ Հոգին անուանւում է Տէր նոյն իմաստով, ինչ որ Աստուծոյ Որդին, այսինքն՝ Սուրբ Հոգին ճշմարիտ Աստուած է: Այդ մասին վկայում է Սուրբ Գիրքը՝ Անանիայի սուտը մերկացնող Պետրոս Առաքեալի ասած խօսքերով. «*Անանիա՛, ինչո՞ սատանան լցրեց քո սիրտը, որ դու ստէիր Սուրբ Հոգուն... մարդկա՛նց չստեցիր, այլ՝ Աստծուն*» /Գործք 5:3-4/:

Ինչու՞ է Սուրբ Հոգին անուանւում Կենդանարար

Սուրբ Հոգին անուանւում է Կենդանարար, եւ սա պէտք է հասկանալ այսպէս՝ Նա Հայր Աստուծոյ եւ Որդու հետ միասին կեանք է տալիս բոլոր արարածներին եւ յատկապէս՝ հոգեւոր կեանք՝ մարդկանց: «*...եթէ մէկը ջրից ու Հոգուց վերստին չծնուի, չի կարող Աստուծոյ արքայութիւնը տեսնել*» /Յովհ. 5:3/:

Պաշտամունքի ինչպիսի՞ աստիճան է պատշաճ Սուրբ Հոգուն

Սուրբ Հոգուն պատշաճում է Հօրը եւ Որդուն հաւասար պաշտամունք եւ փառաբանութիւն: Սա երեւում է այն բանից, որ Յիսուս Քրիստոս պատուիրեց մկրտել «*Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունով*» /Մատթ. 28:19/:

Ինչու՞ է Հաւատոյ Հանգանակի մէջ ասւում, որ Սուրբ Հոգին խօսեց Օրէնքի եւ Մարգարէների միջոցով

Սա ասւում է որոշ կեղծ վարդապետների մերկացման համար, ովքեր պնդում էին, թէ Հին Կտակարանի գրքերը գրուել էին ոչ Սուրբ Հոգով: Սուրբ Գիրքը վկայում է այն մասին, որ Մարգարէների միջոցով իսկապէս խօսել է Սուրբ Հոգին: Պետրոս Առաքեալը գրում է. «*...քանի որ մարգարէութիւնը ոչ թէ ըստ մարդ-*

կանց կամքի տրուեց երբեւէ, այլ Սուրբ Հոգուց մղուած է, որ խօսեցին Աստուծոյ սուրբ մարդիկ» /Բ Պետր. 1:21/:

Խօսե՞լ է արդեօք Սուրբ Հոգին նաեւ Առաքեալների միջոցով

Սուրբ Հոգին խօսել է Առաքեալների միջոցով: Պետրոս Առաքեալը գրում է. «*Աստուած նրանց (Մարգարէներին) յայտնեց նաև, որ ոչ թէ իրենց համար, այլ մեզի համար էին տրուած այդ պատգամները, որոնք այժմ պատմուեցին ձեզ նրանց միջոցով և աւետարանուեցին Սուրբ Հոգով, որն ուղարկուեց երկնքից*» /Ա Պետր. 1:12/:

Ինչպէ՞ս Սուրբ Հոգին յայտնի դարձաւ մարդկանց

Սուրբ Հոգին յայտնի դարձաւ մարդկանց յատուկ կերպով: Նա իջաւ Առաքեալների վրայ հրեղէն լեզուների տեսքով՝ Քրիստոսի յարութիւնից յետոյ յիսուներորդ օրը:

Ինչու՞ Սուրբ Հոգին իջաւ Քրիստոսի համբարձումից տասն օր յետոյ

Տիրոջ՝ Երկինք համբարձուելուց յետոյ, բոլոր հրեշտակները երկրպագում էին Նրան, եւ քանի որ հրեշտակների դասերը ինն են, ապա ամէն օր երկրպագում էր մի դաս, մինչեւ որ տասներորդ օրը Տէրը բազմեց Հօր աջ կողմում եւ այնժամ ուղարկեց Սուրբ Հոգուն, Որը բխում է Հօրից. «*Բայց երբ գայ Մխիթարիչը, որին ես ձեզ կ՚ուղարկեմ Հօրից, Ճշմարտութեան Հոգին, որ ելլում է Հօրից, նա՛ կը վկայի իմ մասին*» /Յովհ. 15:26/:

Ինչպիսի՞ պարգեւներ Առաքեալներն ստացան Սուրբ Հոգուց

1. Մաքրում մահացու մեղքերի ապականութիւնից, 2. հրաշագործութիւն, 3. խիզախութիւն եւ անվախութիւն, որ քարոզեն Աստուծոյ Խօսքը, 4. իմաստութիւն եւ Սուրբ Գրքի իմացութիւն, 5. անբաժանելի սէր առ Քրիստոս, 6. բոլոր ժողովուրդների լեզուների իմացութիւն:

Ինչու՞ Յորդանանում Տիրոջ մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգին իջաւ աղաւնու տեսքով, իսկ վերնատանը՝ հրեղէն լեզուների տեսքով

Աղաւնին բարի լուրի աւետաբեր է, ինչպէս աղաւնին, որ Նոյին բերեց ձիթենու ճիւղը: Այդ պատճառով առաջին անգամ Սուրբ Հոգին յայտնուեց աղաւնու տեսքով՝ աւետելով մեզի մեր փրկութեան բարի լուրը, որ Քրիստոս եկաւ աշխարհ՝ փրկելու եւ ոչ կործանելու համար: Իսկ հուրը ցոյց է տալիս, որ երկրորդ անգամ Տէրը կու գայ դատելու աշխարհը հրով, այդ պատճառով էլ երկրորդ անգամ Սուրբ Հոգին յայտնուեց հրեղէն լեզուների տեսքով:

ԵԿԵՂԵՑԻ

Ի՞նչ է եկեղեցին

Եկեղեցին (յուն. Ἐκκλησία) յունարէնից թարգմանած, նշանակում է հաւատաւոր մարդկանց հաւաք: Եկեղեցին Աստուծոյ կողմից հաստատուած այն մարդկանց հասարակութիւնն է, ովքեր միաւորուած են ի Քրիստոս հաւատքով («*...որովհետև ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մէջ*» /Մատթ. 18:20/), Աստուծոյ օրէնքով, Սուրբ Խորհուրդներով եւ նուիրապետութեամբ:

Ե՞րբ է ստեղծուել եկեղեցին

Առաքեալների վրայ Հոգու իջնելու օրն ընդունուած է համարել երկրի վրայ Քրիստոսի պատմական Եկեղեցու ծնունդի պահը եւ մարմնաւորման սկիզբը: Եկեղեցու առաջին անդամներ դարձան Քրիստոսի ամենամերձաւոր աշակերտները՝ Առաքեալները, Իւղաբեր կանայք եւ Նրա Մայրը՝ Մարիամը: Եկեղեցու հետագայ կազմաւորման մէջ իւրայատուկ դեր է խաղացել յարուցեալ Յիսուսի «հեռակայ» աշակերտ՝ Պօղոս Առաքեալը: Մասնաւորապէս Պօղոս Առաքեալի գործունէութեան շնորհիւ, Եկեղեցին դուրս է գալիս իր հրէական շրջանակներից եւ տարածւում ամբողջ աշխարհում. «*...որովհետև Տէրը մեզ այսպէս պատուիրեց. «Քեզ դրեցի որպէս հեթանոսների լոյս, որպէսզի դու փրկութեան միջոց լինես մինչև երկրի ծագերը*» /Գործք 13:47/: «*Ես ունեմ նաև այլ ոչխարներ, որոնք այս փարախից չեն. նրանց ևս պէտք է այստեղ բերեմ. իմ ձայնը պիտի լսեն. և պիտի լինի մի հօտ և մի հովիւ*» /Յովհ. 10:16/:

Ի՞նչն է ծառայում որպէս Եկեղեցու հիմք

Ինքը Տէրն է Եկեղեցու հիմքն ու անկիւնաքարը, քարերը հաւատացեալներն են (տե՛ս Եփես. 2.20), իսկ Կառուցողը՝ Հայրը: «*Դրա համար էլ այսպէս է ասում Տէր*

Աստուած. «*Ահա ես Սիոնի հիմքում մեծագին քար եմ դնում, պատուական ու ազնիւ անկիւնաքար՝ նրա հիմքում*» /Ես. 28:16/: Հիմք է ծառայում նաեւ Պետրոս Առաքեալի խոստովանութիւնը. «*Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին*» /Մատթ. 16:16/, քարերը դաւանողներն են, իսկ Կառուցողը՝ Ինքը Քրիստոս: Կարելի է նաեւ ասել, որ որպէս հիմք ծառայում է իւրաքանչիւր հաւատացեալի անձնական հաւատքը, քարերը մեր գործերն են, իսկ կառուցողները մենք ինքներս ենք, քանզի, ինչպէս ասում է Պօղոս Առաքեալը. «*Չգիտէ՞ք, որ Աստուծոյ տաճար էք դուք, և Աստուծոյ Հոգին է բնակւում ձեր մէջ*» /Ա Կորնթ. 3:16/:

Ո՞վ է Յիսուս Քրիստոս՝ եկեղեցու հանդէպ

Յիսուս Քրիստոս Մի Եկեղեցու Մի Գլուխն է, ինչպէս եւ ասում է Պօղոս Առաքեալը. «*Քրիստոս գլուխն է եկեղեցու*» /Եփես. 5:23/: Այդ պատճառով Եկեղեցին՝ որպէս Քրիստոսի մարմին, Տէր Յիսուս Քրիստոսից բացի չի կարող ունենալ այլ գլուխ: Եկեղեցին, որ մնում է մինչեւ ժամանակների աւարտը, կարիք ունի նաեւ մշտամնայ գլխի, ինչպիսին կարող է լինել միայն Տէր Յիսուս Քրիստոս: Այդ իսկ պատճառով նոյնիսկ Առաքեալներն ընդամէնը կոչւում են Եկեղեցու սպասաւորներ (տե՛ս Կող. 1.24-25):

Եթէ Եկեղեցին Քրիստոսի Մարմինն է, ապա հաւատացեալներն այդ Մարմնի անդամնե՞րն են

Այո, դրա մասին ասում է Պօղոս Առաքեալը. «*Արդ, դուք մարմինն էք Քրիստոսի և անդամներ՝ նրա անդամներից*» /Ա Կորնթ. 12:27/:

Որտեղի՞ց մենք գիտենք, որ Եկեղեցին միաժամանակ գտնւում է Երկրի վրայ եւ Երկնքում

Երկրի վրայ եւ միաժամանակ երկնքում գտնուող Եկեղեցու մասին հասկացութիւնը հաստատւում է Պօղոս Առաքեալի՝ քրիստոնեաներին ուղղուած հետեւեալ խօսքերում. «*Բայց դուք մօտեցել էք Սիոն լերանը և*

կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնային Երուսաղէմին, հրեշտակների բիւրաւոր բանակներին, երկնքում գրուած անդրանիկների հանդիսաւոր ժողովին, բոլորի դատաւոր Աստծուն, կատարելութեան հասած արդարների հոգիներին և Յիսուսին՝ նոր ուխտի միջնորդին...» /Եբր. 12:22-24/:

Մի՞ է արդեօք Երկրի վրայ եւ Երկնքում գտնուող Եկեղեցին

Երկրային եւ երկնային եկեղեցու միջեւ գոյութիւն ունի միասնութիւն եւ նրանց ընդհանուր Գլուխ մեր Տէր Յիսուս Քրիստոսի նկատմամբ, եւ միմեանց հետ փոխադարձ շփման առումով:

Ի՞նչ է նշանակում հաւատալ Եկեղեցուն

Հաւատալ եկեղեցուն՝ նշանակում է երկիւղածութեամբ պատուել Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին եւ հնազանդուել նրա վարդապետութեանը ու պատուիրաններին՝ վստահութեամբ, որ նրանում ներկայ է, փրկարար ներգործութիւն է ունենում, ուսուցանում եւ գործում է Շնորհը, որը բխում է նրա Մի եւ յաւերժ Գլուխ Տէր Յիսուս Քրիստոսից:

Որո՞նք են Եկեղեցու էական յատկութիւնները

Եկեղեցու էական յատկութիւնները նրանք են, առանց որոնց Եկեղեցին չէր կարողանայ Եկեղեցի լինել: Հաւատոյ Հանգանակը թուարկում է չորս այդպիսի յատկութիւն՝ «*Հաւատում ենք նաև Մի Ընդհանրական և Առաքելական Եկեղեցու*»: Հենց այս չորս յատկութիւններն են բնորոշում Եկեղեցու էութիւնը իր յատկութիւնների եւ յատկանիշների առումով, որոնք առանձնացնում են ճշմարիտ Եկեղեցին բոլոր այլ քրիստոնէական ընկերակցութիւններից:

Ինչու՞ է Եկեղեցին կոչուել Մի

Եկեղեցին Մի է, որովհետեւ այն մէկ հոգեւոր մարմին է, ունի մէկ Գլուխ՝ Քրիստոս, եւ շնչաւորւում է Աստուծոյ

մէկ Հոգով: «*Մէ՛կ մարմին և մէ՛կ հոգի, ինչպէս որ մէ՛կ է ձեր յոյսը, որին Աստուած կոչեց մեզ: Մէ՛կ Տէր կայ, մէ՛կ հաւատ, մէ՛կ մկրտութիւն, մէ՛կ Աստուած, Հա՛յր բոլորի...*» /Եփես. 4:4-6/:

Ինչու՞ է Եկեղեցին կոչւում Ընդհանրական

Եկեղեցին կոչւում է Ընդհանրական կամ Կաթողիկէ կամ էլ Տիեզերական, քանզի այն չի սահմանափակւում ո՛չ տեղով, ո՛չ ժամանակով, ո՛չ ժողովրդով, այլ ներառում է իր մէջ բոլոր երկրների, ժամանակների եւ ժողովուրդների ճշմարիտ հաւատացեալներին: Պօղոս Առաքեալն ասում է. «*...լսել էք Աւետարանի ճշմարտու-թեան խօսքով... այն աճում ու պտղաբերում է ամբողջ աշխարհում...*» /Կող. 1:5-6/ եւ որ քրիստոնէական Եկեղեցում «*...այլևս չկայ հրեայ, ոչ էլ հեթանոս, թլփատութիւն և անթլփատութիւն, բարբարոս, սկիւթացի, ծառայ, ազատ, այլ՝ Քրիստոս, որ ամէն ինչ է ամէն բանի մէջ*» /Կող. 3:11/: «*Այսպէս ուրեմն, նրանք, որ հաւատից են, օրհնւում են հաւատացեալ Աբրահամի հետ*» /Գաղ. 3:9/:

Ինչու՞ է մեր եկեղեցին կոչւում Առաքելական

Եկեղեցին կոչւում է Առաքելական, որովհետեւ այն անընդմէջ եւ անփոփոխ պահպանում է Առաքեալների ե՛ւ վարդապետութիւնը, ե՛ւ Սուրբ Հոգու շնորհների յաջորդականութիւնը սրբազան ձեռնադրութեան միջոցով: «*Ապա ուրեմն, օտար և պանդուխտ չէք, այլ համաքաղաքացի սրբերին և ընտանի՝ Աստծուն, կառուցուած առաքեալների և մարգարէների հիմքի վրայ, որի անկիւնաքարը Քրիստոս Յիսուսն է*» /Եփես. 2:19-20/: «*Ուրեմն, եղբայրնե՛ր, հաստա՛տ մնացէք և պի՛նդ պահեցէք ա՛յն աւանդութիւնները, որ սովորեցիք թէ՛ խօսքով, թէ՛ մեր թղթով*» /Թեսաղ. 2:14/:

Ինչու՞ ենք մենք Եկեղեցին անուանում Սուրբ

Եկեղեցին Սուրբ է, քանի որ սրբագործուած է Տէր Յիսուս Քրիստոսով՝ Իր չարչարանքների, Իր վարդապետութեան, Իր աղօթքների միջոցով եւ Խորհուրդներով:

«Քրիստոս սիրեց եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար, որ սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով, որպէսզի նա իր առաջ փառաւոր կերպով կանգնեցնի եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղութիւն կամ նման բաներից ոչինչ չունենայ, այլ լինի սուրբ և անարատ» /Եփ. 5:25-27/:

Հաւատացեալների համար Հայր Աստծուն ուղղուած աղօթքում Տէր Յիսուս Քրիստոս ասաց. «*Սրբացրո՛ւ նրանց քո ճշմարտութեամբ, որովհետև քո խօսքը ճշմարտութիւն է: Ինչպէս դու ինձ ուղարկեցիր աշխարհ, ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ: Եւ ես ինձ սրբացնում եմ նրանց համար, որպէսզի նրանք էլ սրբացուեն ճշմարտութեամբ»* /Յովհ. 17:17-19/:

Ինչպէ՞ս կարող է Եկեղեցին Սուրբ լինել, եթէ նրանում կան մեղաւորներ

Եկեղեցին Սուրբ է, թէեւ նրանում կան մեղանչողներ: Մեղանչող, սակայն ճշմարիտ ապաշխարութեամբ իրենց մեղքերը քաւողները չեն խոչընդոտում Եկեղեցու Սուրբ լինելուն: Իսկ չապաշխարող մեղաւորները՝ կա՛մ եկեղեցական իշխանութեան տեսանելի ներգործութեամբ, կա՛մ Աստուծոյ դատաստանի անտեսանելի ներգործութեամբ, որպէս մեռած անդամներ, հատւում են Եկեղեցու մարմնից, եւ այդպիսով, այդ դէպքում էլ Եկեղեցին մնում է Սուրբ: «*Վերացրէ՛ք չարը ձեր միջից»* /Ա Կորնթ. 5.13/ եւ «*Անիրաւութիւնից հեռու լինի ամենայն ոք, ով կրում է Տիրոջ անունը»* /Բ Տիմ. 2:19/:

Պարտադի՞ր է արդեօք փրկութեան համար պատկանել Տիեզերական Եկեղեցուն

Տիեզերական Եկեղեցին իր մէջ ներառում է աշխարհի բոլոր ճշմարիտ հաւատացեալներին: Քանի որ Տէր Յիսուս Քրիստոս, ըստ Պօղոս Առաքեալի խօսքի, «*Քրիստոս գլուխն է եկեղեցու. ու ինքն է Փրկիչը այդ մարմնի»* /Եփես. 5:23/, ապա փրկուած լինելու համար անհրաժեշտ է Նրա մարմնի մասը լինել, այսինքն՝ անդամ Տիեզերական Եկեղեցու: Մկրտութիւնը փրկում է մեզ Նոյեան տապանի նմանութեամբ: Բոլորը, ովքեր

փրկուեցին համաշխարհային ջրհեղեղից, փրկուեցին միայն Նոյեան տապանում: Այդպէս էլ նրանք, ովքեր սպանում են յաւիտեան փրկութիւն, սպանում են այն միայն Տիեզերական Եկեղեցում:

Եթէ եկեղեցին Մի է, ապա ինչու՞ կան այդքան տարբեր Եկեղեցիներ

Այո, Եկեղեցին Մէկ է, ինչպէս եւ վերը ասուեց: Առաքելական յաջորդականութեամբ եկեղեցիները, լինելով մասն ու անդամները Մի Եկեղեցու, ունեն իրենց տարբեր, ինչպէս լեզուական եւ մշակութային, այնպէս էլ դաւանաբանական աւանդոյթները եւ առանձնայատկութիւնները, որոնք զարգացել են դարերի ընթացքում: Այդ տարբերութիւնները ոչ մի կերպ չեն խանգարում, որպէսզի Քրիստոսի Եկեղեցին լինի Մի:

Ինչպէ՞ս է Հայոց Եկեղեցին վերաբերւում միւս Եկեղեցիներին

Մեծ յարգանքով, քրիստոնէական սիրով եւ հանդուրժողականութեան ոգով: Հայ Եկեղեցու համար անընդունելի է սէր չտածելն ու անյարգալից վերաբերմունքը միւսների հանդէպ եւ իրեն Միակ Ճշմարիտ Եկեղեցի համարելը: Սակայն չնայած դրան, Հայ Եկեղեցու իւրաքանչիւր հաւատացեալ պէտք է հաւատարիմ մնայ իր Եկեղեցուն, որի գրկում նա ծնուել է: Եւ իր հաւատարմութիւնը պէտք է ցոյց տայ ոչ միայն խօսքով, այլեւ գործով՝ իր բարոյական եւ նիւթական հնարաւորութիւնների սահմաններում:

Ո՞վ է հիմնել Հայ Առաքելական Եկեղեցին

Թադէոս եւ Բարթողիմէոս Առաքեալները, ովքեր, ըստ Տիրոջ խօսքի, թէ՝ «*...գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունով*» /Մատթ. 28:19/, «Ճշմարտութեան Խօսքը» սերմանեցին հայ ժողովրդի մէջ: Սակայն մինչեւ IV դ. քրիստոնէութիւնը հալածւում էր Հայաստանում, թէեւ կային համայնքներ ու եպիսկոպոսներ: Սակայն արդէն 301թ. Սբ. Գրիգոր Լուսաւորչի եւ Սբ.

Տրդատի շնորհիւ Հայասպանը քրիստոնէութիւնը կ'ընդունի որպէս պետական կրօն: Այնժամ էլ Հայոց Եկեղեցին կը սկսի արագօրէն բազմանալ եւ զարգանալ:

Արդեո՞ք ճիշտ կը լինի Հայոց Եկեղեցին անուանել «լուսաւորչական-գրիգորեան»

Ո՛չ, ճիշտ չի լինի: Քանզի այն «լուսաւորչական-գրիգորեան» անուանելով՝ մենք Նրան զրկում ենք առաքելական յաջորդականութիւնից, այսինքն՝ ընդունում ենք, թէ Հայոց եկեղեցին Առաքեալները չեն հիմնել, այլ միայն Սբ. Գրիգոր Լուսաւորիչը 301թ., եւ այդպիսով, հրաժարւում ենք հայ ժողովրդի քրիստոնէութեան չորսդարեայ պատմութիւնից:

Արդեո՞ք Հայոց Եկեղեցին ուղղափառ է

Այո, Հայոց Եկեղեցին Ուղղափառ է եւ պատկանում է Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներին՝ Ղպտի, Եթովպական (Հապեշական), Սիրիա-Յակոբիկեան եւ Մալապար:

Ինչո՞ւ են Հայոց Եկեղեցին անուանում մոնոֆիզիտ - «միաբընակ»

Հայոց Եկեղեցուն արդէն երկար դարեր ի վեր մեղադրում են մոնոֆիզիտութեան մէջ, այսինքն՝ համարում են, թէ Նա հետեւորդն է Եւտիքեսի հերձուածի. սա, զինուելով Նեստորի հերձուածի դէմ, ընկել էր հակառակ ծայրայեղութեան մէջ: Նա Քրիստոսի մէջ երկու բնութիւններն ամբողջովին շփոթում էր այնպէս, որ Նրա մէջ ընդունում էր ոչ միայն մէկ Դէմք, այլեւ՝ մէկ բնութիւն, ինչի պատճառով էլ այդ հերետիկոսի հետեւորդները կոչւում էին մոնոֆիզիտներ: Նա ասում էր. «*Բանն Աստուծոյ մարմնացումից յետոյ, ես երկրպագում եմ մէկ բնութեան՝ Աստուծոյ բնութեանը...*», այսինքն, ըստ նրա, Քրիստոսի մարդկային բնութիւնը կլանուել էր Աստուածայինի կողմից, եւ հետեւաբար, Քրիստոսի մէջ յայտնուել եւ ապրել էր հենց իսկ Բանը՝ միայն մարմնի տեսքով, եւ Բանի Աստուածութիւնն էր

չարչարուել, թաղուել եւ յարութիւն առել... Հենց այս մոլորութիւնն էլ վերագրում են Հայ Եկեղեցուն, ինչը մեծ սուտ է եւ մոլորութիւն:

Այդ դէպքում ինչո՞ւ Հայոց Եկեղեցին չի ընդունում Քաղկեդոնի Ժողովը

Հայոց Եկեղեցու՝ Քաղկեդոնի ժողովը չընդունելու պատճառը ո՛չ քաղաքական շարժառիթն էր, ո՛չ յունարէնի չիմացութիւնը, ինչը հայերին փորձում են վերագրել որոշ պատմաբաններ եւ աստուածաբաններ: Քաղկեդոնի չընդունումը կապուած է դրա իրարամերժ հասկացութիւնների եւ քրիստոսաբանական դաւանութեան հետ, որոնք չեն համապատասխանում Առաքելական աւանդութիւններին:

Հայոց եկեղեցին Նեստորի հետ մէկտեղ նզովքի է ենթարկում նաեւ Եւտիքեսին՝ իր «մոնոֆիզիտ» մոլորութեամբ հանդերձ, միաժամանակ հետեւում առաջին Երեք Տիեզերական Ժողովների հենց ուղղափառ քրիստոսաբանութեան ոգուն եւ էութեանը՝ անշեղօրէն եւ անսասանօրէն պահպանելով մեր Տէր Աստուած Քրիստոսի Միութիւնը:

Քանի՞ Տիեզերական ժողով է ընդունում Հայոց Եկեղեցին

Հայոց Եկեղեցին ընդունում է առաջին երեք Տիեզերաժողովները՝ 325թ. Նիկիականը, 381թ. Կոստանդնուպոլսինը եւ 431թ. Եփեսոսինը: Թէեւ Հայոց Եկեղեցին մասնակցել է միայն առաջին Ժողովին, նա ընդունում է նաեւ յաջորդ երկու Տիեզերական ժողովների դրոյթները:

Ո՞վ է Հայոց Եկեղեցու Գերագոյն հոգեւոր դէմքը եւ Առաջնորդը

Հայոց Եկեղեցու Գերագոյն հոգեւոր դէմքը եւ Առաջնորդը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է՝ Ծայրագոյն Պատրիարք տիտղոսով: Ներկայում Հայոց Եկեղեցու առաջնորդը 132-րդ՝ Գարեգին Բ (Ներսիսեան) Կաթողիկոսն է:

Որտե՞ղ է գտնուում Հայոց Եկեղեցու Նուիրապետական Աթոռը

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նուիրապետական Աթոռը գտնուում է Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում:

Կա՞ն արդեօք Հայոց Եկեղեցու այլ Նուիրապետական Աթոռներ

Հայոց Եկեղեցու ասպիճանով երկրորդ պատմական Նուիրապետական Աթոռը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն է: Կիլիկիոյ Կաթողիկոսը կանոնականօրէն լինելով Հայոց Եկեղեցու ինքնավար կաթողիկոսութեան անկախ առաջնորդ, ճանաչում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատուի առաջնութիւնը: 1930 թ-ից Կիլիկիոյ Կաթողիկոսի նստավայրը Անթիլիասում է, Լիբանան:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգեւոր տնօրինութեան տակ են գտնուում Հայոց Եկեղեցու երկու ինքնավար Պատրիարքարանները՝ Երուսաղէմում եւ Կոստանդնուպոլսում:

Քանի՞ Սուրբ Խորհուրդ է ընդունում Հայոց Եկեղեցին

Եօթը Սուրբ Խորհուրդ՝ Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ապաշխարութիւն, Պսակ, Ձեռնադրութիւն, Կարգ հիւանդաց եւ Վերջին Օծում:

Ի՞նչ է Խորհուրդը

Խորհուրդը սրբազան գործողութիւն է, որի միջոցով խորհրդաւոր կերպով մարդու վրայ ներգործում է շնորհը կամ Աստուծոյ փրկարար զօրութիւնը:

ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է Մկրտութիւնը

Մկրտութիւնը Ծնունդ է ի վերուստ, քանի որ մկրտուողը (Հայր Աստուծոյ եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով ջրի մէջ մարմնի երեք անգամ ընկղմուելով), մաքրուելով սկզբնական մեղքից (եթէ մեծահասակ է, ապա՝ ներւում են նաեւ կատարուած մեղքերը), մեռնում է մարմնական, մեղսական կեանքի համար եւ վերածնւում Սուրբ Հոգով՝ հոգեւոր, սուրբ կեանքից ներս. «...*եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստուծոյ արքայութիւնը մտնել*» /Յովհ. 3:5/:

Ինչպէ՞ս է սկիզբ առել Մկրտութիւնը

Մկրտութիւնը սկիզբ առաւ այն բանից, որ սկզբում Յորդանանում Յովհաննէս Մկրտիչն «...*ապաշխարութեան մկրտութիւն արեց ամբողջ ժողովրդին և ասում էր, թէ, ով գալու է իրենից յետոյ, նրա՛ն թող հաւատան. այն է՝ Յիսուս Քրիստոսին*» /Գործք 19:4/: Ապա, Յիսուս Քրիստոս իր օրինակով սրբագործեց Մկրտութիւնը՝ այն ընդունելով Յովհաննէսից: Վերջապէս՝ Իր յարութեամբ Նա Առաքեալներին տուեց հանդիսաւոր կարգադրութիւնը. «*Գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունով*» /Մատթ. 28:19/:

Ի՞նչ է Սկզբնական մեղքը

Սկզբնական մեղքը երկրի վրայ նախածնողներ Ադամի եւ Եւայի գործած մեղքն է, դրա համար էլ այս մեղքն ընդունուած է կոչել նաեւ ադամական մեղք: Ադամական մեղքն այն էր, որ նա կորցրեց արդարութիւնը եւ մեղքի ու կրքի մէջ ծնեց իր որդուն, իսկ սա՝ իր որդուն. «*Անօրէնութեամբ յղիացաւ և մեղքերի մէջ ծնեց ինձ մայրն իմ*» /Սաղմ. 50:7/: «*Ինչպէս որ մէկ մարդով մեղքը*

աշխարհ մտաւ, և մեղքով էլ՝ մահը, այնպէս էլ բոլոր մարդկանց մէջ տարածուեց մահը, որովհետև բոլորն էլ մեղանչեցին» /Հռոմ. 5:12/:

Ի՞նչ է պահանջւում Մկրտութիւն ընդունել ցանկացողից

Մկրտութիւն ընդունել ցանկացողից պահանջւում է Հաւատք առ Սուրբ Երրորդութիւն, դրա համար էլ՝ «*Ով հաւատայ և մկրտուի, պիտի փրկուի, և ով չհաւատայ, պիտի դատապարտուի*» /Մարկ. 16:16/:

Նշանակում է՝ Մկրտութեան եկողը պէտք է հասո՞ւն մարդ լինի

Այո, Մկրտութեան եկող մարդը պէտք է իմանայ՝ ինչ են հաւատքը եւ մեղքերը, ունենայ հաւատք առ Սուրբ Երրորդութիւն, որպէսզի գիտակցաբար մկրտուի եւ փրկուի իր հաւատով:

Եթէ այդպէս է, ապա ինչո՞ւ են Հայ Եկեղեցում մկրտում նաեւ մանուկներին

Ինչպէս եւ ասուեց վերեւում, սկզբնական մեղքը ծնողներից փոխանցւում է երեխաներին եւ զրկում նրանց Յաւիտենական Կեանքից. «*...քանի որ մեղքի վարձը մահն է*» /Հռոմ. 6:23/: Այդ պատճառով էլ Հայ Եկեղեցին, հետեւելով Աստուծոյ խօսքին, մկրտում է մանուկներին. «*Յիսուս պատասխանեց և ասաց նրան. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը վերստին չծնուի, չի կարող Աստուծոյ արքայութիւնը տեսնել»: ... Յիսուս պատասխան տուեց և ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից և Հոգուց չծնուի, չի կարող Աստուծոյ արքայութիւնը մտնել...*» /Յովհ. 3:3, 5/, քանի որ այս մեղքը քաււում է միմիայն Քրիստոսի մահով մկրտութեամբ. «*...որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, նրա մահո՛վ է, որ մկրտուեցինք*» /Հռոմ.6:3/:

Նշանակում է, եթէ մանուկը մահանում է չմկրտուած, ապա չի՞ մտնում Երկնքի Արքայութիւն

Այո, այդպէս է: Նա, ինչպէս եւ ասել է Տէրը, չի մտնի Աստուծոյ Արքայութիւն, այլ միայն յաւիտենական խաւարի մէջ կը լինի:

Եթէ Մկրտութիւն ընդունել ցանկացողից պահանջւում է հաւատք, ապա ինչպէ՞ս վարուել մանուկների դէպքում, ովքեր հաւատքի նուազագոյն գիտակցութիւնն անգամ չունեն

Մանուկներին մկրտում են ըստ ծնողների եւ կնքահօր հաւատքի. վերջիններս պարտաւոր են երեխաներին սովորեցնել հաւատք, երբ նրանք հասնեն որոշակի տարիքի կամ մեծանան:

Կա՞ն արդեօք Սուրբ Գրքում ապացոյցներ առ այն, որ պէտք է մկրտել երեխային

Հին Ուխտի ժամանակներում թլփատում էին ութ օրական երեխաներին, եւ եթէ «*մի անթլփատ արու, որի անթլփատութեան մարմինը թլփատուած չէ, այն անձն իր ժողովրդիցը պիտի կորչի. նա իմ ուխտն անարգել է*» /Ծն. 17:14 /:

Եւ քանի որ երեխան հաւատքի գիտակցութիւն չունէր, Տէրը հրեաների համար սահմանել էր հետեւեալը. « երբ վաղը քո որդին քեզ հարցնի ու ասի, թէ՝«*Այդ ի՞նչ պատուիրաններ, օրէնքներ ու կանոններ են, որ մեր Տէր Աստուածը պատուիրել է մեզ», ապա քո որդուն կ՚ասես. «Եգիպտոսում փարաւոնի ստրուկներն էինք մենք, և Տէր Աստուածը ամուր ձեռքով ու հզօր բազկով մեզ դուրս բերեց այնտեղից: Տէրը Եգիպտացիների երկրում փարաւոնի ու նրա տան վրայ մեր ներկայութեամբ սոսկալի նշաններ և մեծագործութիւններ արեց: Նա՝ մեզ դուրս բերեց այդտեղից, որպէսզի բերի այստեղ, մեզ տայ ա՛յն երկիրը, որ երդուել էր տալ մեր հայրերին: Տէրը մեզ պատուիրեց գործադրել բոլոր այս օրէնքները, յաւիտեանս երկնչել մեր Տէր Աստծուց, որպէսզի լաւ լինի մեզի համար կեանքի բոլոր օրերում, ապրենք, ինչպէս որ ապրում ենք այսօր: Մեզի համար*

ողորմածութիւն կը լինի, եթէ հետևնք, որ մեր Տէր Աստուծոյ առջև գործադրուեն բոլոր այս պատուիրանները, ինչպէս որ Տէրը կարգադրել է մեզի» /Երկր. Օր. 6:20-25/, այսինքն՝ եթէ երեխան մեծանայ, ծնողները պարտաւոր են նրան պատմել Աստուծոյ մասին: Նոյնպէս եւ՝ երեխայի Մկրտութեան դէպքում: Ծնողները նրան պարտաւոր են մկրտել, որպէսզի, ինչպէս ասուեց վերեւում, նա չզրկուի Աստուծոյ Արքայութիւնից, իսկ յետոյ ծնողները եւ կնքահայրը պէտք է նրան պատմեն Աստուծոյ, հաւատքի եւ էլի շատ բաների մասին: Այդ պատճառով էլ Հայ Եկեղեցում մանուկներին մկրտում են ութ օրականից սկսած:

Ինչո՞ւ է Մկրտութեան ժամանակ անհրաժեշտ կնքահայր ունենալ

Կնքահայրը Մկրտութեան ժամանակ անհրաժեշտ է, որպէսզի Եկեղեցու առաջ՝ յանձին հոգեւորականի, երաշխաւորի մկրտուողի հաւատքի համար (ինչպէս երեխայի, այնպէս էլ մեծահասակի) եւ Մկրտութիւնից յետոյ ընդունի նրան իր խնամքի տակ՝ նրան հաւատքի եւ առաքինութիւնների մէջ հաստատելու համար: Այդ պատճառով կարեւոր է, որ կնքահայրը մկրտուած լինի Հայ Եկեղեցում եւ ունենայ հաւատքի գիտակցութիւն:

Կարո՞ղ է «կնքահայրը» կին լինել

Ոչ: Հայ Եկեղեցում կարող է լինել միայն կնքահայր: Մեզանում չկայ «կնքամայր» հասկացութիւնը:

Ինչո՞ւ է Հաւատոյ Հանգանակում ասւում, որ Մկրտութիւնը Մի է

Մկրտութիւնը կատարւում է մէկ անգամ եւ չի կրկնւում, ինչպէս եւ ասում է Պօղոս Առաքեալը. «*Մէ՛կ Տէր կայ, մէ՛կ հաւատ, մէ՛կ մկրտութիւն*» /Եփես.4:5/:

Ինչո՞ւ Մկրտութիւնը չի կրկնւում

Մկրտութիւնը չի կրկնւում այն պատճառով, որ այն հոգեւոր ծնունդ է. մարդ ծնւում է մէկ անգամ, այդ պատճառով էլ մկրտւում է մէկ անգամ:

Կարո՞ղ են ներուել այն մեղքերը, որոնք գործուել են Մկրտութիւնից յետոյ

Մկրտութիւնից յետոյ մեղանչածների համար կայ մեղքերի թողութեան միջոց. դա Ապաշխարհութեան Խորհուրդն է, որը մեր մեղքերը լուացող երկրորդ աւազանն է համարւում:

ԴՐՈՇՄ

Ի՞նչ է Դրոշմը

Մկրտութեան Խորհրդի ժամանակ ջրի եւ Հոգու միջոցով մենք մաքրւում ենք սկզբնական եւ այլ մեղքերից, իսկ այս Խորհրդով, հաւատացեալին Սուրբ Միւռոնով մարմնի մասերի օծման ժամանակ տրւում են Սուրբ Հոգու շնորհներ: Ի վերուստ առաքուած Սուրբ Հոգին շնորհի կնիք է դնում նորամկրտուած քրիստոնեայի վրայ, որով եւ ամբողջանում է մկրտութիւնը: Աստուածային շնորհների ստացմամբ, մարդն ամրանում է հոգով եւ ամբողջովին զինւում անտեսանելի զէնք ու զրահով՝ ընդդէմ չարի ամէն յարձակումների: Սուրբ Հոգով դրոշմուածները դառնում են Քրիստոսի զինուորներ:

Հայ Եկեղեցին Դրոշմի Խորհուրդը կատարում է անմիջապէս Մկրտութեան Խորհրդից յետոյ, որպէսզի մենք Աստուածային շնորհներն ստանանք անմիջապէս մաքրագործող լուացումից յետոյ: Եկեղեցին Դրոշմի եւ Մկրտութեան Խորհուրդները միաւորել է Տիրոջ նմանութեամբ, երբ Նա Յովհաննէս Մկրտչից Յորդանան գետում մկրտութիւն ընդունելուց յետոյ դուրս ելաւ ջրից, Սուրբ Հոգին աղաւնու կերպարանքով իջաւ Նրա վրայ, եւ երկնքից լսուեց ձայնը. «*Դա՛ է իմ սիրելի որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճութիւնը*» /Մատթ. 3:17/: Նոյն կերպ եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը Արածանի գետում մկրտեց հայ ժողովրդին՝ միաժամանակ կատարելով նաեւ Սուրբ Միւռոնով օծում՝ համաձայն Ագաթանգեղոսի վկայութեան: Դրոշմի Խորհուրդն անուանում են նաեւ Կնունք, քանի որ Աստուածային կնիքով են նշւում մեր մարմնի համապատասխան մասերը. «*Եւ նա, որ հաստատեց մեզ ի Քրիստոս ձեզ հետ միասին և օծեց մեզ, Աստուած է, որ մեզ կնքեց էլ և Հոգու առհաւատչեան դրեց մեր սրտերի մէջ*» /Բ Կորնթ. 1:21-22/:

Այսպիսով՝ Դրոշմը Խորհուրդ է, որով հաւատացեալին փոխանցւում են Սուրբ Հոգու շնորհները, որոնք նրան ամրացնում են հոգեւոր քրիստոնէական կեանքում: Մարդը հաստատւում է Աստուծոյ մէջ,

դառնում է Սուրբ Հոգու տաճար եւ Երկնային Արքայութեան ժառանգորդ:

Իսկ ինչպէ՞ս էին փոխանցւում Սուրբ Հոգու շնորհները Առաքեալների ժամանակներում

«Գործք Առաքելոցը» վկայում է, որ Առաքեալներն իրենց ձեռքը դնում էին մկրտութիւն ընդունողների վրայ, որոնք այդ կերպ ստանում էին Սուրբ Հոգու շնորհները (տես՝ Գործք 8:16-18):

Այդ դէպքում ինչո՞ւ այսօր ձեռք չեն դնում, այլ օծում են Սուրբ Միւռոնով

Առաքեալների ժամանակներում, երբ հաւատացեալների թիւը նշանակալիօրէն աճում էր, իսկ քրիստոնէական համայնքներն ընդարձակւում եւ տարածւում էին աշխարհով մէկ, Առաքեալները եւ եպիսկոպոսներն արդէն չէին կարող անձամբ ձեռք դնել բոլոր հաւատացեալների վրայ: Եւ որպէսզի մկրտութիւն ստացողները չզրկուէին Սուրբ Հոգու կենսատու շնորհներից, Առաքեալները ձեռք դնելը փոխարինեցին Սուրբ Միւռոնով օծմամբ (Դրոշմ), ինչպէս նաեւ հրահանգ տուեցին, որ օծում կատարեն նաեւ երէցները (քահանաները):

Ի՞նչ է Սուրբ Միւռոնը

Միւռոնը յունարէն բառ է, որ նշանակում է բուրաւէտ իւղ: Նրա հիմնական բաղադրիչը ձիթապտղի իւղն է, որի հետ խառնւում են նաեւ աւելի քան քառասուն անուշահոտութիւններ, հիմնականում՝ բալասանիկ (հինածաղիկ):

Մեր Եկեղեցում Սուրբ Միւռոնի օրհնութեան իրաւունքը պատկանում է Կաթողիկոսին:

Մարմնի ո՞ր մասերն են օծւում Սուրբ Միւռոնով

Սուրբ Միւռոնով մարմնամասերից իւրաքանչիւրի օծութիւնը (խաչաձեւ) համաձայն աղօթքների, համապատասխանում է որոշակի շնորհի.

Ճակատին. «*Այս անուշ իուղը, որ Յիսուս Քրիստոսի անունով դրոշմւում է ճակատիդ, երկնաւոր, աննիւթական պարգևների կնիքը թող լինի*»:

Աչքերին. «*Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անունով թող լուսաւորի աչքերդ, որպէսզի երբեք մահ չտեսնես*»:

Ականջներին. «*Այս Սուրբ Օծումը թող բացի ականջներդ, որպէսզի Աստուծոյ պատուէրները լսես*»:

Քթին (ռունգերին). «*Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անուամբ թող յաւիտենական կեանքի անուշ բոյրը տայ քեզ*»:

Բերնին. «*Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անուամբ բերնիդ ու շրթունքներիդ վրայ դրուած ամուր դուռ ու պահապան թող լինի*»:

Ձեռքերին. «*Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անուամբ թող բարեգործութեան նպաստի՝ ամէն տեսակ բարի գործերի և առաքինի կեանքի*»:

Սրտին. «*Այս աստուածային կնիքը թող սիրտդ մաքրի և նորոգի հոգիդ*»:

Թիկունքին. «*Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անուամբ թող ամուր վահան դառնայ, որով կարողանաս չարի արձակած բոլոր մխացող նետերը մարել*»:

Ոտքերին. «*Այս աստուածային կնիքը դէպի յաւիտենական կեանք թող ուղղի քայլերդ, որպէսզի երբէք չսասանուես*»:

Յաւարտ խորհրդակատարութեան հոգեւորականն ասում է հետեւեալը. «*Խաղաղութիւն ընդ քեզ փրկեալդ Աստուծոյ. Խաղաղութիւն ընդ քեզ օծեալդ Աստուծոյ*»:

Մկրտութեան եւ Դրոշմի Խորհուրդներից յետոյ, հոգեւորականը մկրտուածին արժանացնում է Եկեղեցու եւս մէկ Խորհրդի՝ Հաղորդութեան Խորհրդին:

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է Հաղորդութեան Խորհուրդը

Հաղորդութիւնը Խորհուրդ է, որով հաւատացեալը հացի եւ գինու տեսքով ճաշակում է Յիսուս Քրիստոսի Մարմինն ու Արիւնը՝ յաւիտենական կեանքի համար:

Ինչպէ՞ս է հաստատուել այդ Խորհուրդը

Հաղորդութեան Խորհուրդը Տէրը հաստատեց Իր չարչարանքներից անմիջապէս առաջ՝ Խորհրդաւոր Ընթրիքի ժամանակ, երբ Նա վերցրեց հացը եւ օրհնելով կիսեց ու բաժանելով աշակերտներին, ասաց. «*Առէ՛ք, կերէ՛ք այս է իմ Մարմինը, որ ձեզ համար է տրուած. այս արէ՛ք իմ յիշատակի համար»:* Եւ, վերցնելով բաժակը եւ գոհութիւն յայտնելով, տուեց աշակերտներին եւ ասաց. «*Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է Նոր Ուխտի Իմ Արիւնը, որ թափւում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար*» (տե՛ս Մատթ. 26:26-28, Մարկ. 14:22 Ղուկ. 22:19): Հաղորդելով Առաքեալներին՝ Նա միաժամանակ պատուիրեց նրանց միշտ կատարել այդ Խորհուրդը:

Ինչպիսի՞ տեղ է զբաղեցնում այդ Խորհուրդը քրիստոնէական ծիսակատարարութեան մէջ, եւ ինչպիսի՞ն է դրա ներգործութիւնը

Հաղորդութեան խորհուրդը քրիստոնէական ծիսակատարարութեան գլխաւոր եւ էական մասն է կազմում: Այս Խորհուրդի ներգործութիւնն այն է, որ հաւատացեալի կեանքում մշտապէս բազմապատկի շնորհը, քանզի այն դեղ է ամէնօրեայ մեղքերի դէմ:

Ո՞ր ծիսակատարարութեան ընթացքում է կատարւում Հաղորդութեան Խորհուրդը

Հաղորդութեան Խորհուրդը կատարւում է Պատարագի ժամանակ:

Ի՞նչ է նշանակում Պատարագ բառը

Պատարագ բառը նշանակում է ընծայ, զոհաբերութիւն: Քանի որ Մկրտութիւնը մարդու հոգեւոր ծնունդն է, Սուրբ Պատարագը կանչուած է հաւատացեալներին սնելու հոգեւոր հացով՝ Հաղորդութեան միջոցով: Այսինքն, Պատարագ է անուանւում միայն այն ծիսակատարարութիւնը, որի ընթացքում կատարւում է Հաղորդութեան Խորհուրդը:

Ի՞նչ պատարագամատոյցների վրայ է հիմնուած Հայոց Եկեղեցու Պատարագը

Հայոց Եկեղեցու Սուրբ Պատարագը հիմնուած է Սբ. Բարսեղ Կեսարացու, Սբ. Գրիգոր Աստուածաբանի եւ Սբ. Ոսկեբերանի պատարագամատոյցների վրայ: Դարերի ընթացքում Պատարագն իր կատարման մէջ փոփոխութիւնների եւ լրացումների է ենթարկուել՝ հայկական ինքնատիպ հոգեւոր երգասացութիւնների եւ յատուկ բնոյթի ծէսերի շնորհիւ:

Ի՞նչ մասերից է բաղկացած Հայոց Եկեղեցու Պատարագը

Հայոց Եկեղեցու Պատարագը բաղկացած է չորս մասից. Ա. Պատրաստութիւն, Բ. Երախայից Պատարագ (չմկրտուածների Պատարագ), Գ. Հաւատացելոց Պատարագ, (հաւատարիմների) Դ. Օրհնութիւն եւ Արձակում:

Ինչպիսի՞ն է Պատարագի մատուցման ընդհանուր կարգը

Նրա առաջին հատուածում պատրաստւում է Խորհուրդի նիւթը՝ հացը եւ գինին: Նման ձեւով պատրաստուելը գալիս է հին քրիստոնեաների՝ հացը, գինին եւ

Պատարագի անցկացման համար ամէն անհրաժեշտը բերելու աւանդոյթից:

Պատարագի երկրորդ մասին կարող են մասնակցել չմկրտուածները, այսինքն՝ նրանք, ովքեր պատրաստւում են մկրտութեան, ինչպէս նաեւ ապաշխարողները, որ ծանր մեղքերի պատճառով հեռացուել են Սուրբ Հաղորդութիւնից: Պատարագի այս հատուածի նպատակը հաւատացեալներին խրատելն է հինկտակարանեան Մարգարէներին եւ Առաքեալներին, Սբ. Աւետարանն (իւրաքանչիւր օր եւ տօն ունի Սբ. Գրքի իր ընթերցումները) ընթերցելու միջոցով: Աւետարանի ընթերցումից յետոյ «երգւում է» Հաւատոյ Հանգանակը:

Հին ժամանակներում չմկրտուածները, չխոստովանածները, դեռեւս մեղքերի մէջ գտնուողները Եկեղեցուց դուրս էին գալիս գաւիթ, եւ նրանց ետեւից դռները փակւում էին: Եկեղեցում մնում էին միայն հաւատարիմները, այսինքն՝ նրանք, ովքեր «արժանի» էին ընդունելու Սուրբ Հաղորդութիւնը: Այդ ժամանակ սկսւում էր Պատարագի երրորդ հատուածը, որը կարելի է ենթաբաժանել հետեւեալ հատուածների՝ Ընծաների Վերաբերում Խորանին, Ընծաների սրբագործում, Ընծաներով հաւատացեալներին Հաղորդելը (Հաղորդութիւնը հաւատացեալներին բաշխւում է գինու մէջ թաթախած մի կտոր նշխարի տեսքով), գոհութիւն Հաղորդութեան համար: Պատարագի վերջում՝ Սուրբ Աւետարանի ընթերցումից յետոյ, հոգեւորականը վերջին անգամ օրհնում է հաւատացեալներին եւ արձակում նրանց խաղաղութեամբ:

Պատարագի աւարտին չհաղորդուածներին բաժանւում է Մաս՝ օրհնուած, բարակ, անթթխմոր հացլաւաշի կտորներ: Մասը բաժանւում է մի կողմից որպէս յիշատակութիւն սիրոյ ընթրիքի, որը հնում կատարւում էր Աստուածային Պատարագից յետոյ, միւս կողմից, որպէսզի չհաղորդուած ծխականները անմասն չմնան Աստուածային սեղանից եւ օրհնութիւնից:

Ինչպիսի՞ նշխար է օգտագործում Պապարագին

Հայոց Եկեղեցում օգտագործում է անթթխմոր հաց՝ նշխար՝ պատրաստուած ցորենի ալիւրից:

Ինչպիսի՞ գինի է օգտագործում Պապարագին

Հայոց Եկեղեցում օգտագործում է անապակ կարմիր խաղողի գինի՝ ջրով չբացուած:

Ինչպիսի՞ հաց եւ գինի են օգտագործում միւս Եկեղեցիները

Ամէն Եկեղեցի ունի իր աւանդոյթները: Կաթոլիկներն օգտագործում են անթթխմոր հաց, սակայն գինու մէջ ջուր են աւելացնում: Ղպտիները՝ թթխմորով հաց, իսկ գինու մէջ՝ ջուր: Յակոբիկեանները՝ թթխմորով հաց, իւղ, աղ եւ գինին՝ ջրով:

Ուղղափառները՝ թթխմորով հաց, գինու մէջ սառը ջուր, վերջում էլ՝ տաք ջուր:

Ինչու՞ է Հայոց Եկեղեցին օգտագործում աննթխմոր նշխար եւ ջրով չբացուած գինի

Մենք հետեւում ենք Սուրբ Առաքեալների կանոններին՝ հաստատուած անձամբ Սբ. Գրիգոր Լուսաւորչի կողմից, այդ իսկ պատճառով մինչեւ օրս էլ օգտագործում ենք անթթխմոր հաց եւ անապակ գինի: Ըստ մովսիսական օրէնքի, երբ սկսւում էին բաղարջակերաց օրերը, տներում չէր կարելի պահել թթխմոր հացի գէթ մէկ փշրանք, իսկ եթէ գտնէին, ապա կը քարկոծէին (Ելք 12:15,18-20): Նշենք, որ հրեաները մինչեւ օրս էլ տօնի նախօրէին հիմնովին մաքրում են տունը՝ տանը չպէտք է մնայ գէթ մի փշուր «թթխմոր»: Գոյութիւն ունի յատուկ ծէս. տունը մաքրելուց յետոյ՝ երեկոյեան, տանտէրը վառած մոմով անցնում է սենեակից սենեակ եւ սագի փետուրով ալում-սրբում է մնացած փշուրները, որոնք յատուկ դնում են երեւացող տեղ մեծ դգալի մէջ:

Եւ, ինչպէս մեզ ուսուցանում է Սբ. Գիրքը, մեր Տէրը Զատիկը հաստատեց բաղարջակերաց օրերին. «*Եւ Բաղարջակերաց տօնի առաջին օրը աշակերտները*

մօտեցան Յիսուսին և ասացին. «Ո՞ւր ես կամենում պատրաստենք քեզ համար զատկական ընթրիքը, որ ուտես» /Մատթ. 26:17/, ուստի եւ Խորհրդաւոր Ընթրիքին անթթխմոր հաց էր:

Ընթրիքի ժամանակ գինին անապակ էր եւ ջրով բացուած չէր. «*Եւ բաժակ վերցնելով գոհութիւն յայտնեց, տուեց նրանց ու ասաց. «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արիւնը, որ թափւում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար: Բայց ասում եմ ձեզ, այսուհետև ես այլևս որթատունկի բերքից չեմ խմի մինչև ա՛յն օրը, երբ ձեզ հետ կը խմեմ նորը իմ Հօր արքայութեան մէջ»* /Մատթ. 26:27-29/: Ինչպէս տեսնում ենք, Տէրը չի օգտագործում ջուր, այլ միայն գինի՝ որթատունկի բերքից: Բոլորին է յայտնի, որ խաղողը գինի է արտադրում եւ ոչ թէ՝ ջուր: Այդ մասին ասում է նաեւ Սբ. Ոսկեբերանը. «*Ապա ինչու՞ յարութիւնից յետոյ Նա խմում էր ոչ թէ ջուր, այլ՝ գինի: Նրա համար, որպէսզի ամբողջովին հերքի միւս չար հերձուածը. քանզի ոմանք Խորհուրդի մէջ ջուր են օգտագործում, ապա, որպէսզի ցոյց տայ, որ Խորհուրդը հաստատելիս ևս օգտագործել է գինի, յարութիւնից յետոյ ևս, երբ առանց Խորհուրդի առաջարկում էր սովորական ընթրիք, նոյնպէս օգտագործում է գինի, ասում է՝ որթատունկի բերքից: Իսկ խաղողի որթը արտադրում է գինի և ոչ թէ՝ ջուր*»: Այդ պատճառով Հայոց Եկեղեցին հաւատարիմ է մնում Աւետարանին, Առաքեալներին եւ մեր Սուրբ Հայրերին:

Ի՞նչ փաստարկների վրայ են հիմնւում թթխմորով հաց օգտագործելու եւ գինու մէջ ջուր աւելացնելու կողմնակիցները

Թթխմորով հացի կողմնակիցները յղում են կատարում Յովհաննէս Աւետարանչի խօսքերին. «*Կայիափայի մօտից Յիսուսին տարան գաւիթ: Այգաբաց էր, և նրանք չմտան գաւիթ, որպէսզի չպղծուեն և որպէսզի զատկական ընթրիքը կարողանան ուտել*», այսինքն, ըստ իրենց, Զատիկը դեռ չէր սկսուել, իսկ Քրիստոս Զատիկը կատարել էր մէկ օր առաջ, եւ հետեւաբար, բնական է, որ հացը թթխմորով էր: Սակայն նման պնդումը

հակասում է միւս երեք Աւետարանիչներին, որոնք ասում են, որ Քրիստոս Զատիկը կատարեց «*բաղարջակերաց տօնի առաջին օրը*», ինչը հաստատում է նաեւ Սբ. Ոսկեբերանը. «*Զէ՞ որ Քրիստոս Ինքը կատարեց Զատիկը «բաղարջակերաց տօնի առաջին օրը»* /Մատթ. 26:17/: Նշենք, որ Տէրը չէր կարող խախտել Օրէնքը. «*Մի՛ կարծէք, թէ Օրէնքը կամ մարգարէներին ջնջելու եկայ, չեկայ ջնջելու, այլ՝ լրացնելու*» /Մատթ. 5:17/, եւ ուրեմն, «*բաղարջակերաց օրը*» չէր կարող լինել այլ հաց: Իսկ այն, որ հրեաները չկերան Զատիկը, խօսում է այն մասին, որ նրանք նախանձից եւ ատելութիւնից այնքան զբաղուած էին դատավարութեան գործերով, որ Զատիկը չկերան նշանակուած օրը, այդպիսով իրենք իսկ խախտեցին Օրէնքը, եւ ոչ թէ՝ Քրիստոս:

Գինու հետ ջուր խառնելն էլ կատարւում է ի յիշատակումն այն բանի, որ խաչի վրայ Փրկչի խոցուած կողից արիւն եւ ջուր հոսեց. «*...այլ զինուորներից մէկը տէգով խոցեց նրա կողը, և իսկոյն արիւն և ջուր ելաւ*» /Յովհ. 19:34/: Սակայն նման պնդումը հակասում է Սբ. Գրքին. նախ, Ինքը Տէրը ջուր չի օգտագործում, այլ միայն գինի, երկրորդ՝ ջուրն ու գինին, որ հոսում էին Տիրոջ կողից, խառնուած չէին, ուստի գինու հետ ջուր խառնելը ճիշտ չէ: Երրորդ՝ ջուրը Մկրտութեան նախատիպն է, իսկ արիւնը՝ Հաղորդութեան, եւ եթէ Հաղորդութեան ժամանակ գինու մէջ ջուր են աւելացնում, ապա ինչո՞ւ Մկրտութեան ժամանակ ջրի մէջ գինի չեն աւելացնում:

Նշենք, որ գինին ջրով բացելու պատարագային աւանդոյթը գալիս է յոյների՝ գինին միայն ջրով բացուած խմելու հին սովորոյթից: Աւանդաբար, յունական գինիները եղել են թանձր եւ քաղցր, այդ պատճառով էլ դրանք առանց նօսրացնելու խմելը յոյների կողմից համարւում էր բարբարոսութիւն: Արդիւնքում այդ աւանդոյթը, որը տարածուած էր ամբողջ Միջերկրածովեան աւազանում, հաստատուեց ողջ Հռոմէական կայսրութեան Եկեղեցիների պատարագներում:

Այդ իսկ պատճառով, բոլոր յղումները Սբ. Գրքին, որոնք իբր ապացուցում են, թէ գինու մէջ պէտք է ջուր աւելացնել, անհիմն են:

Ի՞նչ է կատարւում մեզի հետ Հաղորդութեան Խորհուրդի ժամանակ

Քրիստոսի Մարմնին եւ Արեանը հաղորդուողը միաւորւում է Յիսուս Քրիստոսի հետ եւ Նրանում հաղորդակցւում է յաւիտենական կեանքին «...*եթէ չուտէք մարդու Որդու մարմինը և չըմպէք նրա արիւնը, ձեր մէջ կեանք չէք ունենայ: Ով ուտում է իմ մարմինը և ըմպում իմ արիւնը, կը բնակուի իմ մէջ, և ես՝ նրա մէջ*» /Յովհ. 6:54, 57/:

Ինչպէ՞ս հարկ է մօտենալ Հաղորդութեան Խորհուրդին

Հաղորդութեան Խորհուրդին պէտք է մօտենալ երկիւղածութեամբ եւ ակնածանքով՝ փորձելով (բացելով) Աստուծոյ առաջ իր խիղճը, որպէսզի մաքրի այն՝ մեղքերի համար զղջալով. «*Թող մարդ նախ ինքն իրե՛ն փորձի և ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից. որովհետև, ով ուտում է և խմում անարժան-օրէն, իր իսկ դատապարտութիւնն է ուտում և խմում, քանի որ չի զատորոշում Տիրոջ մարմինը*» /Ա Կորնթ.11:28-29/: Դրա օրինակն է Մովսէսը. նա ցանկացաւ նայել այրուող մորենուն, որի համար Տէրն ասաց. «*Մի՛ մօտեցիր այստեղ: Կօշիկներդ հանի՛ր քո ոտքերից, որովհետև այն վայրը, ուր կանգնած ես դու, սուրբ հող է*» /Ելք 3:5/:

Այսպիսով՝ Սինա լեռը Սուրբ Խորանն է, որի վրայ պատարագւում է Քրիստոս, եւ դրա համար երկիւղածութեամբ եւ ակնածանքով է պէտք մօտենալ՝ հանելով կօշիկները, որոնք մեր մեղաւոր գործերն են:

Թագաւորութիւնների առաջին գրքում գրուած է, որ Աստուած յիսուն հազար եօթանասուն մարդու հարուածեց այն բանի համար, որ նրանք նայեցին տապանի մէջ: «*Այսպիսով, եթէ նման մեծ պատիժ կրեցին միայն այն բանի համար, որ աչքերով տեսան տապանը*, - ասում է Սբ. Տաթեւացին, - *ապա որքա՞ն աւելի երկիւղով և ակնածանքով է պէտք վերցնել Քրիստոսի Մարմինը, Որը բազում անգամ առաւել է տապանից*»: Եւ ճաշակելն աւելին է, քան տեսնելը, որի համար Առաքեալն ասում է. «*Դրա համար իսկ ձեր մէջ բազում հիւանդներ և ցաւագարներ կան, և շատերն էլ մեռած են*» /Ա Կորնթ.

11:30/: Դրա օրինակը Սբ. Յովհաննէս Մկրտիչն է, ով, մաքրուած լինելով իր մօր որովայնում, զարհուրեց ձեռքերը դնել Քրիստոսի գլխին: Ապա, որքա՛ն առաւել մե՛նք պէտք է վախենանք, որ մաքրուած չենք որովայնում: Եթէ Մարիամ Մագդաղենացին, որ ջերմ սիրով էր սիրում Տիրոջը, չկարողացաւ դիպչել Քրիստոսին, ապա որքա՛ն առաւել մե՛նք պէտք է վախենանք, որ ջերմ սէր չունենք: Հարիւրապետը, որ կատարեալ հաւատ ունէր, իրեն արժանի չհամարեց, որպէսզի Տէրը մտնի իր տունը: Նոյնպէս եւ Պետրոսը, համարում էր իրեն մեղաւոր ու անարժան, որ Տէրը մօտենայ իրեն:

«*Եւ Քրիստոս շատ է ցանկանում նման խոնարհութիւն*, - ասում է Սբ. Տաթեւացին, - *դրա համար էլ կատարեց հարիւրապետի խնդրանքը, իսկ Պետրոսին դարձրեց մարդկանց որսորդ*»: Այսպիսով՝ երկիւղով եւ ակնածանքով պէտք է մօտենալ, կատարելու այդ խորհուրդը եւ հաղորդուելու, այլ ոչ՝ համարձակուել յանդգնութեամբ:

Ի՞նչ պէտք է, որպէսզի Հաղորդութիւնը լինի արժանի

Որպէսզի հաղորդութիւնն արժանաւոր լինի, պէտք է հաւատալ՝ տեսնելու համար Քրիստոսի Մարմինը, որ ծածկուած է հացի եւ գինու կերպարում: Ինչպէս նաեւ պէտք է հաւատալ, որ ինչպէս Ադամի մարմնով մենք դատապարտուած ենք, այնպէս էլ Քրիստոսի Մարմնով սրբւում ենք: Ադամի մարմնով դառնում ենք մարդ եւ մարդու որդի, իսկ Քրիստոսի Մարմնով դառնում ենք Քրիստոս եւ Աստուծոյ որդի: Ադամի մարմնով մենք ժամանակաւոր ենք եւ մահկանացու, իսկ Քրիստոսի Մարմնով՝ յաւերժ եւ անմահ: Այնուհետեւ, նա, ով ցանկանում է արժանաւոր կերպով հաղորդուել, պէտք է լինի քաղցած ոչ միայն մարմնով, այլեւ՝ հոգով, քանզի Աստուած չի ցանկանում յագեցնել յագեցածին, այլ՝ քաղցածին, ինչի մասին Իր օրհներգութեան մէջ ասում է Սուրբ Կոյսը. «*...քաղցածներին լիացրեց բարիքներով*», իսկ Տէրն ասում է հեգեւեալը. «*Երանի՜ նրանց, որ քաղցն ու ծարաւն ունեն արդարութեան, որովհետև նրանք պիտի յագենան*»: Եւ այնժամ նա, ով քաղցած է

հոգով, բանականութեամբ կը ճանաչի իր թերութիւններն ու մեղքերը: Եւ տեսնելով, որ այդ սնունդը լի է քաղցրութիւնով, կ'ընդունի այն ուրախութեամբ:

Եւ ոչ միայն իր քաղցի մասին պէտք է մտածի, այլ նաեւ՛ ննջեցեալ հաւատացեալների քաղցի մասին, որոնք յոյս ունեն փրկութեան եւ Սբ. Պատարագի շնորհը ստանալու, նաեւ՛ ննջեցեալ մեղաւորների, որոնք փրկութեան կարիք ունեն, որպէսզի նրանց էլ բաժին հասնի Սբ. Պատարագի շնորհներից: Եւ այնժամ, երբ այդ ամէնի մասին խորհի, քաղցրութեամբ եւ ուրախութեամբ էլ կը մատուցի Սբ. Պատարագը եւ կը հաղորդուի:

Պատարագ մատուցողը եւ հաղորդուողը պէտք է նաեւ մտաբերեն Քրիստոսի չարչարանքները եւ ջերմ սիրով այրուեն առ Աստուած, ինչպէս նաեւ պէտք է միշտ պատրաստ լինեն հեռանալ այս աշխարհից՝ մտնելու համար երկնային Երուսաղէմ: Սակայն ամենակարեւորը հոգու սրբութիւնն է, առանց որի չի կարելի մօտենալ զոհասեղանին եւ հաղորդուել, իսկ դրա համար պէտք է մեղքերը խոստովանելով (ընդհանուր կամ անհատական խոստովանութեամբ), քաւել դրանք, որպէսզի Քրիստոսի Մարմնի համար դառնանք սուրբ տաճար: «*Քանզի մէկ անգամ առանց մեղքերի հաղորդուելն ու պատարագ մատուցելն առաւել օգտակար է, քան բազմիցս (հաղորդուելն ու պատարագ մատուցելը)՝ մահացու մեղքերի մէջ*» - գտնում է Սբ. Տաթեւացին: Այսպիսով, եթէ ճաշակենք հոգով եւ մարմնով, հաղորդուենք հաւատով եւ յոյսով, ապա՝ Արիւնը կը մաքրի մեզ մեր բոլոր կամայ եւ ակամայ գործած մեղքերից, քանզի «... *նրա Որդու՝ Յիսուսի արիւնը մաքրում է մեզ ամէն մեղքից*» /Ա Յովհ. 1:7/:

Ո՞ւմ են նման անարժանօրէն Հաղորդութիւն ստացողները

Ովքեր հաղորդութիւնից յետոյ իրենց սրբութեան մէջ չեն պահում, նրանք նման են Յուդային, որ ճաշակելուց յետոյ մատնեց Քրիստոսին: Նման են նաեւ հրեաներին, ովքեր, ընդունելով Նրան ծաղկազարդի կիրակի օրը, այնուհետեւ խաչեցին: «*Նաև շատերը պատրաստում են իրենց սրտերը քառասնօրեայ պահքի ընթացքում և հա-*

ղորդում են Զատկի օրը, իսկ յետոյ հարբեցողութեամբ, տարբեր տեսակի մեղքերով կշտամբում են Քրիստոսին, Ով էլ փախչում է նրանցից: Եւ ուստի աւելի լաւ է, - եզրակացնում է Սբ. Տաթեւացին, - *չընդունել հիւրին, քան ընդունել և յետոյ արտաքսել՝ անարգելով նրան*»:

Իսկ նրանք, ովքեր խոստովանում են մեղքերը, հաղորդում են եւ յետոյ, կրկին վերադառնում են մեղքերին, նման են օձին, որը մինչեւ ջուր խմելն իր թոյնը թափում է քարի վրայ, իսկ այնուհետեւ նորից ետ ընդունում: Անարժանօրէն հաղորդուողները եւ պատարագ մատուցողները կրկին խաչում են Քրիստոսին՝ նոյնիսկ աւելի վատ, քան հրեաները, որոնք մէկ անգամ խաչեցին Նրան, մինչդեռ սրանք, այսինքն՝ կեղծ քրիստոնեաները, բազում անգամներ են խաչում Նրան՝ անարժանօրէն հաղորդուելով: Եւ ո՛չ միայն խաչում են, այլեւ անարգում են Նրան: Ինչպէս նրանք, որ Նրա առջեւ ծնկի գալով՝ ծաղրում էին Նրան, այնպէս էլ անարժանօրէն հաղորդուողները, երկրպագելով Քրիստոսին, ցոյց են տալիս, իբր պաշտում են Նրան, մինչդեռ իրականում ծաղրում են Նրան եւ արհամարհում:

Մե՞ղք են գործում արդեօք նրանք, ովքեր ընդհանրապէս չեն հաղորդում

Անարժանօրէն հաղորդուողների հետ հաւասար մեղք են գործում նաեւ նրանք, ովքեր ծուլութեան պատճառով ընդհանրապէս չեն հաղորդում կամ պատարագ չեն մատուցում: Այդպիսիները պէտք է վախենան Տիրոջ խօսքից. «*...հեռու՛ գնացէք Ինձնից անիծեալներ դէպի յաւիտենական կրակը, քանզի անտուն էի և չընդունեցիք Ինձ*», քանզի անհրաժեշտ էր միշտ ընդունել Աստծուն իր տանը, որը հոգին է: Որպէսզի չհաղորդուեն, նրանք պատճառաբանում են, թէ աւելի լաւ է չընդունել Քրիստոսի մարմինը, քան ընդունել անարժանօրէն: Սրան Սբ. Տաթեւացին պատասխանում է. «*Լաւ են անում, որ չեն հաղորդում անարժան լինելու պատճառով, ինչպէս և ասում է Աւետարանում. «...արժան չէ երեխաների հացը նետել շներին...», սակայն ամօթ է նրանց, քանզի պէտք էր, որ նրանք երեխաների կարգում լինէին, մինչդեռ*

նրանք իրենց պահում են շների կարգում»: Այնուհետեւ՝ սոյն խորհուրդը Տիրոջ սիրոյ խորհուրդն է, իսկ նրանք չեն ցանկանում փարին գէթ մէկ անգամ յիշել Քրիստոսի սէրը՝ հաղորդուելով Նրա Մարմնին ու Արեանը: Օրէնքում ասուած է. «*եթէ ձեզանից մէկը պիղծ է և կամ մէկը հեռաւոր ճանապարհի վրայ գտնուելու պատճառով անմաքուր է, նա Տիրոջ զատիկը թող կատարի երկրորդ ամսուայ տասնչորսերորդ օրը... Բայց այն մարդը, որ մաքուր է ու հեռու ճանապարհի վրայ չի գտնւում և չի կատարում զատիկը, թող վերանայ իր ժողովրդի միջից...*» /Թուեր 9:10,13/: «Եւ այդ պատճառով հաւատացեալների մասին հայրերի կանոնում գրուած է, որ փարին մէկ անգամ խոստովանեն մեղքերը եւ ճաշակեն Աստուծոյ Գառին: Իսկ եթէ անցնի մէկ փարի, եւ չխոստովանեն ու չհաղորդուեն, այդպիսիներին չընդունեն Եկեղեցի, իսկ եթէ մեռնի, չթաղեն նրան քրիստոնեաների գերեզմաննոցում»:

Որքա՞ն յաճախ է պէտք հաղորդուել

Նախկինում՝ առաքելական ժամանակներում, քրիստոնեաների սէրը ջերմ էր, այդ պատճառով էլ նրանք հաղորդւում էին ամէն օր: Սակայն այդ սէրը սկսեց սառչել, մարդիկ սկսեցին հաղորդուել միայն կիրակի օրերին: Այնուհետեւ՝ փարին միայն երեք անգամ՝ Սուրբ Ծնունդին, Զատկին եւ Տիրոջ Պայծառակերպութեան մեծ տօներին: Իսկ դրանից յետոյ էլ աւելի սառեցին, եւ դրա համար կարգուեց կանոն, որ ամբողջ ժողովուրդը հաղորդուէր Զատկին, իսկ նա, ով կարող էր արժանօրէն հաղորդուել՝ աւելի յաճախ: Այսպիսով՝ «...*սրբութեամբ և մեղքերի քաւութեամբ Տէրունական տօներին պէտք է թողնել մարմնական բոլոր հոգսերն ու աշխարհիկ մտահոգութիւնները և արժանանալ Սբ. Խորհուրդին՝ այժմ մտապատկերով և ճաշակմամբ, իսկ յաւիտենական կեանքում արժանանալ անպատմելի, երանելի և անապական պսակին*»,- ասում է Սբ. Տաթեւացին:

Արդեո՞ք միշտ կը լինի Սուրբ Հաղորդութեան Խորհուրդը ճշմարիտ Եկեղեցում

Սուրբ Հաղորդութեան Խորհրդի կատարումը եւ ընդունումը ճշմարիտ քրիստոնէական Եկեղեցում կը շարունակուի մինչեւ Քրիստոսի գալուստը՝ ըստ Պօղոս Առաքեալի խօսքերի. «*Քանի անգամ որ այս հացն ուտէք և այս բաժակը խմէք, պատմեցէ՛ք Տիրոջ մահը, մինչև որ Նա գայ*» /Ա Կորնթ. 11:26/:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է Ապաշխարութիւնը

Ապաշխարութիւնը կապարած մեղքերի դատապարտումն է, այսինքն, երբ մարդիկ, մէկ առ մէկ յիշելով իրենց մեղքերը, տխրում եւ ափսոսում են, թէ ինչ եւ ինչպէս են արել. այդ ժամանակ զղջում են, խոստովանում եւ ուղղւում գործերով: Ապաշխարութիւնը նաեւ համարւում է երկրորդ աւազան, որը լուանում է մեղքերը: Եւ ինչպէս մկրտութեան աւազանում մենք մաքրւում ենք սկզբնական մեղքից եւ ներգործող մեղքերից, այնպէս էլ Ապաշխարութեան խորհրդի շնորհիւ մենք մաքրւում ենք ինչպէս մահացու, այնպէս էլ ներելի մեղքերից:

Ինչպիսի՞ Ապաշխարութիւնն է համարւում ընդունելի

Ապաշխարութիւնը միայն այն ժամանակ կապարեալ եւ ընդունելի կը լինի, երբ այն լինի հաւատքով եւ յոյսով, եւ ի սէր Քրիստոսի:

Ի՞նչ պէտք է միշտ յիշի մեղաւորը

Մեղաւորը պէտք է մշտապէս յիշի երկու բան՝ իր բազմաթիւ մեղքերը եւ Քրիստոսի շնորհը, որով թողութիւն է տրւում մեր բոլոր մեղքերին: Բայց եթէ մոռանայ երկուսից մէկը, մեղաւորը վնաս կը կրի, եւ այդ ապաշխարութիւնն անընդունելի կը լինի: Այսինքն, եթէ մտածի միմիայն Քրիստոսի շնորհի, բայց ոչ՝ իր մեղքերի մասին, ապա դա կը լինի «յոյսով մեղանչել», «*իսկ ով յոյսով կը մեղանչի, նա անյոյս կը կործանուի*»: Եւ հակառակը՝ եթէ մարդը յիշում է մեղքերի առատութիւնը, բայց մոռանում քաւութեան շնորհի մասին, ապա նա յուսալքուած է: Դրա համար էլ, երբ մենք յիշում ենք եւ՛ մեր մեղքերը, եւ՛ Քրիստոսի շնորհի գերադասութիւնը, այդժամ «*կը կենդանանայ մեր յոյսը, և մենք կը լցուենք արիութեամբ հաւատքի, յոյսի և Քրիստոսի սիրոյ*

մէջ, որը և քաւում է մեր մեղքերը»,- ասում է Սբ. Տաթեւացին:

Ապաշխարութիւնն անընդունելի լինո՞ւմ է

Ապաշխարութիւնն անընդունելի է լինում, երբ մարդ մեղքերի խոստովանութիւնից յետոյ, գիտակցաբար վերադառնում է նախկին մեղքերին: Այսինքն՝ այն ժամանակ, երբ մարդու համար ապաշխարութեան առիթ են եղել սահմանուած պատիժները, այն մեղքերի համար, որոնց մէջ նա մինչեւ այդ գտնուել է առանց ապաշխարութեան: Այլ օրինակ՝ երբ մեղքերն իրենք են թողնում մարդուն, եւ նա արդէն ստիպուած չի մեղանչում, իսկ չմեղանչելու պատճառը ծերութիւնն է: Նոյնպէս եւ անընդունելի է այն ապաշխարութիւնը, որն ուղեկցւում է փառասիրութեամբ եւ կեղծաւորութեամբ:

Ի՞նչ պատճառներ են բերում մեղաւորներն Ապաշխարութեան չգնալու համար

Մեղաւորները կարող են բազմաթիւ պատճառներ գտնել եւ, Աստուծոյ ողորմածութեան յոյսը կորցնելով, չգալ ապաշխարութեան. մեղքերի ծանրութիւնը, մեղքերի առատութիւնը, մեղքերի գարշելիութիւնը, մեղքի մէջ երկար կենալը, խայտառակուելու վախը, յաճախակի մեղանչումները:

Վերոթուարկեալ պատճառներն արդեո՞ք կարող են Աստուծոյ ողորմածութեան հանդէպ յուսահատութեան առիթ հանդիսանալ

Մեղքերի ծանրութեան պատճառով պէտք չէ յուսահատուել Աստուծոյ ողորմածութիւնից, քանզի Դաւիթն ինքը մեծ մեղքեր ունէր, ինչպիսին սպանութիւնն ու շնութիւնն են: Պետրոսն էլ մեծապէս մեղանչեց ուրանալով: Պօղոսն էլ հալածում էր Աստուծոյ եկեղեցին, բայց երբ դարձ ունեցան, Տէրն ուրախութեամբ ընդունեց նրանց եւ բարձրացրեց մինչեւ մեծ պատուի ու փառքի: Իսկ Կայէնը, ով սպանելով եղբօրը,

մեծ մեղք գործեց, չյուսաց Աստուծոյ ողորմածութեանը եւ ասաց, որ իր մեղքն աւելի մեծ է, քան Աստուծոյ ողորմածութիւնը: Բայց դա սուտ է, քանզի Աստուծոյ ողորմածութիւնն աւելի մեծ է եւ անչափելի:

Մեղքերի առատութիւնն ու զազրելիութիւնը նոյնպէս պատճառ չեն յուսահատութեան, քանզի Տէրն անառակ կնոջը ներեց նրա բազմաթիւ մեղքերը: Եւ նոյնիսկ եթէ մարդն իր ամբողջ կեանքն անցկացնում է մեղքերի մէջ, դա էլ պիտի չյուսահատեցնի, քանզի Տէրն ի զօրու է յարութիւն տալ եւ նրան, ինչպէս յարութիւն տուեց Ղազարոսին, ով արդէն չորս օր էր, ինչ մահացել էր: Քանզի չորս օրերը նշանակում են մարդու տարիքը մանկութիւնից մինչեւ ծերութիւն, այսինքն՝ ամբողջ կեանքը, որը նա անցկացրել է մեղքերի մէջ:

«*Ո՞ւր են. քեզ ոչ ոք չդատապարտե՞ց»,- հարցրեց Տէրն անառակ կնոջը և շարունակեց. «Ես էլ քեզ չեմ դատապարտում. գնա՛, այսուհետև մի՛ մեղանչիր*» /Յովհ. 8:10-11/: Ուստի, պէտք չէ վախենալ խայտառակուելուց, քանի որ ամօթը «*ապաշխարութեան մեծ բաժինն է և մեղքերի քաւիչ*»:

Իսկ նրանք, ովքեր յուսահատւում են յաճախակի մեղանչումներից, թող յիշեն Տիրոջ հետ Պետրոսի երկխօսութիւնը. «*Տէ՛ր, քանի՞ անգամ, եթէ եղբայրս իմ դէմ մեղանչի, պէտք է ներեմ նրան. մինչև եօ՞թն անգամ»: Յիսուս նրան ասաց. «Քեզ չեմ ասում, թէ՝ մինչև եօթն անգամ, այլ՝ մինչև եօթանասուն անգամ եօթը*» /Մատթ. 18:21-22/, ինչը հաւասար է չորս հարիւր իննսուն անգամի: Եւ եթէ այդ կանոնը տուեց Առաքեալներին, ապա «*Ինքն իսկ չի՞ կատարի այդ: Այո՛: Դեռ շատ աւելին*»,-պատասխանում է Սուրբ Տաթեւացին եւ շարունակում, - *ուստի, պէտք չէ յուսահատուել որևէ մէկ պատճառով*»: Այսպիսով՝ «*եթէ չենք կարող երկիւղել Աստուծոյ արդարութիւնից, ապա գոնէ ամաչենք Նրա ողորմածութիւնից*», որպէսզի գանք ապաշխարութեան:

Քանի՞ մասից բաղկացած է Ապաշխարութեան Խորհուրդը

Երեք մասից. 1. Զղջում սրտով, 2. Խոստովանութիւն շուրթերով, 3. Ապաշխարանք գործերով:

Ո՞ր պահին են ներում մարդու մեղքերը. երբ նա զղջո՞ւմ է, խոստովանո՞ւմ, թէ՞՝ երբ ապաշխարութեան գործեր է անում

Երբ սրտում զղջանք եւ դառնանք մեղքերից, Աստուած անմիջապէս թողութիւն կու տայ եւ կը հաշտուի մեղաւորի հետ, այսինքն՝ «*Դարձէ՛ք դէպի ինձ, և ես կը դառնամ դէպի ձեզ,- ասում է Ամենակալ Տէրը*» /Մաղ. 3:7/: Իսկ երբ մարդը խոստովանի մեղքերը, ապա՝ դրանք կը քաւուեն եւ կը մաքրուեն նրա հոգուց, դրա համար էլ զղջումից յետոյ պէտք է խոստովանել, որպէսզի քահանան արձակի մեր մեղքերի կապանքները:

Իսկ խոստովանութիւնից յետոյ, քահանայի կողմից սահմանուած ապաշխարանքի գործեր պէտք է կատարել, քանզի նա, ով մեղքերի պատճառով պարտապանն էր յաւիտենական մահուան եւ յաւերժ պատիժների, այժմ զղջման եւ խոստովանութեան միջոցով այս պատիժները ժամանակաւոր դարձրեց, եւ արդէն կարող է դրանք քաւել ժամանակի մէջ: Այսպիսով՝ երբ մենք զղջում ենք մեր մեղքերի համար, Աստուած ներում է դրանք եւ մոռանում դրանց մասին: Երբ մենք խոստովանում ենք մեր մեղքերը, հոգին մաքրւում է մեղքերից, եւ այդ ժամանակ քահանան արձակում է մեղքի կապանքները: Իսկ երբ ապաշխարանքի գործեր ենք կատարում, ազատագրւում ենք յաւիտեան պատիժներից:

Ուժգին զղջումն ու խոստովանութիւնը՝ այլեւս չմեղանչելու որոշմամբ, համարւում է կատարեալ խոստովանութիւն: Այսպիսի խոստովանութիւնը քահանայական իշխանութեան միջոցով ստանում է մեղքերի թողութիւն եւ ազատում պատիժներից, քանզի որպէս պատիժ ծառայում են ամօթն ու այլեւս չմեղանչելու որոշումը:

Ի՞նչ է Զղջումը

Սրտագին Զղջումը եւ «ողորմեա» բառը միասին՝ մեղքերի լուացարան են, եւ որքան շատանում է զղջումը սրտում, իսկ «ողորմեան»՝ լեզուին, այնքան աւելի է մարդ մաքրւում մեղքերից: Զորօրինակ՝ ջուրը. որքան

այն շատ լինի, այնքան լաւ կը մաքրի հագուստը կեղտից:

Ի՞նչն է Զղջման պատճառ հանդիսանում

Զղջման պատճառ է հանդիսանում վեց բան. 1. ծերութիւնը, երբ մեղքն արդէն թողնում է մարդուն, 2. հիւանդութիւնը, երբ նուազում է մարդու ուժը, 3. աղքատութիւնը, երբ նուազում է հացն ու ջուրը, 4. երբ մարդ քարոզներ եւ խրատներ է լսում, 5. երբ տեսնում է, կամ էլ ինքն է պատիժ կրում մեղքերի համար, 6. երբ մարդու հոգում ծագում է Աստուծոյ շնորհը, որը լուսաւորում է բանականութիւնն ու մեր կամքը դարձնում առ բարին, ինչպէս օրինակ՝ անառակ կնոջ զղջումը, երբ նա արցունքներով լուաց Քրիստոսի ոտքերը: Սա է ահա անմիջական եւ կատարեալ զղջումը:

Պէ՞տք են արդեօք Զղջման մէջ արցունքները

Պէտք են, քանի որ նրանք զղջման անբաժանելի մասն են կազմում, նրանք հաճելի են եւ ցանկալի Աստծուն, քանզի արցունքները ցոյց են տալիս Աստուծոյ հանդէպ մեր տածած ջերմ սէրը: Մեղաւորին անհրաժեշտ է արտասուել իր մեղքերի համար, քանի որ «*Երանի՜ սգաւորներին, որովհետև նրանք պիտի մխիթարուեն*» /Մատթ.5:4/: Եւ ինչպէս ջուրը հանգցնում է կրակը, այնպէս էլ արցունքները հանգցնում են մեղքերի եւ յաւիտենական տանջանքների հուրը, ինչպէս նաեւ լուանում են մարդու հոգին: Արցունքներն, այս ամենից զատ, նաեւ Աստծուն մղում են ողորմածութեան:

Ի՞նչ է Խոստովանութիւնը

Խոստովանութիւնն այն է, երբ յայտարարւում են ծածուկ մեղքերը՝ թողութեան յոյսով, քանզի խոստովանութեան նիւթը մեղքերն են, իսկ գործը՝ խօսքով դրանք յայտնելը, իսկ վերջը՝ թողութիւն ստանալու յոյսն է:

Ի՞նչ օգուտ կայ մեղաւոր մարդուն Խոստովանութիւնից

Խոստովանութիւնը բազում օգուտներ է բերում մեղաւոր մարդուն, քանզի նա այստեղ բացում է իր մեղքերը, իսկ այնտեղ՝ դատաստանին, նրանք ծածկուած կը լինեն: Խոստովանութիւնը բժշկում է հոգու վէրքերը, որոնք առաջացել են մեղքերից: Ինչպէս ջուրն է մաքրում մարմնի կեղտը, այնպէս էլ արցունքաշաղախ խոստովանութիւնն է մաքրում հոգին մեղքերից: Ամօթով եւ խոր զղջմամբ խոստովանողին պատիժներ չեն սպասում, քանզի արցունքներն ու ամօթն արդէն պատիժ են, եւ այդ պատճառով նա հենց նոյն օրն էլ կարող է հաղորդուել Տիրոջ Մարմնին եւ Արեանը: Խոստովանութեան շնորհիւ մենք արժանանում ենք Աստուծոյ շնորհին, առանց որի հնարաւոր չէ մեղքերի թողութիւն ստանալ:

Մեղաւորի առջեւ Արքայութեան դռներն են փակւում, եւ նա յայտնւում է դժոխքի բաց դռների առջեւ՝ իսկ շուրջը դեւեր, որոնք նրան ձգում են դէպի դժոխք, բայց երբ նա բացում է բերանը եւ սկսում խոստովանել մեղքերը, դեւերը փախչում են, իսկ դժոխքի դռները՝ փակւում: Իսկ երբ քահանան նրան թողութիւն է շնորհում, նրա առջեւ բացւում են Արքայութեան դռները, ինչպէս աւազակի համար բացուեցին:

Խոստովանութեան քանի՞ տեսակ կայ

Խոստովանութիւնը երկտեսակ է. երբ մենք Աստուծոյ առաջ խոստովանում ենք մտքով, այսինքն՝ մարդ պէտք է մշտապէս իր մեղքերը բացի Աստուծոյ առաջ, եւ երբ խոստովանում ենք բառերով, եւ դա կատարում քահանայի առջեւ: Հայ Եկեղեցում կատարւում են ընդհանրական (Պատարագից առաջ բարձրաձայն կարդացւում է մեղքերի ցանկը) եւ անհատական (իւրաքանչիւր հաւատացեալ իր մեղքերն անհատապէս խոստովանում է քահանայի առջեւ) խոստովանութիւններ:

Իսկ ինչո՞ւ է անհրաժեշտ խոստովանել քահանայի առջեւ

Քրիստոսի մարմնացումից առաջ մարդիկ մտքով էին խոստովանում Աստծուն, իսկ Նրա մարմնացումից յետոյ անհրաժեշտ է խոստովանել քահանայի առջեւ, ով, Քրիստոսի տեղապահը լինելով, Նրանից ստացել է կապելու եւ արձակելու իշխանութիւն. «...*ինչ որ կապէք երկրի վրայ, կապուած պիտի լինի երկնքում: Եւ ինչ որ արձակէք երկրի վրայ, թող արձակուած լինի երկնքում*»/ Մատթ. 18:18/, «*Առէ՛ք Սուրբ Հոգին: Եթէ մէկի մեղքերը ներէք, նրանց ներուած կը լինի. եթէ մէկի մեղքերը կապէք, կապուած կը լինի*» /Յովհ. 20:22-23/:

Քահանան մի կողմից մեղաւորի զղջումը հասցնում է Քրիստոսին, միւս կողմից՝ Քրիստոսից մեղաւորին ներման շնորհ իջեցնում: Ահա թէ ինչու պէտք է խոստովանել միայն «քահանայի ոտքերի մօտ»:

Ինչպէ՞ս պէտք է պատրաստուել խոստովանութեան եւ խոստովանել քահանայի առջեւ

Խոստովանութիւնից առաջ մարդուն անհրաժեշտ է անպայման նախապատրաստուել, այսինքն՝ խորհել բոլոր մեղքերի մասին, վերյիշել մոռացուածները, որ քահանայի առջեւ խոստովանի բոլոր մեղքերը, եւ չմոռանայ նրանցից որեւէ մէկը: Քանզի պատահում է, որ յանկարծակի խոստովանութեան գալիս, մոռացւում են որոշ մեղքեր, իսկ դա լաւ չէ:

Մեղաւորը խոստովանութեան պէտք է գայ իր ազատ կամքով, այսինքն՝ յանուն Աստուծոյ հանդէպ սիրոյ, եւ ոչ՝ պարտադրանքով, յաւիտենական պատիժներից ունեցած վախի պատճառով, երբ մահը մօտ լինի: Խոստովանութիւնը պէտք է ներման յոյս ունենայ եւ բխի սրտագին զղջումից, եւ որքան ծանր լինի մահացու մեղքը, այնքան ուժգին պէտք է լինի զղջումը: Մեղաւորը պէտք է իւրաքանչիւր մեղք խոստովանի անուանական, այլ ոչ թէ ասի, թէ կատարել է բազում մեղքեր: Մեղաւորը պէտք է հնազանդ լինի քահանային, որպէսզի խոնարհաբար կատարի իր վրայ դրուած ապաշխարութիւնը: Խոստովանութեան ժամանակ չի կարելի ստել, քանզի խոստովանում ենք Աստծուն: Եւ ծանր

պատժի են արժանի նրանք, ովքեր խաբում են Աստծուն, քանզի «*խոստովանութեան ժամանակ ասուած սուտն աւելի ծանր է կատարած մեղքից*»: Եւ մարդու կործանման պատճառ է դառնում ոչ թէ խոստովանած մեղքը, այլ՝ կատարած մեղքի ժխտումը: Նոյնպէս եւ չի կարելի խօսել այն մեղքերի մասին, որոնք չեն գործուել: Եթէ մարդն ակնյայտօրէն գիտակցում է, որ խոստովանութիւնից յետոյ կրկին մեղանչելու է, ապա այդպիսի խոստովանութիւնն ընդունելի չէ, քանզի «*նախևառաջ հարկ է սիրտը մաքրել*» զղջմամբ, եւ յետոյ միայն՝ խոստովանել: Չի կարելի նաեւ խոստովանել մեղքերի կէսը՝ թաքցնելով միւս կէսը, կամ մի մասն ասել մի քահանայի, միւս մասն՝ ուրիշ քահանայի: Եթէ մարդը ծածկում է մեղքը ոչ թէ այն պատճառով, որ մոռացել է, այլ ամօթից, ապա նրա համար թողութիւն չի լինի: Եւ ինչ որ կայ մտքում, պէտք է խոստովանել միեւնոյն քահանային, քանզի Աստուած կիսատ չէ, այլ կատարեալ. կամ թողութիւն է տալիս լիովին, կամ՝ առհասարակ թողութիւն չի տալիս: Իսկ եթէ մէկն ամօթի պատճառով թաքցնի մեղքը, ապա նրա հետ կը պատահի այնպէս, ինչպէս մի այրի կնոջ հետ. «*Մի հարուստ այրի ընկաւ շնութեան մեղքի մէջ և, ծնելով երկու զաւակ, սպանեց նրանց: Բայց ամօթից նա չխոստովանեց այս մեղքերը, և շուտով մեռաւ ու դժոխք ընկաւ: Իսկ նրա որդին, որ քահանայ էր, պատարագի ժամանակ աղօթեց Աստծուն՝ իմանալու, թէ հրեշտակների ո՞ր դասում է գտնւում իր մօր հոգին, քանզի նրան գիտէր որպէս բարեպաշտ կին: Եւ պատարագի վերջում նա տեսաւ իր մօրը տարօրինակ վիճակում, քանի որ երկու վիշապ ծծում էին նրա ստինքները: Որդու հարցին՝ ո՞րն է դրա պատճառը, մայրը պատմում է իր չխոստովանած մեղքերի մասին, և որ այդ վիշապները երկու դևեր են, որոնք իր երկու երեխաների փոխարէն ծծում են նրա ստինքները*»: Դրա համար էլ չի կարելի ամօթից թաքցնել մեղքերը:

Խոստովանութեան ժամանակ չի կարելի յիշել այլոց մեղքերը, այլ միայն՝ սեփական մեղքերը: Չի կարելի յիշատակել մեղսակցի անունը եւ բողոքել միմեանցից, մեղադրել միւսին, քանզի, դատելով ուրիշին, մենք չարախօսում ենք նրա մասին, ուստի

թողութիւն չենք սպանայ, ինչպէս Ադամն ու Եւան չսպացան: Չի կարելի նաեւ պատմութիւններ պատմել եւ յիշատակել սեփական բարի գործերը, այլ՝ միայն մեղքերն ու վատ արարքները:

Կարելի՞ է յետաձգել խոստովանութիւնը

Ո՛չ, չի՛ կարելի: Քանզի մահը միշտ սպասում է մարդուն, եւ մենք չգիտենք մահուան ժամանակն ու վայրը: Եւ եթէ ծուլութեան կամ այլ պատճառով չենք խոստովանում, ապա, յանկարծամահ լինելով, դժոխք կ'իջնենք: Սպասել ծերութեանը՝ յիմարութիւն է, քանի որ հնարաւոր է մոռանալ մեղքեր, որոնք չեն մոռանում ո՛չ Աստուած, եւ ո՛չ էլ սատանան: Եւ եթէ նոյնիսկ ծեր մարդը յիշում է դրանք, ապա ամաչում է երիտասարդական մեղքերից եւ չի խոստովանում դրանք: Ուստի, չի կարելի խոստովանութիւնը վաղուան թողնել:

Դրա համար էլ վանքերում սահմանուած է, որ խոստովանութիւն կատարուի ամէն օր՝ առաւօտեան եւ երեկոյեան: Իսկ աշխարհականներին պարտադիր է խոստովանել ամէն կիրակի, քանի դեռ յիշում է մեղքը, այլապէս ժամանակի ընթացքում մեղքը կարող է մոռացուել:

Կարեւո՞ր է արդեօք՝ ում խոստովանել

Մենք պէտք է խոստովանենք քահանայի առջեւ, որպէսզի յետոյ թողութիւն ստանանք, քանի որ շատ բան խոստովանութեան մէջ կախուած է վերջինից՝ որպէս նաեւ «**հոգեւոր բժիշկի**»: Նա պէտք է լինի ամենագէտ եւ իմաստուն, որպէսզի կարողանայ ընդունել խոստովանութիւնը, հակառակ դէպքում նա կործանման պատճառ կը դառնայ, ինչպէս իր հոգու, այնպէս էլ շատ ուրիշ հոգիների: Եթէ նա չի կարող ճանաչել մեղքը, ապա ինչպէ՞ս կը գտնի բուժման դարմանը: Դրա համար էլ հարկաւոր է խոստովանել իմաստուն քահանայի մօտ:

Ինչպէ՞ս պէտք է քահանան ընդունի խոստովանութիւնը

Քահանան պէտք է լաւ ուսումնասիրի մարդկանց բարքերը՝ իմանալու համար, թէ ինչ ապաշխարութիւն սահմանի, քանզի վերջինիս ծանրութիւնը կախուած է ե՛ւ ժամանակից, ե՛ւ շատ այլ պատճառներից: Ապաշխարութիւնն այլ է վշտի ժամանակներում, այլ՝ խաղաղ ժամանակներում: Այլ է աղքատաց, այլ՝ հարուստների համար: Պէտք է հաշուի առնել նաեւ՝ առաջի՞ն անգամ է մեղքի մէջ, թէ՞ արդէն երկար ժամանակ: Ապաշխարութիւնն այլ է երիտասարդների համար, այլ՝ տարեցների: Կանանց համար՝ այլ, եւ տղամարդկանց, հոգեւորականների համար՝ այլ, աշխարհականների համար՝ այլ: Եթէ խոստովանողը մարմնապէս հիւանդ է, ապա թող քահանան խոստովանութիւնն ընդունի, բայց չշտապի ապաշխարութիւն սահմանել, այլ թող նրա հոգին տայ Աստծուն, իսկ երբ առողջանայ, թող այդ ժամանակ կատարի ապաշխարանքի գործեր:

Շատ կարեւոր է, որ քահանան հրապարակ չհանի խոստովանութեան գաղտնիքները, քանզի «...*հոգեւորականի սիրտը կողպուած սնտուկ է, և այն հարկ է այնպէս պահպանել, որ եթէ նոյնիսկ սնտուկը կոտրուի, կողպէքն, այնուամենայնիւ, փակուած մնայ*»,- ասում է Ս. Տաթեւացին: Եթէ քահանային ճնշեն՝ սպիպելով բացայայտել խոստովանութիւնը, ապա նա կարող է երդուել, թէ չգիտի մեղքերը: Եւ իրապէս՝ որպէս մարդ նա չգիտի, այլ գիտի որպէս Աստուծոյ տեղապահ: Այդ պատճառով էլ նա պարտաւոր է լռել, նոյնիսկ մահուան երկիւղի դէպքում: Իսկ այն քահանային, ով յայտնի կը դարձնի խոստովանութիւնը, պէտք է «...*զրկել կոչումից և ցմահ փակել զնտանում, որ այլևս արև չտեսնի*, - խստօրէն սահմանում է Տաթեւացին եւ շարունակում,- *և պէտք չէ խոստովանել այն քահանային, ով հրապարակում է խոստովանութիւնը, բայց և պէտք չէ մնալ առանց խոստովանութեան, այլ պէտք է գտնել արժանի քահանայի, ով խոստովանութեան գաղտնիութիւնը կը պահի մինչև մահ*»:

Հոգեւոր բժիշկը պէտք է իմաստնաբար եւ խրատով դուրս բերի մեղքը մեղաւորի սրտից: Եթէ

մեղաւորը վախենում է կամ էլ ամաչում խոստովանել, նրան պէտք է հանգստացնել, մեղմել վախը: Քանզի ինչպէս կայծն, ընկնելով ովկիանոսի մէջ, անմիջապէս հանգչում է, այնպէս էլ մեղաւորի մեղքերի առատութիւնը՝ որպէս կայծ, խոստովանութեան միջոցով ընկնելով Աստուծոյ ողորմածութեան անչափելի ովկիանոսի մէջ, անհետանում է: Տէրը ողորմած է եւ աշխարհի եկաւ մեղաւորների համար՝ ինչպիսիք էին Պետրոսը, Պօղոսը, Մարիամ Մագդաղենացին: Նա ներեց նրանց զղջումից յետոյ, նոյնպէս եւ մեղաւորին էլ կը ների, եթէ նա խոստովանի: Այդպէս վարուելով՝ քահանան կը մխիթարի մեղաւորին եւ կը գօտեպնդի նրան փրկութեան յոյսի մէջ, քանզի յուսահատը չի կարող ապաշխարել: Իսկ նրանց, ում հնարաւոր չէ մխիթարիչ խօսքերով եւ դարձնել մեղքերից եւ խոստովանութեան բերել, պէտք չէ անմիջապէս բանադրել կամ երես դարձնել նրանցից, այլ պէտք է աստիճանաբար վախեցնել յաւիտենական տանջանքներով, գեհենի կրակով եւ դրան յաւելել ծանր ապաշխարութիւն, որպէսզի նրանք թողնեն մեղքերը: Բայց եթէ դա էլ չի օգնում, ապա այդպիսիներին պէտք է հեռացնել Եկեղեցուց:

Խոստովանութիւնից յետոյ քահանան ի՞նչ պէտք է անի

Խոստովանութեան ժամանակ քահանան պէտք է քննի մեղաւորի խիղճը, եւ թողութիւն տայ նրան: Ապա խորհրդածելով՝ սահմանի ապաշխարութիւն, լինի դա «*պահք, կամ աղօթք, կամ ողորմութիւն, զոհաբերութիւն և այլն, քանզի հարկ է նմանը նմանով բժշկել*»: Քանզի մեղաւոր մարդը, ապաշխարութեամբ պարսպապատրուած, հեռանում է մեղքից եւ ազատւում յաւիտենական պատիժներից, իսկ արդարն արժանանում է փառք ու պսակի:

Ապաշխարութեան ի՞նչ տեսակներ են լինում

Դրանք բազմազան են, բայց Ապաշխարութեան բոլոր գործերից առանձնացւում են հիմնական առաքինութիւնները՝ պահքը, ողորմութիւնը եւ աղօթքը, քանզի

մարդն այս առաքինութիւններով կռւում է թշնամիների դէմ, որոնք են մարմինը, աշխարհը եւ սատանան: Մարմինը յաղթում ենք պահքով, աշխարհը՝ ողորմութեամբ, իսկ սատանային՝ աղօթքով: Ինչպէս պարտապանն է պարտքը մարում կամ պատժով, կամ նուիրաբերութեամբ, կամ աղերսանքով, այնպէս էլ մեղաւորն իր մեղքերի պարտքը մարելու համար իրեն «*պատժում*» է պահքով, «*վճարում*»՝ ողորմութեամբ եւ «*աղերսում*»՝ աղօթքով: Վերջիվերջոյ մարդը պահքի օգնութեամբ նորոգում է իր կեանքը, ողորմութեան միջոցով նորոգում է իր յարաբերութիւնները մերձաւորների հետ, իսկ աղօթքի օգնութեամբ նորոգում է իր յարաբերութիւններն Աստուծոյ հետ:

ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է Աղօթքը

Աղօթքը խօսք է առ Աստուած եւ մտքերի վերհանում՝ առ Աստուած: Երբ կարդում ենք Սուրբ Գիրքը, Աստուած է խօսում մեզ հետ, իսկ երբ աղօթում ենք, մենք ինքներս ենք խօսում Աստուծոյ հետ:

Ի՞նչ օգուտ կայ Աղօթքից

Աղօթքն իրական բարիք է, որից մարդ կարող է շատ օգուտ եւ շահ ստանալ: Աղօթքի միջոցով մենք կանգնում ենք Աստուծոյ առաջ եւ կարգաւորում մեր բոլոր գործերը, քանզի բոլոր գործերում մարդն օգնականի կարիք ունի: Իսկ երբ մենք աղօթում ենք, այդ ժամանակ օգնականը լինում է Աստուած Ինքը: «*Աղօթքը մխիթարութիւն է սրտի համար*», նրանով ենք մենք խաղաղ ու հանգիստ քուն մտնում, իսկ առաւօտեան՝ համարձակօրէն արթնանում: Աղօթքը բժշկում է հիւանդներին եւ երկարեցնում կեանքը, փրկում է բանտից, պատերազմներ յաղթում: Նրանով ենք դեւեր հալածում եւ փրկւում սատանայի որոգայթներից: Այն լուսաւորում է մտքերը, բացում եւ փակում է երկինքը: Երբ մենք աղօթում ենք մերձաւորի

համար, մաքրում ենք հպարտութիւնից եւ ատելութիւնից: Հանգչում է բարկութեան կիրքը, երբ աղօթելով խաչակնքւում ենք, եւ այլն:

Ի՞նչ տեսակ Աղօթքներ կան

Ընդհանրական եւ առանձնական: Ընդհանրական աղօթքը կատարւում է Եկեղեցում եւ լինում է ինն անգամ (ինը ժամերգութիւն), իսկ առանձնականը լինում է երեք անգամ: Ընդհանրականը, որը կատարւում է ողջ զգայարանքներով, պարտադիր է եւ հատուցում է պարտքերը, իսկ անհատական աղօթքը կամաւոր է, այն լուսաւորում է մտքերը եւ անթառամ պսակներ է հիւսում: Ընդհանրական աղօթքի մասին Տէրն այս է ասել. «...*եթէ ձեզնից երկուսը միաբանուեն երկրի վրայ որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կը կատարուի նրանց համար*» /Մատթ. 18:19/, իսկ առանձնականի համար ասուած է. «...*երբ դու աղօթես, մտի՛ր քո սենեակը*» /Մատթ. 6:6/: Եւ չնայած հանգամանքին, որ առանձնական աղօթքը կամաւոր է, այնուամենայնիւ, այն անհրաժեշտ է վանականներին: Այսպիսով՝ կայ ինն ընդհանրական եւ երեք առանձնական աղօթք, միասին՝ տասներկու, այսինքն՝ վանականները պէտք է աղօթեն տասներկու անգամ: Քանի որ օրն ու գիշերն ունեն ընդամէնը քսանչորս ժամ, ստացւում է, որ մենք աղօթում ենք երկու ժամը մէկ: Բայց աշխարհականների համար այլ կարգ է գործում, նրանք աղօթում են օրուայ մէջ երեք անգամ՝ առաւօտեան, ցերեկը եւ երեկոյեան՝ ընդհանրական աղօթքներին, իսկ առանձնական աղօթքներում նրանք ազատ են:

Բայց ինչպէ՞ս վարուել այն դէպքում, երբ Տէրը մեզ պատուիրում է աղօթել մշտապէս. «...թէ նրանք ամէն ժամ պէտք է աղօթեն ու չձանձրանան» /Ղուկ. 18:1/, իսկ մենք կամ աշխատում ենք, կամ ուտում, կամ էլ քնած ենք

Աղօթել պէտք է սահմանուած կարգով մեզ տրամադրուած ժամանակ, կամ օրուայ ընթացքում ինը ժամերգութիւնների փոխարէն կարելի է ինն անգամ ասել «Հայր մեր» աղօթքը: Պէտք է մշտապէս խորհել

բարու, Աստուծոյ մասին եւ ձգտել Նրան, նաեւ՝ աղքատներին ողորմութիւն անել: Եւ երբ մենք քնած լինենք, ուտելիս կամ աշխատելիս, նրանք մեզ համար աղօթք կ'անեն: Այսպէս, մենք մշտապէս կ'աղօթենք: Անդադար աղօթել՝ նշանակում է նաեւ ողջ կեանքն աղօթել՝ մինչեւ ծերութիւն, եւ տարուայ բոլոր եղանակներին:

Քանի՞ ժամերգութիւն կայ Հայոց Եկեղեցում

Ինչպէս վերն ասուեց, Հայոց Եկեղեցում ընդհանրական աղօթքը կատարւում է եկեղեցում եւ լինում ինն անգամ, այսինքն՝ գոյութիւն ունի ինը ժամերգութիւն:

Հայոց եկեղեցում առաջին պաշտամունքը համարւում է **գիշերային ժամերգութիւնը**, եւ նուիրուած է Հայր Աստուծոյ փառաբանմանը: Ժամերգութեան ժամանակը կէսգիշերն է: Քունը Աստուծոյ պարգեւ է, եւ մենք շնորհակալութիւն ենք յայտնում Նրան այդ բարիքի համար եւ խնդրում, որ գիշերուայ շարունակութիւնն անցնի խաղաղութեան եւ հանգստութեան մէջ, իսկ յաջորդող օրը՝ մաքրութեան եւ արդարութեան:

Առաւօտեան ժամերգութիւն. Այս ժամերգութիւնը նուիրուած է Աստուծոյ Որդու փառաբանութեանը: Ժամերգութեան ժամանակը լուսաբացն է, այն խորհրդանշում է Քրիստոսի երեւումը իւղաբեր կանանց՝ յիշեցնելով մեզ Քրիստոսի Յարութեան եւ Նրա փրկչական առաքելութեան մասին:

Արեւագալի ժամերգութիւն. նուիրուած է Սուրբ Հոգու փառաբանութեանը: Նախկինում, այս ժամերգութիւնն Առաւօտեան ժամերգութեան մաս է կազմել: Այն խորհրդանշում է Քրիստոսի Յարութիւնը եւ նրա երեւումն աշակերտներին: Ժամերգութեան ժամանակը արեւածագն է, որ նոյնացւում է Քրիստոսի Յարութեան հետ:

Երրորդ Ժամի ժամերգութիւն. նուիրուած է Սուրբ Հոգուն: Կատարւում է ժամը 9.00-ին: Խորհրդանշում է Եւայի՝ արգելուած պտուղը ճաշակելը եւ Քրիս-

փոսով դատավճռից ազատագրումը: Երրորդ ժամի ժամերգութիւնն ունի խոր ապաշխարութեան իմաստ:

Վեցերորդ ժամի ժամերգութիւն. նուիրուած է Հայր Աստծուն: Կատարւում է ժամը 12.00-ին: Խորհրդանշում է Քրիստոսի խաչելութիւնը: Այս ժամերգութեան ժամանակ մենք Աստուծոյ օգնութիւնն ենք հայցում մեր մարդկային տկար բնութեան համար:

Իններորդ Ժամի ժամերգութիւն. նուիրուած է Որդի Աստծուն: Կատարւում է ժամը 15.00-ին: Խորհրդանշում է Յիսուս Քրիստոսի մահը եւ մարդկութեան ազատագրութիւնը դժոխքի իշխանութիւնից:

Երեկոյեան ժամերգութիւն. նուիրուած է Որդի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի թաղումը: Ժամերգութիւնը կատարւում է արեւամուտից առաջ: Գիշերուայ շեմին քրիստոնեան՝ անցած օրուայ աշխատանքից եւ հոգեկան յուզումներից յոգնած, Աստծուն խնդրում է իրեն խաղաղ գիշեր եւ բարի քուն պարգեւել:

Խաղաղական ժամերգութիւն. նուիրուած է Սուրբ Հոգուն: Կատարւում է արեւամուտից յետոյ: Խորհրդանշում է Քրիստոսի էջքը դժոխք եւ արդարների ազատագրումը տանջանքներից: Աստծուց խնդրում ենք հանգիստ ու խաղաղութիւն՝ մարդու՝ հանապազօրեայ մեղքերից ծանրացած հոգու համար:

Հանգստեան ժամերգութիւն. նուիրուած է Հայր Աստծուն: Հնում, այն Խաղաղական ժամերգութեան շարունակութիւնն է եղել: Կատարուել է քնից առաջ: Չունի առանձին յատուկ իմաստ:

Հնում, բոլոր ինը ժամերգութիւնները կատարւում էին ամէն օր, վանքերում՝ առանձնայատուկ ջանադրութեամբ: Ներկայում ամէն օր եկեղեցիներում կատարւում են՝ առաւօտեան՝ գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները միասին, երեկոյեան՝ երեկոյեանը: Միւս բոլոր ժամերգութիւնները կատարւում են Մեծ Պահքի

շրջանում՝ շաբաթուայ բոլոր օրերին, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, հետեւեալ յաջորդականութեամբ. առաւօտեան՝ գիշերային, առաւօտեան եւ արեւագալի ժամերգութիւնները, կէսօրին՝ երրորդ, վեցերորդ, իններորդ ժամինը, երեկոյեան՝ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի օրերին՝ խաղաղականը, չորեքշաբթի, ուրբաթ՝ հանգստեանը, շաբաթ եւ կիրակի՝ երեկոյեանը: Երուսաղէմում ամէն Պատարագից առաջ կատարւում են երրորդ, վեցերորդ, իններորդ ժամի ժամերգութիւնները:

Պարտադի՞ր է արդեօք աղօթել Եկեղեցում

Այո, եկեղեցում աղօթելը պարտադիր է, քանզի ով, որ ցանկանում է տեսնել արքային, գնում է նրա պալատ, չնայած, որ վերջինիս իշխանութիւնը տարածւում է ամբողջ թագաւորութեան վրայ: Այդպէս էլ մենք ենք հաւատում, որ Աստուած ամէնուրեք է, բայց եթէ մենք ցանկանում ենք տեսնել Նրան «երես առ երես», գնում ենք եկեղեցի՝ դրանով իսկ ցոյց տալով մեր որդիական սէրը մեր Հօր նկատմամբ:

Ինչպէ՞ս մարդ պէտք է պահի իրեն Եկեղեցում

Եւ որպէսզի չպատժուենք եւ չզրկուենք շնորհներից, պէտք է իմանանք, թէ ինչպէս մեզ պահենք եկեղեցում, որն Աստուծոյ տունն է: Ինչպէս արքայի առջեւ չեն նստում, այդպէս էլ եկեղեցում կարելի չէ նստել (եթէ մարդը չունի առողջական խնդիրներ), իսկ հոգեւոր սպասաւորը պէտք է առանց փիլոնի չլինի: Կարելի չէ հենուել եկեղեցու պատերին եւ առանց պատճառի դուրս գալ եկեղեցուց: Կարելի չէ խօսել ոեւէ մէկի հետ, քանզի եկեղեցում «*...մեր զրուցակիցն Աստուած է, իսկ Աստծուն թողնելը և ուրիշի հետ խօսելը՝ դրան արդէն սատանան է զրուցակից*»: Աչքերը, ականջները եւ միտքը պէտք է ուղղուած լինեն աղօթքներին եւ երգասացութեանը: Եկեղեցում կարելի չէ ծիծաղել, հակառակը՝ պէտք է արտասուել, քանզի այն արցունքների վայր է: Եկեղեցում անհարկի է առանձնական աղօթքը բարձրաձայն ասելը, այլ աւելի լաւ է աղերսել սրտում՝

Մովսէսի նման: «*Իսկ եթէ գալիս են քնի համար,*- ասում է Սուրբ Տաթեւացին,- *ապա աւելի լաւ է ընդհանրապէս չգան*», քանզի եկեղեցին քնի վայր չէ, այլ՝ Աստուծոյ հետ հաղորդակցուելու վայր:

Ի՞նչ է անհրաժեշտ աղօթելիս

Աղօթելիս անհրաժեշտ է, որ մտքերը հետեւեն աղօթքի բառերին, եւ բոլոր զգայարանքներն ուղղուած լինեն Աստծուն: Հարկաւոր է արցունքառատ աղօթք, ինչպիսին Աննայինն էր, եւ խոնարհութիւն, որ կար մաքսաւորի եւ քանանուհու աղօթքներում: Պէտք է խնդրել առանց կասկածանքի, հաւատով եւ յոյսով, քանզի «...*պէտք է հաւատալ, որ Աստուած կը լսի աղօթքները և յուսալ, որ ինչ էլ որ խնդրենք հաւատով, կը ստանանք*»: Պէտք է աղօթել ջանադրաբար, «*և ինչպէս խունկը, որ դրուած չէ կրակին, չի ծխում, նոյնպէս և աղօթքն առանց սրտի ջերմութեան չի բարձրանայ առ Աստուած*»: Առանց սրտի մաքրութեան աղօթքը հաճելի չէ Աստծուն, նոյնպէս եւ այն դէպքում, երբ մենք յիշաչար ենք եւ չենք ներում մեր պարտապաններին: Որպէսզի մեր աղօթքները լսելի լինեն, մենք պէտք է դիմենք Աստուածածնին, Սրբերին եւ Հրեշտակներին, աղօթք խնդրենք քահանաներից եւ աղքատներից: Նաեւ պէտք է շատախօս չլինենք հեթանոսների նման, ինչի մասին եւ ասում է Տէրը. «*Աղօթք անելիս շատախօս մի՛ լինէք, ինչպէս հեթանոսները, որովհետև նրանք կարծում են, թէ իրենց շատ խօսքերի պատճառով լսելի կը լինեն*» /Մատթ. 6:7/:

Ի՞նչ է նշանակում շատախօսութիւնը աղօթքում

Այս ասելով Տէրը մեզ չի արգելում երկար աղօթել, այլ միայն դատապարտում է աղօթքի նկատմամբ հեթանոսական մօտեցումը: Հեթանոսները, երկրպագելով կուռքերին, երկրպագում էին դեւերին, որոնք չէին կարող ներկայ լինել ամէնուր, այդ պատճառով նրանք երկար էին աղօթում, որ դեւերը գային իրենց մօտ: Յետոյ՝ դեւերը չգիտեն, թէ ինչ կայ մարդու մէջ, դրա համար հեթանոսներն աղօթում էին, որ դեւերն իմանային

իրենց խնդրուածքները: Եւ քանի որ սատանան եւ դեւերն անողոք են եւ անգութ, հեթանոսներն իրենց պերճախօսութեամբ եւ շատախօսութեամբ ցանկանում էին իրենց աստուածներին գթառատութեան կոչել: Իսկ մեր Աստուածն ամէնուր է, Նա գիտէ սրտի բոլոր մտածումները եւ գթառատ է:

Բայց շատախօսութիւնը լինում է այն ժամանակ, երբ մեր աղօթքն անպտուղ է եւ Աստծուն հաճելի չէ: Շատախօսութիւնն այն է, երբ մենք անպէտք բան ենք խնդրում, ինչպէս մեզ, մերձաւորի, այնպէս էլ ամբողջ աշխարհի համար: Շատախօսութիւն է նաեւ, երբ անհնարին բան ենք խնդրում, ինչպէս օրինակ՝ թագաւոր դառնալ, քաղաք կառուցել, այսինքն՝ այնպիսի բաներ, որոնց մասին երազում են անգիտակից երեխաները: «*Երբ խնդրում են բնութեանը հակառակ, ինչպէս օրինակ՝ թռչել երկնքում, ապրել երկար տարիներ, չծերանալ և չմեռնել*», նոյնպէս շատախօսութիւն է: Մարմնական եւ անարժան բաներ խնդրելն էլ, ինչպէս ոսկի, արծաթ, ունեցուածք, նոյնպէս շատախօսութիւն է: Եւ ինչպէս արքաներից անարժան բան չեն խնդրում, նոյնպէս եւ Երկնային Թագաւորից չի կարելի խնդրել ժամանակաւոր եւ անարժան բաներ, այլ պէտք է խնդրել «*Աստուծոյ թագաւորութիւնը և Նրա արդարութիւնը, և այդ բոլորը ձեզ աւելիով կը տրուի*»,-ասում է Տէրը /Մատթ. 6:33/:

Կարելի չէ Աստծուց խնդրել պիղծ բաներ, օրինակ՝ շնանալ, սպանել կամ յաղթել ինչ-որ մէկին եւ այլն: Նոյնպէս եւ կարելի չէ Աստծուն խնդրել, որ Նա բարկանայ թշնամու վրայ եւ սպանի նրան եւ այլն, քանզի դա նոյնպէս չարախօսութիւն է: Այսպիսով՝ այսպիսի աղօթքների նկատմամբ Տէրը բարեհաճ չէ, դրա համար էլ նրանք անպտուղ են:

Ի՞նչ է նշանակում, երբ մենք աղօթքի ժամանակ խաչակընքւում ենք

Խաչակնքուելով՝ մենք մեր հաւատքն ենք արտայայտում առ այն, որ Խաչի վրայ Փրկչի միջոցով հաշտութիւն եղաւ մարդկանց եւ Աստուծոյ միջեւ, որ Քրիստոսի Խաչով այլեւս խորտակուած է սատանայի

ուժը, եւ որ Քրիստոսի բարեխօսութեամբ մենք կը ստանանք խնդրուածը: Մենք հաւատում ենք, որ խաչակնքուելը մեզ ազատում է դիւային ուժերից, որոնք սարսափում են Քրիստոսի Խաչից:

Ինչպէ՞ս պէտք է խաչակնքուել

Հայերը խաչակնքւում են եռամատնեայ՝ աջ ձեռքի առաջին երեք մատները պտղունց անելով, միւս երկու մատները ծալելով ափի մէջ: Իրար միացրած մատներով աջ ձեռքը հպում ենք սկզբում ճակատին՝ արտաբերելով. «Յանուն Հօր», ապա կրծքից փոքր-ինչ ցած՝ «եւ Որդւոյ», ապա ձախ կրծքին՝ «եւ Հոգւոյն», ապա աջ կրծքին՝ «Սրբոյ»: Ի հաստատումն այս ամէնի իսկութեան՝ ափը դնելով կրծքին՝ ասում ենք. «Ամէն»:

Ինչո՞ւ են ռուսներն ու յոյները խաչակնքւում աջից՝ ձախ

Սա ընդամէնը լեզուական տարբերութիւն է: «Հոգի» բառի արտաբերման ժամանակ ձեռքը սրտի կողմն է լինում՝ ձախ, եւ քանի որ նրանք ասում են «Սրբոյ Հոգւոյն» եւ ոչ ինչպէս հայերէնում է՝ «Հոգւոյն Սրբոյ», ապա եւ խաչակնքւում են աջից՝ ձախ:

ՊԱՀՔԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է պահքը

Պահքը դեղ է՝ սահմանուած Մայր Եկեղեցու կողմից, որը բժշկում է հոգու եւ մարմնի բոլոր տեսակ ախտերը:

Պահքի ի՞նչ տեսակներ կան

Պահքը լինում է երկու տեսակ՝ օրէցօր եւ ամէնօրեայ: Այն պահքը, որ օրէցօր է պահւում, մարմնական պահք է, երբ մենք մեր բերանը հեռու ենք պահում որոշակի տեսակի ուտելիքից: Իսկ ամէնօրեայ պահքն այն է, երբ մենք մեր զգայարանքներն ենք պահում մեղքերից, եւ այս պահքը պարտադիր է, քանզի առանց մարմնական

պահքի էլ ամէնօրեայ պահքը շատ օգուտ է բերում: Սակայն մարմնական պահքն առանց ամէնօրեայի օգուտ չի բերում, քանզի «*...մարմնական պահքն այն ժամանակ է գեղեցիկ, երբ մենք հոգին հեռու ենք պահում մեղքից: Եւ ի՞նչ օգուտ մարմինը պահքով հիւծելուց, երբ հոգին ճարպակալում է մահացու մեղքերից: Իսկ եթէ մէկը հեռու պահի իրեն մարմնական ուտելիքից, բայց հեռու չպահի իրեն մահացու մեղքերից, նրա պահքը նման կը լինի սատանայի պահքին, քանզի սատանան միշտ պահքի մէջ է և ոչինչ չի ուտում, բայց չի դադարում մեղքեր գործել*»,- ասում է Սբ. Տաթեւացին եւ օրինակ բերում մարդկանց, ովքեր, չնայած պահքի ժամանակ գառան միս չեն ճաշակում, բայց դրա փոխարէն, չարախօսելով մերձաւորին, ուտում են նրա միսը: «*Դրա համար էլ*,- եզրակացնում է նա,- *Մեծ Պահքին աւելի լաւ է գառան միս ուտել, քան թէ եղբօր միսը*»:

Կա՞յ արդեօք տարբերութիւն պահքային եւ ոչ պահքային կերակրի միջեւ

Պահքային եւ ոչ պահքային օրերի կերակուրները տարբերւում են միմեանցից: Պահքային օրերին օգտագործում են բուսական կերակուր՝ ցորեն, բանջարեղէն, մրգեր: Ոչ պահքային օրերին թոյլատրելի է կենդանական ծագման կերակուրը՝ միս, կաթ եւ այլն: Հարկ է նաեւ իմանալ, որ պահքային կերակուր ուտում են նաեւ հասարակ օրերին, մինչդեռ կենդանական ծագման կերակուր կարելի է ուտել բացառապէս ոչ պահքային օրերին: Այսպիսով՝ պահքային օրերին ուտում են միայն բուսական կերակուր, իսկ երբ հրաժարւում են նաեւ բուսական իւղից, որից ճարպակալում են, եւ գինուց, որից, հարբելով, բոցավառւում է կիրքը, դա արդէն սրբապահք է: Բայց կայ պահքի մէկ այլ տեսակ եւս, երբ ձեռնպահ են մնում ամէն տեսակ ուտելիքից եւ խմիչքից, այսինքն՝ յանուն Աստուծոյ սիրոյ, հիւծում են իրենց քաղցի եւ ծարաւի միջոցով: Եւ մարմնական պահքը մենք պահում ենք Առաքելական եւ Սուրբ Հայրերի կարգադրութեան պատճառով՝ հոգեւոր հօր օրհնութեամբ եւ այն

ժամանակ, երբ մենք ինքներս ենք ինչ-որ բանի համար պահքի ուխտ անում:

Քանի՞ օր են տարուայ մէջ պահք պահում Հայոց Եկեղեցում

Քանի որ մարդն ունի հոգի եւ մարմին, ապա հոգու համար սահմանուած է պահքը, իսկ մարմնի համար՝ ուտելը, ուսքի, սուրբ Հայրերը տարին կիսել են հաւասար մասերի՝ 180 պահքային եւ նոյնքան էլ պահքազատ օրերի: 180-ից 60 օրը չորեքշաբթի եւ ուրբաթ օրերի պահքն է, իսկ 120 օրը երեք քառասնօրեայ պահքերն են՝ Սբ. Ծննդեան, Զատկական եւ Պայծառակերպութեան: Սա Սուրբ Առաքեալների կանոնն է: Բայց Հայոց Եկեղեցու սուրբ Հայրերը երկու քառասնօրեայ պահքերը կիսել են շաբաթապահքերի, որպէսզի ծանր չլինի ժողովրդի համար:

Ի՞նչ տեսակի են լինում մարմնական պահքերը

Մեծ Պահք, Շաբաթապահքեր, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերի պահքեր:

Ի՞նչ օգուտ կայ Պահքից

Պահքը մարդուն դարձնում է Դրախտի ժառանգորդ, ինչպէս Ադամն էր Դրախտում, երբ պահեցողութեան մէջ էր: Պահքը մարդուց մարմնեղէն հրեշտակ է սարքում, ինչպէս օրինակ՝ Յովհաննէս Մկրտչին, եւ երկինք է փոխադրում, ինչպէս Եղիային եւ Ենովքին: Պահքը կանխում է Աստուծոյ բարկութիւնը - դա նինուէացիների պահքն է: Փրկում է առիւծներից, ինչպէս Դանիէլին, եւ մարում կրակը, զորօրինակ՝ երեք պատանիների դէպքում: Պահքը յաղթում է սատանային. «*Այդ տեսակը ուրիշ բանով չի ելնի, եթէ ոչ ծոմապահութեամբ ու աղօթքով*» /Մարկ. 9:28/: Երբ ամրոց են պաշարում, փակում են ճանապարհները, որ սնունդ չմատակարարուի, այդժամ հեշտ կը լինի յաղթելը: Նոյնպէս եւ սատանան մարդու սրտում մեղքերից անառիկ ամրոց է շինել, որը կարելի է գրաւել միայն սնունդը պակասեցնելով. «*Քանզի վարդապետներն ասում են, որ ինչպէս*

օձի թոյնը սպանում է մարդուն, այնպէս էլ քաղցած մարդու թուքը սպանում է օձին: Այսպիսով՝ եթէ քաղցած մարդու թուքը սպանում է զգացական օձին,- ասում է Սբ. Տաթեւացին, - *ապա առաւելեւս կը սպանի և իմացական օձին*»: Պահքն օգնական է ողջամտութեանը, այն յաղթում է որկրամոլութեանն ու հեշտասիրութեանը: «*Այդ պատճառով բժիշկներն ասում են, որ մարդու բնութիւնը շատ իմաստուն է, երբ վերցնում է սնունդը, սկզբում կերակրում է մարմինը, իսկ աւելորդն ուղարկում է սեռական անդամներին և ամրացնում նրանց*»: Ուստի այն մարդը, ով շատ է ուտում, աւելացնում է սեռական մասի սնուցիչ ուժը՝ դրանով իսկ ուժգնացնելով պոռնկական ցանկութիւնը: Իսկ սննդի պակասեցման ժամանակ, երբ սնում է միայն մարմինը, պոռնկական ցանկութիւնը կանխւում է: Պահքն առողջութիւն է բերում ոչ միայն հոգուն, այլեւ մարմնին, քանզի շատ հիւանդութիւններ առաջանում են աւելորդ կերակրից: Կերակրի մէջ ժուժկալ լինելը կարող ենք սովորել կենդանիներից, օրինակ առիւծը, որը մէկ անգամ կուշտ ուտելով, երեք օր ոչինչ չի ուտում, մեղուները քիչ մեղր են ուտում եւ սպանում են ա՛յն մեղուներին, որոնք նախատեսուածից աւելի են ուտում: «*Իսկ ոմն բժիշկ ասում է, որ գիշերը կերած ուտելիքն աւելի է սպանում, քան սուրը՝ պատերազմում*»: Ուտելուց եւ խմելուց մարդու մարմինը ծանրանում է, նա ծուլանում է աղօթել, ուստի՝ պէտք է մարմինը թեթեւացնել պահքով «*...և այդժամ միտքը, թեթեւացած լինելով, աղօթքի հետ միասին կը բարձրանայ առ Աստուած*»: «*Լիքը որովայնից մարդու բանականութիւնը թուլանում է*», քանի որ որովայնի գոլորշիները ծածկում են նրա ուղեղը, եւ նա դադարում է մտածելուց: Ուստի, բանականութիւնը պահքի միջոցով «*...ճանաչում է ճշմարտութիւնը, հեռանում է ամենայն չարից և աշխարհիկ ստից*»:

Ո՞ր դէպքում է Պահքը հաճելի չի լինում Աստծուն

Հաւանաբար այն դէպքում, երբ դրա պատճառ է դառնում աղքատութիւնը, քանզի մարդն «*...ունենում է կշտանալու ցանկութիւն, բայց դրա համար կերակուր չունի*»: Կամ եթէ սրամոքսի հիւանդութեան պատճա-

ռով մարդը չի կարող սնուել, դա չի քաւում նրա մեղքերը: Ճիշտ նոյն կերպ, եթէ պահք են պահում ոչ թէ Աստուծոյ փառքի համար, այլ՝ փառասիրութեամբ եւ կեղծաւորութեամբ: Փառասէրը «...*կշտացնում է թշնամի սատանային, և իրեն տանջելով չի պարգևատրւում, այլ պատժւում է*», իսկ կեղծաւորը մարդկանցից է սպանում իր վարձը. «...*ա՛յդ իսկ է նրանց վարձը*» /Մատթ. 6:16/: Կան եւ այնպիսիք, ովքեր պահք են պահում արծաթասիրութիւնից, այսինքն՝ խնայում են իրենց փողերն ուտելիքի վրայ, եւ այդպիսի պահքն անընդունելի է:

Իսկ ո՞ր Պահքն է աստուածահաճոյ

Այն պահքը, որը մենք պահում ենք կամաւորապէս՝ յանուն Աստուծոյ սիրոյ եւ յանուն մեղքերի թողութեան:

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է Ողորմութիւնը

Ողորմութիւնը կամաւոր ցաւակցութիւնն է այլոց թշուառ վիճակի հանդէպ:

Ինչո՞ւ է անհրաժեշտ Ողորմութիւն անելը

Այն ամէնը, ինչ Աստուած տուել է մարդուն, լինի դա հոգին, մարմինը, բանականութիւնը, զգայարանքները, կեանքը, իմաստութիւնը, հարստութիւնը եւ այլ բարիքներ, այս ամէնից Նա Իր համար բաժին է պահանջում: «*Իսկ դու նայիր Արարչի մեծ գթասրտութեանը,*- հիանում է Սբ. Տաթեւացին,- *Ով Ինքն է մեզ տուել ամէն ինչ և փոքր մաս է խնդրում և այդ էլ կրկին հենց մեզ համար, քանզի Նա ոչ մի բանի կարիք չունի: Խնդրում է ժամանակաւորը, որ տայ յաւիտենականը, այսինքն՝ Երկնքի Արքայութիւնը: Երբ ինչ որ բան է խնդրում մեզանից, նրա համար, որ դէպի Իրեն ձգի մեր սէրը, որ սրբացնի այն ամէնն, ինչ մենք ունենք, քանզի «այն, ինչից Աստծուն բաժին չկայ, պղծուած է*»:

Աստուած Իր ողջ արարչութիւնը ստեղծել է բարի եւ օգտակար: «*Աստուած տեսաւ, որ այն ամէնը, ինչ ստեղծել էր, շատ լաւ է*» /Ծննդ. 1:31/: Դա նշանակում է, որ ողջ արարչագործութեան էութեան մէջ Աստուած դրել է բարին, որպէսզի բոլորը բոլորին օգնեն, քանզի «*աշխարհն առանց բարու և օգտակարի ոչինչ է*»: Լուսատուները լոյս են տալիս մեր աչքերին, ծովերը կերակրում են կենդանիներին, գետերն ու աղբիւրները ծարաւն են յագեցնում եւ ոռոգում դաշտերը, ծառերը կերակրում են մեզ իրենց պտուղներով: Խոտերն ու ծաղիկները զարդարում են երկիրը եւ բուրմունք արձակում, եւ նրանցից մենք դեղ ենք ստանում: Քարերից եւ ծառերից տներ ենք կառուցում: Կերակուր եւ շատ այլ բաներ մենք ստանում ենք վայրի եւ ընտանի կենդանիներից: Եւ այն ամէնն, ինչ տեսնում ենք, բարիք է շնորհում միւսներին:

Իսկ մարդը, ով բարձրագոյն բարիքն է, Աստուծոյ պատկերն ու ողջ արարչագործութեան տէրը, առաւել պէտք է օգտակար լինի այլոց, ինչպէս օրինակ՝ կենդանիներին. «*Խելամտօրէն հոգատա՛ր եղիր քո հօտերի անասունների նկատմամբ, սրտացա՛ւ եղիր քո երամակների համար*» /Առակ. 27:23/, քանզի նրանք մեր ծառաներն ու օգնականներն են: Եւ ոչ միայն դրա համար, այլ յանուն Արարչի պէտք է հոգ տանել նրանց, քանի նրանք Աստուծոյ ստեղծածն են: Դրա հետ մէկտեղ պէտք է նաեւ խնամել թէ՛ ծառերին, թէ՛ բոյսերին: Եւ եթէ պէտք է փայփայել բոյսերն ու բոլոր կենդանիներին, ապա «*...որքան առաւել պէտք է փայփայել մարդկանց, ովքեր Աստուծոյ պատկերն են*»:

Ո՞ւմ է պէտք արժանացնել Ողորմութեան

Պէտք է առանց տարբերութեան գթալ եւ օգնել կարիքաւորին՝ չնայելով, թէ հարուստ է, թէ՝ աղքատ, արժանի է, թէ՝ անարժան, արդար է, թէ՝ մեղաւոր, հաւատացեալ է, թէ՝անհաւատ: Աբրահամը, երբ դեռ չէր կանչուել Աստծուց, ողորմում էր հեթանոսներին եւ տեսաւ Աստծուն: Ղովտը ողորմում էր Սոդոմի, Գոմորի բնակիչներին եւ տեսաւ հրեշտակներին: Եւ այդ ամէնը նրանք արեցին ոչ թէ յանուն հեթանոսների, այլ՝ Աստուծոյ:

«*Այդպէս և դու ամբողջովին ողորմիր յանուն Աստուծոյ սիրոյ*,- հորդորում է Սբ. Տաթեւացին,- *և եթէ պէտք է այլազգիին գթալ, ապա՝ առաւել ևս պէտք է գթալ քրիստոնեաներին, ովքեր գնուած են արեան գնով և ծառաներն են Քրիստոսի... Իսկ եթէ պէտք է գթալ բոլոր քրիստոնեաներին, ապա առաւել՝ հոգևորականներին, ովքեր նոյնպէս քրիստոնեայ են և քրիստոնեաների առաջնորդները, Քրիստոսի տեղապահները*», եւ մեր մեղքերը քաւողները: Դրանից առաւել՝ պէտք է ողորմիլ աղքատ քրիստոնեային, ով «*Քրիստոսի պատկերն է ոչ միայն, որովհետև նա մարդ է և Քրիստոսին հաւատացող, այլ որ նա իր աղքատութեամբ է Քրիստոսի պատկերը*», ուստի, աղքատին կերակրողը կերակրում է Քրիստոսին: Պէտք է գթալ ծերերին եւ տկարներին, կաղերին ու կոյրերին, այրիներին եւ որբերին, պանդուխտներին ու օտարականներին: Եւ պէտք չէ յանդիմանել նրանց կարիքի մէջ լինելու պատճառով, ասելով՝ գնա եւ աշխատիր, երէկ եմ տուել, այսօր ինչո՞ւ ես խնդրում: «*Մի՛ քննիր նրան, ունի՞ արդեօք, թէ՞ չունի, արժանի՞ է, թէ՞ ոչ*,- ասում է Սբ. Տաթեւացին,- *քանզի դա քննելու ժամանակ չէ, այլ՝ ողորմութեան*»: Այդպէս եւ Տէրը «*իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրայ, անձրև է թափում արդարների և մեղաւորների վրայ*» /Մատթ. 5:45/: Նաեւ՝ պէտք է ողորմիլ բանտարկեալներին, գերիներին ու սգրուկներին, քանզի ինչպէս Քրիստոս Իր արիւնը տուեց եւ ազատագրեց մեր հոգիները մահից, դժոխքից, այնպէս էլ մենք պէտք է նրանց օգնենք: Բայց առաւել, քան կենդանի մարդիկ, ողորմութեան կարիք ունեն մահացած մարդիկ, ովքեր չեն կարող ո՛չ քալել եւ ո՛չ խնդրել: Իսկ ով նրանց կ'օգնի աղօթքով, արցունքներով, կամ թէ կ'օգնի նրանց յուղարկաւորել, նա մեծ պարգեւ կը ստանայ:

Ինչպէ՞ս կարելի է օգնել ննջեցեալներին

1. Մարդն ինքը կարող է աղօթել եւ Տիրոջից խնդրել նրանց համար: Կարելի է ասել «Հայր մեր» աղօթքը կամ էլ ասել՝ «Տէր, ողորմեան», կամ՝ այլ ցանկացած աղօթք, քանզի նրանք բոլորն էլ օգտակար են ննջեցեալների համար:

2. Ողորմութեան գործեր անել, ողորմութիւն տալ աղքատներին եւ մուրացկաններին, որպէսզի նրանք նոյնպէս աղօթեն մեր ննջեցեալների համար:
3. Խնդրել քահանայական աղօթքներ Պատարագի ժամանակ եւ հոգեհանգիստ պատուիրել:
4. Աստուծոյ տաճարին նուիրաբերութիւն անել:

Իսկ ով չի ողորմում ննջեցեալներին, այսինքն՝ չի ծածկում նրանց պարտքերը, երբ ինքը մեռնի, բոլոր այն աղօթքներն ու բարի գործերը, որ կարուեն իր հոգու համար, չեն օգնի նրան, այլ կը գնան նրան, ում նա պարտք էր:

Ողորմութեան քանի՞ տեսակ կայ

Ողորմութեան 14 տեսակ կայ՝ եօթ մարմնական եւ եօթ հոգեւոր: **Մարմնականին** պատկանում են՝ 1. կերակրել քաղցածներին, 2. ջուր տալ ծարաւեալներին, 3. հագցնել մերկերին, 4. ընդունել օտարականներին, 5. փրկել գերեալներին, 6. այցելել հիւանդներին, 7. թաղել մեռածներին:

Հոգեւորին պատկանում են՝ 1. ներել պարտապաններին, 2. յանդիմանել մեղաւորներին, 3. սովորեցնել տգէտներին, 4. խրատել թերահաւատներին, 5. մխիթարել տրտմածներին, 6. աղօթել մերձաւորի փրկութեան համար, 7. համբերութեամբ տանել սեփական անձի նկատմամբ այլոց բոլոր անօրէնութիւնները: Քանզի մեղմ եւ հեզաբարոյ պատասխանը, կլանելով մերձաւորի բարկութիւնը, շահում է նրան:

Ի՞նչ օգուտ Ողորմութիւնից

Ողորմութեան օգուտները բազմաթիւ են:
«*Ողորմութեամբ և հաւատով մաքրւում է մեղքը*» /Առակ. 15:27/, «*...քո մեղքերը քաւի՛ր ողորմութեամբ, և քո անօրէնութիւնները՝ աղքատներին գթալով*» /Դան. 4:24/,- դիմում է Դանիէլը՝ Նաբուգոդոնոսորին, նոյն բանի մասին ասում է եւ Տէրը. «*Բայց տեսէ՛ք, թէ ինչն է իսկապէս արժան. ողորմութի՛ւն տուէք, և ահա ձեր ամէն ինչը մաքուր կը լինի*» /Ղուկ. 11:41/: Այսպիսով՝

ողորմութեամբ կարելի է հոգին մաքրել մեղքերից: Երբ օգնենք կարիքաւորներին եւ գթակից լինենք նրանց տկարութիւններին, ապա Տէրը, այս ամէնը տեսնելով, գթակից կը լինի եւ մեր տկարութիւններին ու կարիքներին: Ողորմողի հաւատքն ու յոյսը մեծանում են, քանզի նա հաւատում է Աստծուն եւ յոյսով լցուած, ողորմութիւն է տալիս: «*Երանի՜ ողորմածներին, որովհետև նրանք ողորմութիւն պիտի գտնեն*» /Մատթ. 5:7/,- ասում է Տէրը: Եւ ոչ միայն այս կեանքում նրանք ողորմութիւն կը գտնեն, այլեւ՝ գալիք. «*Եկէ՛ք, իմ Հօր օրհնեալնե՛ր, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը. որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք տուիք*» /Մատթ. 25:34/:

«*Մարդն իր թուլութեամբ տալիս է աննշանն ու քիչը, իսկ Տէրն Իր կարողութեամբ պարգևում է մեզ առաւելը: Մարդը գնում է այցելելու հիւանդին և բանտարկեալին, իսկ Տէրը նրան պարգևատրում է յաւիտենական կեանքով և այլն*»: Ողորմութիւնը վեհացնում է մարդուն Աստուծոյ աչքում եւ նրան պատուելի դարձնում, քանզի «*Մեծանուն և պատուական է գթասիրտ մարդը*» /Առակ. 20:6/: Աբրահամը պատուելի դարձաւ հիւրընկալութեան եւ ողորմութեան համար: Նոյնպէս եւ համբերատար Յոբը, այրիների եւ որբերի հայրը լինելով, պատուելի դարձաւ: Ղովտը, հիւրասէր գտնուելով, փրկուեց կրակից: Իսկ Նոր Կտակարանում մենք կարդում ենք հետեւեալը. Տաբիթան ողորմութեան գործեր արած լինելով, այրիների եւ որբերի խնդրանքով, Պետրոսի միջոցով յարութիւն առաւ: Կոռնելիոսի աղօթքներն ու ողորմութիւնները հասան Աստծուն, եւ նրան պատուելի եւ հեթանոսներից առաջին հաւատացեալը դարձրին: «*Երանի նրան, ով մտածում է աղքատի ու տնանկի մասին. փորձանքի օրը Տէրը կը փրկի նրան*» /Սաղմ. 40:2/,-ասում է սաղմոսերգուն: Ողորմածը ոչ միայն նմանւում է Աստծուն. «*Գթասի՛րտ եղէք, ինչպէս որ ձեր Հայրը գթասիրտ է*» /Ղուկ. 6:36/, այլեւ ընդունում է Նրա անունը «*ողորմած, գթասիրտ և արդար է Տէրը*» /Սաղմ. 111:4/: Իսկ դրանից բացի, ողորմութիւնը բացում է հարսանեաց առագաստի դռները, զորօրինակ՝ իմաստուն կոյսերը, որ ողորմութեան իւղ ունէին: Ողորմութիւնը մարում է Աստուծոյ բարկութիւնը.

«*Գաղտնի պարգևը մեղմացնում է բարկութիւնը*» /Առակ. 21:14/: Առանց գթասրտութեան հնարաւոր չէ մտնել Արքայութիւն, ինչպէս Տէրը, Ով համբարձուեց Ձիթենեաց լեռից, ինչը ողորմութիւն է նշանակում, այսինքն՝ սրանով Նա ցոյց տուեց, որ Երկինք տանող ճանապարհն անցնում է ողորմութեան միջով: Ողորմութեամբ մենք կարող ենք յաղթել մեր թշնամի սատանային: Ինչպէս Դաւիթը, երբ կռւում էր Գողիաթի դէմ, նրան յաղթեց ոչ թէ Սաւուղի զէնքով, որին նա անսովոր էր, այլ՝ քարով եւ պարսատիկով: «*Գողիաթը մարմնաւորում է սատանային, Դաւիթը՝ հաւատացեալներին, Սաւուղի զէնքը ծանր ապաշխարանք է, և ով սովոր չէ ծանր ապաշխարանքի, նա կարող է այն ողորմութեամբ, որը հանում է սրտից և տալիս աղքատին, սպանել սատանային, որն աղքատ է ամէն բարիքից*»:

Ի՞նչ օգուտ օտարասիրութիւնից

Օտարասիրութիւնից էլ օգուտ կայ, քանզի այն եւս ողորմութեան գործերի անքակտելի մասն է կազմում. «*...օտար էի, և ինձ ձեր մէջ առաք*» /Մատթ. 25:35/: Ով սիրում է օտարականներին, մարդասէր է եւ դրանով նմանւում է Աստծուն, քանզի Աստուած Ինքը մարդասէր է: Քանի որ օտարականը մեզ անծանօթ է եւ օտար, ապա նրան սիրողն ու ընդունողն աւելի մեծ պարգեւ կ'ունենայ, քան նա, ով սիրում է ծանօթին, քանզի նա օտարին ընդունում է յանուն Աստուծոյ սիրոյ:

Օտարասիրութեամբ փառաւորուեցին եւ արդարացան Աբրահամն ու Ղովտը: Աբրահամն օրհնութիւն ստացաւ, իսկ Ղովտը փրկուեց կրակից: Բանն Աստուած մարմնացաւ եւ որպէս օտարական եկաւ աշխարհ. «*Իւրայիններին մօտ եկաւ, բայց իւրայինները նրան չընդունեցին: Իսկ ովքեր նրան ընդունեցին, նրանց իշխանութիւն տուեց լինելու Աստուծոյ որդիներ, նրանց, որոնք իր անունը կը հաւատան*» /Յովհ. 1:11,12/: «*Այդպէս էլ եկած օտարականը Քրիստոսի պատկերն է, և ով ընդունում և սիրում է օտարականին, նա ընդունում և սիրում է Քրիստոսին, իսկ ով անարգում է օտարականին, նա անարգում է և Քրիստոսին*»:

Ի՞նչ պատիժ են կրում անողորմները

«*Ով ծաղրում է աղքատին, նա զայրացնում է նրա Արարչին*» /Առակ. 17:5/: Արարիչ Աստծուն վայելում է հոգալ սեփական արարչագործութեան համար, ինչպէս Հայրը՝ որդու: Հարուստի նկատմամբ հոգածութիւնը Նա արտայայտում է հարստութեամբ, որը տալիս է նրան, իսկ աղքատների մասին հոգում է հարուստի միջոցով, քանզի երկուսն էլ՝ հարուստն էլ, աղքատն էլ, հաւասար են Աստուծոյ առաջ: Իսկ եթէ մէկը կշտամբի աղքատին՝ ասելով, թէ նա ինչու է աղքատ, ատելի կը լինի Աստծուն, քանզի «*Նա է մէկին աղքատ դարձրել, միւսին՝ հարուստ*»: Ինչպէս վերն ասուեց, ով ողորմում է, նրա հաւատքն ու յոյսն աճում են, այնպէս էլ անողորմը չի ողորմում, քանզի թերահաւատ է եւ յուսահատ:

«*Մի՛ ծաղրիր այդ մարդուն, որի հոգին դառնացած է, քանզի Տէ՛րն է, որ նուաստացնում և բարձրացնում է նրան*» /Սիր. 7:12/: Չնայած, որ այս մեղքը փոքր է թւում, միեւնոյն է՝ պատժւում է Աստուծոյ կողմից: Քանզի Քամն անիծուեց նրա համար, որ ծիծաղեց Նոյի վրայ: Մեղքողն անպտուղ մնաց, քանզի իր սրտում ծիծաղեց Դաւթի վրայ: Եւ բեթէլցի երեխաները, ծիծաղելով Եղիսէի վրայ, յօշոտուեցին: Այդպէս կը պատժուեն եւ նրանք, ովքեր կը ծիծաղեն աղքատների վրայ: «*Քանզի թէև մարմնով աղքատ է, բայց հարուստ է հոգով, և Աստուած ցանկանում է և պատւում է հոգու հարստութիւնը, իսկ դու, որ վիրաւորում ես նրան, չես արդարացուի*»:

Մեր Տէր Յիսուս Քրիստոս աղքատ կոչուեց, քանզի յանուն մեզ աղքատացաւ, իսկ հիմա՝ քայլում է ի դէմս աղքատների եւ մեզնից խնդրում Իր կարիքի համար: Իսկ եթէ չտանք, ապա կը լսենք այս խօսքերը. «*Անիծեալնե՛ր, գնացէ՛ք ինձնից յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի և իր հրեշտակների համար. որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք չտուիք...*» /Մատթ. 25:41-45/:

«*Ով իր ականջը փակում է տնանկին չլսելու համար, ինքն էլ երբ կանչի Տիրոջը, Տէրն էլ իրեն չի լսի*» /Առակ. 21:13/: Զորօրինակ՝ Տէրունական առակի հարուստը, որին Աստուած մահուանից յետոյ չլսեց,

ինչպէս նա իր կեանքի օրօք չէր լսել աղքատ Ղազարոսի ողբը: «*Եւ սա գրուած է եղել մեզ համար,*- ասում է Սբ. Տաթեւացին,- *որպէսզի յուշի այն մասին, որ ինչպէս մենք ունկն չենք դնում աղքատին ու տնանկին, ովքեր մեր կարիքն ունեն, այնպէս էլ Աստուած չի լսի մեզ, ո՛չ այստեղ, ո՛չ եկող կեանքում, երբ աղերսենք Նրան*»:

«*Մի՛ յապաղիր կարօտեալին բարութիւն անել, երբ քո ձեռքը կարող է օգնել նրան: Զասես թէ՝ «Գնա՛, կը գաս՝ վաղը կը տամ», մինչդեռ կարող ես բարութիւնդ անել, քանի որ չգիտես, թէ վաղն ինչ է բերելու քեզ*» /Առակ. 3:27,28/: Եթէ կարող ես այսօր ողորմութիւն անել, ապա մի՛ ասա, թէ վաղը կանես, քանզի երկու չարիք կը գայ դրանից. 1. չարիք աղքատին, քանզի նա հենց այսօր կարիք ունի կերակրի եւ ծածկի, 2. չարիք, որին կենթարկուես դու՝ զրկուելով պարգեւներից, երբ զրկես աղքատին ողորմութիւնից, կամ նրա նկատմամբ դեւերի չարութեան պատճառով, կամ նենգ մարդկանց պատճառով, կամ էլ երբ ինքդ մոռանաս: «*Աղքատի տառապանքին և տնանկի հեծութեան համար այժմ ես կ՚ելլեմ,- ասում է Տէրը,- կը բերեմ իմ փրկութիւնը և վստահ կը լինեմ նրանց վրայ*» /Սաղմ. 11:6/:

Եւ վերջապէս՝ Աստուած հարուստներին երկու բաժին է տուել, մէկը՝ աղքատների համար, միւսը՝ հենց իրենց: «*Եւ եթէ այդ բաժնից կը տան աղքատներին, ապա կը ժառանգեն Արքայութիւնը, իսկ եթէ չեն տայ, ապա կը ժառանգեն դժոխքը*»:

Ի՞նչ փարբերութիւն կայ Ողորմութեան եւ փասանորդի միջեւ

Աստծուն տուած ընծան մեծ է ողորմութիւնից: Ողորմութիւնն արտայայտում է սէրը մերձաւորի, իսկ ընծան՝ սէրն Աստուծոյ հանդէպ, եւ որքանով Աստուծոյ հանդէպ սէրը գերադաս է ընկերոջ հանդէպ սիրուց, այնքանով ընծան մեծ է ողորմութիւնից: Ողորմութիւնը, որն արւում է յանուն Աստուծոյ, միջնորդ ունի աղքատին, իսկ ընծան անմիջականօրէն մատուցւում է Աստծուն՝ առանց միջնորդի: Նոյը եւ Աբրահամը, եւ միւս նահապետները մէկ անգամ զոհաբերութիւն ըրին Աստծուն, իսկ աղքատներին ողորմութիւն արեցին բազում անգամներ, ինչը խօսում է Աստծուն նուիրաբե-

րութեան գերազանցութեան մասին, որի մասին Ինքը Տէրն ասում է. «*Աղքատներին ամէն ժամ ձեզ հետ ունէք: Ինձ միշտ ձեզ հետ չունէք*» /Յովհ. 12:8/: Օրէնքն ասում է, որ ամենայն ունեցուածքից պէտք է փասանորդ տալ, մինչդեռ աղքատներին ողորմութիւն տալը կամաւոր է: Ողորմութիւնը պարգեւատրւում է միայն գալիք կեանքում, իսկ Աստծուն արուած ընծան եւ այստեղ, եւ երկնքում: Այնտեղ՝ երկնքում՝ հոգեւոր, իսկ այստեղ՝ նիւթական դրսեւորմամբ. «*...որպէսզի քո շտեմարանները լցուեն առատ ցորենով, քո հնձաններն աւելի յորդ գինի բխեն*» /Առակ. 3:10/: Եթէ ողորմութիւնը տրւում է աղքատներին, ապա Աստուծոյ ընծան պէտք է բերել Աստուծոյ տուն, եւ քանի որ քահանաների բաժինն ու ժառանգութիւնն Ինքն Աստուած է, ուստի եւ Տիրոջ բաժինը տալիս են քահանաներին:

Որքանո՞վ է կարեւոր փասանորդ տալը

Եւ որքան մարդու համար կարեւոր է ողորմութիւն անել աղքատներին, այնքան էլ, եւ նոյնիսկ՝ աւելին, կարեւոր է Աստծուն տալ սեփական ունեցուածքից. «*Պատուի՛ր Տիրոջը քո արդար վաստակից և քո արդար բերքից պտո՛ւղ յատկացրու նրան, որպէսզի քո շտեմարանները լցուեն առատ ցորենով, և քո հնձաններն աւելի յորդ գինի բխեն*» /Առակ. 3:9,10/: Իսկ ով փասանորդ չի տալիս, նա կողոպտում է Աստծուն, ինչի մասին ասում է եւ Մաղաքիան. «*Մարդ Աստծուն կը խաբի՞, քանի որ դուք խաբեցիք ինձ, ասացիք, թէ՝ «Ինչո՞վ խաբեցինք քեզ»: Չէ՞ որ տասանորդներն ու պտուղները ձեզ մօտ են, դուք չարութեամբ նախանձում, խաբում էք ինձ*» /Մաղ. 3:8,9/: Իւրացնել Աստուծոյ համար սահմանուածը՝ նշանակում է խաբել Նրան, դրա համար էլ գողացւում է ունեցուածքը տնից – նախ, Տէրը գողանալ է տալիս ունեցուածքն ու անասունները, երաշտով ու այլ տարերային աղէտներով ոչնչացնում է դաշտերն ու այգիները, երկրորդ՝ տեղի է ունենում ոչ միայն նիւթական կորուստ, այլ դադարում է նաեւ հոգեւոր խնամատարութիւնը: Քանի դեռ շինարարի ձեռքին քար կայ, բանուորը նրան նորը չի տալիս, իսկ երբ շինարարը քարը դնի պատին, այդ ժամանակ էլ կը ստանայ նորը: Դրա համար էլ Տէրն

ասում է. «...*տուէ՛ք, և պիտի տրուի ձեզ. Ձեր գոգը պիտի լցնեն առա՛տ չափով՝ թաթաղուն, շարժուն, զեղուն. այն չափով, որով չափում էք, նո՛յն չափով պիտի չափուի ձեզ համար*» /Ղուկ. 6:38/: Բայց ահա լաւագոյն օրինակը, որը կարելի է եւ ակնյայտօրէն տեսնել աչքերով, երբ «...*սերմը, ընկնելով միւնոյն հողի մէջ, մի տարի հարուստ բերք է տալիս, յաջորդ տարին՝ պատժւում կարկուտով, անձրևով և մորեխով,*-ասում է Սբ. Տաթեւացին,- *և աղէտները շատանում են, բայց մենք չենք արթնանում. և չենք գիտակցում, որ եթէ մարդը կարող է պահանջել իր պարտքը, ապա առաւել ևս Աստուած կարող է իր պարտքը չթողնել մեզ: Քանզի, երբ մենք կամովին չյանձնենք, ապա տասանորդի Իր բաժինը մեզնից ակամայ կը վերցնի դժբախտութիւնների միջոցով՝ երաշտով, կարկուտով, կամ էլ՝ աւազակների ու թալանչիների միջոցով*»:

Ի՞նչ է Մատաղը

Մատաղն իր տեսակի մէջ զոհաբերութիւն է կամ ողորմութիւն (բայց ոչ այն իմաստով, ինչպէս մտածում են աղանդաւորները եւ որոշ անգէտներ, քանզի, երբ մարդն ինչ-որ բան տալիս է, դրանով իսկ զոհաբերում է), երբ մարդը կերակրում է սովեալներին, դրա համար էլ այն կոչւում է **ԱՂՔԱՏԱՅ ԿԵՐԱԿՈՒՐ**:

Ո՞վ է սահմանել Մատաղը

Մատաղը սահմանել է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը՝ ժողովրդին աղքատների նկատմամբ ողորմութեան եւ կարեկցանքի ընտելացնելու նպատակով:

Ո՞րն է Մատաղի իմաստը

Մատաղի իմաստն այն է, որ երբ ոեւէ մէկը ցանկացել է շնորհակալութիւն յայտնել Աստծուն (այս կամ այն պատճառով), նա քաջ գիտակցել է, որ Աստծուն կերակուր եւ խմելիք պէտք չէ, բայց իմացել է նաեւ, որ. «...*որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք տուիք ...քանի որ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք այդ՝ ի՛նձ համար արեցիք*» /Մատթ. 25:35,40/, ուստի, որպէսզի

Տիրոջը կերակրեն՝ կերակրել են հենց աղքատներին: Մատաղի համար հիմք են ծառայում նաեւ Տիրոջ խօսքերը. «*Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին, ո՛չ քո հարևաններին և ո՛չ էլ հարուստներին, որպէսզի նրանք էլ փոխարէնը քեզ չհրաւիրեն, և քեզ հատուցում լինի: Այլ երբ ընդունելութիւն անես, կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին և երանելի կը լինես, որովհետև փոխարէնը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եւ դրա փոխարէն քեզ կը հատուցուի արդարների յարութեան օրը*» /Ղուկ. 14:12-14/:

Ինչո՞ւ պէտք է Եկեղեցի գնալ, որ քահանան օրհնի աղը

«Մատաղ» բառն ինքնին նշանակում է ՄԱՏ ու ԱՂ, այսինքն՝ մատուցել աղ: Մի կողմից աղը տարել են, որպէսզի կենդանուն Եկեղեցի չմտցնեն, քանզի կենդանուն Եկեղեցի մտցնելն անընդունելի է: Միւս կողմից քահանան նախապէս պէտք է տեղեակ լինէր՝ արդեօք այդ զոհն արդար աշխատանքի պտո՞ւղ է (քանզի Եկեղեցին դրամ եւ զոհ չի ընդունում անառակ կանանցից եւ գողութիւնից), ապա եւ օրհնում էր աղը:

Ճի՞շտ է արդեօք կենդանու արիւնը ճակատին քսելը

Ցաւօք, խորհրդային տարիներին Մատաղի ճշմարիտ իմաստը ժողովրդի մօտ աղաւաղուած էր: Մարդիկ գիտէին, որ ինչ-որ բան պէտք է անեն, բայց իմաստը չէին հասկանում: Այդ պատճառով շատերը կենդանու արիւնը քսում էին իրենց վրայ... աղանդաւորները իւրովի էին բացատրում դա՝ մեղադրելով Եկեղեցուն ընդհուպ մինչեւ հեթանոսութեան մէջ… - բայց այս ամէնը տգիտութիւն է: Ուստի, այն ոչ թէ ճիշտ չէ, այլ խստիւ արգելւում է:

ՊՍԱԿ

Ի՞նչ է Պսակը

Պսակը Խորհուրդ է, որի ընթացքում հոգեւորականի եւ Եկեղեցու առջեւ փեսայի եւ հարսի ազատ կամքի հաւատարմութեան խոստմամբ, օրհնւում է վերջիններիս ամուսնական եւ երբեւէ կնքուող միութիւններից սերտագոյն միութիւնը, որ կարող է առհասարակ հաստատուել երկու մարդկանց միջեւ: Ո՛չ ազգակցական, ո՛չ ընկերական կապը չեն կարող ստեղծել երկու անձանց միջեւ մերձութեան այդպիսի աստիճան: Աստուած, ստեղծելով մարդուն, նրան նաեւ կոչեց սիրոյ, քանզի մարդն արարուած է պատկերով եւ նմանութեամբ Աստուծոյ, Ով Ինքը Սէր է: Քանի որ Աստուած մարդուն ստեղծեց տղամարդ եւ կին, նրանց փոխադարձ սէրը դարձաւ այն բացարձակ եւ անխախտ սիրոյ օրինակը, որով Աստուած սիրում է մարդուն: Այդ սէրը բարի է, աւելին՝ շատ բարի է Արարչի աչքերում: Այդ սէրն օրհնուած է Աստուծոյ կողմից, այն նախասահմանուած է պտղաբերելու եւ մարմնանալու Արարչագործութեան պահպանման ընդհանուր գործում. «*Աստուած օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք, լցրէ՛ք երկիրը, տիրեցէ՛ք դրան...*» /Ծննդ. 1:28/:

Ինչո՞ւ է Պսակը Խորհուրդ համարւում

Այն, որ Պսակը Խորհուրդ է, տեսանելի է Պողոս Առաքեալի հետեւեալ խօսքերից. «*Դրա համար մարդը պիտի թողնի իր հօրն ու մօրը և պիտի գնա իր կնոջ ետևից. Եւ երկուսը պիտի լինեն մէկ մարմին: Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի և եկեղեցու վերաբերեալ*» /Եփես. 5:31-32/:

Ինչո՞վ է մեծ սոյն խորհուրդը

Այն մեծ է, քանզի քրիստոնէական Պասկն ու ընտանիքը երկնային մեծ եւ անմեկնելի խորհրդի՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի եւ Նրա Եկեղեցու անխախտ միութեան մանրակերտն է: Ինչպէս փեսան, թողնելով իր հօրը, գնում է իր հարսի մօտ, այնպէս էլ Յիսուս, թողնելով Հայրական Գահը, եկաւ Իր Հարսի՝ Եկեղեցու մօտ՝ անքակտելիօրէն միանալով Նրա հետ:

Ինչո՞ւ է Պասկից առաջ անհրաժեշտ նշանադրութիւնը (նշան)

Ինչպէս ծառն է սկզբում ծաղկում, յետոյ՝ պտղաբերում, այնպէս էլ նշանադրութիւնը Պասկի ծաղիկն է հանդիսանում: Նշանադրութիւնն իր տեսակի մէջ համաձայնութիւն է երկու կողմերի միջեւ, իսկ Պասկն այդ համաձայնութեան հաստատումն է: Նշանադրութիւնն անկատարութիւն է, իսկ Պասկը՝ կատարելութիւն, դրա համար էլ մատանիները դնում են աջ ձեռքի մատնեմատին:

Ո՞րն է նշանադրութեան մատանիների իմաստը

Կլոր մատանին հենց սիրոյ նախատիպն է: Նշանադրութեան խորհուրդն այն է, որ փեսան եւ հարսը համաձայնութիւն են տուել եւ սիրով կապուած են միայն հոգեպէս, այդ պատճառով մինչեւ Պասկը չի կարելի ունենալ սեռական մերձեցում, քանի որ դրա համար դեռ օրհնութիւն չի եղել: Եկեղեցում՝ Պասկի ժամանակ մատանիները դնում են ձախ ձեռքի մատնեմատին՝ ի նշան այն բանի, որ նրանք արդէն կապուած են սիրով եւ մարմնով: Այդ պատճառով Պասկից յետոյ, նրանք կարող են սեռական մերձեցում ունենալ, քանի որ արդէն ստացել են օրհնութիւն. «*Ամեցէ՛ք, բազմացէ՛ք, լցրէ՛ք երկիրը, տիրեցէ՛ք դրան...*»:

Որո՞նք են ամուսնութեան նախապայմանները

Առողջ եւ ամուր ընտանիք կազմելու նախաշեմին, Եկեղեցին երիտասարդ զոյգերին առաջարկում է դիտարկել

հետեւեալ նախապայմանները: Ամուսնութեան ամենակարեւոր նպատակներից մէկը որդեծնութիւնն է: Հետեւաբար՝ ամուսնական կապի համար մարմնական առողջութիւնն անհրաժեշտ է: Առողջութեան նկատառումներից ելլելով՝ արգելւում է պսակադրել կնատեացներին, կուրտերին, նաեւ նրանց, ում մասին յայտնի է, որ նրանք անպտուղ են: Անհրաժեշտ են նաեւ հասունութիւնը եւ չափահասութիւնը, ինչպէս նոր սերնդի ֆիզիքական եւ հոգեկան առողջութեան համար, այնպէս էլ սիրոյ եւ բարոյականութեան գաղափարի հաստատման համար: Ընդ որում՝ կինը պէտք է լինի հասուն (17 տարեկան), իսկ տղամարդը մեծ լինի նրանից (20-25 տարեկան): Կարեւոր է նաեւ ազգակցական կապը: 13-րդ դարում Հայ Եկեղեցին սահմանել է, որ ամուսնացողները պէտք է իրարից հեռու լինեն եօթ պորտով (որդին հօրից հեռու է մէկ աստիճանով՝ պորտով, թոռը՝ երկու, այսինքն՝ երկու անձանց միջեւ ծնունդների թիւը հաշււում է աստիճաններով կամ պորտերով, երկու եղբայր կամ քոյր իրարից հեռու են երկու պորտով. այրն ու կինը չեն բաժանւում պորտով, քանի որ համարւում են մէկ մարմին): Եկեղեցին անհրաժեշտ է համարում, որպէսզի ամուսնանալ ցանկացող երիտասարդն ու աղջիկը լինեն մկրտուած եւ դրոշմուած: Եկեղեցին արգելում է քրիստոնեայ տղամարդու կամ կնոջ ամուսնութիւնն այլադաւան կնոջ կամ տղամարդու հետ, բացառութեամբ այն դէպքի, երբ այլադաւան տղամարդը կամ կինը քրիստոնէութիւն են ընդունում: Փոխադարձ սիրոյ հիմքը միադաւանութիւնն է, քանի որ մարդիկ հոգեւոր աճի հասնում են հաւատքով: Տղամարդը տան գլուխն է, կինը՝ նրա սիրտը, այնպէս որ գլուխն ու սիրտը փոխհամաձայնութեամբ միանում են սիրով եւ հաւատարմութեամբ: Հարկ է, որ Պսակի Խորհուրդը կատարի հոգեւորականը եկեղեցում՝ խաչքաւորի եւ ժողովրդի ներկայութեամբ: Այն Պսակը, որը գաղտնի է կատարւում, անվաւեր է համարւում:

Ի՞նչ յարաբերութիւններ պէտք է ունենան այրն ու կինը

Ամէնից կարեւորը նրանց համար այն է, որ նրանք պէտք չէ դաւաճանեն միմեանց, այսինքն՝ չպղծեն անկողինը եւ

չքանդեն ամուսնական միութիւնը, ինչի մասին եւ ասում է Պօղոս Առաքեալը. «*Ամուսնութիւնն ըստ ամենայնի պատուուած է, և անկողինը՝ սուրբ: Եւ Աստուած պիտի դատի շնացողներին և պոռնիկներին*» /Եբր. 13:4/: Ամուսինները պէտք է միաբան լինեն, միանման դատեն հոգեւոր եւ մարմնական հարցերի շուրջ: Հակառակ դէպքում՝ «*Ինքն իր մէջ բաժանուած ամէն թագաւորութիւն աւերւում է, և ինքն իր մէջ բաժանուած ամէն քաղաք կամ տուն կանգուն չի մնայ*» /Մատթ. 12:25/: Կինը պէտք է բարեպաշտ լինի եւ երկիւղած, իսկ այրը՝ բարի ու հաւատարիմ ամուսին լինի, որպէսզի նրանք ապրեն խաղաղութեան, սիրոյ եւ համաձայնութեան մէջ, իսկ ապագայում ժառանգեն յաւիտենական կեանքը: Սա է ահա բարի, հաւատարիմ եւ ողջախոհ ամուսնութիւնը: Նաեւ ամուսինը գլուխն է, իսկ կինը՝ մարմինը, եւ նրանք մէկ մարմնի մէջ միացած են Պսակի սիրով եւ օրհնութեամբ: Եւ ինչպէս մարմինն առանց գլխի եւ գլուխն առանց մարմնի անպէտք են եւ անկեանք, այնպէս էլ ամուսինն առանց կնոջ եւ կինն առանց ամուսնու անպէտք են, քանի որ կեանք չունեն: Եւ ինչպէս այդ մարմինն այլ գլխի, իսկ գլուխը մէկ այլ մարմնի հետ չեն կարող մէկ մարմին լինել, այնպէս էլ ամուսինը չի կարող այլ կնոջ գլուխ լինել, եւ կինը՝ մարմին՝ այլ փղամարդու համար: Իսկ եթէ ամուսինը կամ կինը խախտում են սիրոյ եւ օրհնութեան կապը եւ միանում են ուրիշի հետ, ապա իրենք են հեռանում Պսակի օրհնութիւնից: Եւ իմաստուն կինը պէտք է աչքեր ունենայ՝ մշտապէս իր ամուսնուն ուղղուած, եւ ապրի նրա կամքի համաձայն: Եւ կինը պէտք է ամուսնուց չհեռացնի իր սէրը, եւ թոյլ չտայ, որ ամուսինը հեռանայ իր սիրուց:

Ո՞ր օրերին է արգելուած պսակադրելը

Առանց բացառութեան՝ տարուայ բոլոր կիրակի օրերին, բոլոր չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին (բացառութեամբ Նոր Կիրակիի եւ Համբարձման միջեւ ընկած չորեքշաբթի եւ ուրբաթ օրերի), ննջեցեալների յիշատակութեան՝ մեռելոց, օրերին, որոնք յաջորդում են հինգ մեծ տաղաւար տօներին, Ծննդեան, Յարութեան, Տիրոջ Պայծառակերպութեան, Աստուածածնի վերափոխման

եւ Տիրոջ Կենսատու Խաչի Վերացման Խաչվերաց տօներին: Մեծ Պահքի բոլոր օրերին եւ զատկական առաջին ութ օրերին, բոլոր շաբաթապահքերի բոլոր հինգ օրերին:

Պասակը կարելի է կատարել, երբ արգելուած օրը թեքւում է երեկոյի՝ պայմանով, որ յաջորդող օրն արգելուած օր չլինի:

Կարելի՞ է արդեօք լուծել Պասակը

Պասակն անլուծելի է թէ՛ պեպական, թէ՛ որեւէ այլ մարդկային իշխանութեամբ. «*Արդ, ինչ որ Աստուած միացրեց, մարդը թող չբաժանի*» /Մատթ. 19:6/: Ինչպէս հնարաւոր չէ բաժանել Քրիստոսին իր Եկեղեցուց, այնպէս էլ հնարաւոր չէ բաժանել մարդուն իր կնոջից: Հայ եկեղեցին, մեկնաբանելով ամուսնութեան վերաբերեալ Աւետարանական տողերը (Մատթ. 5:32, 19:3-10, Մարկ. 10:2-12, Ղուկ. 16:18), ամուսնալուծում է միայն ամուսնական անհաւատարմութեան (շնութեան) դէպքում:

Որո՞նք են ամուսնութեան լուծման պայմանները

Հայոց Եկեղեցին, օրինական ամուսնութիւնն անքակտելի համարելով, այնուամենայնիւ թոյլատրում է ամուսնալուծութիւն, երբ ամուսիններից մէկը շնացել է, հիւանդ է անբուժելի եւ վարակիչ հիւանդութեամբ, մոլագար է կամ խելագար, առանց լուրի բացակայում է եօթ տարի: Անպտղութիւնն ամուսնալուծութեան հիմք չի համարւում: Դաւանանքի փոփոխութիւնը նոյնպէս ամուսնալուծութեան հիմք չէ, բայց այն թոյլատրելի է կրօնական բռնութեան առկայութեան դէպքում:

Ո՞վ ունի ամուսնալուծելու իրաւունք

Պասակի Խորհուրդը կատարւում է Եկեղեցու կողմից, որի գլուխը Կաթողիկոսն է, եւ միայն եկեղեցին ունի ամուսնական միութիւնը լուծելու իշխանութիւն: Ինքը հոգեւորականը չի կարող լուծել ամուսնութիւնը, թէեւ հենց ինքն է պսակադրել: Լուծել կարող է գերագոյն

իշխանութիւնը՝ յանձին թեմական եպիսկոպոսի, ով եւ զբաղուում է այս հարցերով: Եւ այդուհանդերձ՝ Կաթողիկոսին է վերապահուած այս հարցի լուծման վերջին խօսքը եւ իշխանութիւնը:

Ե՞րբ է Պասկն անվաւեր

Անվաւեր է, եթէ կատարուել է գաղտնի կամ բռնի, կամ եթէ ամուսնացողն ունի օրինական կին (օրինական ամուսին):

Թոյլատրելի՞ է արդեօք կրկնակի Պասկը

Պասկը կարելի է կրկնել, եթէ ամուսիններից մէկը մահացել է: Եկեղեցին թոյլատրում է Պասկի Խորհուրդ կատարել միայն երկու անգամ՝ «Կուսական Պասկի կարգ» եւ «Երկրորդ Պասկի կարգ»: Երրորդ ամուսնութիւնն անթոյլատրելի է:

Պարտադի՞ր է արդեօք բոլորի համար, որ ամուսնանան

Պարտադիր չէ բոլորի համար, որ ամուսնանան: Կուսութիւնն ամուսնութիւնից աւելի լաւ է նրանց համար, ովքեր ի զօրու են պահպանել այն մաքրութեամբ՝ յանուն Աստուծոյ սիրոյ: Հենց այդ մասին է ասել մեր Տէր Յիսուս Քրիստոս. «*Բոլորն ընդունակ չեն այդ բանին, այլ՝ նրանք, որոնց տրուած է...Ով կարող է տանել, թող տանի*» /Մատթ. 19:11-12/: Նաեւ Առաքեալն է ասում. «*Սակայն ամուրիներին և այրիներին ասում եմ. լաւ է նրանց համար, եթէ մնան այնպէս, ինչպէս ես եմ: Իսկ եթէ ժուժկալութիւն չունեն, թող ամուսնանան...Ով կին չունի, Տիրոջ մասին է հոգում, թէ ինչպէս հաճելի լինի Տիրոջը: Իսկ ով կին ունի, աշխարհի մասին է հոգում, թէ ինչպէս հաճելի լինի իր կնոջը: ...Եւ ով ամուսնացնում է իր կոյս աղջկան, լաւ է անում. իսկ ով չի ամուսնացնում, առաւել ևս լաւ է անում*» /Կորնթ. 7:8-9, 32-33, 38/:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է ձեռնադրութիւնը

Ձեռնադրութիւնը խորհուրդ է, որում Սուրբ Հոգին ձեռնադրման միջոցով ճիշտ ընտրեալին կարգում է կատարել խորհուրդները եւ հովուել Քրիստոսի հօտը. «*Այսպէս, մարդիկ թող համարեն մեզ իբր սպասաւորներ Քրիստոսի և տնտեսներ Աստուծոյ խորհուրդների*» /Ա Կորնթ. 4:1/: «*Զգո՛յշ եղէք ինքներդ ձեր և ամբողջ հօտի համար, որի վրայ Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝ հովուելու համար Տիրոջ ժողովրդին, որին նա փրկեց իր արիւնով*» /Գործք 20:28/:

Ի՞նչ է նշանակում հովուել Եկեղեցին

Եկեղեցին հովուել՝ նշանակում է ուղղորդել մարդկանց հաւատքի, առաքինութեան եւ բարի գործերի մէջ, կատարել Եկեղեցու Խորհուրդները:

Ինչպէ՞ս է հաստատուել սոյն Խորհուրդը

Այս խորհուրդը նոյնպէս հաստատուել է Տէր Յիսուս Քրիստոսի կողմից, Ով ընտրեց Իրեն աշակերտներ եւ տուեց նրանց քահանայութեան իշխանութիւն (Ղուկ. 24:50-51): Այդ իշխանութեամբ Առաքեալները ձեռնադրում էին սարկաւագների (Գործք 6:5-6), ներում էին մեղքերը համաձայն Տիրոջ խօսքի. «*Եթէ մէկի մեղքերը ներէք, նրանց ներուած կը լինի, եթէ մէկի մեղքերը չներէք, ներուած չի լինի*» /Յովհ. 20:23/, «...*և աղօթելով ձեռքը նրա վրայ դրեց ու նրան բժշկեց*» /Գործք 28:8-9/: Առաքեալներն այդ իշխանութիւնը Սուրբ Հոգու շնորհներով փոխանցեցին իրենց հետեւորդներին, այդ իշխանութիւնն էլ տրւում է այսօր հոգեւորականին ձեռնադրութեան ժամանակ:

Ձեռնադրութիւնը կատարւում է եպիսկոպոսի ձեռքով եւ սրբագործւում է միւռոնի օծութեամբ՝ ի վկայութիւն Սուրբ Հոգու բարեփոխ շնորհների: Ձեռնա-

դըրութեան Խորհուրդը, Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդների նման, չի կրկնւում եւ չի պարզեցւում:

Քանի՞ աստիճան կայ Հայոց Եկեղեցու հոգեւոր նուիրապետութեան մէջ

Գոյութիւն ունի ինն աստիճան.
1. դռնպահ, 2. դպիր, 3. երդմնեցուցիչ 4. ջահանկիր, 5. կիսասարկաւագ, 6. սարկաւագ, 7. քահանայ, 8. Եպիսկոպոս, 9. Կաթողիկոս:

Ո՞րն է իւրաքանչիւր աստիճանի դերը

1. **Դռնպահ** - եպիսկոպոսի հրամանով բացում եւ փակում է եկեղեցու դուռը: Աստիճանի ընծայումը կատարում է եպիսկոպոսը եկեղեցուց դուրս՝ ընծայուածին տալով եկեղեցու դրան բանալիները:
2. **Դպիր** – աստիճանի ընծայումը կատարւում է եկեղեցում՝ դրան մօտ: Դպիրի պարտականութիւնը Մարգարէների եւ Առաքեալների գրքերի ընթերցումն է:
3. **Երդմնեցուցիչ** - ընծայումը կատարւում է տաճարի կեդրոնում: Նրա պարտականութիւնն է մկրտուողներին սատանայից հրաժարեցնելը:
4. **Ջահանկիր** – ընծայումը կատարւում է եկեղեցւոյ բեմի առաջ: Ջահանկիրը պարտաւոր է մոմերն ու ջահերը վառել եկեղեցում:
5. **Կիսասարկաւագ** – ընծայումը կատարւում է եկեղեցւոյ բեմի առաջ: Կիսասարկաւագը պարտաւոր է խունկ ծխել, Սբ. Խորանի ծածկոցները լուանալ, զգեստաւորել քահանային Պատարագի համար եւ այլն:
6. **Սարկաւագ** – սարկաւագ ձեռնադրում են Պատարագի ժամանակ՝ եկեղեցում ծառայող դպիր-սաղմոսերգուների միջից: Սարկաւագը կոչուած է օգնել քահանային ծէսերի ընթացքում եւ նրա հովուական գործունէութեան մէջ, իրաւունք ունի Խորանից Աւետարան կարդալ եւ Գաւաթը վերաբերել Սուրբ Պատարագի ժամանակ:
7. **Քահանայ** – քահանայ ձեռնադրում են չափահաս այրերին, ովքեր չունեն ֆիզիքական եւ մտաւոր թերութիւններ: Քահանան կոչուած է հոգեւոր հովիւ եւ

Եկեղեցու ծխականների խրատատուն լինել, օժտուած է քարոզելու եւ մեղքերի թողութիւն շնորհելու, եկեղեցու Խորհուրդները եւ ծէսերը կատարելու իշխանութեամբ:

Հայոց Եկեղեցում հոգեւորականները լինում են եւ՛ ամուսնացեալ եւ՛ կուսակրօն: Քահանայ դառնալու համար ընտրեալը պէտք է ամուսնացած լինի առնուազն մէկ տարի առաջ եւ որդի ունենայ: Այրիացած հոգեւորականը կարող է դառնալ վանական կամ ամուսնանալ երկրորդ անգամ՝ ըստ Գեւորգ V Կաթողիկոսի (1911-1930) հաստատած կարգի:

Աբեղան (կուսակրօն քահանան) ձեռնադրումից յետոյ, նոյն օրն իսկ կուսակրօնութեան ուխտ է տալիս եւ դնում է վեղար (յատուկ գլխանոց)՝ որպէս աշխարհից հրաժարուելու խորհրդանիշ:

Ամուսնացեալ քահանաները կարող են հասնել աւագ քահանայի կոչման: Քահանայ ձեռնադրուելիս (ամուսնացեալ կամ կուսակրօն), կատարւում է օծում: Ձեռնադրութիւնը կատարւում է Սբ. Պատարագի ընթացքում: Երբ ձեռնադրեալն արդէն զգեստաւորուած է քահանայական հագուստով, եպիսկոպոսը Սբ. Միւռոնով խաչաձեւ օծում է նրա ճակատն ու ձեռքի ափերը եւ յայտարարում է նրա նոր անունը:

8. **Եպիսկոպոս** – Համաձայն եկեղեցու կանոնի՝ եպիսկոպոս ձեռնադրում են վարդապետի գիտական աստիճան ունեցող կուսակրօն հոգեւորականներից: Եպիսկոպոսների գործունէութեան ոլորտը թեմերի խնամակալութիւնն ու ղեկավարումն է, ունեցուածքի տնօրինումը, եկեղեցիներում ծառայելու համար քահանաների, աբեղաների, սարկաւագների եւ դպիրների ձեռնադրումը, ինչպէս նաեւ տաճարների օծումը: Եկեղեցու առաջ յատուկ վաստակի եւ երկար ծառայութեան համար, եպիսկոպոսին կարող է շնորհուել արքեպիսկոպոսի տիտղոս:

Եպիսկոպոսի ձեռնադրութիւնը եւ օծումը կատարում է Սբ. Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Ծայրագոյն Պատրիարքը: Ձեռնադրութեան ժամանակ եպիսկոպոսը ստանում է հովուապետական գաւազան եւ թանկագին քարով մատանի՝ ի նշան իշխանութեան:

9. **Կաթողիկոս** – ընտրում է Ազգային Եկեղեցական Ժողովի կողմից՝ ցմահ, որից յետոյ ձեռնադրում է Եկեղեցու տասներկու եպիսկոպոսների կողմից միաժամանակ եւ բարձրանում է Գահին՝ Սուրբ Միւռոնի հեղման խորհուրդով:

Կաթողիկոսին է յանձնուած Եկեղեցու օրէնսդրական եւ դատական իշխանութիւնը: Նորին Սրբութիւնը ձեռնադրում է եպիսկոպոսներ, հիմնում է նոր թեմեր, հրապարակում է օրէնքներ եւ Կոնդակներ, կատարում է միւռոնօրհնէքի կարգ. նա սրբազան մասունքների եւ Եկեղեցու գանձերի գերագոյն պահապանն է, ազգի հոգեւոր Հայրը եւ Ծայրագոյն Պատրիարքը:

Հայոց Եկեղեցում կա՞ն գիտական աստիճաններ

Հայոց Եկեղեցին իր սպասաւորներին շնորհում է երկու գիտական կոչում՝

1. **Վարդապետի**– համապատասխանում է գիտութիւնների թեկնածուի աստիճանին
2. **Ծայրագոյն վարդապետի**– համապատասխանում է գիտութիւնների դոկտորի աստիճանին:

Գիտական աստիճաններ շնորհուում են միայն կուսակրօն հոգեւորականութեանը: Գիտական աստիճան շնորհելու իրաւունք ունեն միայն ա՛յն եպիսկոպոսները, ովքեր ունեն ծայրագոյն վարդապետի աստիճան: Գիտական աստիճանը շնորհելիս՝ վարդապետին յանձնում են երկգլխանի օձով գաւազան, որը խորհրդանշում է իմաստութիւն եւ սովորեցնելու ու վարդապետելու նրան տրուած իշխանութիւնը: Դրանով իսկ Հայոց Եկեղեցու Վարդապետներին տրում է Աստուծոյ Խօսքը մեկնաբանելու եւ քարոզելու, Եկեղեցու հոգեւոր ուսուցիչներ եւ խրատատուներ լինելու բացառիկ իրաւունքը:

Կրկնու՞մ է արդեօք Ձեռնադրման Խորհուրդը

Ձեռնադրման Խորհուրդը չի կրկնուում: Ուստի այն դէպքերում, երբ նախկինում հոգեւոր աստիճանից զրկուած հոգեւորականը ներում է ստանում եւ կրկին անցնում է ծառայութեան, երկրորդ անգամ չի ձեռնա-

դրրում: Սակայն, ասպիճանից զրկուած ժամանակ նրա կողմից կատարուած Խորհուրդները վաւերական չեն:

Որո՞նք են ձեռնադրման համար անհրաժեշտ պայմանները

Ձեռնադրուողը պէտք է լինի չափահաս, մարմնով առողջ, առանց հոգեկան եւ մտաւոր թերութիւնների: Ունենայ կոչմանը համապատասխան մտաւոր եւ հոգեւոր պատրաստուածութիւն: Արժանի լինի ընդունելու Աստուածային ծառայութիւնը: Ունենայ իր արժանի լինելու մասին ներքին վկայութիւն (Բ Կորնթ. 10-18), ունենայ վկայութիւնը իր հոգեւոր հօր եւ Եկեղեցու (ժողովրդի), պարտաւորուի հետեւել Հայ Եկեղեցու ուղղափառ վարդապետութեանը՝ հրաժարուելով աղանդաւորական շարժումներից եւ հերետիկոսութիւններից: Անհրաժեշտ է նաեւ, որպէսզի ձեռնադրուողը ծնուած լինի բարեպաշտ ծնողներից եւ անարատ (ամուսնական) առագաստից: Ահա թէ ինչ է ասում ձեռնադրութեան եւ քահանայութեան մասին սուրբ Յովհան Մանդակունին. «...*քահանան անարգ չէ, «քանի որ Ամենակալ Տիրոջ պատգամաբերն է»* [տե՛ս Մաղ. 2:7]: *Իսկ եթէ արհամարհում ես նրան, մեղք ես գործում Աստուծոյ հանդէպ, Ով նրան ձեռնադրութիւնը տուեց, և Նրանով է ինքը կատարում [սուրբ Պատարագի] Խորհուրդն ու մկրտութիւնը. թէև նրանք արժանի չեն մերձենալու ահաւոր Խորհուրդին, բայց ժողովրդի փրկութեան համար չի արգելում Սուրբ Հոգու շնորհները: Քանզի, եթէ ժողովրդի փրկութեան համար խօսեց Բաղաամի էշի միջոցով և նրա դիւթութեամբ (տե՛ս Թուեր. 22:28-30), ապա որքան աւելի քահանայի միջոցով է Ինքը ամէն բան անում մեր փրկութեան համար: Եւ դու, եթէ սրբութեամբ հաղորդուես սուրբ Խորհուրդին, քահանայի պղծութիւնը չի վնասի քեզ. ինչպէս որ նրան, ով պղծութեամբ է մօտենում, չի օգնում քահանայի սրբութիւնը: Իսկ եթէ համարում ես, թէ արատաւոր քահանայի պատճառով Հոգու շնորհները չեն իջնում Պատարագի վրայ, և Աստուած նրա միջոցով չի գործում, յիշի՛ր, որ դու քակտում ես Եկեղեցու կարգերը և քո քրիստոնեայ անունը: Եթէ այդպէս է, ապա, ըստ քեզ, ո՛չ Պատարագն է Պատարագ, ո՛չ ձեռնադրութիւնն է ձեռ-*

նադրութիւն, ո՛չ էլ քահանայութեան կարգն է հաստատուն. ահա ուրեմն, սնոտի է քրիստոնեայիդ յոյսը, որովհետև բոլո՛ր ս ենք մեղքերի ենթակայութեան տակ»:

Ինչպէ՞ս ճիշտ ողջունել Հայոց Եկեղեցու հոգեւորականներին

Կաթողիկոսին՝ Օրհնեցէ՛ք, Վեհափա՛ռ Տէր:
Պատրիարքին՝ Ասպուած օգնական, Պատրիա՛րք հայր:
Եպիսկոպոսին՝ Ասպուած օգնական, Սրբազա՛ն հայր:
Վարդապետին եւ Աբեղային՝ Ասպուած օգնական, հա՛յր Սուրբ:
Քահանային՝ Օրհնեա՛, Տէ՛ր հայր:

ԿԱՐԳ ՀԻԻԱՆԴԱՑ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ

Ի՞նչ է նշանակում «Կարգ հիւանդաց եւ վերջին օծում»

Հիւանդաց կարգը եւ վերջին օծումը Խորհուրդ է, որի ժամանակ մարմինը Սբ. Միւռոնով օծելով՝ քահանան հիւանդի համար աղօթքով հայցում է Աստուծոյ շնորհը, որը բուժում է հոգեւոր եւ մարմնաւոր հիւանդութիւնները:

Որտեղի՞ց է սկիզբ առնում այդ Խորհուրդը

Այդ Խորհուրդը սկիզբ է առնում Առաքեալներից, որոնք, Յիսուս Քրիստոսից իշխանութիւն ստանալով, «*...բազում հիւանդների օծում էին իւղով ու նրանց բժշկում*» /Մարկ. 6:13/: Առաքեալներն այս Խորհուրդը փոխանցեցին Եկեղեցու հոգեւորականներին, ինչը երեւում է Յակոբոս Առաքեալի հետեւեալ խօսքից. «*...հիւա՞նդ է ձեզնից մէկը, թող կանչի եկեղեցու երէցներին, և նրանք նրա վրայ թող աղօթք անեն, թող իւղով օծեն նրան Տիրոջ անունով: Եւ հաւատով եղած աղօթքը կը փրկի հիւանդին, ու Տէրը նրան ոտքի կը կանգնեցնի: Եւ եթէ մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներուի*» /Յակ. 5:14-15/:

Ինչպէ՞ս է այդ Խորհուրդը կատարւում Հայոց Եկեղեցում

Ի սկզբանէ մեր Եկեղեցում խորհուրդն այդպէս էլ կատարւում էր, սակայն հետագայում Վերջին Օծումը դադարեցրին մի շատ պարզ պատճառով. քանի որ Հայաստանում մշտական պատերազմների եւ տարագրումների պատճառով մարդը չգիտէր՝ որտեղ, երբ եւ ինչպէս կը հիւանդանար ու կը մահանար, ապա որպէսզի հաւատացեալը չզրկուէր Աստուծոյ շնորհից, մեր Եկեղեցին Վերջին Օծումը միացրեց Առաջին Օծմանը, այսինքն՝ Դրոշմի Խորհրդին: Երբ մկրտութիւնից յետոյ դրոշմում են մեր աչքերը, ականջները,

քիթը, բերանը, ձեռքերն ու ոտքերը, այդ Օծումը վերաբերւում է հենց այս Խորհուրդին:

Աչքերին. «*Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անունով թող լուսաւորի աչքերդ, որպէսզի երբեք մահ չտեսնես*»:

Ականջներին. «*Այս Սուրբ Օծումը թող բացի ականջներդ, որպէսզի Աստուծոյ պատուէրները լսես*»:

Քթին (ռունգերին). «*Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անուամբ թող յաւիտենական կեանքի անուշ բոյրը տայ քեզ*»:

Բերնին. «*Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անուամբ բերնիդ ու շրթունքներիդ վրայ դրուած ամուր դուռ ու պահապան թող լինի*»:

Ձեռքերին. «*Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անուամբ թող բարեգործութեան նպաստի՝ ամէն տեսակ բարի գործերի և առաքինի կեանքի*»:

Ոտքերին. «*Այս աստուածային կնիքը դէպի յաւիտենական կեանք թող ուղղի քայլերդ, որպէսզի երբէք չսասանուես*»:

Նշանակում է՝ Հայոց Եկեղեցում հիւանդին չե՞ն օծում իւղով

Հիւանդաց կարգի կատարման ժամանակ Հայոց Եկեղեցին առաւելաբար շեշտը դնում է հաւատի եւ մեղքերի խոստովանութեան վրայ եւ ոչ թէ իւղով օծման, քանի որ Դրոշմի Խորհրդի ժամանակ ստացած Աստուծոյ շնորհն ուղեկցում է հաւատացեալին իր կեանքի բոլոր օրերում: Եւ հետեւաբար, համաձայն Սարգիս Շնորհալու՝ «*Ոչ թէ իւղն է հիւանդին առողջութիւն տալիս, այլ՝ Տիրոջ անունը*»:

Այդ դէպքում ինչպէ՞ս է Հայոց Եկեղեցում կատարւում Հիւանդաց Կարգը

Հիմնուելով վերը նշուածի վրայ՝ Եկեղեցին, երբ հոգեւորականին ուղարկում է ծխականներից ոեւէ մէկի վրայ սոյն Խորհուրդը կատարելու, պատուիրում է նրան ոչ թէ հրաշք գործել, այլ մեղքերին թողութիւն շնորհել՝ հաւատը քննելու, խոստովանութեան եւ քաջալերող խրատների միջոցով: Հոգեւորականը հենց այս դերում է հանդէս գալիս Խորհուրդի ժամանակ: Խօսքով մխիթարելով, խոստովանութեան կատարման միջոցով, գործած մեղքերը քննելով, բարի խրատներով, վերջիվերջոյ՝ Աստուծոյ հրամանով մեղքերին թողութիւն տալով եւ հիւանդին հոգեւոր հանգստութեան բերելով՝ նա նախադրեալներ է ստեղծում, որ հիւանդը վեր կանգնի ֆիզիքական տանջանքներից՝ աղօթքի մէջ Աստուծոյ ողորմածութեանը յուսալով: Մենք վստահ ենք, որ անկեղծ հաւատը չի մնում առանց պարգեւի. «*Այն ժամանակ դիպաւ նրանց աչքերին և ասաց. «Ըստ ձեր հաւատի թող լինի ձեզ: Եւ բացուեցին նրանց աչքերը*» /Մատթ. 9:29-30/: Մարդուն հոգեւոր թուլութեան եւ տկարութեան այդ վիճակից դուրս բերելու համար հոգեւորականը նախեւառաջ նրան ապաշխարութեան է բերում, որպէսզի հիւանդը հրաժարուի մեղքերից, որոնք պատճառ են դարձել ինչպէս Աստծուց հեռանալու, այնպէս էլ հիւանդութեան: Երկրորդ հերթին՝ Աւետարանական օրինակներով (հիւանդի գլխա-վերեւում Սբ. Աւետարանի ընթերցմամբ) ամրապնդում է հիւանդ մարդու մէջ հաւատը, յոյսը եւ սէրն առ Աստուած: Երրորդ՝ ձեռքերը հիւանդի գլխին դնելով՝ աղօթում է նրա համար՝ խնդրելով ապաքինում:

Ի՞նչ պէտք է իմանայ հաւատացեալը այս Խորհուրդի հետ կապուած

Այս Խորհուրդի առնչութեամբ իւրաքանչիւր քրիստոնեայ պէտք է մտապահի հետեւեալ կարեւոր հանգամանքները. ձեզնից ինչ-որ մէկը հիւա՞նդ է՝ թող կանչի հոգեւորականին, որպէսզի վերջինս աղօթի նրա վրայ (տե՛ս Յակ. 5:14): Եկեղեցու այս Խորհուրդը կատարւում

է ոչ միայն նրանց համար, ովքեր մահամերձ են, այլ իւրաքանչիւր քրիստոնեայի համար, ով իր ֆիզիքական տառապանքի եւ հիւանդութեան մէջ սպասում է հոգեւոր ապաքինման եւ մարմնական առողջութեան: Խորհուրդի կատարման հիմքը հիւանդի զղջումն է եւ հաւատը: Քահանան Խորհուրդը կատարում է աղօթքով, Աւետարանի ընթերցանութեամբ, ինչպէս նաեւ սուրբ Խաչը, Աւետարանը եւ ձեռքերը (որոնք օծուած են Սբ. Միւռոնով եւ Սբ. Հոգու շնորհն ունեն) հիւանդի գլխին դնելով: Բուժիչ են Աստուածային զօրութիւնն ու ուժը, իսկ ծէսի մնացեալ ողջ սրբազնագործութիւնը կատարւում է ա՛յն նպատակով, որ այդ ուժը դառնայ երեւացող, ակնյայտ. «*Փարատեա զցաւս և բժշկեա զհիւանդութիւնս ի ժողովրդենէ քումմէ, Տէր Աստուած մեր, շնորհեա ամենեցուն զկատարեալ առողջութիւն, նշանաւ ամենայաղթ Խաչիւ Քով, որով բարձեր զտկարութիւն ազգի մարդկան, դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ: Ամէն*»:

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԸ
ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

Ինչպէ՞ս բարի գործերը տարբերել չար գործերից

Բարի եւ չար գործերը ճանաչելու միջոցներն են՝ Աստուծոյ ներքին, բարոյական օրէնքը՝ խղճի վկայութիւնը, եւ Աստուծոյ արտաքին օրէնքը՝ Աստուծոյ պատուիրանները:

Ի՞նչ է ասւում Սբ. Գրքում Աստուծոյ ներքին Օրէնքի մասին

Սբ. Գրքում ներքին Օրէնքի մասին ասւում է. «*Նրանք ցոյց են տալիս, թէ Աստուծոյ օրէնքի պահանջները գրուած են իրենց սրտերում՝ իրենց խղճի վկայութեամբ և իրենց խորհուրդների մէջ միմեանց մեղադրելով կամ արդարացնելով*» /Հռոմ. 2:15/:

Ինչու՞ է տրուել արտաքին Օրէնքը, եթէ մարդկանց մէջ կայ ներքինը

Արտաքին Օրէնքը տրուել է, որովհետեւ մարդիկ չէին լսում ներքին օրէնքին եւ, վարելով մարմնական եւ մեղաւոր կեանք, իրենց մէջ խլացրել էին հոգեւոր օրէնքի ձայնը: Այդ պատճառով նրանց տրուել է դրա արտաքին յիշեցումը՝ պատուիրանների տեսքով: Արտաքին Օրէնքը տրուել է «*յանցանքների պատճառով*» /Գաղ. 3:19/:

Ինչպէ՞ս է տրուել Աստուծոյ արտաքին Օրէնքը մարդկանց

Երբ Աբրահամից սերած հրեայ ժողովուրդը հրաշքով ազատուեց եգիպտական գերութիւնից, այն ժամանակ՝ դէպի նրան խոստացուած երկիր ճանապարհին, անապատում՝ Սինա լերան վրայ, Աստուած Իր ներկայութիւնը յայտնեց կրակի եւ ամպի մէջ եւ տուեց

Օրէնքը՝ իսրայէլացիների առանջորդ Մովսէս Մարգարէի միջոցով:

Որո՞նք են Աստուծոյ Օրէնքի գլխաւոր եւ համընդհանուր Պատուիրանները

Աստուծոյ Օրէնքի գլխաւոր եւ համընդհանուր Պատուիրանները հետեւեալ տասն են, որոնք գրուեցին երկու քարէտախտակների վրայ:

1. Ե՛ս եմ քո Տէր Աստուածը, ինձնից բացի այլ աստուածներ պիտի չլինեն քեզ համար:
2. Քեզ կուռքեր մի՛ կերտիր վերեւում՝ երկնքում, ներքեւում՝ երկրի վրայ, եւ երկրի խորքերի ջրերի մէջ եղած որեւէ բանի նմանութեամբ, մի՛ երկրպագիր նրանց եւ մի՛ պաշտիր:
3. Քո Տէր Աստուծոյ անունը զուր տեղը մի՛ արտասանիր:
4. Յիշի՛ր հանգստի օրը, որպէսզի սուրբ պահես այն: Վեց օրը աշխատի՛ր, կատարի՛ր քո բոլոր գործերը, իսկ եօթներորդը հանգստի՝ Տիրոջ օրը տուր քո Աստծուն:
5. Պատուի՛ր քո հօրն ու քո մօրը, որպէսզի բարիք գտնես եւ երկար ապրես երկրի վրայ:
6. Մի՛ սպանիր:
7. Մի՛ շնացիր:
8. Մի՛ գողացիր:
9. Քո մերձաւորի դէմ սուտ վկայութիւն մի՛ տուր:
10. Աչք մի՛ ունեցիր քո մերձաւորի տան, քո մերձաւորի կնոջ վրայ, ո՛չ նրա ագարակի, ո՛չ նրա ծառայի, ո՛չ նրա աղախնի, ո՛չ նրա եզան, ո՛չ նրա աւանակի, ո՛չ նրա անասունի վրայ, ո՛չ այն ամէնի վրայ, ինչ քո մերձաւորինն է /տե՛ս Ելք 20:1-17/:

Արժէ՞, որ մենք հետեւենք այս Պատուիրաններին, եթէ դրանք տրուել են ուրիշ ժողովրդի

Այս Պատուիրանները տրուել են իսրայէլացի ժողովրդին, սակայն հարկ է, որ մենք նոյնպէս հետեւենք դրանց, քանի որ, ըստ էութեան, դրանք նոյն օրէնքներն են, որ, Պօղոս Առաքեալի խօսքով, գրուած են բոլոր մարդկանց սրտերում, որպէսզի բոլորը հետեւեն դրանց:

Արդեո՞ք Քրիստոս ուսուցանում էր հետեւել Տասը Պատուիրաններին

Տէր Յիսուս Քրիոստոս խրատում էր պահպանել պատուիրանները՝ յաւիտենական կեանք ունենալու համար, ուսուցանում էր հասկանալ եւ հետեւել դրանց աւելի կատարելապէս, քան դրանք հասկացուում էին մինչեւ Իր գալուստը (տե՛ս Մատթ. 19:17 եւ գլուխ 5):

Ի՞նչ է նշանակում Պատուիրանները երկու քարէտախտակի վրայ բաժանելը

Պատուիրանները երկու քարէտախտակի վրայ բաժանելը նշանակում է, որ դրանցում պարփակուած է երկու տեսակի սէր, այսինքն՝ սէրն առ Աստուած եւ սէրն առ մերձաւորը, ուստի եւ պատուիրւում է երկու տեսակի պարտաւորութիւն:

Առաջին Պատուիրանի մասին

Ի՞նչ է նշանակում «*Ես եմ քո Տէր Աստուածը*» խօսքը

«*Ես եմ քո Տէր Աստուածը*» խօսքով Աստուած Ինքն Իրեն վկայում է մարդուն եւ, հետեւաբար, պատուիրում է ճանաչել Տիրոջը՝ որպէս Աստուծոյ եւ հաւատալ Նրան. «*...քանի որ նա, ով մօտենում է Աստծուն, պէտք է հաւատայ*» /Եբր. 11:6/: Այսպիսով՝ Մի է Տէր Աստուած՝ Արարիչն ամենայն գոյի:

Ինչպէ՞ս մենք պէտք է ճանաչենք Աստծուն

Աստծուն ճանաչելու պատուիրանից կարելի է բխեցնել յատուկ պարտականութիւններ. սովորել Աստուածճանաչողութիւն՝ որպէս գիտելիքներից ամենակարեւորը, Եկեղեցում՝ Աստուծոյ եւ Նրա գործերի մասին ջանասիրաբար խրատներ լսել, կամ տանը՝ Նրա մասին բարեպաշտ զրոյցներ լսել, եւ Աստուածճանաչողութիւն ուսուցանող գրքեր կարդալ՝ առաջին հերթին Սուրբ Գիրքը եւ ապա՝ Հայրերի Գրուածքները:

Ի՞նչ է պատուիրում *«Ինձնից բացի այլ աստուածներ պիտի չլինեն քեզ համար»* բառերով

«Ինձնից բացի այլ աստուածներ պիտի չլինեն քեզ համար» բառերով պատուիրում է դիմել եւ ձգտել միայն Մի Ճշմարիտ Աստծուն: Յուսալ միայն Նրան, սիրել միայն Նրան, ենթարկուել միայն Նրան եւ հետեւել Նրա Պատուիրաններին, պաշտել եւ փառաբանել միայն Նրան՝ որպէս Մի եւ Ճշմարիտ Աստծուն:

Երկրորդ Պատուիրանի մասին

Ի՞նչ է արգելում պաշտել Երկրորդ Պատուիրանը

Երկրորդ Պատուիրանն արգելում է պաշտել ինչ-որ բան կամ ինչ-որ մէկին ինչպէս, որ Աստծուն. 1. անմարմին էակներին՝ Հրեշտակներին թէ դեւերին, 2. կուռքերին՝ մարդկանց ձեռքով արարուածներին, 3. այն բաների պատկերներին, որոնք վերեւում են՝ երկնքում, որոնք ներքեւում են՝ երկրի վրայ եւ որոնք երկրի խորքերում են՝ ջրերի մէջ:

Արդեո՞ք Սրբապատկերներ պաշտելը հակասում է Երկրորդ Պատուիրանին

Ամենեւին չի հակասում, քանի որ Պատկերները, որոնք մենք պաշտում ենք, ո՛չ թէ դեւերի կամ կուռքերի պատկերներ են, այլ պատկերները Քրիստոսի, կա՛մ Աստուածածնի, կա՛մ Հրեշտակների, կա՛մ էլ Սրբերի: Եւ այդ Պատկերները կամ Խաչը հենց Ինքը՝ Աստուած չեն, այսինքն՝ մենք չենք պաշտում դրանք՝ իբրեւ Աստուծոյ, այլ պատւում եւ երկրպագում ենք նրան, ով այնտեղ պատկերուած է, քանզի այլ է երկրպագութիւնը Աստծուն եւ այլ՝ Հրեշտակներին ու Սրբերին: Հարկ է իմանալ, որ մենք պաշտում ենք ա՛յն պատկերներն ու խաչերը, որոնք օրհնուած եւ օծուած են Սբ. Միւռոնով:

Ինչպէ՞ս մարդը, լինելով քրիստոնեայ, կարող է ընկնել կռապաշտութեան մէջ

Իւրաքանչիւր քրիստոնեայ, որ սիրում է մեղքը, իր համար պատկեր է սարքում եւ երկրպագում այն: Զորօրինակ՝ հպարտը պաշտում է այն, ինչ վերեւում է, քանզի սիրում է միշտ ինքն իրեն վեր դասել մերձաւորից: Ագահը պաշտում է այն, ինչ երկրի վրայ է. հեշտասէրը՝ այն, ինչ ջրի մէջ է: Նա, ով միշտ մտածում է երկրայինի մասին, պաշտում է սողուններին: Գազանային բնութիւն ունեցողները պաշտում են գազաններին, որկրամոլը՝ իր որովայնին, կնամոլը՝ կանանց եւ այլն: Ինչպէս նաեւ նրանք, ովքեր թողնում են աղօթքը եւ հոգում միայն անասունների, տնտեսութեան եւ այլնի մասին, նոյնպէս կռապաշտ են, եւ այդ պատճառով Աստուած վերցնում է նրանցից ամէն ինչ եւ փոխարէնը տալիս է աղքատութիւն: Աւելին, եթէ մարդը ինչ-որ մեղքի մէջ է, ապա այն Աստուածային պատկերը, որ նա ունէր, փոխւում է եւ դառնում կենդանական պատկեր. «*Եթէ դու վաւաշոտ ես և կնամոլ, ապա քո մէջ ձիու և աւանակի պատկեր է, և ոչ թէ՝ Աստուածային, եթէ հպարտ ես՝ առիւծի, եթէ քինոտ ես՝ ուղտի, եթէ որկրամոլ ես՝ խոզի, եթէ խարդախ ես և ստահօս՝ օձի և աղուէսի, եթէ գող ես՝ մկան, և այլն*»:

Երրորդ Պատուիրանի մասին

Ե՞րբ է Աստուծոյ անունը զուր տեղն արտասանւում

Աստուծոյ անունը զուր տեղն է արտասանւում, երբ արտասանւում է անօգուտ եւ ունայն զրոյցների մէջ, եւ առաւել եւս, երբ արտասանւում է ստութեամբ կամ երկիւղածութեան խախտմամբ, այսինքն, երբ մարդ երդուելով, հաստատում է այն, ինչ չկայ:

Կարելի՞ է արդեօք երդուել

«*Իմ անունով սուտ երդում մի՛ տուէք և ձեր Տէր Աստուծոյ անունը մի՛ պղծէք*» /Ղեւտ 19:12/: Այդ երդումը լինում է երկու տեսակի՝ պատճառական եւ առանց պատճառի:

Պատճառականն այն է, երբ մէկը չգիտի եւ չի տեսել, սակայն, Աստուծոյ անունով սուտ երդում է տալիս, ինչպէս նաեւ, երբ իր չարութիւնը ծածկում է Աստուծոյ անունով: Առանց պատճառի երդումը, երբ չեն խնդրում երդուել, այլ պարզապէս սովորութիւն է դարձել երդուելը Աստուծոյ անունով ամէն սպի համար՝ առուծախի ժամանակ եւ այլն: Այդպիսիներին Սբ. Տաթեւացին համեմատում է կռապաշտների հետ, ովքեր ծառին ու քարերին անուանում էին Աստուած, ինչը սուտ է: Այդ պատճառով էլ Հին Կտակարանում թոյլ էր տրուած Աստուծոյ անունով երդուել, որպէսզի մարդուն հեռացնէին կուռքերից, իսկ Նոր Կտակարանում Տէրն արգելում է երդուել (Մատթ. 5:34-36), քանզի երդուելու սովոր մարդը շուտով կը սկսէր նաեւ սուտ երդում տալ: Այնուհետեւ՝ նա, ով սուտ երդում է տալիս Աստուծոյ անունով, արհամարհում է Նրան, քանզի գիտի, որ ստում է: Այսպիսով՝ քրիստոնէաներին պատուիրուած է չերդուել. «*Այլ ձեր խօսքը լինի՝ այո՝ այո, ոչը՝ ոչ, որովհետև դրանից աւելին չարից է*» /Մատթ. 5:37/: Տէրը կարծես դրանով ուզում է ասել, որ պէտք է ցոյց տալ ճշմարիտ հաւատք եւ կեանք, որպէսզի քրիստոնէաները կարիք չունենան երդուելու: Իսկ երդմնազանցութեան մասին Սբ. Տաթեւացին ասում է. «*...ուրացումը հաւատից և երդմնազանցութիւնը՝ երկուսն էլ միանման մեղքեր են, քանզի ուրանում են Աստուծոյ անունից*»:

Չորրորդ Պատուիրանի մասին

Ինչու՞ հենց եօթներորդ օրն է պատուիրւում նուիրել Աստծուն

Եօթներորդ եւ ոչ շաբաթուայ որևէ այլ օր հարկ է նուիրել Աստծուն, քանզի Աստուած վեց օրում արարեց աշխարհը, իսկ եօթներորդ օրը հանգստացաւ արարչագործութեան գործերից:

Ինչպէ՞ս է Եկեղեցում փօնւում հինկտակարանեան հանգստի օրը՝ շաբաթը

Հայոց Եկեղեցում շաբաթը՝ որպէս օրացուցային փօն, չի նշւում: Սակայն շաբաթ օրը Հայոց Եկեղեցում փօնում

են Սրբերի յիշատակը, ովքեր արդէն Աստուծոյ հանգիստն են մտել. «*Արդ, ուրեմն, Աստուծոյ ժողովրդի համար դեռ մնում է մի ուրիշ հանգստի օր, որովհետև, ով մտնում է նրա հանգստի մէջ, նա հանգստանում է իր գործերից, ինչպէս Աստուած էլ հանգստացաւ իր գործերից*» /Եբր. 4:9-10/:

Ինչպէ՞ս է եկեղեցում պահւում Չորրորդ Պատուիրանը

Քրիստոնէական Եկեղեցում տօնւում է եօթներորդ օրը՝ ամէն վեց օրից յետոյ, ուղղակի ոչ թէ եօթ օրերից վերջին կամ շաբաթ օրը, այլ ամէն եօթնեակի առաջին օրը կամ կիրակին:

Ի՞նչ ժամանակից ի վեր է Կիրակի Օրը տօնւում

Կիրակի Օրը տօնւում է Քրիստոսի Յարութիւնից ի վեր:

Ի՞նչ է ասւում Սուրբ Գրքում Կիրակի Օրը տօնելու մասին

«Գործք Առաքելոց» գրքում յիշատակւում է շաբաթուայ առաջին կամ կիրակի օրը աշակերտների, այսինքն՝ քրիստոնէաների հաւաքուելու մասին՝ հացը կտրելու, այսինքն՝ Հաղորդութեան Խորհուրդն իրականացնելու համար (տե՛ս Գործք 20:7): Յովհաննէս Աւետարանչի Յայտնութիւնում նոյնպէս նշւում է կիրակի օրը (Յայտն. 1:10):

Հինկտակարանեան ժամանակներում «շաբաթ» անուան տակ ենթադրո՞ւմ էին նաեւ այլ օրեր

Եօթներորդ կամ շաբաթ օրուայ անուան տակ հինկտակարանեան ժամանակներում ենթադրւում էին նաեւ այլ օրեր, որոնք հաստատուած էին տօնելու կամ պահք պահելու համար, ինչպէս օրինակ՝ Զատկի տօնը, մաքրման տօնը: Այդպէս էլ նորկտակարանեան ժամանակներում կիրակի օրուանից բացի հարկ է պահել հաստատուած այլ տօներ եւ պահքեր՝ ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ Ամենասուրբ Աստուածածնի եւ այլ սրբերի:

Ի՞նչ սկզբունքով է կազմում Հայոց Եկեղեցու օրացոյցը

Բոլոր Քրիստոնէական Եկեղեցիները փօն օրերը նշում են՝ հիմնուելով արեւային ամիսների ամսաթուերի վրայ, այսինքն՝ փօների մեծ մասն ունեն որոշակի ամսաթիւ, որ կախուած չէ նրանից, թէ շաբաթուայ ո՛ր օրուայ վրայ են ընկնում: Օրինակ՝ Ամենասուրբ Աստուածածնի Վերափոխումը միշտ փօնւում է օգոստոսի 15-ին, Տիրոջ Կենարար Խաչի Վերացման (Խաչվերաց) օրը՝ սեպտեմբերի 14-ին եւ այլն: Միայն Զատիկը եւ Տէրունական այն փօները, որոնք կապուած են Զատկի հետ (Համբարձում, Հոգեգալուստ եւ այլն) փօնւում են շաբաթուայ որոշակի օրերին:

Հայ Առաքելական Եկեղեցին ունի յատուկ օրացոյց: Դրանում փօների մեծ մասը շարժական են, այսինքն՝ փօնւում են շաբաթուայ որոշակի օրերին, եւ այդ պատճառով դրանք փօնելու օրերը փոփոխւում են տարեցտարի: Անշարժ փօներ են միայն հետեւեալները.

Սուրբ Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն – 6/19(19-ը՝ հին տոմարով) յունուարի, Տիրոջ Թլփատութիւն -13/26 յունուարի, Տեառնընդառաջ - 14/27 փետրուարի, Աւետումն - 7/20 ապրիլի, Սբ. Աստուածածնի Ծնունդ - 8/21 սեպտեմբերի, Սբ. Աստուածածնի ընծայումն տաճարին - 21 նոյեմբերի/4 դեկտեմբերի, Յղութիւն Սբ. Աստուածածնի - 9/22 դեկտեմբերի:

Հայոց Եկեղեցու օրացուցային շրջանի հիմքը Զատիկն է՝ շարժական փօն, որը տարբեր տարիներին կարող է փօնուել տարբեր օրերին:

Բացի Զատկից գոյութիւն ունեն եւս 4 փօներ, որոնք հաշուարկման կէտ են հանդիսանում մնացած փօների ամսաթուերը հաստատելու համար:

Դրանք են՝

- Վերափոխումն Սուրբ Աստուածածնի – օգոստոսի 15/28-ի ամենամօտ կիրակին
- Վերացումն Տիրոջ Կենարար Խաչի (Խաչվերաց) – սեպտեմբեր 14/27-ի ամենամօտ կիրակին
- Բարեկենդան Յիսնակաց Պահոց Սուրբ Ծնունդի – նոյեմբերի 15/28-ից մինչեւ նոյեմբերի 21/ դեկտեմբերի 4-ի հատուածում ընկած կիրակին

- Աստուածայայտնութիւն (Քրիստոսի Սուրբ Ծնունդը եւ Մկրտութիւնը) – յունուարի 6/19:

Այս տօների ամսաթուերին համապատասխան հաստատւում են նաեւ Սրբերի յիշատակման օրերը եւ պահքերը: Հաշուարկի միաւորը եօթնօրեայ (շաբաթական) շրջանն է: Օրինակ՝ Զատկի տօնից 10 շաբաթ առաջ սկսում է Առաջաւորաց պահքը, որը տեւում է մէկ շաբաթ: Յաջորդող երկու շաբաթուայ ընթացքում տօնւում են Սրբերի յիշատակման օրեր, որից յետոյ սկսւում է եօթշաբաթեայ Մեծ Պահքը, երբ Սրբերի յիշատակութիւնը նշւում է միայն շաբաթ օրերին: Զատկից յետոյ 7 շաբաթուայ ընթացքում՝ մինչեւ Հոգեգալուստը, շարունակւում է Քրիստոսի Յարութեան տօնակատարութիւնը, որի ընթացքում պահքեր եւ Սրբերի յիշատակութեան օրեր չկան: Այնուհետեւ հետեւում է Հոգեգալուստը տօնելու շաբաթը: Յաջորդ 5 շաբաթները յատկացուած են Սրբերին նուիրուած տօներին, որից յետոյ սկսւում է Պայծառակերպութեան եօթնօրեայ պահքը: Առաջաւորաց պահքից մինչեւ Պայծառակերպութիւնն ընկած այդ 24 շաբաթները (171 օր) կազմում են զատկական շրջանը, որը կրկնւում է ամէն տարի: Բոլոր կիրակիները տրամադրուած են Տիրոջ տօներին կամ Քրիստոսի Յարութիւնը յիշելու օրեր են:

Բոլոր չորեքշաբթիները եւ ուրբաթները պահոց օրեր են. չորեքշաբթի օրը պահքը պահւում է ի յիշատակ Փրկչի չարչարանքների, իսկ ուրբաթ օրը՝ ի յիշատակ Յիսուս Քրիստոսի մահուան: Զատկից մինչեւ Հոգեգալուստ ընկած եօթ շաբաթների, ինչպէս նաեւ միւս Տէրունական շաբաթների ընթացքում (9 օր՝ Աստուածայայտնութեան, 7 օր՝ Սբ. Երրորդութեան, 3 օր՝ Պայծառակերպութեան, 9 օր՝ Վերափոխման եւ այլն) չորեքշաբթիները եւ ուրբաթները պահոց օրեր չեն: Եթէ Տէրունական տօնը եւ պահքը համընկնում են, նշւում է տօնը:

Սրբերի օրերը նշւում են երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը, եթէ այդ օրերը չեն համընկնում Տէրունական տօնի կամ պահքի հետ: Տարուայ մէջ բոլոր շաբաթ օրերը նուիրուած են Սրբե-

ին. նոյնիսկ Մեծ եւ միւս պահքերի ժամանակ շաբաթ օրերը Սրբերի յիշատակման օրեր են:

Այսպիսով՝ Հայոց եկեղեցու օրացոյցի բոլոր օրերը բաժանւում են երեք խմբի՝ 1. Տէրունական տօներ՝ 136 օր, 2. Սրբոց յիշատակման օրեր՝ 112 օր, 3. պահոց օրեր՝ 117 օր:

Ի՞նչ է նշանակում «Տէրունական տօներ»

Տէրունական են կոչւում այն տօները, որոնք նուիրուած են Տէր Յիսուս Քրիստոսի երկրային կեանքի իրադարձութիւններին, Ամենասուրբ Աստուածածնի մասին յիշողութիւններին, ինչպէս նաեւ այն տօները, որոնք նուիրուած են Սբ. Խաչին եւ Սբ. Եկեղեցուն:

Պաշտո՞ւմ են արդեօք Հայոց Եկեղեցում հինկտակարանեան Սրբերին

Այո, պաշտում են: Նշենք, որ մեր Եկեղեցում կայ մօտ 400 Սուրբ, որոնց կարելի է բաժանել երեք խմբի.
1. Աստուածաշնչեան Սրբեր՝ Երկնաւոր Զօրութիւններ, Նախահայրեր, Մարգարէներ, Առաքեալներ, Աւետարանիչներ, Իւղաբեր Կանայք եւ այլք,
2. համաքրիստոնէական Սրբեր՝ Նահատակներ, Ճգնաւորներ, Հայրապետներ, Եկեղեցու Հայրեր եւ Վարդապետներ (հիմնականում՝ I-V դդ.),
3. հայոց հողում պայծառացած Սրբեր:

Ի՞նչ Պահքեր են պահում Հայոց Եկեղեցում

Դրանք են՝ Մեծ Պահքը, Շաբաթական Պահքերը, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերի Պահքերը:

Հինգերորդ Պատուիրանի մասին

Ինչպէ՞ս է Սուրբ Գիրքն ուսուցանում վերաբերուել ծնողներին

Հինգերորդ Պատուիրանը յատուկ պարտաւորութիւններ է կարգում ծնողների հանդէպ, սովորեցնում է

նրանց պատուել. յարգանքով վերաբերուել նրանց, հնազանդ լինել նրանց, կերակրել եւ խնամել նրանց հիւանդութեան ժամանակ եւ ծերութեան օրերին, նրանց մահուանից յետոյ, ինչպէս եւ կեանքի օրերին, աղօթել նրանց հոգիների փրկութեան համար եւ ճշտօրէն կատարել նրանց կտակները, որոնք հակառակ չեն Աստուծոյ եւ քաղաքացիական օրէնքներին:

Ինչու՞ է հարկ ծնողներին յարգանքով վերաբերուել

Հարկ է պատուել ծնողներին եւ լսել նրանց, քանի որ նրանց միջոցով մենք սովորում ենք սիրել Աստծուն ու մարդկանց, իսկ նա, ով չի սիրում իր ծնողներին, «*երախտապարտ չէ Աստծուն և ատում է մարդուն*»: Առանց ծնողների Աստուած չի արարում հոգին, եւ մարմինը չի ձեւաւորում որովայնում, այդ պատճառով էլ ծնողները ինչ-որ առումով աստուածներ եւ արարիչներ են: Ինչպէս Ճշմարիտն Աստուած ստեղծում է անտեսանելի հոգին, այնպէս էլ ծնողները ստեղծում են տեսանելի մարմինը:

Մարդը պէտք է պատուի իր ծնողներին, որպէսզի նրա երեխաներն էլ յետոյ պատուեն իրեն, քանզի ինչպէս վարուես ծնողներիդ հետ, այնպէս էլ քո զաւակները կը վարուեն քեզ հետ: Ծնողներին պէտք է պատրաստել, «*...որպէսզի երկար ապրես բարեբեր երկրի վրայ*» /Ելք 20:12/:

Հարկ է պատուել ծնողներին՝ «*արժանանալու վերջին օրհնութիւններին*», ինչպէս օրինակ Աբրահամն օրհնեց Իսահակին, Իսահակը՝ Յակոբին, իսկ հակառակ դէպքում անէծք կը սպանան, ինչպէս օրինակ՝ Քամը: Իսկ եթէ չեն կարողանում սովորել Սբ. Գրքից, ապա թող օրինակ վերցնեն արագիլից, որը կերակրում է իր ծեր ծնողներին: Իսկ ամենակարեւորն այն է, որ երեխաները պէտք է միշտ յիշեն, որ ծնողներից աւելի բարիք կամեցողներ չկան, քանզի նրանք ծնել են մեզ, ուստի եւ աւելի շատ բարեացակամ են, քան ուրիշները:

Որքա՞ն ծանր է ծնողներին չպատուելու մեղքը

Որքան հեշտ եւ բնական է սիրել ու պատուելը ծնողներին, ում մենք պարտական ենք մեր կեանքի համար,

այնքան էլ ծանր է նրանց չպատուելու մեղքը: Այդ պատճառով, հօրը կամ մօրը չարախօսողին, Մովսիսական օրէնքով մահապատիժ էր հասնում (տե՛ս Ելք 21.17):

Ի՞նչ է սպասում նրանց, ովքեր հայհոյում են ծնողներին

«*Այն աչքը, որ արհամարհում է հօրը և անարգում է մօր ծերութիւնը, ձորերի ագռաւները պիտի հանեն, և արծիւների ձագերը պիտի յօշոտեն այն*» /Առակ. 30:17/: , քանզի նա, ով հայհոյում է ծնողներին, ովքեր մեր գոյութեան երկրորդ պատճառն են, հայհոյում է մեր սկզբնապատճառին՝ Աստծուն:

Հնարաւո՞ր է փոխհատուցել ծնողներին՝ իրենց խնամքի դիմաց

Անհնար է ծնողներին փոխհատուցել մեր հանդէպ իրենց խնամքի դիմաց, եւ եթէ նոյնիսկ փոխհատուցենք, ապա ծնողներին ծնել հնարաւոր չէ: Այդուհանդերձ՝ երեխաները պէտք է.
1. ծնողներին հնազանդ լինեն եւ լսեն նրանց խրատները,
2. խնամեն նրանց մինչեւ մահուան օրը,
3. անփոփոխ եւ սրբութեամբ պահեն ծնողների ժառանգութիւնը, այսինքն՝ այն, ինչ նրանք ցանկանում էին,
4. նրանց մահուան օրը փառաւորեն եւ բարի յիշողութիւն լինեն նրանց հոգիների համար, քանի դեռ իրենք (երեխաները) կենդանի են:

Այսպէս վարուելով՝ նրանց կը փոխհատուցենք գոնէ նուազագոյնը այն ամէնի, ինչ պարտական ենք ծնողներին:

Ի՞նչ են պարտական ծնողներն իրենց երեխաներին

Մարդու հոգին նման է մաքուր մագաղաթի, եւ ինչ ամրագրես նրա վրայ, այն էլ կը մնայ, ինչ սովորեցնես մարդուն մանուկ ժամանակ, այն էլ կը սովորի՝ լինի դա չարը կամ թէ բարին, տարբեր արհեստներ ու մասնագիտութիւններ, լեզուներ, գիտելիք եւ այլն: Այդ

պատճառով ծնողները պարտաւոր են իրենց երեխաներին հետեւեալը.
1. պատրաստել նրանց մարմնի կարիքների համար ամէն անհրաժեշտը՝ սնունդ, հագուստ եւ կացարան, դաստիարակութիւն,
2. ամուսնացնել նրանց՝ մարդկութեան բազմացման եւ օրինեալ ծնունդների համար,
3. սովորեցնել ինչ-որ մի արհեստ, որպէսզի ապագայում կարողանան իրենց գլուխը պահել,
4. իսկ ամենակարեւորը՝ առաջնորդել հաւատի եւ Աստուածճանաչողութեան մէջ, սովորեցնել ողորմածութիւն եւ բարի գործեր կատարել, իսկ սա աւելի լաւ է, քան արծաթն ու ոսկին: «*Հայրե՛ր, մի՛ զայրացրէք ձեր որդիներին, այլ մեծացրէ՛ք նրանց Տիրոջ խրատով և ուսումով*» /Եփես. 6:4/:

Է՞լ ինչի վրայ պէտք է ուշադրութիւն դարձնեն ծնողները

Ի թիւս այլ բաների, ծնողները պէտք է ուշադրութիւն դարձնեն նաեւ հետեւեալի վրայ.
1. հետեւել, որպէսզի երեխան չշատախօսի, չստի, քանզի յետոյ կը սովորի նաեւ երդուել, հայհոյել, անիծել եւ բազում այլ մեղքեր գործել,
2. ծնողները պէտք է ուշադրութիւն դարձնեն նաեւ, որպէսզի երեխան չգողանայ, քանզի մանր գողութիւն սովորելով՝ շուտով կը համարձակուի աւելին գողանալ, իսկ այնուհետեւ նաեւ կը հասնի աւազակութեան ու սպանութիւնների եւ կը կործանի իր հոգին,
3. ծնողները պէտք է երեխային զերծ պահեն նաեւ մարմնի ծուլութիւնից, որ չվարժուի քնին, ծուլութեանն ու շատակերութեանը, քանզի դրանց սովորելով՝ շուտով կը սովորի նաեւ այլ մեղքեր գործել:

Այդ պատճառով երեխային պէտք է դաստիարակել ամենայն խստութեամբ, որպէսզի չկործանուի նրա հոգին, ինչպէս ասում է Սողոմոնը. «*Քո խրատը մի՛ խնայիր երեխային, որովհետև եթէ գաւազանով էլ խփես նրան՝ չի մեռնի, դու նրան կը հարուածես գաւազանով, բայց նրա հոգին կը փրկես մահից*» /Առակ. 23:13-14/:

Ինչպէ՞ս է կոչւում այն առաքինութիւնը, որը մեզնից պահանջում է Հինգերորդ Պատուիրանը

Առաքինութիւնը, որը մեզնից պահանջում է հինգերորդ պատուիրանը, կոչւում է «հնազանդութիւն»:

Է՞լ ում է կարելի պատուել ծնողների պէս

Հոգեւոր հայրերին, հայրապետներին եւ քահանաներին: Բանաւոր հօրը, այսինքն՝ մտքի ուսուցչին, ինչպէս վարդապետը՝ աշակերտի համար: Հայր է կոչւում նաեւ վանական եղբայրութեան աւագերէցը եւ տարիքով մեծը: «*Լսեցէ՛ք ձեր առաջնորդներին և հնազանդուեցէ՛ք նրանց, որովհետև նրանք հսկում են ձեր հոգիների համար, քանի որ նրանք հաշիւ են տալու ձեր փոխարէն. և նրանք ուրախութեամբ թող անեն այդ բանը և ո՛չ հոգոց հանելով, քանի որ այն ձեր օգտի համար չէ*» /Եբր. 13:17/:

Հայրեր են նաեւ երկրի ղեկավարները, որոնք պահապանն են երկրի եւ իշխանութեան: Ինչպէս որ մարդ պարտաւոր է ենթարկուել իր մարմնական հօրը մարմնական հարցերում, այնպէս էլ միւս հայրերին՝ տարբեր կերպերով: Հոգեւորին՝ հոգեւոր հարցերում: Աշակերտը պէտք է լսի վարդապետին: Վանական եղբայրութիւնը երկիւղով եւ ակնածանքով պէտք է ենթարկուի վանահօր կամքին: Իսկ ժամանակաւոր, պարզ հարցերում պէտք է ենթարկուել ղեկավարներին, քանզի «*...եղած իշխանութիւնները Աստծուց են կարգըւած: Հետևաբար, ով հակառակում է իշխանութեանը, Աստծու հրամանին է հակառակում*» /Հռոմ. 13:1-2/:

Արդեո՞ք կարելի է ամէն ինչում ենթարկուել աշխարհիկ իշխանութեանը

Աշխարհիկ իշխանութեանը եւ ղեկավարութեանը պէտք է ենթարկուել ամէն ինչում, բացի երկու դէպքից. 1. եթէ սրիպում են ուրանալ հաւատքը եւ 2. եթէ սրիպում են անել ինչ-որ անպարկեշտ բան, այսինքն՝ մեղք գործել: Այդ դէպքում աւելի լաւ է մեռնել կամ պատժուել, ինչպէս բազում նահատակներ, ովքեր մեռան յանուն Քրիստոսի, քան ժառանգել զեհենի կրակը:

Արդեո՞ք հոգեւոր իշխանութեան բոլոր խրատներն է պէտք ընդունել

Ընդունել բոլոր բարի խրատները եւ օրինակ վերցնել բարի գործերից, իսկ վատերը՝ չընդունել եւ չքննել. «*...ամէն ինչ, որ նրանք ձեզ ասեն, արէ՛ք և պահեցէ՛ք, բայց մի՛ արէք ըստ նրանց գործերի, քանի որ ասում են, բայց չեն անում*» /Մատթ. 23:3/:

Վեցերորդ Պատուիրանի մասին

Ի՞նչ է արգելում Վեցերորդ Պատուիրանը

Վեցերորդ պատուիրանով արգելւում է սպանութիւնը եւ այս կամ այն կերպ մերձաւորի կեանքը խլելը:

Արդեո՞ք ցանկացած սպանութիւն պատուիրանի խախտում է

Կեանքը խլելու ոչ բոլոր դէպքերն են պատուիրանը խախտում: Անօրէն չէ սպանութիւնը, երբ յանցագործին արդարադատութեամբ պատժում են մահով, երբ Հայրենիքը պաշտպանելով՝ սպանում են թշնամուն:

Ո՞վ է մարդասպան համարւում

Մարդասպանը ոչ միայն նա է, ով ինչ-որ մէկին զրկում է ֆիզիքական կեանքից, այլեւ նա, ով տեսնելով մերձաւորին կարիքի մէջ՝ ինչպէս հոգեւոր, այնպէս էլ մարմնական, երես է թեքում նրանից եւ չի օգնում: Եղբօրն ատողը նոյնպէս մարդասպան է, ինչի մասին ասում է Սբ. Առաքեալը (տե՛ս Ա Յովհ. 3.15): Իսկ նա, ով չարախօսում է կամ դաւաճանում, նոյնպէս մարդասպան է: Նա, ով վատ օրինակ է ծառայում եւ պատճառ է դառնում ուրիշի անկման, նոյնպէս մարդասպան է: Մարդասպան է նաեւ այն մարդը, ով զրկում է որբերին եւ այրիներին:

Բացի ֆիզիքական սպանութիւնից, Է՞լ ինչպէս կարելի է սպանել

Կարելի է նաեւ սպանել սրտով եւ լեզուով: Սրտով սպանում են, երբ բարկանում են, նախանձում են, չարութիւն են պահում, նենգ եւ վրիժառու են լինում: Լեզուով՝ երբ քսութեամբ են զբաղւում, հայհոյում են, քծնում, անիծում:

Ի՞նչն է աւելի ծանր՝ սպանութիւ՞նը, թէ՞ ինքնասպանութիւնը

Ինքնասպանութիւնն սպանութիւններից ամենապատրուիրանախախտ եւ աններելին է, քանզի, եթէ սպանում են ուրիշին, կարող են ապաշխարել եւ փրկել իրենց հոգին, իսկ եթէ իրենք իրենց, ապա չեն կարողանայ մեղքերը քաւել, քանզի գնացին առանց ապաշխարութեան:

Եօթներորդ Պատուիրանի մասին

Ի՞նչ է արգելում Եօթներորդ Պատուիրանը

Եօթներորդ պատուիրանով արգելւում է շնութիւնը:

Շնութեան անուան տակ ինչպիսի՞ մեղքեր են արգելւում

Պօղոս Առաքեալը խորհուրդ է տալիս քրիստոնեաներին անգամ չխօսել այդ պղծութիւնների մասին (տե՛ս Եփես. 5:3): Միայն անհրաժեշտութեան դէպքում՝ այդ մեղքերից պաշտպանուելու համար, պէտք է անուանել դրանցից մի քանիսը՝ 1. պոռնկութիւն կամ մարմնական սէր՝ չամուսնացած մարդկանց միջեւ, 2. շնութիւն, երբ ամուսնացածներն իրենց ամուսնական սէրն ուղղում են օտարներին, 3. արիւնապղծութիւն, երբ ամուսնականի նման միութեամբ միաւորւում են մօտ բարեկամները:

Ի՞նչն է հակառակ շնութեան մեղքին

Երբ արգելւում է շնութեան մեղքը, պատուիրւում է գործել հետեւեալ առաքինութիւնները՝ ամուսնական սէր

եւ հաւատարմութիւն, իսկ նրանք, ովքեր կարող են տանել՝ կատարեալ մաքրութիւն եւ կուսութիւն:

Ինչպիսի՞ յարաբերութիւններ պէտք է լինեն ամուսնու եւ կնոջ միջեւ

Սբ. Գիրքն այսպէս է ասում ամուսնու եւ կնոջ պարտականութիւնների մասին. «*Մարդի՛կ, սիրեցէ՛ք ձեր կանանց, ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար... Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդուեն Տիրոջը, որովհետև մարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. և ինքն է Փրկիչը այդ մարմնի*» /Եփես. 5:22-23, 25/:

Ութերորդ Պատուիրանի մասին

Ի՞նչ է արգելւում Ութերորդ Պատուիրանով

Ութերորդ պատուիրանով ընդհանրապէս արգելւում է գողութիւնը կամ որևէ կերպ արուած իւրացումն այն բանի, ինչ պատկանում է ուրիշներին:

Որո՞նք են Ութերորդ Պատուիրանով արգելւող գլխաւոր մեղքերը

Կան յատուկ մեղքեր, որոնք արգելւում են այս պատուիրանով: Եթէ մարդն ինչ-որ բան գաղտնի կերպով հանում է ուրիշի տնից, ապա նա գող է: Գող է կոչւում եւ նա, ով խաբում է առեւտրի մէջ, այսինքն՝ երբ խաբում է գնի եւ քաշի մէջ: Նա, ով իր արուեստում պակասեցնում է նիւթերը եւ այլն, նոյնպէս գող է: Այդպիսիները խարդախում են գաղտնիօրէն եւ այդ պատճառով կոչւում են գողեր: Իսկ նրանք, ովքեր բացայայտ խլում են ճանապարհներին, աւազակներ են: Ինչպէս բռնակալներն ու իշխանները, որոնք անպարկեշտ կերպով են վարւում աղքատների հետ, կոչւում են յափշտակիչներ, այնպէս էլ կաշառուած դատաւորներն են յափշտակիչներ: Ինչպէս եւ նա, ով արծաթն ու սնունդը տոկոսով է տալիս, յափշտակիչ է: Իսկ երբ պարտքերը չեն վճարում եւ

աշխատողներին չեն վարձատրում, դա գողութիւն է, զրկում եւ յափշտակում:

Արդեո՞ք ամէն գողութիւն օրինազանցութիւն է

Ամէն գողութիւն չէ, որ օրինազանցութիւն է: Գողութիւն չէ, երբ մարդասպանից սուրն են գողանում, որպէսզի նա ոեւէ մէկին չվնասի, քանզի դա զգուշութիւն է: Ինչպէս եւ գողութիւն չէ այն, երբ մարդ, սովամահ լինելով, հաց է գողանում, որ յագենայ, քանզի դա կարիք է: Ինչպէս նաեւ, երբ դա լինում է Աստուծոյ օրինութեամբ, ինչպէս օրինակ՝ հրեաների դէպքում, ովքեր, վերցնելով ոսկին եգիպտացիներից, չվերադարձրին, քանզի իրենց աշխատանքի դիմաց վարձատրութիւնը մնացել էր նրանց մօտ: Տէրը դա արեց ոչ միայն վարձի համար, այլեւ, որ հրեաները չցանկանան վերադառնալ Եգիպտոս:

Ի՞նչ է հոգեւոր գողութիւնը

Չարախօսութիւնը հոգեւոր գողութիւն է, որն աւելի վատ է պարզ գողութիւնից: Պարզ գողը գողանում է միայն մարմնականը, ինչպիսիք են ոսկին եւ արծաթը, սակայն շուտով, ապաշխարելով, կարող է վերադարձնել գողացածը, իսկ չարախօսը գողանում է բարի գործերն ու անունը, որոնք աւելին են, քան գանձերը, ինչի մասին էլ ասւում է առակներում. «*Բարի անունը լաւ է մեծ հարստութիւնից, ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց*» /Առակ. 22:1/: Սակայն, եթէ անգամ ապաշխարի, արդէն չի կարողանայ վերադարձնել գողացածը: Այդ պատճառով էլ ինչպէս Յակոբոս Առաքեալը, այնպէս էլ Մովսէսն արգելում են չարախօսելը. «*Եղբայրնե՛ր, միմեանց մի՛ բամբասէք*» /Յակ. 4:11/ ; «*Համրին մի՛ վիրաւորիր, կոյրի ոտքերի առջև խոչ ու խութ մի՛ դիր*» /Ղեւտ. 19:14/: Չարախօսել մարդուն, ով չի լսում այդ խօսքերը, նշանակում է վատաբանել խուլին, իսկ չարախօսել մէկի առաջ, ով չի տեսել եղածը, նոյնն է, ինչ գողանալ կոյրի առաջ, քանզի ով չի տեսել, հաւատում է լսածին: Քանզի, երբ մէկնումէկը չարախօսում է, եւ

«*տասը մարդ վկայում են, որ դա սուտ է, միևնոյնն է, կը հաւատան բամբասողին*»:

Ինչպէ՞ս փոխհատուցել գողացածը

Եթէ նոյնիսկ գողը զղջայ արածի համար եւ խոստովանուի, ապա դա քիչ է, քանզի հարկ է տիրոջը վերադարձնել գողացածը, եթէ վերջինս ողջ է: Եթէ ողջ չէ, պէտք է տալ հարազատներին, իսկ եթէ հարազատներ չկան, պէտք է տալ աղքատներին կամ եկեղեցուն: Իսկ այնուհետեւ՝ մեղքը քաւել պահքով եւ աղօթքով:

Իններորդ Պատուիրանի մասին

Ի՞նչ է արգելւում Իններորդ Պատուիրանով

Իններորդ պատուիրանով արգելւում է սուտ վկայութիւն տալ մերձաւորի դէմ, ինչպէս նաեւ արգելւում է ամէն տեսակի սուտ:

Սուտ վկայութեան ինչպիսի՞ տեսակներ են լինում

Սուտ վկայութեան անուան տակ արգելւում է դատական սուտ վկայութիւնը, երբ դատարանում ոեւէ մէկին սուտ ամբաստանում են, բողոքում կամ ինչ-որ հարցում սուտ վկայութիւն են տալիս, դատարանից բացի՝ սուտ վկայութիւն է նաեւ, երբ մէկին զրպարտում են իր բացակայութեան ժամանակ, կամ ոեւէ մէկի երեսին անարդար նախատինք են տալիս:

Ի՞նչ է տեղի ունենում ստի պատճառով

Ստի պատճառով լինում են շատ վէճեր եւ կռիւներ: Ստախօսը սատանայի որդի է (տե՛ս Յովհ. 8:44): «*Սուտ խօսքերից փախչում է Սուրբ Հոգին, ինչպէս նաև մեր ծառայ Հրեշտակը*», ովքեր օգնում են մեզ, երբ մենք ճշմարտութեան մէջ ենք: Ստախօսներն իրենց ստով վնասում են շատերին եւ պատճառ են դառնում իրենց կործանման, դրա համար պէտք է լեզուն պահել սուտ խօսքերից: «*Սուտը պատճառն ու գլուխն է բոլոր մեղ-*

քերի», ուստի, սուտ խօսելն օգուտ չէ ո՛չ լսողի, ո՛չ էլ խօսողի համար, քանզի խօսում է ճշմարտութեան դէմ:

Ե՞րբ է սուտը լինում օգտակար եւ բարի

Այն ժամանակ, երբ խաբում ենք մի մարդու, ով մեզնից սուր է խնդրում սպանութեան համար, եւ ասում ենք, թէ սուր չունենք, կամ երբ անպարկեշտ հարցին պատասխանում ենք, թէ չգիտենք: Նման սուտը օգտակար է եւ բարի:

Տասներորդ Պատուիրանի մասին

Ի՞նչ է արգելւում Տասներորդ Պատուիրանով

Տասներորդ պատուիրանով արգելւում է ցանկութիւնը եւ անգամ դրա հետ կապուած խորհուրդները, որոնք հակասում են մերձաւորի հանդէպ սիրուն:

Ինչո՞ւ են արգելւում ոչ միայն գործերը, այլեւ խորհուրդները

Արգելւում են ոչ միայն չար գործերը, այլեւ՝ չար ցանկութիւններն ու խորհուրդները: 1. Որովհետեւ, երբ հոգում կան չար ցանկութիւններ եւ խորհուրդներ, հոգին արդէն անմաքուր է դառնում Աստուծոյ առաջ եւ Նրան անարժան, ինչպէս ասում է Սողոմոնը՝ «*Անիրաւ խորհուրդը պիղծ է Տիրոջ առջև*» /Առակ. 15:26/: Ուստի, մարդ պէտք է մաքրի ինքն իրեն այդ ներքին պղծութիւններից, ինչպէս սովորեցնում է Առաքեալը. «*Մաքրենք մենք զմեզ մարմնի և հոգու ամէն պղծութիւնից, կատարեալ դարձնենք սրբութիւնը Աստուծոյ երկիւղով*» /Բ Կորնթ. 7:1/:
2. Որովհետեւ չար գործերը կանխելու համար պէտք է ճնշենք մեր մէջ մեղաւոր ցանկութիւններն ու խորհուրդները, որոնցից, ինչպէս չար սերմերից, աճում են չար գործեր, ինչպէս որ ասուած է. «...*քանի որ սրտից է, որ ելլում են չար խորհուրդներ, սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյանքներ*» /Մատթ. 15:19/: «*Իւրաքանչիւր ոք փորձւում է՝ հրապուրուելով և խաբուելով իր*

ցանկութիւններից: Այնուհետև ցանկութիւնը, յղանալով, մեղք է ծնում, և մեղքը, հասունանալով, մահ է ծնում» /Յակ. 1:14-15/:

Ինչպի՞սի կիրք է արգելւում Տասներորդ Պատուիրանով

Երբ արգելւում է մերձաւորիդ պատկանող որեւէ բան ցանկանալը, արգելւում է նախանձը:

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ ենք հասկանում քրիստոնէական առաքինութիւն ասելով

Քրիստոնէական առաքինութիւն ասելով՝ հասկանում ենք Աւետարանական Ճշմարտութեան վրայ հիմնուած օրէնքի ազատ, գիտակցուած, անկեղծ, մշտական ձգտումն ու կատարումը Աստուծոյ շնորհի ներգործութեամբ: Առաքինութիւնն ինքնին մէկ է, ինչպէս լոկ մի է Աստուծոյ կամքը, որը մեր սրբանալն է (տես Ա Թեսաղ. 4:3), մէկ է օրէնքը եւ մէկ է պատուիրանը՝ տրուած մեր Տիրոջից. «…*սիրէք միմեանց*» /Յովհ. 15:17/: Այն նաեւ բարի է, քանի որ բարի է Ինքը Աստուած, ուստի, «*բոլոր առաքինութիւնների պատճառը*,- ասում է Սբ. Տաթեւացին,- *Աստուած է*», Ով եւ տնկում է դրանք մարդու մէջ, որպէսզի զարդարի արդարներին եւ ուղղի մեղաւորներին: Այդպէս Աբրահամը զարդարուած էր հնազանդութեամբ, Յովսէփը՝ ողջախոհութեամբ, Մովսէսի մէջ մենք տեսնում ենք հեզութիւն, իսկ Դաւթի մէջ՝ խոնարհութիւն: Կրքոտին նա կը դարձնի ողջախոհ, բարկացկոտին՝ հեզ, իսկ հպարտին՝ խոնարհ: Նոյնիսկ գայլին կը դարձնի գառ, իսկ խաւարը կը փոխի լոյսի: Այսպիսով՝ մեծ եւ ազնիւ է առաքինութիւնը, ուստի ամէն ոք, ով փնտռում է իր փրկութիւնը, պէտք է սիրի այն ամբողջ սրտով, քանի որ առաքինի մարդու պարգեւն Աստուած Ինքն է, որ մարդուն տուել է այն:

Ինչպէ՞ս հասկանալ, որ առաքինութիւնն ինքնին մէկ է

Ինչպէս եւ ասուեց, առաքինութիւնը մէկ է, բայց առարկայի տարբերութեան եւ գործողութիւնների, տեղի, ժամանակի, ձեւի եւ այլ հանգամանքների պատճառով առաքինութիւնը կարող է տարբեր դրսեւորումներ ունենալ: Դրանցից յատկապէս առանձնացւում են գլխաւորներն ու ամենաանհրաժեշտները, որոնցից բխում են բոլոր միւս քրիստոնէական առաքինութիւնները:

Որո՞նք են գլխաւոր առաքինութիւնները

Գլխաւոր առաքինութիւնները լինում են Աստուածային եւ Մարդկային: Աստուածային առաքինութիւններն են՝ Հաւատքը, Յոյսը եւ Սէրը, քանի որ նրանց անմիջական առարկան Աստուած Ինքն է. «*Հաւատքով հաւատում ենք Աստծուն, որ Նա միայն Իր ողորմածութեամբ ստեղծեց մեզ... և փրկեց... Յոյսով մենք սպասում ենք Աստուծոյ ողորմածութեանը, որ խոստացել է մեզ, քանզի Նա գթասիրտ է և ճշմարիտ: Եւ սիրում ենք Նրան, քանզի Նա միայն բարի է, և յանուն Նրա սիրում ենք մերձաւորին, ով ստեղծուածն ու պատկերն է Նրա*»:

Իսկ Մարդկային առաքինութիւնները սրանք են՝ Խոհեմութիւնը, Արիութիւնը, Ողջախոհութիւնը եւ Արդարութիւնը, քանի որ նրանք բժշկում են մարդկային հոգու ուժերը, որոնք են՝ բանականը, ցասմականը եւ ցանկականը: Խոհեմութեամբ բժշկում ենք հոգու բանական մասը, Արիութեամբ՝ ցասմական մասը, Ողջամտութեամբ՝ ցանկականը, իսկ Արդարամտութիւնը բժշկում է ամբողջ հոգին:

Նշանակում է՝ գլխաւոր առաքինութիւնները եօ՞թն են

Այո, նրանք եօթն են՝ **Հաւատքը, Յոյսը, Սէրը, Խոհեմութիւնը, Արիութիւնը, Ողջախոհութիւնը եւ Արդարամտութիւնը**:

ՀԱՒԱՏՔԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է Հաւատքը

Հաւատքը, համաձայն առաքելական խօսքի, «*...յուսացուած բաների հաստատումը և ապացոյցն [է] ա՛յն բաների, որոնք չեն երևում*» /Եբր.11:1/, այսինքն՝ «*...հաւատքը մեր մէջ հաստատում է յաւիտենական կեանքի սպասուող բարիքները*,- խորհում է Սբ. Տաթեւացին,- *և Աստծուն՝ բարիքները շնորհողին*»: Եւ այն, ինչ չենք տեսնում մեր մարմնական աչքերով, նրանում համոզւում ենք հաւատքով. հաւատքն անտեսանելին տեսանելի է

դարձնում մեզ: Եւ ինչպէս արեւից բխող լոյսի շնորհիւ մենք տեսնում ենք մեզ շրջապատող աշխարհը, այնպէս էլ Աստծուց բխող հաւատքի լոյսի շնորհիւ մենք կարող ենք տեսնել յաւիտենական կեանքը, արդարների փառքը, մեղաւորների տանջանքները եւ Իրեն Քրիստոսին՝ նստած Հօր աջ կողմում:

Ի՞նչ օգուտ՝ Հաւատքից

Հաւատքը բոլոր բարիքների գլուխն է. այն մարդուց հեռացնում է ամենայն չարը. սիրելի եւ հարազատ է դարձնում Աստծուն, իսկ Հրեշտակներին՝ ընկերներ: Հաւատքը Երկինք է յափշտակում, ինչպէս Ենովքին եւ Եղիային: Հաւատքը փրկում է ջրհեղեղից, ինչպէս փրկեց Նոյին եւ նրա տունը: Հաւատքը պատերազմում է աշխարհի դէմ եւ տալիս է քեզ այն, ինչ խնդրում ես: Հաւատքը չի ընդունում ժամանակաւոր բարիքները եւ մարդուն փրկում է մեղքերից ու տանջանքներից: Հաւատքը մարդուն երջանիկ է դարձնում, այն նաեւ յարութիւն է տալիս: Հաւատքը փրկում է սրից, կրակից եւ առիւծներից, ինչպէս փրկեց Դանիէլին եւ երեք երիտասարդներին:

Բայց չէ՞ որ դեւերը նոյնպէս հաւատում են

Այն հաւատքը, որ ունեն դեւերը, կատարեալ չէ, անվարձահատոյց է եւ Աստուծոյ շնորհից չէ, այլ Քրիստոսի եւ Առաքեալների հրաշքները տեսնելուց եւ նրանցից ունեցած տագնապայոյզ հմտութիւնից, քանի որ նրանք ստիպուած էին ճչալ. «*Ի՞նչ կայ մեր և քո միջև, Յիսո՛ւս, Որդի՛ Աստուծոյ, մեզ տարաժամ տանջելո՞ւ եկար*» /Մտթ. 8:29/:

Հաւատքի ի՞նչ տեսակներ կան

Հաւատքը լինում է մեռած եւ կենդանի: Մեռած հաւատք ունենում են միայն անունով քրիստոնեաները, այսինքն՝ աստուածպաշտութեան կերպարանք ունեցող, բայց նրա զօրութիւնն ուրացած մարդիկ: Բայց այս հաւատքն աւելի ճշմարիտ է, քան դիւայինը, քանի որ իջնում է

Աստծու շնորհից՝ մկրտութեան ժամանակ: Եւ քանի որ այս հաւատքը, չունենալով սէր եւ բարի գործեր, դարձել է մեռած, ապա եւ նա, ինչպէս դիւայինը, անվարձահատոյց է:

Այդպիսին չէ, սակայն, կենդանի հաւատքը: Այն կատարեալ է եւ վարձատրուելի, այն Սրբերի եւ ընտրեալների հաւատքն է: Այս հաւատքով արդարացան նահապետները, խօսեցին Մարգարէները, եւ քարոզեցին Առաքեալները: Յանուն այս հաւատքի տանջուեցին խոստովանողները, մարտիրոսական մահով ընկան ճգնաւորները: Նաեւ բոլոր ընտրեալները՝ առաջինները, միջիններն ու վերջիններն այս հաւատքով մեռնում էին եւ արժանանում պսակների: Ահա կատարեալ եւ վարձատրուող հաւատքը, եւ ինչպէս ասում է Առաքեալը. «*Պատերազմեցի բարի պատերազմը, աւարտեցի ընթացքս, պահեցի հաւատքը: Եւ հիմա՝ ինձ է սպասում արդարութեան պսակը, որը, որպէս հատուցում, ինձ պիտի տայ Տէրը՝ արդար Դատաւորը, այն օրը*» /Բ Տիմ. 4:7-8/:

Ի՞նչ է անհրաժեշտ կենդանի հաւատք ունենալու համար

Կենդանի հաւատք ունենալու համար պէտք է հաւատքի հետ միասին գործեր անել, որոնք այդ հաւատքին կեանք են պարգեւում, քանզի, ինչպէս ասում է Յակոբոս Առաքեալը, «*...հաւատքն առանց գործերի մեռած է*»: Հաւատքով մենք մաքրւում ենք մեղքերից, իսկ գործերով մեզ եւ ենք պահում այդ նոյն մեղքերից: Հաւատքով մենք ստանում ենք որդեգրութեան շնորհը, իսկ գործերով ժառանգում ենք յաւիտենական կեանքի փառքը: «*Եւ ինչպէս արծիւն է թռչում իր երկու թեւերով*,- ասում է Սբ. Տաթեւացին,- *այնպէս էլ մարդը, հաւատքի և գործերի շնորհիւ թռչում է երկնքի Արքայութիւն: Հաւատքը արմատն է, գործերը՝ պտուղները: Հաւատքը Արքայութեան բանալին է, իսկ գործերը՝ բանալու շարժումը, որով բացում ենք և մտնում*»: Նաեւ՝ հաւատքը հիմքն է, իսկ գործերն՝ այդ հիմքի վրայի կառոյցը, որն ըստ Առաքեալի՝ ոսկին է, արծաթը եւ այլն, ինչի մասին եւ ասում է. «*Եթէ մէկը այս հիմքի վրայ*

կառուցի ոսկով, արծաթով, թանկարժէք քարերով, փայտով, խոտով, եղէգով...» /Ա Կորնթ. 3:12/:

Ինչի՞ն պէտք է հաւատալ

Հաւատալ պէտք է ա՛յն խօսքերին, որոնք Սուրբ Հոգին խօսել է Մարգարէների եւ Առաքեալների բերնով, հաւատալ պէտք է ա՛յն գրաւոր ժառանգութեանը, որը թողել են մեզ Եկեղեցու սուրբ վարդապետները: Հաւատալ, այլ ոչ՝ «*...համարել հէքիաթ և կեղծիք*»: Հաւատալ պէտք է այնպէս, ասես «*...քո աչքերով տեսնում ես անցեալը և այն, ինչ պէտք է լինի, և այն, ինչ է հիմա*»: Պէտք է հաւատալ Սուրբ Երրորդութեանը, մեր Տէր Աստուծոյ Տնօրինութեանը, Սուրբ Եկեղեցուն եւ մեղքերի թողութեանը, ինչպէս նաեւ՝ գործերի դիմաց հատուցմանը...

ՅՈՅՍԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է Յոյսը

Յոյսը հանդերձեալ բարութեան հաւատարիմ սպասումն է եւ բխում է Աստուծոյ շնորհից (հաւատքից) եւ բարի գործերից, առանց որոնց նա արդէն յոյս չէ, այլ յանդգնութիւն: Հաւատքով ճանաչում ենք Աստծուն, իսկ յոյսով ընկալում Նրան:

Ի՞նչ տեսակի է լինում Յոյսը

Յոյսը լինում է ողջերի յոյս եւ այս աշխարհից հեռացածների յոյս: Ողջերի յոյսը մեզ ուղեկցում է դեռ այս կեանքի ընթացքում, եւ դա հենց թուացեալի հաստատման յոյսն է, քանզի քայլում ենք ամուր հաւատքով եւ յոյսով, այլ ոչ թէ՝երեւակայական: Իսկ այս աշխարհից հեռացածների յոյսը գիտութեան հաստատման յոյսն է, քանի որ նրանք հաստատ գիտեն իրենց ապագայ հատուցումը:

Ինչպէ՞ս կարող է Յոյսը չամաչեցնել

Երկու կերպ: Նախ՝ յոյսի համար անհրաժեշտ է չորս բան, այն է՝ յոյսի առարկան, յուսացողը, յոյսը եւ ապաւինութիւնն ինքը: Այսպիսով՝ յոյսի առարկան Քրիստոսն է, յուսացողը՝ մարդը. յոյսն ինքնին՝ ինչպէս ուժը, եւ ապաւինութիւնը, այսինքն՝ հենց գործողութիւնը՝ սպասումը: Եւ երբ այս չորսը միասին են, այդ ժամանակ ահա յոյսը չի ամաչեցնում: Երկրորդ՝ յոյսի առարկայի համար նոյնպէս հարկաւոր է չորս բան. այսինքն, որ առարկան կարողանայ, ցանկանայ, իմանայ եւ միշտ լինի: Եւ այսպէս՝ Քրիստոս ամենակարող է, ամէնքին բարին է ցանկանում, Նա գիտէ՝ ինչն է օգտակար բոլոր մարդկանց, եւ միշտ գոյութիւն ունի, ուստի այն յոյսը, որ ունենք Քրիստոսի հանդէպ, մեզ չի ամաչեցնում ո՛չ այստեղ, ո՛չ էլ յաւիտենականութեան մէջ:

Ինչպէ՞ս կարող է Յոյսն ամաչեցնել

Այդպէս է, երբ մենք յոյսը դնում ենք մարդու վրայ: Եւ քանի որ մարդիկ թոյլ են, անբարեացակամ են, փգէտ են եւ անցողիկ, նրանց վրայ դրած յոյսն էլ անկատար է մնում: Ահա թէ ինչու Մարգարէն մեզ խրատում է. «*Յոյս մի՛ դրէք իշխանների՝ մարդկանց որդիների վրայ, որովհետև նրանցից փրկութիւն չկայ*» /Սաղմ. 145:3/: Այլ տեղում էլ այս է ասում. «*Լաւ է յոյսը դնել Տիրոջ վրայ, քան յոյսը դնել մարդկանց վրայ: Լաւ է յոյսը դնել Տիրոջ վրայ, քան յոյսը դնել իշխանների վրայ*» /Սաղմ. 117:8,9/: Իսկ Երեմիա Մարգարէից մենք իմանում ենք հետեւեալը. «*Թող անիծեալ լինի ա՛յն մարդը, որ իր յոյսը կը դնի մարդու վրայ՝ ապաւինելով նրա մարմնին ու բազկին*» /Երեմ. 17:5/:

Ի՞նչ է մեզ տալիս Յոյսը

Յոյսն օգտաւէտ է եւ շատ բարիքներ է տալիս: Այն մարդուն փրկում է շատ կորուստներից եւ թշնամիներից: Նաեւ ժամանակաւոր բարիքներ է պարգեւում, ինչպէս՝

կերակուրն ու ջուրը: Յոյսն ուրախացնում է հոգին եւ երբէք չի ամաչեցնում:

Ինչպէ՞ս պահպանել Յոյսը

Յոյսը պահպանելու համար հարկաւոր են հաւատք եւ բարի գործեր, քանզի առանց դրանց յոյսը յոյս չէ, այլ՝ յանդգնութիւն: Քանզի հաւատքը յոյսը դարձնում է մշտական, այսինքն՝ այն ամրացնում է մարդու մէջ, իսկ գործերը նրան բարի են դարձնում: Եւ եթէ մարդ նոյնիսկ մեղանչի, ապա պէտք չէ յուսահատուի, այլ աւելի լաւ է ապաւինի Արարչին, Ով նայում է մեր դարձին (որը հաւատքի եւ ապաշխարութեան յոյսի մէջ է) եւ հատուցում է բարութեամբ:

ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է Սէրը

Սէրը դա սիրալիրութիւն է, որով մենք սիրում ենք Աստծուն՝ յանուն Աստուծոյ, իսկ մերձաւորին՝ յանուն Աստուծոյ եւ Աստուծոյ մէջ: Սէրը կեանք է, որը սիրողին միացնում է սիրելիին: Սէրը շնորհ է, որով ցանկանում ենք տեսնել Աստծուն եւ հիանալ նրանով:

Ո՞րն է սիրոյ նշանը

Սիրող անձը սիրելիին եւ՛ հաճոյքով լսում է, եւ՛ խօսում նրա հետ: Միշտ նրա մասին է մտածում, եւ անձանձիր կը ծառայի նրան: Իր հոգին եւ հարստութիւնը կը զոհի սիրելիի համար: Կը վախենայ վիրաւորել նրան, իսկ եթէ նոյնիսկ վիրաւորի, ապա կը ձգտի շուտափոյթ հաշտը ուել: Նրա համար ուրախութիւն է սիրելիի հետ լինելը, եւ չարչարանք՝ բաժանումի ժամանակ: Սիրում է այն, ինչ սիրում է սիրելին, եւ ատում է այն, ինչ ատում է նա: Երբ գովաբանում են սիրելիին՝ ուրախանում է, իսկ երբ վատաբանում են՝ կը խուսափի հայհոյողներից:

Ո՞րն է աւելի մեծ, Սէ՞րը, թէ՞ Հաւատքը կամ Յոյսը

Առաքեալի այս խօսքերը՝ «*Բայց արդ՝ մնում են հաւատք, յոյս, սէր. սրանք՝ երեքը. և սրանցից մեծը սէրն է*» /Ա Կորնթ. 13:13/, ցոյց են տալիս Սիրոյ մեծութիւնը, քանի որ Հաւատքը ծանօթացնում է Աստուծոյ հետ, Յոյսը հաստատում է մարդուն այդ Հաւատքի մէջ, մինչդեռ Սէրը կապում է նրանց եւ չի թողնում, որ անհաւատութիւն ու յուսահատութիւն լինի: Սէրը մեծ է, քանի որ «*Աստուած սէր է. և ով սիրոյ մէջ է ապրում, բնակւում է Աստուծոյ մէջ, և Աստուած բնակւում է նրա մէջ*» /Ա Յովհ. 4:16/: Սէրն աւելի մեծ է, քանզի ամենայն բարու սկիզբն ու ծնողը Սէրն է, ինչպէս Աստուծոյ, այնպէս էլ մերձաւորի հանդէպ: Սէրն աւելի մեծ է, քանի որ Հաւատքը մեզ անհրաժեշտ է միայն այս կեանքում, քանզի մահից յետոյ կանգնելու ենք Աստուծոյ առաջ: Յոյսն անհրաժեշտ է եւ այս կեանքում, եւ մահից յետոյ, բայց միայն մինչեւ գալիք հատուցումը, ինչպէս եւ ասուեց վերը: Մինչդեռ Սէրն առ Աստուած եւ մերձաւորը մնում է յաւիտեան եւ չի նուազում, այլ մշտապէս աճում է:

Սիրոյ ի՞նչ տեսակներ են լինում

Սէրը լինում է սրբական, վարձկան եւ որդիական: Սրբական սէրն անկատար է, այն ծնւում է պատժելու վախից: Վարձկան սէրը, սակայն, կատարեալ է եւ ծագում է պատուի ու փառքի փափաքից: Իսկ որդիական սէրը գերկատարեալ է եւ ծագում է բարի յօժարակամութիւնից:

Այս ամէնից զատ՝ Սէրը լինում է աստուածային (սուրբ) եւ աշխարհային: Աստուածային սէրը չի նուազում, այլ մշտապէս աճում է, իսկ աշխարհիկ սէրն, ընդհակառակը, միշտ նուազում է: Աշխարհիկ սէրը մշտապէս փնտռում է իրենը, ընկերոջը սիրում է շահից ելլելով, այդ իսկ պատճառով նա նուազում է, երբ շահոյթ չի սպանում: Այն թէեւ, այնուամենայնիւ, միաւորում է, բայց ոչ՝ անբաժան, քանի որ ժամանակաւոր հիմք ունի, այդ պատճառով էլ արագ է անցնում: Օրինակ, եթէ մէկը մարդուն սիրում է մարմնական

գեղեցկութեան եւ հարստութեան համար, ապա երբ վերջինս նողկալի դառնայ կամ աղքատ, այդ սէրը կը քանդուի, իսկ շատ շուտով լիովին կը վերածուի ատելութեան: Քանզի ով ոեւէ մէկին սիրում է մարմնական հաճոյքի, հեշտասիրութեան կամ անգամ ագահութեան համար, այդպիսի սէրը կուրացնում է նրա աչքերը եւ թոյլ չի տալիս տեսնել Աստծուն, քանի որ այդպիսի սէրը մարդուն կապում է աշխարհիկ բաների հետ: Այն ոչինչ չի տալիս աղքատներին, այլ մշտապէս հաւաքում է իր համար եւ չի մտածում մարդկանց փրկութեան մասին:

Իսկ ի՞նչ է սուրբ Սէրը

Սուրբ Սէրը չի փնտռում իրենը, այլ միշտ՝ Աստծունը: Երբ Սուրբ Հոգին վերեւից նորոգում է մարդուն, ապա Նրա առաջին գործը լինում է այդ մարդու սրտում հոգեւոր ջերմութեան, այն է՝ Աստուծոյ եւ ընկերոջ հանդէպ սիրոյ ներդրումը: Եւ արդէն այդ սէրն արարում է բարի գործեր, բացում է աչքերն ու ականջները, որ մարդ տեսնի եւ լսի միայն բարին: Հոտոտելիքին թոյլ է տալիս ըմբոշխնել երկնային անուշահոտութիւնները: Բացում է շրթունքները՝ մեղքերը խոստովանելու եւ Աստծուն աղօթելու, փառաբանելու համար: Ձեռքերն ուղղում է ողորմութիւն տալու, ոտքերը՝ դէպի Եկեղեցի: Սիրտն էլ լցնում է բարի մտածումներով: Իսկ եթէ բարի գործեր չկան, ապա այդ սէրն Աստուածային չէ: Հոգեւոր պատերազմում սուրբ Սէրը մարդուն դարձնում է համարձակ ու խիզախ, քանզի նա ջերմ է, իսկ սրտի ջերմութիւնը խօսում է արիութեան մասին: Ուստի, ով իր սրտում սուրբ Սէր ունի, նա վախ չունի, ինչի մասին եւ Առաքեալն է ասում. «*Սիրոյ մէջ երկիւղ չկայ. և կատարեալ սէրը հեռու է վանում երկիւղը*» /Ա Յովհ. 4:18/: Այսպիսի սէրը մոռացկոտ չէ, այն միշտ յիշեցնում է սիրեցեալի մասին: Այն ուժ է տալիս տանջանքներ կրելու՝ առանց զգալու դրանք, ինչպէս պատահել է մարտիրոսներին: Ինչպէս կրակն է միշտ ձգտում վեր, այդպէս էլ Սրբերի սրտերը՝ լի աստուածային սիրով, ձգտում են դէպի երկինք, քանզի մշտապէս տենչում են դուրս գալ մարմնից եւ կանգնել Աստուծոյ առաջ, ինչի

մասին Պողոսն ասում է. «*...մարմնից դուրս գալը և Քրիստոսի հետ լինելը աւելի լաւ եմ համարում*» /Փիլ. 1:23/: Սուրբ Սէրը, ի տարբերութիւն աշխարհիկ սիրոյ, չի կարող սիրելիին խնդրել անվայել բան անել՝ հարբել, սպանել եւ այլն: Սուրբ Սէրը միաւորում է անբաժանելիօրէն, քանզի նրա հիմքում յաւերժութիւնն է, այսինքն՝ աստուածային բարութիւնը, որը երբէք չի նուազում: Եւ ինչպէս մարմնի բոլոր անդամները, տարերքները, երկինքը, մոլորակներն ու համաստեղութիւններն են միաւորուած սիրով, նոյնպէս եւ բոլոր սրբերը աստուածային սիրով կապուած են հրեշտակների բոլոր դասերի հետ: Հրեշտակներն էլ միաւորուած են Սբ. Աստուածածնի հետ, իսկ Սբ. Աստուածածինն էլ՝ Սբ. Երրորդութեան: Այսպիսով՝ զօրեղ է սուրբ Սէրը, որ մարդուն համարձակ ու խիզախ է դարձնում, միաւորում անքակտելիօրէն, չի մոռանում մերձաւորին եւ տանջանքներ չի զգում:

Ինչո՞ւ պէտք է սիրել Աստծուն

Աստծուն սիրել մեզ սովորեցնում է Մովսէսը: «*Քո Տէր Աստծուն պիտի սիրես քո ամբողջ հոգով, քո ամբողջ էութեամբ ու քո ամբողջ ուժով*» /Երկր. Օր. 6:5/: Քանզի Աստուծոյ հանդէպ սիրուց են կատարւում եւ ուժ ստանում բոլոր պատուիրանները, ինչի մասին Տէրն ասում է. «*Եթէ մէկը սիրում է ինձ, իմ խօսքը կը պահի*» /Յովհ. 14:23/:

Նոյնիսկ մեր բնութեան մէջ է դրուած սիրել բարերարներին, ինչը կարող ենք տեսնել նոյնիսկ կենդանիների մօտ, որոնք սիրում են իրենց խնամողներին, ուստի՝ մենք պէտք է սիրենք Աստծուն Իր անհամար բարերարութիւնների համար, որ նոյնիսկ Իր պատկերով եւ նմանութեամբ ստեղծեց մարդուն:

Ինչո՞ւ պէտք է սիրել նաեւ մերձաւորին

Մերձաւորին սիրել մեզ յորդորում է Ինքը Տէրը. «*...սիրէ՛ք միմեանց*» /Յովհ. 13:34/: Հին Օրէնքը կազմուած էր 613 պատուիրաններից, եւ շատ դժուար էր այն կատարելը: Իսկ Քրիստոս դրանք ամփոփեց տաս

պատուիրանների մէջ, իսկ տասը՝ երկուսի, այսինքն՝ Աստուծոյ եւ մերձաւորի նկատմամբ սիրոյ մէջ: Իսկ այս երկուսն էլ ամփոփեց մէկի մէջ. «*...սիրէ՛ք միմեանց*» : Եւ այս պատուիրանը մէկն է եւ կարճ, «*...որպէսզի չասեն, թէ երկար է, դրա համար էլ չկարողացան յիշել այն*»: Պէտք է նշել, որ Քրիստոս մեր օգտի համար եկաւ, որպէսզի Նրա պատուիրաններն օգտակար լինէին մեզ, քաղցր ու թեթեւ, որպէսզի չասէին. «*Նրա պատուիրանները ծանր ու դժուար են, դրա համար էլ չկարողացանք կատարել... Ուրեմն, եթէ չէք կարող կարդալ և կատարել Հին Օրէնքը, Մարգարէները և Աւետարանը,*- ասում է Սբ. Տաթեւացին,- *ապա կատարէք Տիրոջ ասած պատուիրանը՝ սիրեցէ՛ք զմիմեանս: Դրանով իսկ կը լինենք Աստուծոյ բոլոր պատուիրանների կատարողներ*»:

Ինչպէ՞ս պէտք է սիրել մերձաւորին

Ինչպէս Քրիստոս մեզ սիրեց՝ ոչ թէ ըստ մեր արժանիքների, այլ անվարձահատոյց, քանզի ոչ թէ մենք սիրեցինք Նրան, այլ՝ Նա, ինչի մասին Յովհաննէս Առաքեալն ասում է. «*Սրանո՛ւմ է սէրը. մենք չէ, որ սիրեցինք Աստծուն, այլ նա՛ սիրեց մեզ*» /Ա Յովհ. 4:10/: Այդպէս եւ քրիստոնեաները պէտք է սիրեն միմեանց, քանի որ Քրիստոս մեզ սիրեց ճշմարիտ եւ սուրբ սիրով, ոչ յանուն Իր շահի, այլ մեր բարօրութեան եւ փրկութեան համար: Սիրեց, որ տայ, այլ ոչ թէ վերցնի: Այդպէս էլ մենք պէտք է սիրենք միմեանց սուրբ սիրով, քանզի ով սիրում է յանուն իր շահի, նա իրեն է սիրում, եւ ոչ՝ մերձաւորին: Քրիստոնեաները, ինչպէս Քրիստոս, պէտք է սիրեն մերձաւորին ոչ թէ խօսքով, այլ գործերով, ինչի մասին Յովհաննէս Առաքեալն ասում է. «*Որդեակնե՛ր, խօսքերով և լեզուով չսիրենք, այլ՝ գործով և ճշմարտութեամբ*» /Ա Յովհ. 3:18/: Այսպիսով՝ եթէ սիրում ենք մերձաւորին, չենք շնանայ, չենք գողանայ, չենք սպանի, չենք ցանկանայ ընկերոջ կնոջը, քանզի. «*Մի՛ շնացիրը և մի՛ սպանիրը և մի՛ գողացիրը և սուտ մի՛ վկայիրը, մի՛ ցանկացիրը և ուրիշ ինչ պատուիրան էլ որ կայ, այն խօսքի մէջ է բովանդակւում, թէ՝ սիրի՛ր քո ընկերոջը, ինչպէս քո անձը*» /Հռոմ. 13:9/:

Ի՞նչ է նշանակում՝ «*Սիրի՛ր քո մերձաւորին, ինչպէս քո անձը*»

Դա նշանակում է, որ նախեւառաջ պէտք է ճիշտ սիրել ինքդ քեզ: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է սեփական անձին ցանկանալ հոգեւոր բարիքներ, որպէսզի հոգին մաքրուի մեղքերից եւ լցուի Աստուծոյ շնորհով: Երկրորդ՝ պէտք է ցանկանալ, որ հոգու կամքի կատարման համար քո մարմինը լինի առողջ եւ ուժեղ: Երրորդ՝ ցանկանալ արտաքինը, այսինքն՝ կերակուր, հագուստ, որպէսզի մարմինը չտկարանայ: Նոյն կերպ մենք պէտք է սիրենք եւ մերձաւորին: Նախ՝ ցանկանանք նրան հոգեւոր բարիք: Երկրորդ՝ մարմնական առողջութիւն: Երրորդ՝ արտաքին բարիքներ: Բայց եթէ մենք չհետեւենք այս յաջորդականութեանը, այսինքն՝ սկզբում նրան արտաքին բարիքներ ցանկանանք, այլ ոչ՝ առողջութիւն, եւ առողջութիւն մաղթենք առանց հոգու փրկութեան, ապա մենք չենք սիրի նրան այնպէս, ինչպէս մեզ ենք սիրում: Այստեղից էլ երեւում է, որ մարդկանց սէրն անկարգ է, քանզի սկզբում սիրում են արտաքին բարիքներն ու մարմնական առողջութիւնը, իսկ հոգու փրկութեան մասին, թէ՛ իրենց, թէ՛ մերձաւորի, չեն մտածում: Ուրեմն, առաջին հերթին պէտք է սիրել Աստծուն, միայն դրանից յետոյ սիրել սեփական հոգին, այսինքն՝ հոգ տանել սեփական հոգու փրկութեան մասին, առանց որի չի կարելի սիրել եւ մերձաւորի հոգին: Իսկ երբ կը սիրենք մեր հոգին եւ մերձաւորի հոգին, այդժամ միայն պէտք է հոգանք նաեւ մեր մարմնական առողջութեան մասին, քանզի հոգին աւելի է, քան մարմինը: Դրանից յետոյ պէտք է հոգալ նաեւ մերձաւորի մարմնական առողջութեան մասին:

Ո՞րն է սիրոյ բարձրագոյն նշանը

Դա սէրն է թշնամու հանդէպ: Սիրել մերձաւորին պարտաւոր են ամէնքը, ինչը մեզ սովորեցնում է Հին Ուխտը. «*Պիտի սիրես մերձաւորին և պիտի ատես քո թշնամուն*» /Մատթ.5:43/: Իսկ Նոր Ուխտը սովորեցնում է ողորմութիւն՝ կոչ անելով սիրել թշնամուն: Քանզի բոլոր գործերը փոքր են աւելի, քան օրէնքը, ինչն անօրինութիւն է, կամ հաւասար են օրէնքին, ինչն

արդարութիւն է, կամ աւելի են օրէնքից, ինչը գթասրրտութիւնն է, որը եւ մեզ սովորեցրեց Քրիստոս, եւ Ինքն էլ կատարեց: «*Քանզի մենք նոյնպէս թշնամի և ատելի էինք Աստծուն, բայց [Քրիստոս] սիրեց թշնամիներին, ատողներին բարիք գործեց և նոյն օրէնքն էլ մեզ թողեց*»: Ուստի՝ սէրը թշնամու նկատմամբ մարդուն դէպի կատարեալն է բարձրացնում, ինչպէս եւ ասաց մեր Տէրը. «*Արդ, կատարեա՛լ եղէք դուք, ինչպէս և ձեր երկնաւոր Հայրն է կատարեալ*» /Մատթ. 5:48/:

Ո՞ր թշնամուն է պէտք սիրել

Քանի որ թշնամիները տարբեր են լինում՝ մեր անձի թշնամիներ, Եկեղեցու եւ Աստուծոյ թշնամիներ, ապա պէտք է նրանց հետ վարուել համապատասխանաբար: Մեր անձնական թշնամիներին պէտք է սիրել եւ աղօթել նրանց համար, նրանց բարիք գործել, ինչի մասին մեզ ուսուցանում է Տէրն Ինքը. «*սիրեցէ՛ք ձեր թշնամիներին*» /Մատթ. 5:44/: Եկեղեցու թշնամիներին պէտք չէ ոչ բարին, ոչ չարը ցանկանալ: Մինչդեռ Աստուծոյ թշնամիներին պէտք է ատել. «*Քեզ ատողներին ատեցի, Տէ՛ր*» /Սաղմ. 138:21/:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է արդարութիւնը

Արդարութիւնն ինքնին բաշխիչ զօրութիւն է, այսինքն՝ իւրաքանչիւրին տալիս է ըստ արժանւոյն. Աստուծոյ հանդէպ հանդէս է բերում երկիւղածութիւն, իշխանութիւնների հանդէպ՝ հնազանդութիւն, հաւասարների՝ սէր ու խաղաղութիւն, իսկ փոքրերի հանդէպ՝ գթասրտութիւն:

Ինչպէ՞ս է դրսեւորւում արդարութիւնը

Արդարութիւնը դրսեւորւում է առաջին հերթին հոգու եւ մարմնի յարաբերութեան մէջ, ապա՝ ներկայ կեանքի՝ ապագայի հետ յարաբերութեան մէջ, եւ երրորդ՝ Աստուծոյ եւ մարդու յարաբերութեան մէջ:

Ինչպէ՞ս է արտայայտւում արդարութիւնը հոգու եւ մարմնի յարաբերութեան մէջ

Հոգու եւ մարմնի յարաբերութեան մէջ, պէտք է ասել, որ արդարութիւնը թոյլ չի տալիս, որ մարմինը զրկի հոգին, իսկ հոգին զրկի մարմինը: Քանզի եթէ մարմինը զրկի հոգին, ապա անիրաւութիւն եւ մեղսալից գործեր կը լինեն, իսկ եթէ հոգին զրկի մարմնին, ապա հոգին դուրս կու գայ իր իսկ դէմ եւ անողոք կը լինի մարմնի հանդէպ: Ուրեմն՝ մարմնին պէտք է տալ անհրաժեշտն ու չափաւորը, ինչպէս օրինակ՝ հաց, ջուր եւ հագուստ: Իսկ հոգուն պէտք է տալ սրբութիւն, պահք, աղօթք, ողորմութիւն եւ այլն: Քանի որ հոգին Աստուծոյ պատկերն է, ապա հենց իրեն է անհրաժեշտ առաջին հերթին պատիւ անել, քանզի հոգին տէր ու տիրուհի է, իսկ մարմինը՝ ծառայ եւ աղախին, ուստի անհրաժեշտ է, որ մարմինը հոգուն հնազանդ գտնուի: Վերջին հաշուով, որպէսզի հոգու եւ մարմնի միջեւ արդարութիւն լինի, պէտք է, որ մարմինը հետեւի հոգուն, իսկ հոգին առաջնորդի մարմինը: Հենց այսպիսի արդարութիւնն է կոչւում բարոյական, հակառակ դէպքում, եթէ մարմինն

առաջնորդի հոգուն, նրանց միջեւ անիրաւութիւն կը լինի:

Ինչպէ՞ս է դրսեւորւում արդարութիւնը ներկայիս կեանքի եւ ապագայի միջեւ յարաբերութեան մէջ

Ներկայ կեանքի եւ ապագայի յարաբերութեան մէջ նոյնպէս պէտք է արդարութիւն հանդէս բերել, որը կոչւում է բնական արդարութիւն: Այդ արդարութիւնը դրսեւորւում է հետեւեալում. իւրաքանչիւր քրիստոնեայ այս կեանքը պէտք է դիտի որպէս անցողիկ եւ փոփոխական, իսկ ապագան՝ մշտակայ եւ անփոփոխ: Այս կեանքում անցողիկ են նաեւ փառքը, իշխանութիւնը, հարստութիւնը եւ շատ այլ բաներ, իսկ այն, ինչ կայ գալիք կեանքում, այսինքն՝ կեանքը, արքայութիւնը, խնդութիւնը, անմահութիւնը՝ այս ամէնը յաւերժ են, ինչպէս եւ գալիք կեանքն ինքը: Այս կեանքը հարկաւոր է ընկալել որպէս կենդանական, իսկ միւսը՝ հրեշտակային եւ Աստուածային: Այս կեանքը աշխատանքի ժամանակն է, իսկ միւսը՝ հատուցման: Այս կեանքը պէտք է ապրել, իսկ այն կեանքը՝ սիրել: Իսկ եթէ հակառակն է, այսինքն՝ այս կեանքը համարենք անանց եւ սիրենք՝ վայելելով այն, եւ մոռանանք ապագայ կեանքը, ապա պիղծ եւ մեղաւոր կը դառնանք:

Ինչպէ՞ս է դրսեւորւում արդարութիւնը Աստուծոյ եւ մարդու յարաբերութեան մէջ

Հաւատացեալները պէտք է արդարութիւն հանդէս բերեն նաեւ Աստուծոյ եւ մարդու յարաբերութեան խնդրում: Պէտք է հաւատալ Աստծուն՝ ամէն ինչի Արարչին, եւ այն բանին, որ ամենայն ինչ, ինչ Նա արարել է, մարդու համար է, իսկ մենք Աստուծոյ ծառաներն ենք: Աստուծոյ հանդէպ պէտք է երկիւղ ունենալ եւ հետեւել Նրա պատուիրաններին: Իսկ ամենակարեւորը՝ Նրան սիրել ամէն ինչից վեր: Այս արդարութիւնը կոչւում է աստուածային: Մարդուն իր հերթին պէտք է սիրել սեփական անձի պէս, դրանում էլ արտայայտւում է արդարութիւնը մարդու հանդէպ: Եւ որքան աւելի մարդ սիրի իր հոգին, այնքան աւելի կը սիրի ընկերոջը: Երբ

մէկն աւելի վեր է՝ փարիքով, իշխանութեամբ, իմացութեամբ թէ հարստութեամբ, այս յարաբերութեան մէջ պէտք է ցուցաբերել յարգանք եւ հնազանդութիւն: Իսկ նրանց հանդէպ, ովքեր ցած են փարիքով, ունեցուածքով, իմացութեամբ, պէտք է գթասրտութիւն եւ խնամատարութիւն հանդէս բերել: Իսկ հաւասարների հետ պէտք է ընկերանալ աննախանձ ընկերութեամբ, եւ սրանք բոլորն արդարութեան գործեր են:

Արդարութիւնն արդեո՞ք լինում է նաեւ անպէտք եւ չար

Արդարութիւնն ինքնին ամենեւին ո՛չ բարիք եւ ո՛չ էլ չարիք է: Քանզի երբեմն կպչում է չարին, երբեմն էլ՝ բարուն: Արդարութիւնը, որը կպչում է չարին, անպէտք եւ չար է համարւում, քանզի նրանում գթասրտութիւն չկայ: Իսկ բարի արդարութեան մէջ գթասրտութիւնն է ամփոփուած: Ուստի, երբ Մարգարէները խօսում էին Աստուծոյ արդարութեան մասին, Նրան միայն արդար չէին անուանում, այլ՝ ողորմած եւ գթասիրտ: «*Ողորմած, գթասիրտ և արդար է Տէրը*» /Սաղմ. 111:4/: Բարի եւ շնորհալի արդարութեան օրինակ մենք տեսնում ենք Քրիստոսի պատուիրաններում. «*...սիրեցէ՛ք ձեր թշնամիներին, օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին, բարութի՛ւն արէք ձեզ ատողներին և աղօթեցէ՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում*» եւ այլն: Ճիշդ այս արդարութիւնն է բարի եւ հոգեւոր, քանզի իր մէջ գթասրտութիւն եւ սէր է կրում:

Կա՞ն արդեօք անպէտք եւ չար արդարութեան օրինակներ

Զորօրինակ, եթէ մէկը երդում է տուել սպանել մէկին, կամ որեւէ չար բան անել, եւ յանուն իր արդարութեան անում է այդ, ապա այդ արդարութիւնը նոյնպէս անպէտք է: Օրինակ՝ Հերովդէսը յանուն իր երդման գլխատեց Սբ. Յովհաննէսին: Անպէտք է նաեւ մարմնական սրբութեան արդարութիւնը: Այդպիսի «արդարներին» Տէրն ասել է հետեւեալը. «*...որ նման էք սպիտակեցրած գերեզմանների, որոնք դրսից գեղեցիկ են երևում, մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով և ամենայն ապականութեամբ: Նոյնպէս և դուք, դրսից*

մարդկանց արդար էք երևում, մինչ ներսից լի էք կեղծաւորութեամբ և անօրինութեամբ» /Մատթ. 23:27-28/: Այսպիսի սրբութիւնն անպէտք է եւ հոգուն անօգուտ, քանզի սրտով սրբերն են տեսնում Աստծուն: Անպէտք արդարութիւն կարելի է տեսնել անգամ հենց քրիստոնեաների շրջանում: Ոմանք, ընկնելով հերձուածի մէջ, համարում են, որ ամուսնացողներն անօրէն են վարուում, նոյնպէս եւ մսային կերակուր ճաշակողները: Սբ. Պօղոսն այս մասին զգուշացնում է. «*...ոմանք պիտի հեռանան հաւատից... որոնք արգելում են ամուսնանալ և հեռու են մնում ա՛յն կերակուրներից, որ Աստուած ստեղծեց...»* /Ա Տիմ. 4:1-3/: Այդ պատճառով էլ Առաքեալը գրում է. «*Ամուսնութիւնն ըստ ամենայնի յարգելի է, և ամուսնական անկողինը՝ սուրբ: Եւ Աստուած պիտի դատի շնացողներին և պոռնիկներին»* /Եբր. 13:4/: Եւ այն, ինչ Աստուած մաքրել է, չի կարելի անմաքուր կերակուր համարել, քանզի «*ով կարծում է, թէ մի բան պիղծ է, այդ իր համար է պիղծ»* /Հռոմ. 14:14/:

Ուստի, եթէ միս չճաշակել յանուն մարմինը հիւծելու, ապա այդ ընդունելի է. «*...թէպէտև մեր այս արտաքին մարդը քայքայւում է, բայց մեր ներքին մարդը նորոգւում է օրըստօրէ»* /Բ Կորնթ. 4:16/: Իսկ եթէ միս չուտել եւ գինի չխմել այն պատճառով, որ դրանք անմաքուր ես համարում, ապա այդպիսի մարդը մահացու մեղք է գործում եւ հերձուածող է:

Կարո՞ղ է արդեօք բարի արդարութիւնը վերածուել անպէտքի եւ չարի

Այո, կարող է, ինչպէս ասում է Սողոմոնը. «*...արդար կայ, որ իր արդարութեան մէջ կորչում է»* /Ժող. 7:16/, եւ դրա օրինակն է փարիսեցու աղօթքը, ում Աստուած հպարտութեան համար դատապարտեց: Այդպէս էլ ամէն արդար մարդ, որ բարի գործեր է անում՝ պահքի մէջ է, աղօթքի, ողորմութիւն է տալիս եւ այլն, բայց հպարտութեան մեղքի մէջ է, նա արդէն իսկ կորցրել է եւ պղծել արդարութեան գործերը: Ուստի՝ խոնարհ մեղաւորն աւելի բարի է, քան հպարտ արդարը, քանզի մեղաւորն իր խոնարհութեամբ, ապաշխարութեամբ, խոստովանութեամբ եւ բարի գործերով փրկում է իր հոգին:

Իսկ հպարտ արդարն իրեն միշտ արդար է համարում եւ մնում է այդ չարիքի մէջ եւ չի խոնարհւում Աստուծոյ պատուիրանների առաջ, Սրբերի օրէնքների եւ Հայրերի խրատների առաջ: Ուսպի եւ կորցնում է իր արդարութեան գործերը, աւելի ճիշտ՝ այդ արդարութիւնը դառնում է անպէտք եւ չար:

Ինչպէ՞ս է դրսեւորւում Աստուծոյ արդարութիւնը

Նշենք, որ արդարութիւնն ու ողորմածութիւնը դրսեւորւում են Աստուծոյ բոլոր գործերում: Երբեմն արդարութիւնը ծածուկ է, իսկ ողորմածութիւնն՝ ակնյայտ: Դա մենք տեսնում ենք Քրիստոսի առաջին գալստեան մէջ եւ այն ժամանակ, երբ Աստուած արդարացնում է անիրաւին: Երբեմն էլ արդարութիւնն ակնյայտ է, իսկ ողորմածութիւնը՝ ծածուկ: Դա մենք կը տեսնենք Քրիստոսի երկրորդ գալստեան մէջ: Պատահում է, որ երկուսն էլ ծածուկ են, ինչպէս բոլոր արդարների եւ անմեղների տառապանքների մէջ, ինչպէս նաեւ՝ մանուկների հիւանդութեան դէպքերում: Պատահում է նաեւ, որ երկուսն էլ ակնյայտ են, ինչպէս արդարների հատուցման եւ մեղաւորների պատժման դէպքերում: Քանզի Աստուած փառաւորում է արդարներին աւելի, քան նրանք արժանի են, եւ պատժում մեղաւորներին նուազ չափով, քան նրանք արժանի են: Բայց, թէեւ Աստուած արդար է, Նրան աւելի շատ ողորմած են անուանում: Քանզի Նա, երբ արդարութեան գործեր է անում, նոյնն էլ պահանջում է մարդկանցից: Իսկ երբ ողորմութեան գործեր է անում, ոչինչ չի պահանջում, ինչը երեւում է Բանն Աստուծոյ մարմնացման մէջ, Ով, դառնալով Կատարեալ Մարդ, արդարացրեց եւ անհատոյցաբար փրկեց մեզ Իր շնորհով: Քանզի նա, ով, հաւատալով Քրիստոսին, կը մկրտուի, մեղքերի թողութիւն կը ստանայ այնպէս, ինչպէս եւ այն մարդը, ով մկրտութիւնից յետոյ մեղանչելով՝ ապաշխարութեամբ կու գայ խոստովանելու եւ նոյնպէս մեղքերի թողութիւն կը ստանայ:

ԽՈՀԵՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է խոհեմութիւնը

Խոհեմութիւնը հոգու զօրութիւն է, որով ընտրութիւն ենք կատարում բարու եւ չարի միջեւ:

Ի՞նչի համար է տրուած խոհեմութիւնը

Խոհեմութիւնը մարդուն տրուած է, որպէսզի նա այլ մարդկանց հանդէպ նենգ չգտնուի, նաեւ, որ այլք չխաբեն իրեն: Ահա թէ ինչու Տէրն ասում է. «*Խորագէ՛տ եղէք օձերի պէս և միամիտ՝ աղաւնիների նման*» /Մատթ. 10:16/: Իմաստութիւնը մեզ պաշտպանում է այլ մարդկանցից. խոհեմ մարդը պէտք է չվախենայ որեւէ բանից, այլ պէտք է խորհի, որպէսզի չխաբուի, իսկ պարզութիւնը չարիք չի գործում այլոց հանդէպ: Իմաստուն մարդն առանց պարզութեան կարող է խորամանկ դառնալ, իսկ պարզամիտ մարդն առանց իմաստութեան՝ յիմար:

Կարելի՞ է ասել, որ խոհեմութիւնը նաեւ իմաստութիւն է համարւում

Այո, կարելի է այդպէս ասել:

Կարո՞ղ է արդեօք իմաստութիւնը դիւային լինել

Այո, կարող է: Նշենք, որ ամենայն իմաստութիւն եւ իմացութիւն իջնում է Աստծուց, որպէսզի մարդ նրանցով ճանաչի Աստծուն եւ բարին գործի: Բայց երբ մարդիկ, Աստծուց այդ իմաստութիւնը ստանալով, այն օգտագործում են մեղք եւ կախարդութիւն գործելու եւ ամենայն չարը ճանաչելու համար, ապա այն դառնում է շնչաւոր, դիւային եւ ունայն: Սբ. Յակոբոսն այդ մասին էլ հենց ասում է. «*Իսկ եթէ ձեր սրտերում նախանձ, դառնութիւն, հակառակութիւն ունէք, մի՛ պարծեցէք, որ սուտ էք հանում ճշմարտութիւնը: Այս իմաստութիւնը ի*

վերուստ իջած չէ, այլ՝ երկրաւոր է, մարմնաւոր և դիւային» /Յակ. 3:14-16/:

Ինչպիսի՞ն է հոգեւոր իմաստութիւնը

Երբ մարդ սկսում է ճանաչել Աստծուն, որ Նա ամէն ինչի Արարիչն է, երբ սկսում է ճանաչել Սուրբ Երրորդութիւնը, յաւիտենական կեանքը, այսինքն՝ այն, որ բարի մարդկանց համար հանգիստ է պատրաստւում, իսկ մեղաւորների համար՝ տանջանքներ: Նաեւ, երբ մտածում եւ ցանկանում է յաւիտենական հանգիստ եւ սարսափում է տանջանքներից. սերտում է Սուրբ Գիրքը, հաւատում է Աստուծոյ պատուիրաններին. այս է ահա հոգեւոր եւ երկնային իմաստութիւնը: Ահա հենց այդ իմաստութեան մասին է խօսւում Սուրբ Գրքում, իմաստութիւն, որը չունէին հելլէնական իմաստունները:

Ինչո՞ւ են Սուրբ Գրքի շատ իմաստուն խօսքեր դժուարըմբռնելի եւ ծածկուած են առակներով

Դա իր պատճառն ունի, քանի որ հեշտօրէն գտնուածը կարելի է հեշտօրէն էլ արհամարհել, ուստի ծածուկ է, որպէսզի մարդն ինքը, ջանք գործադրելով, դիմի վարդապետին՝ այդպէս գտնելով ճշմարտութիւնը:

Արդեո՞ք խորհուրդի համար ամէնքին կարելի է մօտենալ

Խրատ փնտռողը պէտք է իմանայ, թէ յատկապէս ումից է խորհուրդ ընդունում: Ուստի պէտք է իմանալ՝ իմաստո՞ւն է խրատ տուողը, բարի՞ են արդեօք նրա խրատները: Քանզի նրա իմաստութիւնը կարող է լինել շնչաւոր եւ դիւային, որից ոչ մի հոգեւոր օգուտ չի կարող լինել: Իսկ հոգեւոր եւ աստուածային իմաստութեանը պէտք է հաւանութիւն տալ եւ հետեւել նրան:

Ինչպէ՞ս վարուել, եթէ խորհուրդն անհասկանալի է կամ դժուարիրագործելի է թւում

Եթէ խրատում են՝ ասելով. «*...չարիք մի՛ գործիր, բարիք գործիր, այսինքն՝ մի՛ կեր, մի՛ խմիր, մի՛ զուգուիր և այլն,*

մտքում ունեցիր մահուան յիշողութիւնը, գալիք դատաստանը և դժոխքի տանջանքները», եւ այս խրատները թւում են դժուար, ապա պէտք չէ յուսահատուել բառերի ծանրութիւնից եւ հեռանալ խրատողից, ինչպէս եւ որոշ աշակերտներ թողեցին Քրիստոսին՝ ասելով. «*Խիստ է այդ խօսքը. ո՞վ կարող է այն լսել*» /Յովհ. 6:61/: Աւելի լաւ է մարդ խրատատուին յայտնի իր տարակուսանքը, որպէսզի վերջինս նրան Սուրբ Գրքից բացատրի իր խրատների իմաստը:

Ի՞նչ կը լինի, եթէ մարդ ուսուցչին չյայտնի իր տարակուսանքը

Եթէ մարդ չհարցնի, ապա կը լինի, ինչպէս Եւայի դէպքում, երբ նա իր միամտութեան պատճառով լսեց սատանային եւ մեղանչեց: Մինչդեռ Սուրբ Աստուածածինը, լսելով Հրեշտակապետի ողջոյնը, սկզբում մտածեց, ապա Հրեշտակապետին հարցրեց այդ ողջոյնի մասին եւ ապա այն ընդունեց. «*Ահա՛ աղախիկ ես եմ Տիրոջ աղախինը, թող քո խօսքի համաձայն լինի ինձ*» /Ղուկ. 1:38/: Այդպէս էլ բոլոր մարդիկ պէտք է դիւրահաւատ չգտնուեն ամէն խօսքի նկատմամբ, որ չընկնեն ինչպէս Եւան, բայց պէտք է չլինել նաեւ Զաքարիայի նման, ով պատժուեց անհաւատութեան պատճառով: Այլ պէտք է լինել Սբ. Աստուածածնի նման՝ հարցնել, ճանաչել ճշմարտութիւնը, ապա եւ ընդունել այն: «*Քանզի մարդու իմաստութիւնը նոյնն է, ինչ աղը կերակրի մէջ, քանզի ամենայն կերակուր անհամ և անպէտք է առանց աղի*,- ասում է Սբ. Տաթեւացին,- *նոյնպէս և մարդու գործերը՝ հոգևոր և մարմնական, անպէտք և քամահրելի են առանց իմաստութեան*»:

Իսկ ինչպէ՞ս վարուել, եթէ իմաստուն խրատատու չկայ

Եթէ իմաստուն խրատատու չկայ, մենք պէտք է դիմենք Եկեղեցու Սուրբ Հայրերին, ովքեր՝ Սուրբ Հոգուց ուսանած, մեզ ի մխիթարութիւն թողել են հսկայական գրաւոր ժառանգութիւն, որը նպաստում է Աւետարանի ճիշտ ընկալմանը եւ հետեւաբար՝ Նրա ճշգրիտ կատարմանը: Դրա համար էլ հայրաբանական գրքերը

իմաստուն դաստիարակների բացակայութեան պայմաններում կարող են հիմնական ուղեցոյց դառնալ, փրկուել եւ անգամ քրիստոնէական կատարելութեան հասնել ցանկացողների համար:

ԱՐԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է արիութիւնը

Արիութիւնը զօրութիւն է, որի օգնութեամբ հեշտօրէն կարելի է տանել ամէն ինչ: Եւ նրա գործն ամփոփւում է հետեւեալում. «*...կորուստների ժամանակ չխորտակուել, իսկ հաճոյքների մէջ չփափկել*»: Ուստի՝ արիասիրտ մարդը չի վախենում սպառնալիքներից եւ քաջ է մնում հոգեւոր եւ մարմնական փորձութիւնների ժամանակ: Հոգեւոր ճգնութիւնների մէջ նա գտնւում է կամաւորապէս եւ զուարթօրէն, ամէն ինչ կրում է համբերութեամբ եւ սիրում է աշխատանքը:

Ինչպէ՞ս արիութիւն ձեռք բերել

Աշխատանքի եւ ճգնութիւնների միջոցով մարդը կարող է արիութիւն ձեռք բերել, քանզի մարդու մարմինը, մշտապէս գտնուելով աշխատանքի եւ ճգնութիւնների մէջ, թոյլ է մեղքերի համար, իսկ մտքերը սուրբ են: Եւ հակառակը՝ պարապ մարդու մարմինը ծանրանում է ծուլութիւնից, իսկ առողջութիւնը թոյլ է, այդ պատճառով նա չի կարող արիաբար դիմակայել մեղքին: Քանզի «*...պարապութիւնը բոլոր մեղքերի մայրն է*»:

Որտեղի՞ց կարելի է իմանալ, որ աշխատելը կարեւոր է

Բնութիւնն ինքն է մեզ ուսուցանում մշտապէս աշխատել եւ ճգնութիւններ գործել, քանզի մենք այս աշխարհ ենք եկել ոչնչով, այսինքն՝ հոգու համար չունենք ո՛չ սրբութիւն, ո՛չ իմաստութիւն եւ այլ առաքինութիւններ, իսկ մարմնի համար չունենք ո՛չ հագուստ, ո՛չ սնունդ: Ուստի, մարմնի կարիքների համար պէտք է աշխատել, իսկ հոգու համար՝ գտնուել հոգեւոր ճգնութիւնների մէջ:

Այդպէս եւ Աստուած, երբ ստեղծեց մարդուն, նրան պարապ չթողեց, այլ դրեց նրան Դրախտում, որպէսզի նա մշակի եւ պահպանի այն: Եթէ նոյնիսկ մարդ մոռանայ Աստուծոյ Պատուիրանները կամ Սուրբ Հայրերի խրատները, նա կարող է սովորել աշխատասէր կենդանիներից, որոնց նա մշտապէս աչքի առաջ ունի. «*Մրջունի մօտ գնա՛, ո՛վ ծոյլ, նախանձի՛ր նրա գործերին և իմաստո՛ւն եղիր նրանից աւելի*» /Առակ. 6:6/: Մարդու համեմատ մրջունը թոյլ եւ ոչ բանական արարած է: Նա իր գործում օգնականներ չունի, ինչպէս մարդը, որն ունի եզներ եւ աշխատանքային գործիքներ: Մրջունն ուսուցիչներ եւ ղեկավարներ չունի, մինչդեռ մարդը շատ ունի: Բայց այս ամէնը մրջունին չի խանգարում ջանք թափել եւ անդադար աշխատել: Նոյնպէս եւ մենք պէտք է ամէնօրեայ աշխատանքի մէջ լինենք, ամէն օր աղօթենք, մշտապէս սովորենք: Օրինակ՝ սուրը, որը պատեանում է եւ չի օգտագործուում, արագ ժանգոտում է, «*...այդպէս էլ մարդու հոգին է ժանգոտում մեղքերից, քանզի մնում է առանց աշխատանքի*»:

ՈՂՋԱԽՈՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է ողջախոհութիւնը

Ողջախոհութիւնը նոյնն է, ինչ սրբութիւնը: Ողջախոհութիւնն իր մէջ ներառում է ժուժկալութիւն, համեստութիւն եւ սթափութիւն, որոնք արգելք են դնում զգայարանքների ցանկութիւնների եւ մարմնական հաճոյքների առջեւ:

Ի՞նչ է հարկաւոր ողջախոհութեան հասնելու համար

Ողջախոհութեան հասնելու համար անհրաժեշտ է. 1. խորհուրդները պահել մաքուր, 2. զսպել աչքերի չար հայեացքները, 3. պահել լեզուն եւ ականջները, 4. բերանը պահպանել շատակերութիւնից, 5. իսկ ամենագլխաւորը՝ ունենալ մահուան մասին խոկում, Աստուծոյ երկիւղ եւ Աստուծոյ մասին յիշողութիւններ:

Ինչո՞ւ է կարեւոր ունենալ մահուան մասին խոկում, Աստուծոյ երկիւղ եւ Աստուծոյ մասին յիշողութիւններ

Իմաստուն մարդը, եթէ ցանկանում է իր կեանքն անցկացնել բարութեամբ, եւ չկործանուել առօրեայ կեանքի ծովում եւ բանսարկուի գայթակղութիւններից, մշտապէս պէտք է ունենայ մահուան մասին խոկում: Քանզի հենց մահուան մասին խոկման ոչնչացումն էլ մարդուն ստիպում է մեղանչել, ինչպէս եւ Ադամը, ով, չյիշելով մահը, մեղանչեց Աստուծոյ պատուիրանի դէմ:

Մինչդեռ Աստծուց երկիւղելը բոլոր առաքինութիւնների սկիզբն է: Այն մեղաւորներին ապաշխարութեան է տանում, արդարներին էլ հաստատում է փրկութեան նեղ ճանապարհի վրայ: Իսկ երբ յիշում ենք Աստծուն, աւելանում է Նրա հանդէպ սէրը, եւ մարդը կապւում է Նրան: «*Աստուծոյ մասին յիշելը մեզ համար զէնք է և ամուր պատ, քանզի երբ յիշում ենք Աստծուն, այդտեղից դևերը փախչում և անհետանում են, և մենք խուսափում ենք նրանց գայթակղութիւններից*»:

Ի՞նչն է ողջախոհութեան անքակտելի մաս համարւում

Ողջախոհութեան անքակտելի մաս է համարւում նաեւ կուսութիւնը պահելը, որը լինում է երեք տեսակի. 1. հոգով եւ մարմնով, այսինքն՝ բոլոր մտքերով եւ բոլոր զգայարանքներով, եւ սա ամենակատարեալն է, ինչպէս Եղիայի եւ Յովհաննէսի եւ այլոց դէպքում էր, 2. թէեւ մարդ գտնւում է ամուսնութեան մէջ, հոգով կոյս է եւ ողջախոհ, ինչպէս Աբրահամն էր, Իսահակը, Յակոբը եւ այլ սրբեր, որոնք ամուսնութեամբ հաճոյ եղան Աստծուն: Այս ճանապարհը նոյնպէս կատարեալ է, բայց ոչ այնքան, որքան առաջինը: 3. Իսկ այն մարդը, ով պահում է մարմնի կուսութիւնը, բայց ոչ՝ հոգու, դուրս է մնում Արքայութիւնից, ինչպէս յիմար կոյսերը, ովքեր կոյս էին մարմնով, բայց ոչ՝ հոգով:

Ի՞նչ պէտք է անեն կոյսերը, եթէ ցանկանում են ողջախոհ ապրել

Եթէ կոյսերը ցանկանում են ողջախոհ ապրել եւ կատարելութեան մէջ կենալ, ապա պէտք է պահեն իրենց զգայարանքներն ու լեզուն, լինեն սթափ՝ ուտելու եւ խմելու մէջ, որոնք կրքերի պատճառ են լինում: Նաեւ պէտք է աշխատանքի եւ ճգնութիւնների մէջ լինեն եւ համեստ հագուստ կրեն: Եւ ամենակարեւորը՝ պէտք է խուսափեն մեղքի պատճառներից:

Այրիութիւնը քանի՞ տեսակ է լինում

Այրիութիւնը, ինչպէս եւ կուսութիւնը, լինում է երեք տեսակի. 1. գերկատարեալ, երբ այրին զօր ու գիշեր պահքով եւ աղօթքով ծառայում է Աստծուն, 2. այրի, ով հոգ է տանում տան անդամների մասին, բայց դա գերադաս չէ, ինչպէս առաջինը, 3. այրի, ով ապրում է պարապ ու հեշտասէր կեանքով, եւ այդ ճանապարհը յաւիտենական կործանման է տանում:

Ի՞նչ պէտք է անեն այրիացածները, եթէ ցանկանում են ողջախոհ ապրել

Իսկ այրիացածները, ովքեր նոյնպէս ցանկանում են պահել ողջախոհութիւնը, պէտք է տանը մնան կամ էլ աղօթեն վանքում, ինչպէս Աննան էր անում: Քանզի այրիներին, որ տնից տուն են շրջում, դատապարտում է նաեւ Սուրբ Պօղոսը (տե՛ս Ա Տիմ. 5:13): Նրանք նաեւ պէտք է ժուժկալ լինեն ուտելու եւ խմելու մէջ, եւ համեստ հանդերձանք կրեն:

Այրիներին շատ վնաս է բերում նաեւ գինին, որը ըմպելով, շատերը տղամարդ ցանկացան: Դրա համար էլ Սբ. Տաթեւացին գտնում է, որ. «...*միայն այն ժամանակ է այրին ողջախոհ, երբ հրաժարւում է գինուց*»: Իսկ ի՞նչ գովասանքի է արժանի այն այրին, ով հաւատարիմ է մնում իր հանգուցեալ ամուսնուն: Իսկ ի՞նչ պարգեւ է սպասւում նրան, եթէ ոչ՝ Երկնքի Արքայութիւնը: Նաեւ Տէրն է այս մասին ասում. «... *ներքինիներ էլ կան, որոնք*

երկնքի արքայութեան համար իրենք իրենց ներքինիներ են դարձրել» /Մատթ. 19:12/:

Ի՞նչ պէտք է անեն ամուսնութեան մէջ գտնուողները, եթէ ցանկանում են ողջախոհ ապրել

Ողջախոհ պէտք է ապրեն նաեւ ամուսնացեալները, քանզի ամուսնութիւնը տրուած է, որպէսզի մարդ խուսափի շնութիւնից, նաեւ՝ որդեծնութեան համար, այլ ոչ թէ՝ կրքին յագուրդ տալու համար: Ամուսնութեան միութիւնը երկակի է լինում. 1. սրտերի միութիւն, 2. մարմնական միութիւն, որը սեռերի միախառնումն է: Եւ, որպէսզի այս միութիւնը ողջախոհ լինի, ամուսինները պէտք է միմեանց մերձենան զուսպ, համեստօրէն եւ ոչ յաճախ: Օրինակ՝ եթէ քիչ քանակութեամբ գինի խմես, ապա դա մեղք չէ, իսկ շատ քանակութեամբը հարբեցողութիւն է եւ մեծ մեղք, նոյնը եւ՝ ամուսնութեան մէջ:

Ամուսինների համար կարեւոր է նաեւ ժամանակը, քանզի չի կարելի միմեանց մերձենալ Եկեղեցու կողմից չարտօնուած օրերին, այսինքն՝ պահքի, կիրակի, տօն եւ այլ օրերին: Եւ ամենակարեւորը՝ նրանք պէտք է չդաւաճանեն միմեանց, այսինքն՝ չպղծեն անկողինը եւ չքանդեն ամուսնութեան միութիւնը, ինչի մասին ասում է նաեւ Սուրբ Պօղոսը. «*Ամուսնութիւնն ըստ ամենայնի յարգելի է, և ամուսնական անկողինը՝ սուրբ: Եւ Աստուած պիտի դատի շնացողներին*» /Եբր. 13:4/:

Ինչպիսի՞ յարաբերութիւններ պէտք է լինեն ամուսինների մէջ

Ամուսինները պէտք է միաբան լինեն, նոյնկերպ խորհեն հոգեւոր եւ մարմնական հարցերի շուրջ: Հակառակ դէպքում՝ «*Ինքն իր մէջ բաժանուած ամէն թագաւորութիւն աւերւում է, և ինքն իր մէջ բաժանուած ամէն քաղաք կամ տուն կանգուն չի մնայ*» /Մատթ. 12:25/:

Գինը պէտք է ասպուածապաշտ լինի եւ երկիւղած, իսկ տղամարդը՝ բարի եւ հաւատարիմ ամուսին լինի, որպէսզի նրանք խաղաղութեան մէջ ապրեն, սիրոյ եւ համերաշխութեան, իսկ ապագայում յաւիտենական կեանք ժառանգեն: Ահա սա է բարի,

հաւատարիմ եւ ողջախոհ ամուսնութիւնը: Նաեւ՝ տղամարդը գլուխն է, իսկ կինը՝ մարմինը, եւ նրանք մէկ մարմնի մէջ միացած են սիրով եւ պսակի օրհնութեամբ: Եւ ինչպէս մարմինն առանց գլխի եւ գլուխն առանց մարմնի անպէտք ու անկեանք են, այնպէս էլ տղամարդն առանց կնոջ եւ կինն առանց տղամարդու անպէտք են, քանզի կեանք չունեն: Եւ ինչպէս այդ մարմինն այլ գլխի հետ չի կարող մէկ մարմին կազմել, իսկ գլուխը՝ մէկ այլ մարմնի հետ, այդպէս էլ տղամարդը չի կարող այլ կնոջ գլուխ լինել, իսկ կինը՝ մէկ այլ տղամարդու մարմին: Իսկ եթէ տղամարդն ու կինը խախտում են սիրոյ եւ օրհնութեան կապը եւ միանում ուրիշի հետ, ապա իրենք իսկ իրենց զրկում են Պսակի օրհնութիւնից: Իսկ իմաստուն կինը պէտք է աչքեր ունենայ՝ մշտապէս ուղղուած իր ամուսնուն, եւ ապրի ըստ նրա կամքի: «*Եւ կինը պէտք է ամուսնուց չհեռացնի իր սէրը, և պէտք է թոյլ չտայ, որ ամուսինը հեռանայ իր սիրուց*»:

ՄԵՂՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է մեղքը

«*Մեղքն այն է,* - ինչպէս նկատում է Սուրբ Տաթեւացին, - *երբ մարդ շրջում է դէմքն անփոփոխելի բարիքից, որն է Աստուած, և դիմում է փոփոխելի բարուն, որն արարածներն են*»:

Ի՞նչ տեսակ մեղքեր են լինում

Անուանմամբ՝ մեղքը մէկ է, բայց բաժանւում է երկուսի՝ սկզբնական եւ ներգործական մեղքերի: Ներգործականն էլ իր հերթին բաժանւում է մահացու եւ ներելի մեղքերի:

Մեղքերն իրարից տարբերու՞մ են արդեօք

Այո, նրանք բոլորն էլ տարբերւում են իրարից: Սկզբնական մեղքի՝ ադամական մեղքի համար պատասխան են տալիս բոլորը, իսկ ներգործական մեղքի համար պատասխան է տալիս միայն այդ մեղքը գործողը: Սկզբնական մեղքը մէկ է, իսկ միւսները բազմաթիւ են: Նաեւ՝ սկզբնական մեղքը մարդու վրայ իշխում է անկախ վերջինից եւ վերջինիս կամքի, մինչդեռ միւս մեղքերը մարդու վրայ իշխում են նրա իսկ կամքով:

Իսկ այնքանով, որքանով նեփից բացուած վէրքը տարբերւում է փշի առաջացրած վէրքից, այնքանով էլ տարբեր են մահացու եւ ներելի մեղքերը:

Ո՞րն է մեղքերի պատճառը

1. Չար սովորութիւնները, այսինքն, երբ մարդ, գտնուելով չար ընկերակցութիւնների մէջ, մեղսալի հմտութիւններ է ընդօրինակում մարդկանցից: 2. Անգիտութիւնը, այսինքն, երբ մարդ, ծանօթ չլինելով Սուրբ Գրքին, պատուիրաններին եւ Սուրբ Հայրերի գրուածքներին,

չարիք է գործում, մտածելով, որ լաւ բան է անում: 3. Մարմնի բնութիւնը, այսինքն՝ չորս տարերքներից մէկի գերակշռութիւնը, զորօրինակ՝ բարկացկոտի մէջ կրակն է գերակշռում, վաւաշոտի, թեթեւամիտի եւ հպարտի մէջ՝ օդը: Հողը գերակշռում է տխուր, իսկ ջուրը՝ ծոյլ մարդկանց մէջ: 4. Սատանայի չար խորամանկութիւնները:

Ինչպէ՞ս է որոշւում մեղքերի ծանրութիւնը

Մեղքի ծանրութիւնը որոշւում է նաեւ ըստ նրա կատարման տարբեր աստիճանների: Օրինակ՝ ըստ որակի. երկու մարդ ընկել են որկրամոլութեան մեղքի մէջ, մէկը՝ քաղցից եւ չիմացութիւնից, միւսը՝ գիտակցաբար եւ իր ցանկութեամբ: Ըստ քանակի՝ օրինակ, մէկ անգամ ընկնել պոռնկութեան մէջ կամ հազար անգամ: Նաեւ որոշւում է ըստ այն հանգամանքի, թէ ում նկատմամբ է արւում մեղքը՝ Աստուծոյ, Եկեղեցու, ընկերոջ, թէ սեփական անձի: Ըստ վայրի՝ Եկեղեցում, վանքում, քաղաքում, գիւղում, թէ, ասենք, անառականոցում: Ըստ ժամանակի՝ մանկական տարիքում է կատարուել մեղքը, թէ՝ ծերունական, հասարակ օրերին, թէ Տէրունական տօն օրերին:

Ի՞նչ տարբերութիւն կայ ազատ կամքով եւ ակամայ կատարած մեղքի մէջ

Ակամայ մեղանչածը նման է այն մարդուն, ով շեղուել է ճանապարհից, բայց շուտով եկ է դարձել: Իսկ ազատ կամքով մեղանչողը որքան գնում, այնքան շատ է շեղւում ճանապարհից եւ չի կարողանում նորից գտնել այն: Ակամայ մեղանչածը նման է հիւանդի, իսկ միւսը՝ մեռեալի: Ակամայ մեղանչածը լսում է խրատը եւ թողնում է մեղքը, իսկ միւսը՝ ոչ: Ակամայ մեղանչողը մեղանչում է տխրութեամբ՝ ունենալով Աստուծոյ երկիւղը եւ փրկութեան յոյսը: Իսկ ազատ կամքով մեղանչողը մեղանչում է ուրախութեամբ՝ չունենալով վախ, քանզի կորցրել է յոյսը:

ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐ

Քանի՞սն են մահացու մեղքերը

Մահացու մեղքերը եօթն են՝ հպարտութիւնը, նախանձը, բարկութիւնը, ծուլութիւնը, ագահութիւնը, որկրամոլութիւնը եւ բղջախոհութիւնը:

Ինչո՞ւ են վերոնշեալ մեղքերը համարւում մահացու

Այս մեղքերն անուանում են մահացու, որովհետեւ նրանք մարդուն դարձնում են յաւիտենական մահուան պարտական: Մահացու մեղքը կարելի է համեմատել մահուան հետ: Քանզի մահը, որը մարմնի ապականութիւնն է, լինում է ջերմութեան նուազումից: Սկզբում ջերմութիւնը սկսում է նուազել մարմնի վերջոյթներում, մինչեւ կը հասնի սրտին, որը կեանքի սկիզբն է, իսկ երբ այն վերջանում է նաեւ սրտում, վրայ է հասնում մահը: Այդպէս էլ վրայ է հասնում հոգու մահը, երբ մահացու մեղքի պատճառով նուազում է Աստուծոյ սէրը: Եւ ինչպէս մարմինն է կենդանի հոգով, այդպէս էլ հոգին կենդանի է Աստծով: Եւ ինչպէս հոգու հեռացումը մարմնից մարմնի համար մահ է նշանակում, այնպէս էլ Աստծուց հեռանալը մահ է նշանակում հոգու համար:

ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ինչո՞ւ է հպարտութիւնը համարւում առաջին մեղքը

Հպարտութիւնն առաջին մեղքն է, քանի որ հենց այս մեղքով սատանան մեղանչեց երկնքում եւ ընկաւ: Եւ դրա պատճառն այն էր, որ սատանան, տեսնելով ինքն իրեն անմարմին եւ անմահ, ապստամբեց Արարչի դէմ եւ փառք չտուեց Նրան, ինչի մասին Եսային ասում է. «...*կը բարձրանամ ամպերից էլ վեր, կը նմանուեմ Բարձրեալին*» /Ես. 14:14/: Իսկ երբ այդ խորհեց, վռնտուեց երկնքից: Այդ պատճառով Տէրը հողից արարեց մարդուն՝ բնական կրքերով, որպէսզի նա մշտապէս խոնարհութեան մէջ կենայ: Իսկ սատանան, տեսնելով

Ադամի փառքը, խաբեց նրան նոյն կրքով, որի մէջ նա ինքը գտնուել էր. «...*այն օրը, երբ դրանից ուտէք, կը բացուեն ձեր աչքերը, և դուք կը լինէք աստուածների նման*» /Ծննդ. 3:5/: Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, այս մեղքը սատանային երկնքից վար գցեց, իսկ Ադամին դուրս հանեց Դրախտից:

Ի՞նչպէս է դրսեւորւում այս մեղքը

Այս մեղքը տեսակով մէկ է, բայց դրսեւորւում է տարբեր կերպ: Այն երեւան է գալիս որպէս ինքնահաճութիւն, երբ մարդ չի ճանաչում ոչ մէկի կարծիքը եւ հետեւում է իր կամքին եւ կարծիքին: Որպէս հպարտութիւն, երբ մարդ իրեն բոլորից վեր է համարում: Մեծամտութիւն, երբ մարդ ոտնատակ է տալիս այլոց եւ ցանկանում է, որ բոլորը իրենից ցածր եւ փոքր լինեն: Փառասիրութիւն, երբ մարդ սիրում է ուրիշներից փառք, պատիւ եւ գովասանք ընդունել:

Ինչպէ՞ս է Աստուած վերաբերւում հպարտներին

Աստուած ողորմած է բոլոր մեղաւորների հանդէպ, ինչպէս շնացող կնոջ, աւազակի եւ մաքսաւորի հանդէպ, Նա ողորմում եւ ներում է բոլոր մեղքերը, բայց «...*ամբարտաւաններին հակառակ է*» /Յակ. 4:6/ եւ չի ներում:

Ինչո՞ւ Աստուած հպարտներին չի ներում

Հպարտութեան մեղքը վերաբերում է հոգու բանական մասին, երբ մարդ մեղանչում է ինքնակամօրէն եւ գիտակցուած, այդ պատճառով էլ Աստուած չի ներում: Իսկ միւս մեղքերը վերաբերում են հոգու ցասմական եւ ցանկական մասին, երբ մարդ մեղանչում է ակամայ եւ անգիտակցաբար, թուլութիւնից եւ սատանայի խորամանկութիւնից, ուստի եւ ներում է գտնում: Մեծամիտն իր հպարտութեան պատճառով չի տեսնում իր մեղքերը, այդ պատճառով էլ իրեն ճշմարիտ է համարում եւ հանդէս է գալիս նրանց դէմ, ովքեր իրեն խրատում են: Իսկ միւս մեղաւորները տեսնում են իրենց մեղքը, լսում

են խրատները եւ ընդունում են բժշկութիւնը: Մեծամի-տի խիղճը չի դատում, դրանից էլ՝ ապաշխարութիւն չի լինում, ուստի եւ ներում չի ստանում: Իսկ մեղաւորների խիղճը դատում է իրենց, ուստի եւ, ապաշխարելով, մեղքերի թողութիւն են ստանում:

Ինչպէ՞ս է հպարտութիւնն ազդում մարդու վրայ

Ամէն մեղք մարդուց դուրս է հանում միմիայն իրեն հակընդդէմ առաքինութիւնը, ինչպէս օրինակ՝ շնութիւնը դուրս է մղում ողջախոհութիւնը եւ այլն, մինչ-դեռ հպարտութիւնը մեր միջից հանում է այն ամէն բարին, որ կայ մեր մէջ: Նոյնպէս եւ ամէն արդար մարդ, ով բարի գործեր է անում, բայց հպարտութեան մեղքն ունի, նա արդէն կորցրել է եւ պղծել արդարութեան գործը:

Ինչո՞ւ է խոնարհ մեղսաւորն աւելի լաւը, քան հպարտ արդարը

Մեղաւոր մարդն իր խոնարհութեամբ, այսինքն՝ ապաշխարութեամբ, խոստովանութեամբ եւ բարի գործերով փրկում է իր հոգին, իսկ հպարտ արդարն իրեն միշտ արդար է համարում եւ մնում է այդ չարիքի մէջ, եւ չի հնազանդւում Աստուծոյ պատուիրաններին, սրբերի կանոններին եւ հայրերի խրատներին: Այդ պատճառով էլ կորցնում է իր արդարութեան գործերը:

ՆԱԽԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Ո՞րն է նախանձի մեղքի ծանրութիւնը

Եօթ մահացու մեղքերից հպարտութիւնն ու նախանձն առաւել ծանր են, քան միւս հինգը, քանզի միւս մեղքերը գործել են Ադամն ու Եւան, իսկ հպարտութիւնն ու նախանձը՝ սատանան: Ինչպէս եւ ասուեց վերը, սատանան հպարտանալով ընկաւ, իսկ յետոյ, նախան-ձելով Ադամի փառքին, նրա անկման պատճառը դարձաւ: Նախանձը համարւում է բոլոր չար գործերի

արմատն ու հիմքը, քանզի նախանձից գողանում են, հայհոյում են, չարախօսում, վիճում են, սպանում, դաւաճանում եւ շատ այլ չարիքներ գործում: Նախանձի պատճառով հրեաները զինուեցին Քրիստոսի դէմ, Դաթանն ու Կորխն ապստամբեցին Մովսէսի դէմ: Այսպիսով՝ մեծ է նախանձի մեղքը, քանզի մարդուն դարձնում է սատանայի գործակիցը եւ նմանեցնում նրան:

Ինչպիսի՞ն է լինում նախանձը

Նախանձը լինում է բարի եւ չար: Չար է, երբ մարդ մարդու մէջ տեսնում է բարին՝ լինի դա փառք կամ այլ բան, եւ ուժգին ցաւում է ու տանջւում, թէ ինչու ինքն այդ չունի: Եւ ուրախանում է, երբ տեսնում է մարդու գլխին եկած չարիքը:

Մեղաւորներին նախանձելը եւ նրանց նմաուելու ձգտումը՝ լինել, ասենք, անառակ, հարբեցող, գող եւ այլն, նոյնպէս չար նախանձ է: Մինչդեռ երբ մարդ բարի գործեր է տեսնում՝ պահք, աղօթք, ողորմութիւն, հաւատք, յոյս եւ սէր՝ ձգտելով նմանուել այդ գործերն անողին, այդ նախանձը բարի է, ինչի մասին եւ Սուրբ Պօղոսն ասում է. «*...նախանձախնդի՛ր եղէք լա՛ւ շնորհների*» /Ա Կորնթ. 12:31/: Բարի նախանձը երեւում է բարի մարդկանց մէջ եւ հաճելի է Աստծուն, մինչդեռ չար նախանձը, որը սատանայի սերմն է, գտնւում է չար մարդկանց մէջ:

Ամէնից յաճախ մարդիկ ու՞մ են նախանձում

Մեղքերը գործում են մարդկանց տարբեր աստիճանների հանդէպ, այսինքն՝ մարդիկ լինում են կամ բարձր, կամ ցածր, կամ հաւասար: Օրինակ՝ հպարտութիւնն արտայայտւում է ցածրի կամ հաւասարի նկատմամբ, իսկ նախանձը՝ հաւասարի կամ բարձրի:

Ինչպիսի՞ն է նախանձ մարդու վիճակը

Այս արատը տանջում է բանականութիւնը, ոչնչացնում եւ հիւծում է այն մարդու մարմինը, որի մէջ գտնւում է,

քանզի «նախանձ» բառն ինքն արդէն նշանակում է՝ «**նախ** վնասում է իր սեփական **անձը**», եւ ապա՝ ուրիշներինը: Այդ պատճառով նախանձ մարդկանց դէմքերը, սրտի դառը տխրութիւնից, լինում են դեղնած եւ սեւացած, ինչը չես գտնի այլ մեղքերի մէջ: Քանզի, ընկնելով որեւէ այլ մեղքի մէջ, սկզբում ուրախանում են, միայն յետոյ՝ տխրում, իսկ նախանձները մշտապէս վշտի եւ տխրութեան մէջ են: «*Ցիմարը ձեռնածալ նստում և ինքն իրեն է ուտում*» /Ժող. 4:5/,- ասում է Սողոմոնը: Նախանձ մարդը յիմարանում է եւ ուտում իր մարմինը, այսինքն՝ իր մերձաւորինը, սպանելով նրան, ինչպէս Կայէնը՝ Աբէլին: Չարախօսելով, ինչպէս Մարիամը եւ Ահարոնը՝ Մովսէսի դէմ: Իշխանութեան հասնելու չարամիտ նկրտումով, ինչպէս Աբիսողոմի ու Դաւթի օրինակում:

Ինչո՞վ է բացատրւում նախանձից դրդուած ջանքերի եւ ձըգտումների ունայնութիւնը

Նախ՝ այն մարդը, ով նախանձից դրդուած անթիւ գանձեր է դիզում, կառուցում է եւ ցանում, ոչնչով աւելի չի բաւարարում իր մարմնի կարիքները, քան այն մարդը, ով աւելի քիչ ունի եւ խաղաղութեան մէջ է կենում: Քանզի կերակուրն անհրաժեշտ է քաղցից չմեռնելու համար, իսկ հագուստը պահում է ցրտից եւ մերկութիւնից, իսկ մնացեալ ամէն ինչ աւելորդ է՝ հոգու անպէտք եւ կեղծ ցանկութիւն, ինչի մասին եւ Սուրբ Պողոսը վկայում է. «*Այլ ունենք կերակուր և հանդերձներ և դրանցով պիտի բաւականանանք*» /Ա Տիմ. 6:8/: Եւ երկրորդ՝ այս ամէնն ունայն է եւ զուր, քանզի մահուամբ այս ամէնը կ'անհետանայ եւ կը փոխանցուի այլոց, կը մնան միայն մեղքերն ու տանջանքները:

Ինչպիսի՞ն է նախանձ մարդու դատաստանը

Ինչ չարիք որ ցանկանում եւ գործում է մարդ դիմացինին, նոյն չարիքով եւ պատժւում է, ինչի մասին նաեւ Դաւիթն է ասում. «...*նա փոս փորեց, խորացրեց, հէնց ինքն էլ ընկաւ այն փոսը, որ նա պատրաստեց*» /Սաղմ. 7:16/: Կայէնը, որ սպանեց եղբօրը, ինքն էլ սպանուեց:

Մարիամը պատժուեց բորոտութեամբ, քանի որ չարախօսեց Մովսէսի դէմ: Աբիսողոմը սպանուեց պատերազմում: Հրեաներին, ովքեր խաչեցին Քրիստոսին, Տիտոսը ցրիւ տուեց աշխարհով մէկ:

ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է բարկութիւնը

Բարկութիւնը հոգու մոլեգնութիւնն է, որով ոմանք ընդվզում են միւսների դէմ: Քանզի, ինչպէս նախանձն է վնասում սեփական հոգին, այդպէս էլ բարկութիւնը հեռացնում է ընկերոջը: Նաեւ՝ բարկութիւնն արեան եռալն է սրտի շուրջ, քանզի սիրտը, լինելով արքան, երբ բարկութեան խօսք է լսում, իր մօտ է հաւաքում արիւնը, ինչպէս սպարապետը՝ զօրքը: Ապա եւ սեւ ու դառը լեղի է թափում, ինչից մարդ կապտում է, բանականութիւնը՝ յիմարանում, խօսքն էլ, այդ պատճառով, անկարգ է լինում. արիւնը եռում է, դրանից էլ դողում են մարմնի բոլոր անդամները:

Ինչպէ՞ս է բարկութիւնը գլուխ բարձրացնում

Սկզբում սրտում ծնւում է նախանձը, որից էլ՝ նենգութիւնն ու ատելութիւնը: Ատելութիւնից էլ ծնւում է բարկութիւնը, ինչին էլ հետեւում է գործողութիւնը, այսինքն՝ լեզուով հայհոյանքը, ձեռքով ծեծը, վերջին հաշուով այս ամէնը տանում է սպանութեան, քանզի բարկութիւնը սկիզբն ու մայրն է սպանութեան, ինչի համար Տէրն ասաց. «*Լսել էք, թէ ինչ ասուեց նախնիներին. «Մի՛ սպանիր»,... Իսկ ես ձեզ ասում եմ, թէ՝ ամենայն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբօր վրայ, ենթակայ կը լինի դատաստանի*» /Մատթ. 5:21-22/:

Ի՞նչ է կատարւում բարկացած մարդու հետ

Բարկութիւնից մարդու մէջ անհետանում է Աստուծոյ պատկերը, եւ նրանից հեռանում է Սուրբ Հոգին, իսկ երբ Նա դուրս է գալիս, գալիս է պիղծ ոգին, այսինքն՝ սա-

տանան եւ բնակութիւն է հաստատում այդ մարդու մէջ: Եւ այդ ժամանակ մարդ սկսում է նմանուել դիւահարուածի, ինչը երեւում է նրա դէմքից, որը կապտում է, աչքերը վազում են, շրթունքները դողում են եւ փրփուր արձակում, բառերը խռիւ են ու աղմկոտ:

Ինչպիսի՞ն է լինում բարկութիւնը

Բարկութեան երկու տեսակ կայ՝ բարի եւ չար: Բարին ելլում է սիրուց եւ գթասրտութիւնից, իսկ չար բարկութիւնը՝ ատելի կամքից: Բարի բարկութիւնը, երբ աղերսում են բարկացած մարդուն, մարում է, իսկ չարը՝ երբ աղերսում են [բարկացած մարդուն], աւելի է սաստկանում: Չար բարկութիւնը մղում է սպանութեան, իսկ բարին՝ կեանքի, ոչ միայն հոգեւոր, այլեւ՝ մարմնական, քանզի, երբ բարկանում են օրէնքի զանցառուի վրայ, Աստուծոյ բարկութիւնն են հեռացնում նրանից: Այդ պատճառով էլ Աստուած հաստատեց հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւններ, որպէսզի Աստուծոյ բարկութիւնը հեռացնի յանցագործներից: Բարի բարկութիւնը, որը մեր մէջ է, նրա համար է, որ բարկանայ ընդդէմ չար մտածումների, սատանայի, ընդդէմ չար մարդկանց, ովքեր ցանկանում են մեզ ծուղակը գցել, ինչպէս օրինակ՝ ուրացութեան կամ որեւէ այլ մեղքի: Մինչդեռ չար բարկութիւնը պատերազմում է ընկերոջ դէմ եւ Աստուծոյ պատուիրանների դէմ: Դրա համար էլ Սուրբ Պօղոսն ասում է. «*Թէ բարկանաք էլ, մեղք մի՛ գործէք*»: Ասելով «թէ բարկանաք էլ»՝ թոյլատրում է բարի բարկութիւն: Իսկ երբ ասում է «մեղք մի՛ գործէք», արգելում է չար բարկութիւնը: Այսպիսով՝ «*...արեգակը ձեր բարկութեան վրայ թող մայր չմտնի*» /Եփես. 4:26/, այսինքն՝ քրիստոնեաները պէտք է շուտափոյթ հաշտուեն, քանի դեռ գիշերը չի հասել, հակառակ դէպքում սատանան կը սովորեցնի յիշաչարութիւն եւ կը հաստատի չարի մէջ:

ԾՈՒԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է ծուլութիւնը

Ծուլութիւնը հոգու այն թոյլ վիճակն է, որի ժամանակ բարի գործ չեն ձեռնարկում, իսկ եթէ նոյնիսկ ձեռնարկում են, չեն հասցնում աւարտին: Եւ այն համարւում է «*բոլոր մեղքերի սնուցողը, դատարկաբանութեան մայրը*»:

Ինչո՞ւ է պէտք աշխատել

Ի սկզբանէ, երբ Աստուած ստեղծեց մարդուն, նրան պարապ չթողեց, այլ բնակեցրեց նրան Դրախտում, որպէսզի նա մշակի եւ պահպանի այն: Իսկ երբ նա վտարուեց Դրախտից, Աստուած այստեղ նոյնպէս նրան պարապ չթողեց եւ ասաց Ադամին. «*Քո երեսի քրտինքով ուտես հացդ*» /Ծնն. 3:19/:

Այսպիսով՝ պէտք է աշխատել, այլ ոչ՝ պարապութեան մէջ կենալ, քանզի «...*պարապութիւնը բոլոր մեղքերի մայրն է, իսկ պարապ մարդը բերրի հող է սատանայի համար, որը նրա մէջ ցանում է բոլոր չար մտքերը և պտուղներ ստանում*»:

Ի՞նչ է ասւում Սուրբ Գրքում ծոյլի մասին

Որպէս օրինակ՝ «*Ինչպէս դուռը շուռ է գալիս իր ծխնիի վրայ, այնպէս էլ ծոյլն է թաւալւում իր մահճում*» /Առ. 26:14/: Ինչպէս դուռը, որ շարժւում է իր ծխնու վրայ, չի կարող պոկուել տեղից, այնպէս էլ ծոյլն է քարշ գալիս անկողնում եւ չի կարող վեր կենալ, որպէսզի իր գործն սկսի: Ծոյլը հոգեւոր հարցերում սիրում է մարմնի հաճոյքները: Խիղճը նրան դատապարտում եւ տանջում է, սակայն նա չի կարողանում չար մտածումները փոխարինել բարիներով:

«*Ծոյլն իր աչքին աւելի իմաստուն է թւում, քան այն անձը, որ հարստութեան բարի լուր է աւետում*» /Առ. 26:16/: Եթէ ծոյլին հարցնես՝ «ինչո՞ւ չես աշխատում», ապա նա կ'ասի. «*Ես բոլորից խելացի եմ, նրանք ինձ համար են աշխատում*»: Ծոյլն ինքը չի սովորում եւ այլոց չի սովորեցնում, եւ բարի գործեր չի կատարում: «*Ես*

ամէն ինչ գիտեմ, և ինձ պէտք չէ սովորել,- կ'արդարանայ նա,- *ես թաքուն բարի գործեր եմ անում, որպէսզի մարդիկ ինձ չփառաբանեն: Մարդուն հաւատ է պէտք, գործերն ինչի՞ համար են: Ահա՝ կենդանին մշտապէս խոտ է որոճում, ծառերը ողորմութիւն են տալիս, բայց նրանցից ոչ մէկն Արքայութիւն չի գնում»*:

ԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է ագահութիւնը

Ագահութիւնը ունեցուածք ունենալու անիմաստ ցանկութիւնն է: Եւ սա աշխարհի մեծագոյն չարիքն է, քանզի չկայ աւելի աղքատ մարդ, քան նա, ով ցանկանում է աւելին ունենալ: Ագահը նման է ջրգողութեամբ տառապող հիւանդի, որն ինչքան խմում է, այնքան աւելի է ծարաւում: Դա ամենայն չարիքի արմատն է, որը եւ մատնեց Քրիստոսին:

Ո՞րն է ագահութեան պատճառը

Ագահութեան պատճառները երկուսն են. 1. Երբ Ադամն ստեղծուեց, ամէն ինչ ունէր, ե՛ւ փառք, ե՛ւ իշխանութիւն, բայց, մեղանչելով, կորցրեց այդ ամէնը: Հարուստն աղքատացաւ, տէրը դարձաւ մեղքերի ծառայ: Իսկ հիմա, տեսնելով իրենց աղքատութիւնը, մարդիկ չեն հանդուրժում այն, ուստի գողանում են, չեն հնազանդւում վերադասներին, այսինքն՝ մեղքի միջոցով ցանկանում են ստանալ այն, ինչ մեղքի պատճառով կորցրել են: Այդպէս էլ ընկնում են ագահութեան մեղքի մէջ: 2. Ագահութիւնը լինում է նաեւ բնական կարիքների պատճառով՝ ուտելիքի եւ խմելիքի, հագուստի եւ տան: Եւ այս բնական կարիքներն Աստծուց մեզ տրուած են բարու համար, որպէսզի մարդը խոնարհւի եւ աշխատի, ոչ թէ պարապ մնայ, ինչպէս իշխանները, որոնք պարապութիւնից բազում մեղքերի մէջ են կենում: Բայց մարդը, հետեւելով սատանայի նենգութիւններին եւ իր կամքին, այդ բարիքը փոխարինում է չարիքով եւ ընկնում ագահութեան մէջ, քանզի, երբ սեփական

կարիքները հոգալու մէջ աննկապ ներս է սողոսկում աւելորդը եւ անչափը, այդ ժամանակ էլ չարիք է լինում: Քանզի չափազանց խնամքը բերում է միմեանց զրկելուն, իսկ երբ չեն կարողանում զրկել, ընկնում են նախանձի եւ թշնամութեան մէջ: Ահա այդպիսին է բնական կարիքների պատճառով ծագած ագահութիւնը:

Կարո՞ղ է արդեօք աղքատն ագահ լինել

Ագահութիւն կարելի է տեսնել ինչպէս հարուստների, այնպէս էլ աղքատների մօտ: Ագահ աղքատը փնտռում է, խնդրում ուրիշներից, գողանում է: Եթէ չի գտնում, տխրում է եւ յուսահատութեան մէջ ընկնում: Այդպիսի աղքատն ազատ չէ, քանզի բանականութեամբ մշտապէս ծառայում է ունեցուածքին: Մտածում եւ երազում է շատերի տէրը դառնալ, զգեստաւորուել շքեղաշուք հագուստներով, հարստութիւն դիզել եւ կուշտ ուտել. այսպիսինի սէրը հարստութեան նկատմամբ շատ աւելին է, քան Քրիստոսի հանդէպ:

Ինչո՞ւ է Պօղոս Առաքեալը ագահութիւնը համեմատում կռապաշտութեան հետ. «...*և ագահութիւն, որ կռապաշտութիւն է*...» /Կող. 3:5/

Քանի որ ագահութիւնը կռապաշտների գործ է, որոնք Աստուծոյ փոխարէն երկրպագում էին կուռքերին՝ ոսկու եւ արծաթի տեսքով: Նոյնկերպ էլ ագահութիւնը ճշմարիտ երկրպագութիւնն ու Աստծուն աղօթելը փոխարինում է ոսկուն եւ արծաթին երկրպագելով: Քանզի մարդն ագահութեան պատճառով թողնում է առաւօտեան ժամերգութիւնը եւ գնում է մարմնի համար աշխատելու: Կիրակնօրեայ Պատարագը թողնելով՝ զբաղւում է առուվաճառքով եւ այլն: Ահա հենց սա է կռապաշտների գործը:

ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է որկրամոլութիւնը

Որկրամոլութիւնն անկշտաբար փորը լցնելու ցանկութիւնն է, եւ համարւում է բոլոր մեղքերի բերանն ու դուռը, այդ պատճառով սատանան, նախքան, որ գայթակղէր Եւային, նախ բացեց հենց այդ դուռը: Այս մեղքը կոչւում է նաեւ «*որովայնի պոռնկութիւն*»:

Ի՞նչ է լինում որկրամոլութիւնից

Սկզբում որկրամոլութեան միջոցով մարդը լցնում է փորը, յետոյ պոռնկութեան միջոցով այդ ամէնը դատարկում է, իսկ վերջում՝ արծաթ հաւաքում, որպէսզի կրկին լցնի փորը եւ շնանայ: Իսկ եթէ արծաթը չի հերիքում, յուսահատւում է, եւ բարկանում է նրանց վրայ, ովքեր հակառակւում են իրեն: Եւ քանի որ այս մեղքը մարդկային բնութեան առաջին մեղքն էր, երեխայի մէջ էլ սկզբում զարգանում է հենց այս մեղքը, իսկ երիտասարդ տարիներին արդէն սաստկանում է պոռնկութեան կիրքը: Հասուն տարիքում երեւան է գալիս ագահութիւնը, աւելի ուշ՝ յուսահատութիւնն ու ծուլութիւնը:

Ո՞ւմ դէմ է ուղղուած այս մեղքը

Հենց բնութեան դէմ, եղբօր, Աստուծոյ դէմ: Սա մեղք է, որ վնաս է հասցնում ինչպէս հոգուն, այնպէս էլ մարմնին:

Այդ ինչպէ՞ս

Բնութեան դէմ. քանզի կենդանիները, մեծ բերան ունենալով, պէտք է որ աւելի շատ ուտեն, իսկ մարդուն, որ գլուխն է բոլոր կենդանիների, տրուած է փոքր բերան, քանզի Արարիչն այնպէս է ցանկացել, որ մարդ աւելի քիչ հոգս ունենայ ուտելու մասին, քան կենդանիները:

Եղբօր դէմ. քանզի հարբեցողն ու որկրամոլը փհաճ են մարդկանց, քանի որ վատ օրինակ են ծառայում, իսկ հարազատների եւ ընկերների շրջանում սերմանում են վէճեր եւ պառակտութիւններ:

Աստուծոյ դէմ. քանզի ինչ սիրում են, դրան էլ երկրպագում են, դրանով իսկ իրենց որովայնը դարձնում են աստուած, ինչի մասին խօսում է նաեւ Սբ. Առաքեալը. «*նրանց աստուածը իրենց որովայնն է*» /Փիլ. 3:19/: Քանզի այն մարդը, ով ուտելու եւ խմելու պատճառով թողնում է աղօթքը, Աստուծոյ մասին մտածումները եւ իր որովայնի հոգսն է քաշում, այդ մարդն ակնյայտ երկրպագում է վերջինիս: Այդպիսի մարդիկ Աստուծոյ տաճարը, որը մարդկային սիրտն է, իրենց որովայնի համար «*խոհանոց են*» դարձնում, իսկ խնկի ծուխն իրենց համար իրենց մարսած կերակրի եւ գինու գոլորշին է:

Որկրամոլութեան մեղքը վնասում է ինչպէս հոգուն, այնպէս էլ մարմնին, քանզի որքան այն աւելի է արմատանում մարդու բնութեան մէջ, այնքան դժուար է լինում նրանից ազատուելը: «*եթէ մէկը վարժւում է հարբեցողութեան և անկուշտ որկրամոլութեան, նա չի կարող թողնել գինին, կամ կը մեռնի, կամ էլ նորից կ՚ընկնի հարբեցողութեան մէջ*», ինչն էլ կործանում կը լինի հոգու համար:

Ինչպէ՞ս բուժուել այս մոլուցքից

Այս հիւանդութիւնից բուժուելու համար պէտք է յիշել Քրիստոսի թափած արեան մասին, Նրա տանջանքների ու մահուան մասին, ինչը կը բժշկի եւ կը փրկի դիւային փորձութիւնից: Ուտելիքով եւ խմիչքով գերյագենալը պոռնկական կիրքն է վառում: Հարկ է զինուել մարմինը հիւծելով, պահքով, քաղց ու ծարաւով, որոնք ունակ են հանգցնել այս կիրքը:

Հարբեցողութիւնը մեղք համարո՞ւմ է

Որկրամոլութիւնն արտայայտւում է ոչ միայն ուտելիքի ճաշակմամբ, այլեւ խմիչք խմելով, որը հարբեցողութիւնն է՝ մեծ չարիք եւ մեղք, նաեւ՝ մայր բոլոր մեղքերի,

մահացու թոյն ամէն բարու համար, «*քնքուշ դև*», քաղցր թոյն, հաճելի մեղր: Հարբեցողութիւնը նման է նաեւ ուժեղ տեղատարափի, որը քայքայում է ամբողջ հողը եւ ամէն ինչ արմատախիլ անում: Այն մարդուն զրկում է բանականութիւնից, քայքայում է զգայարանքները, շարժում պոռնկական կիրքը, խառնում արիւնը, կարճում կեանքը, թուլացնում մարմնի բոլոր անդամները ու հոգու եւ մարմնի կործանման պատճառ է դառնում:

Այդ պատճառով էլ առակասացն ասում է. «*Մի՛ հարբէք գինով, այլ զրուցեցէ՛ք արդար մարդկանց հետ, և խօսեցէ՛ք միմեանց հետ հրապարակներում: Իսկ եթէ աչքդ գցես թաս ու բաժակի, յետոյ պիտի սանդի կոթի պէս տկլոր ման գաս, վերջն էլ օձից խայթուածի պէս պիտի ցած ընկնես, և գինին, ինչպէս իժի թոյն, պիտի տարածուի քո մէջ: Եւ երբ աչքերդ օտար կին տեսնեն, բերանդ խառն ու շփոթ պիտի խօսի, և պիտի ծփաս՝ ասես ծովի մէջ, ինչպէս նաւավարը՝ սաստիկ մրրիկի մէջ*» /Առակ. 23:31 - 34/:

Ո՞ւմ է հարբեցողութիւնն աւելի վնասում

Ամենամեծ վնասը նա հասցնում է եկեղեցու սպասաւորներին, եկեղեցու առաջնորդներին եւ եպիսկոպոսներին, նաեւ ազգերի ղեկավարներին: Եկեղեցու սպասաւորների համար Ղեւտական գրքի մէջ ասւում է. «*Երբ վկայութեան խորան մտնէք կամ երբ զոհասեղանին մօտենաք դու և քեզ հետ եղած որդիներդ, գինի կամ օղի չխմէք, որպէսզի չմեռնէք*» /Ղեւտ 10:9/: Եւ եթէ դա ասւում էր Հին Ուխտում, ապա որքան պէտք է գինուց խուսափեն հոգեւորականներն ու եպիսկոպոսները՝ Նոր Ուխտի սպասաւորները. իսկ ազգերի ղեկավարները պէտք է խուսափեն գինուց, որպէսզի չխեղաթիւրեն դատը: Բայց ոչ միայն հոգեւորականները, եպիսկոպոսներն ու արքաները պէտք է խուսափեն գինուց, այլ ամէն ոք, ով իրեն նուիրել է Աստուծոյ ծառայութեանը, այսինքն՝ վանականները, քարոզիչները, սարկաւագները եւ այլք:

Այս ամէնից հետեւո՞ւմ է արդեօք, որ Սուրբ Գիրքն արգելում է գինի խմել

Ոչ, չի արգելում, քանզի Սբ. Պօղոսը հետեւեալն է ասում. «*Այսուհետև միմիայն ջուր մի՛ խմիր, այլ մի քիչ գինի էլ խառնիր՝ քո ստամոքսի յաճախակի տկարութիւնների պատճառով*» /Ա Տիմ. 5:23/: Աւելին՝ Սբ. Տաթեւացին տկարներին եւ հիւանդներին խրախուսում է չափաւոր գինի խմել՝ բուժուելու համար, նաեւ՝ ծերերին, քանզի գինին նրանց համար ուժ է եւ ցուպ:

Այսպէս՝ «*Եթէ խմես*,- աշխարհականներին է դիմում Սբ. Տաթեւացին,- *փառաբանիր Արարչիդ*,- եւ շարունակում է,- *քանզի եթէ բոլորովին գինի չխմես, նման կը լինի սուրբ կուսութեան, իսկ եթէ չափաւոր խմես՝ անարատ ամուսնութեան, իսկ եթէ անչափ, որը հարբեցողութիւնն է, շնութեան և պոռնկութեան*»: Դրա համար էլ Սբ. Առաքեալն ասում է հետեւեալը. «*...ո՛չ պոռնիկներ... ո՛չ շնացողներ... ո՛չ հարբեցողներ ... Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն*» /Ա Կորնթ. 6:8 - 10/:

ԲՂՋԱԽՈՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է բղջախոհութիւնը

Բղջախոհութիւնը իր կիրքն ամենայն ժամ կատարելու ցանկութիւնն է. գործերի այս տեսակը բնորոշ է խոզերին, բայց ոչ՝ մարդուն: Սա այն է, ինչ մարդուն հեռացնում է Աստծուց, քանզի սրբերնը կը տեսնեն Աստծուն: Սա քաղց է, որը չի յագենում, արբեցած է եւ ծարաւած, քաղցր դառնութիւն է, կենդանի մեռեալ: Սա վատ ծառ է, որ վատ պտուղ է տալիս, եւ որը յեղոյ կտրուելու եւ յաւիտենական կրակն է գցուելու:

Ինչպէ՞ս է դասակարգւում այս մեղքը

1. Հասարակ պոռնկութիւն, երբ մեղանչում են չամուսնացեալ տղամարդն ու կինը:

2. Մարմնավաճառութիւն, երբ գնում են շատ կամ մէկ անառակ կնոջ մօտ:

3. Շնութիւն, երբ մեղանչում են ամուսնական մահճի դէմ եւ գնում են ուրիշի մօտ, լինի տղամարդ, թէ՝ կին:

4. Պոռնկութիւն, երբ առաջին եւ երկրորդ ամուսնու մահուանից յետոյ, երրորդ եւ չորրորդ ամուսինն են առնում:

5. Կուսութեան պղծում:

6. Սրբապղծութիւն Աստուծոյ նուիրեալի հետ, երբ պղծում է վանականի ողջախոհութիւնը եւ որքան բարձր է նուիրապետութեան աստիճանը, այնքան աւելի ծանր է մեղքը:

7. Արիւնապղծութիւնը:

8. Սրտի շնութիւնը, երբ մեղանչում են աչքերով, լեզուով եւ ականջներով, ինչի մասին էլ մեր Տէրն ասում է. «*...իսկ ես ձեզ ասում եմ. ամենայն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդէն շնացաւ նրա հետ իր սրտում*» /Մատթ. 5:28/:

9.Սոդոմական մեղքը՝ տղամարդկանց եւ կանանց անիծեալ եւ անպատմելի յանցանք, որով մեղանչում են բնութեան դէմ:

10. Ամուսնութեան մէջ գտնուող տղամարդու եւ կնոջ անզուսպ կրքոտ (տարփանք) մերձեցումը, որը նոյնպէս պոռնկութիւն եւ շնութիւն է, այսինքն՝ անարժան ամուսնութիւն:

Ի՞նչ է նշանակում «անարժան ամուսնութիւն»

Անարժան ամուսնութիւնը նմանւում է շնութեան, քանզի պղծում է ամուսնական մահիճը: Անարժան է ա՛յն ամուսնութիւնը, որը՝

1. սանձարձակ է եւ մշտապէս յագուրդ է տալիս տռփանքին,

2. երբ լինում է հակաբնական ձեւով,

3. երբ անպատեհ ժամանակ է լինում, այսինքն՝ տօն օրերին, կիրակի եւ պահքային օրերին.առհասարակ այն օրերին, երբ Եկեղեցում պսակն արգելւում է,

4. երբ լինում է սուրբ վայրերում, այսինքն՝ Եկեղեցուն մօտ, խաչի եւ այլն,

5. երբ մերձենում են յոի կնոջը, որը շուտով պէտք է ծննդաբերի կամ ամսական ունեցող կնոջը:

Այդ դէպքում ո՞ր ամուսնութիւնը կարող է պատուարժան համարուել

Պատուարժան է ա՛յն ամուսնութիւնը, որը լինում է յանուն որդեծնութեան, յանուն պոռնկութիւնից խուսափելու եւ յանուն պարտքի հատուցման, քանզի կինը վերցուած է տղամարդուց, ուստի դա պարտք է կնոջ համար, իսկ տղամարդը ծնւում է կնոջից, դա էլ նրա պարտքն է կնոջը:

Ի՞նչ վնաս կարող է լինել այս մեղքից

Այս մեղքի մէջ ընկածների հոգին տկարանում է, նրանք ընկնում են ծուլութեան մէջ եւ չեն կարողանում ընդդիմանալ կրքին, քանզի ինչպէս մոմն է հալչում կրակից, այնպէս էլ ցանկասէրներն են հալչում այդ կրքից: Պղծում են մարմինը, որը Կենդանի Աստուծոյ տաճարն է: Ցիմարանում են բանականութեամբ, նրանք մոռանում են մահուան օրը եւ յաւիտենական գեհենը, քանզի նմանւում են հարբեցողի եւ թափառում են դեւից բռնուածների նման: Եւ ինչպէս շներն են կռւում էգ շան պատճառով, այնպէս էլ այս մարդիկ մշտապէս կանանց պատճառով վէճերի եւ երկպառակութիւնների մէջ են: Այսպիսիք բնակարան եւ ապաստարան են դեւերի համար, նաեւ իրենց անվայելուչ պահուածքով գայթակ-

ղում են ուրիշներին: Բղջախոհներին մշտապէս տանջում է խիղճը, թէեւ մեղանչելիս նրանք քաղցրութիւն են զգում: Եւ որպէսզի «արժանավայել» պոռնկանան, նրանք ցանկանում են ունենալ առողջութիւն, ուժ, հարստութիւն, փառք եւ պատիւ: Ատում են Աստծուն, քանզի հեշտասէրներին պատժում է հիւանդութիւններով եւ աղքատութեամբ, իսկ սրբերին ատում են յանդիմանող խօսքերի պատճառով: Կրքի ունայն եւ անցողիկ բոցը վառելանիւթ է դառնում յաւիտենական գեհենի համար, քանզի «*...ինչպէս շատ փայտը բոցավառում է կրակը, այնպէս էլ պիղծ հեշտասիրութիւնը բոցավառում է յաւիտենական կրակը*»:

Ինչպէ՞ս խուսափել բղջախոհութիւնից

1. Չնայել հակառակ սեռին, քանզի եթէ Դաւիթը Բերսաբէին չտեսնէր, նրան չէր ցանկանայ:

2. Մարմինը հիւծել քաղցով եւ ծարաւով, քանզի, երբ վառելիքը քիչ է, կրակն էլ հանգչում է:

3. Զբաղուել մարմնական աշխատանքով, ընթերցանութեամբ, ուսմամբ եւ բարի գործերի մէջ կենալ, քանզի վարդապետներն ասում են. «*միշտ բարիք գործիր, որ սատանան քեզ միշտ զբաղուած գտնի*»:

4. Գայթակղութեանը դիմակայել հենց սկզբից, լինի դա մտածումներում, թէ անգամ մարմնի շարժումներում: Մեղքը, ինչպէս եւ օձը, ծերպի մէջ մտնելիս նախ գլուխն է մտցնում, ապա միայն՝ ամբողջ մարմինը: Եւ ինչպէս օձի գլուխն է տկար եւ հեշտօրէն ջախջախւում է, այդպէս էլ մեղքի սկիզբն է:

5. Մշտապէս յիշել մահուան եւ յաւիտենական տանջանքների մասին, ինչպէս ասում են վարդապետները. «*յիշիր քո վախճանը և յաւիտեան չես մեղանչի*»: Նաեւ մտքով անցկացնել Քրիստոսի տանջանքները եւ հեշտասէրների պատիժները, զորօրինակ՝ Սոդոմն ու Գոմորը:

6. Յոյսը սեփական անձի վրայ չդնել, այլ կասկածել եւ երկիւղի մէջ կենալ: Եթէ մեղանչել ես, երկիւղիր տանջանքներից, իսկ եթէ ոչ, ապա վախեցիր, որ չմեղանչես, ինչպէս եւ ասում է Սբ. Առաքեալը (տես՝ Ա Կորնթ. 10:12): Քանզի Դաւիթը, որ սուրբ էր, մեղանչեց, իմաստուն Սողոմոնը սխալուեց, իսկ հուժկու Սամսոնը տկարացաւ: Ուստի՝ միշտ պէտք է կասկածել սեփական անձին եւ երկիւղի մէջ կենալ եւ անձը պահել վերը թուարկուած վեց միջոցներով, եւ «*...օգնութիւն ու փրկութիւն հայցել Փրկիչ Աստծուց, որ օրհնեալ է յաւիտեանս, ամէն*»:

ՆԵՐԵԼԻ ՄԵՂՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է «ներելի մեղքը»

Ներելի մեղքը յանցանք է, բայց փոքր, քանզի մանկական տարիքում մկրտութիւնից յետոյ սկզբում գլուխ են բարձրացնում ներելի եւ յետոյ՝ մահացու մեղքերը: Եւ ներելի է համարւում, քանզի կատարւում է անգիտութեան պատճառով կամ ակամայ:

Ինչպէ՞ս են ճանաչւում «ներելի մեղքերը»

Այս մեղքերը ճանաչւում են ըստ առիթի, պատճառի եւ բնութեան: Ըստ առիթի, երբ մահացու մեղքն ապաշխարութեան միջոցով դառնում է ներելի:

Ըստ պատճառի, երբ մեղքը կատարւում է անգիտութիւնից, թուլութիւնից, այսինքն, մեղանչելով՝ չգիտեն, որ դա մեղք է:

Եւ ըստ բնութեան, երբ մարդն իր էութեամբ ծիծաղկոտ է, բարկացկոտ եւ այլն…

Հնարաւո՞ր է արդեօք զերծ լինել «ներելի մեղքերից»

Ինչպէս ասում է Սբ. Տաթեւացին. «*մարդը կարող է լինել առանց մահացու մեղքերի, բայց ոչ՝ առանց ներելիների*»: Ուստի, քանի դեռ մարդն ապրում է, միշտ ընկնելու է ներելի մեղքերի մէջ, քանզի նա կարող է ապրել առանց

մահացու մեղքերի, բայց առանց ներելի մեղքերի՝ ոչ, ինչի մասին ասում է նաեւ Սուրբ Առաքեալը. «*եթէ ասենք՝«Մենք ոչ մի մեղք չունենք», մենք զմեզ ենք խաբում, և ճշմարտութիւն չկայ մեր մէջ*» /Ա Յովհ. 1:8/:

Քանի՞ տեսակ են լինում «ներելի մեղքերը»

Ներելի մեղքերին թիւ չկայ, նրանք բազում են եւ համեմատւում են ծառի, խոտի եւ ծղօտի հետ: Ծառը ծանր մեղքերն են, ինչպէս՝ սպանութիւնը, գողութիւնը եւ այլ դրանց նման մեղքերը: Խոտը մեղսական մտածումներն են, որոնց բնակարանը մարդու սիրտն է: Ծղօտը լեզուի մեղքերն են՝ անէծքը, հայհոյանքը, չարախօսութիւնը, սուտ վկայութիւնը եւ նման այլ մեղքեր:

ՄԵՂԱՆՉԱԿԱՆ ՄՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպէ՞ս են առաջանում մեղանչական մտքերը

Դրանք մարդու մէջ սերմանում է սատանան, ապա՝ աճեցնում է մարմնի մէջ եւ յետոյ մարդուն մեղք գործել է տալիս: Դրա համար էլ վարդապետներն ասում են, որ քիչ է միայն մարմինը մեղքերից պահպանելը, պէտք է պահպանել նաեւ խորհուրդները:

Ինչո՞ւ է անհրաժեշտ պահպանել խորհուրդները

Մարդու միտքը ղեկավարում է մարդուն, քանզի եթէ մարմինը մոլորւում է, ապա բանականութիւնը նրան ճանապարհ դուրս կը բերի, բայց եթէ միտքը ինքն է սուզւում մեղքերի մէջ, ապա մարմինը ոչնչով չի օգնի: Միտքը հայելի է, որի միջոցով մենք տեսնում ենք Աստծուն, եւ եթէ հայելին ժանգոտած է, ոչինչ տեսանելի չի լինի, նոյնպէս եւ, եթէ միտքն է ժանգոտել մեղքերից, չի կարող տեսնել Աստծուն, քանզի «*Երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն*» /Մատթ. 5:8/: Ով իր խորհուրդներում մեղքեր ունի, նա սիրում է դրանք եւ կապուած է դրանց հետ,

մինչեւ չկապարի, ուստի՝ պէտք է մաքուր պահել միտքը եւ խորհուրդները մեղքից: Խորհուրդներում մեղք ունեցողը, արդէն իսկ ասես մեղք գործած լինի՝ «*...իսկ ես ձեզ ասում եմ. ամենայն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդէն շնացաւ նրա հետ իր սրտում*» /Մատթ. 5:28/: Յետոյ՝ «*...քանի որ բերանը սրտի լիութիւնից է, որ խօսում է: Բարի մարդը իր սրտի բարի գանձերից հանում է բարի բաներ, իսկ չար մարդը իր սրտի չար գանձերից հանում է չար բաներ*» /Մատթ. 12:34-35/, նաեւ՝ «*...քանի որ սրտից է, որ ելնում են չար խորհուրդներ ... Այս բոլորն են, որ պղծում են մարդուն*» /Մատթ. 15:19/, քանզի եթէ սրտի ծնածը չարիք է, ապա՝ առաւել չարիք է ինքը սիրտը, որը ծնողն է, ուստի պէտք է մեղքից պահպանել միտքն ու սիրտը: Մեր սիրտը նման է սկուտեղի, որով Աստծուն ընծաներ ենք մատուցում, քանզի եթէ նա մաքուր չէ, ապա չեն ընդունուի նրա ընծաներն էլ, որոնք են աղօթքը, պահքը եւ այլ առաքինութիւններ: Պէտք է մաքուր պահել խորհուրդները, այլ ոչ՝ միայն մարմինը, հակառակ դէպքում մարդը կը դառնայ կեղծաւոր, որոնց Ինքը Տէրը դատապարտում էր. «*Վա՜յ ձեզ՝ դպիրներիդ և կեղծաւոր փարիսեցիներիդ, որ նման էք սպիտակեցրած գերեզմանների, որոնք դրսից գեղեցիկ են երևում, մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով և ամենայն ապականութեամբ: Նոյնպէս և դուք՝ դրսից մարդկանց արդար էք երևում, մինչ ներսից լի էք կեղծաւորութեամբ և անօրինութեամբ*» /Մատթ. 23:27-28/:

ԱՅԼ ՄԵՂՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչո՞ւ է անհրաժեշտ լեզուն պահել ամենայն չարից

Քանզի լեզուն ինքնին Աստծուց մարդուն տրուած մեծ պարգեւ է, որը չունեն կենդանիները: Եւ որպէս գործիք այն մարդուն տրուած է Աստծուն փառաբանելու եւ օրհնելու համար. տրուած է, որ մարդ ճշմարտութիւնը խօսի եւ աղօթի, քարոզի եւ խրատի, այլ ոչ՝ հայհոյանքի եւ անէծքի համար: Տեղը, ուր դրւում է Քրիստոսի Մարմինը, պէտք է պահել սրբութեան մէջ, ինչպէս եւ Տէրն է

ասում. «*Մի՛ տուէք սրբութիւնը շներին. և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛գցէք*» /Մատթ. 7:6/ եւ «*...ի՞նչ է շունը և խոզը, եթէ ոչ՝ լեզուն,*- ասում է Սբ. Տաթեւացին,- *և ո՞րն է մարգարիտը, եթէ ոչ՝ Քրիստոսի Մարմինը*»: Եւ ինչպէս մարդը լեզուից ճանաչւում է, թէ ինչ ազգի է պատկանում, այնպէս էլ Աստուծոյ մարդը եւ սատանայի մարդը ճանաչւում են լեզուով, ինչի մասին Սողոմոնն ասում է. «*Մահն ու կեանքը լեզուի ձեռքին են*» /Առակ. 18:21/, այսինքն՝ սրբութիւնն ու մեղքը:

Լեզուի ի՞նչ տեսակ մեղքեր կան

Նրանք բազում են, բայց հիմնականում սրանք են՝ **սուտը, սուտ վկայութիւնը, սուտ երդումն ու երդմնազանցութիւնը, դաւաճանութիւնը, հայհոյանքը եւ անէծքը, չարախօսութիւնը, ծիծաղն ու ծաղրը:**

Ինչո՞ւ չի կարելի ստել

«*Սուտը բոլոր մեղքերի պատճառն ու գլուխն է*», ուստի՝ սուտ ասելը շահեկան չէ, ինչպէս լսողին, այնպէս էլ ասողին, քանզի այն դէմ է դուրս գալիս ճշմարտութեանը: Ստի պատճառով բազում վէճեր եւ կռիւներ են լինում: Ստախօսը սատանայի որդին է համարւում (տես՝ Յովհ. 8:44): «*Սուտ խօսքերից Սուրբ Հոգին փախչում է, նոյնպէս և մեր սպասաւոր Հրեշտակը*»: Ստախօսներն իրենց ստով շատերին են վնասում եւ սեփական կործանման պատճառ դառնում, ուստի, հարկ է լեզուն պահպանել սուտ խօսքերից:

Բարի սուտ լինո՞ւմ է արդեօք

Կարելի է ասել՝ այո: Երբ խաբում ենք այն մարդուն, ով մեզնից սպանութեան սուր է խնդրում, եւ ասում, որ սուր չունենք, կամ երբ անպարկեշտ հարցին պատասխանում ենք, թէ չգիտենք:

Ո՞րն է սուտ վկայութեան մեղքի ծանրութիւնը

Այս մեղքն Աստուծոյ պատուիրանի դէմ է. «*...սուտ վկայութիւն մի՛ տուր*» /Ելք 20:16/: Ուստի՝ սուտ վկայողին բաժին կ՚ընկնի յաւիտենական կրակը, քանզի նա ատում է ճշմարտութիւնը եւ չար գործեր անողի մեղսակիցն է:

Ինչո՞ւ էր Հին Ուխտի ժամանակ երդում տալը թոյլատրելի

Հին Ուխտում թոյլատրում էին երդուել Աստուծոյ անունով, որպէսզի մարդուն հեռացնէին կուռքերից, քանի որ հեթանոսները, կուռքերին երկրպագելիս, նրանց Աստուած էին անուանում, ինչը սուտ էր: Բայց երդուելիս պէտք է չանպատուէին Աստուծոյ անունը. «*Իմ անունով սուտ երդում մի՛ տուէք և ձեր Տէր Աստուծոյ անունը մի՛պղծէք*» /Ղեւտ. 19:12/:

Ինչպիսի՞ն է լինում այն երդումը, որն անպատւում է Տէր Աստծուն

Այդ երդումը լինում է երկու տեսակ՝ պատճառական եւ առանց պատճառի: Պատճառականն այն է, երբ մէկը չգիտի եւ չի տեսել, բայց սուտ երդում է տալիս Աստուծոյ անունով, նաեւ, երբ իր չարը ծածկում է Աստուծոյ անունով: Առանց պատճառի երդումն այն է, երբ չեն խնդրում երդուել, այլ պարզապէս սովորութիւն է դարձել Աստուծոյ անունով երդուելն ամէն կեղծիքի համար՝ առեւտրում եւ այլն:

Ինչո՞ւ է Նոր Ուխտում Տէրն առհասարակ արգելում երդուել. «*Լսե՞լ էք դարձեալ, թէ ինչ ասուեց նախնիներին. «Սուտ մի՛ երդուիր, բայց պիտի հատուցես Տիրոջը ա՛յն, ինչ երդուել ես»: Իսկ ես ձեզ ասում եմ՝ ամենևի՛ն չերդուել. ո՛չ երկնքի վրայ, որովհետև Աստուծոյ աթոռն է, ո՛չ երկրի վրայ, որովհետև նրա ոտքերի պատուանդանն է, և ո՛չ Երուսաղէմի վրայ, որովհետև մեծ Արքայի քաղաքն է: Եւ քո գլխով էլ չերդուես, որովհետև չես կարող մի մազ իսկ սպիտակ կամ սև դարձնել: Այլ ձեր խօսքը լինի՝ այո՝ այո, և ոչը՝ ոչ. որովհետև դրանից աւելին չարից է*» /**Մատթ. 5:33-37/:**

Քանզի մարդը, սովորած լինելով երդում տալ, շուտով կը սկսի նաեւ սուտ երդուել: Իսկ ով սուտ երդում է տալիս Աստուծոյ անունով, նա անտեսում է Նրան, քանի որ գիտի, որ ստում է: Ուստի, քրիստոնեաներին տրուած չէ երդուել. «*Այլ ձեր խօսքը լինի՝ այո՝ այո, և ոչը՝ ոչ. որովհետև դրանից աւելին չարից է*»: Տէրը դրանով կարծես ցանկանում է ասել, որ ճշմարիտ հաւատքը եւ առաքինի կեանքը երդումների կարիք չունեն:

Ո՞րն է երդմնազանցութեան ծանրութիւնը

Հաւատքից ուրանումն ու երդմնազանցութիւնը նոյնակերպ մեղքեր են, քանզի երկուսն էլ ուրանում են Աստուծոյ անունը:

Որ՞ն է դաւաճանութեան ծանրութիւնը

Դաւաճանութիւնը մեծ մեղք է, քանզի ինչպէս Յուդան, մատնելով Քրիստոսին, խաչողներից մէկը դարձաւ, այնպէս էլ բոլոր դաւաճանները եւ մատնիչները կը տանջուեն Յուդայի հետ միասին: Դաւաճանը նման է մարդասպանին, որը սպանում է թրով, իսկ սա՝ խօսքով:

Ի՞նչ է հայհոյանքը

Հայհոյանքը դժգոհութիւն է Աստուծոյ հանդէպ, քանզի Աստուած լեզու է տուել, որ փառաբանեն եւ օրհնեն Իրեն, իսկ հայհոյողները քայլում եւ հայհոյում են Աստծուն: Այդպիսիներն աւելի վատ են, քան հրեաներն ու կռապաշտները, չնայած, որ հրեաները խաչեցին Քրիստոսին, եւ դա էլ՝ անգիտութիւնից, կռապաշտներն անգիտակցաբար են երկրպագում կուռքերին, իսկ սրանք գիտակցաբար հայհոյում են: Բոլոր մեղքերն Աստուծոյ շնորհների դէմ են, իսկ սա՝ Աստուծոյ Էութեան:

Ի՞նչ է սպասւում անիծողներին

Սբ. Տաթեւացին ասում է, որ նրանց բերանը կը լցուի որդերով: Եւ եթէ նրանք չապաշխարեն, ապա նրանց

մահուանից առաջ, համաձայն կարգի, արգելում է Սուրբ Հաղորդութիւն տալը, աւելին՝ այդպիսիներին քրիստոնէական գերեզմաններում չեն թաղում:

Ի՞նչ է լինում անէծքների պատճառով

Պիղծ անէծքների, Պատարագ մատուցող անարժան քահանայի, ինչպէս նաեւ սուտ երդման պատճառով «*...երկինքն ու երկիրը չորանում են, ծառերն անպտուղ են դառնում, սերմերն անհետանում են, ծնունդներն ապականում են, անասունների անկում է լինում և այլն*» : Բայց անէծքի մեղքն աւելի ծանր է, քան անարժան քահանան կամ սուտ երդում տուողը:

Ի՞նչ է չարախօսութիւնը

Չարախօսութիւնը հոգեւոր գողութիւն է, որն աւելի վատ է, քան հասարակ գողութիւնը: Հասարակ գողը կողոպտում է միայն մարմնաւորը, ինչպէս՝ ոսկին ու արծաթը, բայց, շուտով ապաշխարելով, կարող է վերադարձնել գողօնը, մինչդեռ չարախօսողը կողոպտում է բարի գործերն ու անունը, որոնք գանձից առաւել են, ինչի մասին եւ ասւում է առակներում. «*Բարի անունը լաւ է մեծ հարստութիւնից, ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց*» /Առակ. 22:1/: Եւ եթէ նոյնիսկ ապաշխարի էլ, այլեւս չի կարողանայ վերադարձնել գողօնը: Դրա համար էլ ինչպէս Սբ. Յակոբոսը, այնպէս էլ Մովսէսն արգելում են չարախօսութիւնը. «*Եղբայրնե՛ր, միմեանց մի՛ բամբասէք*» /Յակ. 4:11/, «*Համրին մի՛ վիրաւորիր, կոյրի ոտքերի առջև խոչ ու խութ մի՛ դիր*» /Ղեւտ. 19:14/: Չարախօսել նրան, ով չի լսում այդ խօսքերը, նշանակում է չարախօսել խուլ մարդուն, իսկ չարախօսել այն մարդու ներկայութեամբ, ով չի տեսել պատահածը, նոյնն է, ինչ եթէ գողանաս կոյրի առջեւ, քանի որ չտեսնողը հաւատում է լսածին: Քանզի, երբ մէկը չարախօսի եւ «*...տաս մարդ վկայեն, որ դա սուտ է, միևնոյն է՝ չարախօսին կը հաւատան*»:

Ո՞ւմ են նման չարախօսները

Շներին, որոնք՝ իրենց չարախօսութեամբ ուտում են մերձաւորի «*միսն ու ոսկորը*»: Խոզերի, որոնք՝ սիրում են թաւալուել ցեխի մէջ: Նոյնիսկ եթէ խոզը մտնի հրաշագեղ պարտէզ եւ այնտեղ՝ մի անկիւնում ցեխ լինի, նա կը գնա ոչ թէ ծաղիկների մօտ, այլ՝ ցեխի: Նոյնպէս եւ չարախօս մարդը, երբ առաքինի մարդու մէջ ինչ-որ մեղք է նկատում, մտածում է միայն ու միայն դրա մասին, քանզի վերջինիս բազում առաքինութիւններն արդէն չի տեսնում:

Արջի, որը տեսքով նման է մարդուն, բայց մարդ չէ, նոյնպէս եւ չարախօսը, թեեւ նման է մարդու, բայց մարդ չէ, այլ արնախում, ինչպէս արջը:

Սատանայի ծառայի, քանզի սատանան նման է կապկին եւ ձգտելով նման լինել Աստծուն՝ մշտապէս կրկնօրինակում է Նրա գործերը, սակայն աղճատում նրանց էութիւնը: Եկեղեցու դէմ գինետուն սարքեց, եւ ինչպէս Եկեղեցում զոհաբերւում է Աստուծոյ Գառը, այնպէս էլ գինետանը զոհաբերւում է եղբայրների միսը, որն ուտում են, երբ չարախօսում են: «*Ուստի,*- ասում է Սբ. Տաթեւացին,- *աւելի լաւ է Մեծ Պահքի ժամանակ գառան միս ուտես, քան եղբօրդ միսը*»:

Ո՞րն է այն մարդու մեղքը, ով լսում է չարախօսին

Եւ որքան չարախօսն է մեղանչում, նոյնքան էլ մեղանչում է նրան հաճոյքով ունկնդրողը: Քանզի ինչպէս մեղանչում է նա, ով չի օգնում եղբօրը, որին կծում է շունը, այդպէս էլ կը մեղանչի նա, ով դուրս չի գայ չարախօսի դէմ, որը կուլ է տալիս եղբօրը, ինչպէս շունը:

Ի՞նչ է ծիծաղը

Ծիծաղը մարմնի անվայելուչ մերկացումն է, շնչառութեան ճռուողիւն, այտերի պրկում եւ ատամների մերկացում: Ծիծաղը նաեւ հպարտութիւն եւ դաժանութիւն է, որը մարդուց հանում է ամէն տեսակ բարին: Դրա համար էլ ծիծաղը պարսաւելի է, քանզի յատուկ է յիմարներին, «...*յիմարի ծիծաղը նման է կաթսայի տակ*

կրակի մէջ ճարճատող փշերի ձայնին» /Ժող. 7:6/, իսկ իմաստուններին յատուկ է դէմքի ժպիտը, քանի որ նրանք չեն ծիծաղում, քանզի իրենց ուրախութիւնն արգելափակում են սրտում: Նոյնիսկ մեր Տէրը, ով իր վրայ վերցրեց մարդկային բոլոր կրքերը, բացի մեղքից, ոչ մի անգամ չծիծաղեց, որովհետեւ դա մեղք է:

Ո՞րն է ծիծաղի պատճառը

Ծիծաղի պատճառը մարդու համարձակութիւնն ու յանդգնութիւնն է, քանզի «...*խեղկատակութիւնն ամենայն չարի սկիզբն ու պատճառն է*»: Այդպիսիք վախ չունեն Աստծուց եւ վախ չունեն իրենց վերադասից, իսկ եթէ ունենային, ապա տրտում կը քալէին: Ծիծաղը լինում է նաեւ ապաշխարութեան բացակայութիւնից, քանզի ով անկեղծօրէն ապաշխարել է, նա գիշեր-ցերեկ արտասուում է եւ մորմոքում: Թափթփուած մարդիկ նոյնպէս ծիծաղում են, քանզի կարգուկանոն ու սահման չեն ճանաչում զրոյցներում, ճաշկերոյթներում եւ սրբութեան մէջ, այլ մշտապէս դատարկաբանութեան եւ կատակների մէջ կենալով՝ «...*դառնում են դեւերի կացարան և տուն*»: Ծիծաղը լինում է աշխարհի եւ մարմնի նկատմամբ ունեցած սիրուց, դրա համար էլ միմիայն դրանցով էլ ուրախանում է: Ինքնահաւանութիւնից եւ այլոց ոտնահարելուց նոյնպէս լինում է ծիծաղը, քանզի միայն սեփական անձն են ճշմարիտ համարում, միւսներին՝ սխալական:

Ո՞ւմ են նման այն մարդիկ, ովքեր ծիծաղում են ուրիշների վրայ

Այդպիսիք վատթար են անհաւատներից եւ դեւերից, քանզի «...*ունայն ծիծաղը անհաւատութեան և անյուսութեան արտայայտութիւն է*»: Այդպիսիք մոռացել են Քրիստոսի երկրորդ գալուստը, դատաստանն ու յաւիտենական տանջանքները: Անտեսում են Աստծուն եւ օրէնքը, որն արգելում է ծիծաղը եւ երանի է տալիս սգաւորներին:

Ի՞նչ պատիժներ են սպասում այդպիսիներին

Այդպիսիք արժանանում են հասարակութեան արհամարհանքին եւ նախատինքին, զրկւում են Երկնային Արքայութիւնից եւ ժառանգում կրակէ գեհենը, զրկւում են Մխիթարիչից՝ Սուրբ Հոգուց, Ով սգաւորների Մխիթարիչն է: Այդպիսիներին է դիմում նաեւ Ինքը Տէրը. «*Վա՜յ ձեզ, որ այժմ ծիծաղում էք, որովհետև պիտի սգաք ու պիտի լաք*» /Ղուկ. 6:25/:

Կարո՞ղ է արդեօք մարդը, լինելով քրիստոնեայ, լինել կռապաշտ

Ամէն քրիստոնեայ, որ սիրում է մեղքը, իր համար պատկեր է ստեղծում եւ երկրպագում է նրան: Ջորօրինակ՝ հպարտը երկրպագում է նրան, ինչ վերեւում է, քանզի սիրում է մշտապէս իշխել մերձաւորներին: Ագահն էլ երկրպագում է նրան, ինչ երկրի վրայ է: Հեշտասէրը՝ նրան, ինչ գտնւում է ջրում: Այն անձը, ով միշտ խորհում է երկրայինը, նա երկրպագում է սողացող զեռուններին: «*Գազանի բարքեր ունեցողները խոնարհւում են գազաններին, որկրամոլն՝ իր որովայնին, կնամոլը՝ կանանց և այլն*»: Նոյնպէս եւ նրանք, ովքեր թողնում են աղօթքը եւ հոգում միայն կենդանիների, տնտեսութեան եւ այլնի մասին, նրանք նոյնպէս կռապաշտ են, այդ պատճառով էլ Աստուած նրանցից վերցնում է ամէն ինչ եւ փոխարէնն աղքատութիւն տալիս: Աւելին, եթէ մարդ ինչ-որ մեղքի մէջ է, ապա Աստուծոյ այն պատկերը, որ կար նրա մէջ, փոխւում է կենդանական պատկերի, որի մասին էլ Սբ. Տաթեւացին ասում է. «*...եթէ դու ցանկասէր ու կնամոլ ես, ուրեմն՝ քո մէջ ձիու և էշի պատկերն է, այլ ոչ թէ՝ Աստուծոյ. եթէ հպարտ ես՝ առիւծի, եթէ յիշաչար ես՝ ուղտի, իսկ եթէ որկրամոլ ես՝ խոզի, եթէ նենգ ես ու ստախօս՝ օձի և աղուէսի, եթէ գող ես՝ մկան և այլն*»:

Ո՞ւմ կարելի է կոչել մարդասպան

Մարդասպանը միայն այն անձը չէ, ով ռեւէ մէկին զրկում է ֆիզիքական կեանքից, այլ նաեւ նա, ով, տեսնելով մերձաւորին կարիքի մէջ, թէ՛ հոգեւոր, թէ՛

մարմնական, շրջում է եւ չի օգնում նրան: Եղբօրն ատողը նոյնպէս մարդասպան է, ինչի մասին ասում է նաեւ Սբ. Առաքեալը (Տես Ա Յովհ. 3:15): Իսկ նա, ով չարախօսում է կամ մատնում, նա նոյնպէս մարդասպան է: Նա, ով վատ օրինակ է ծառայում եւ մեղքի մէջ անկման պատճառ դառնում, նա նոյնպէս մարդասպան է: Մարդասպան է նաեւ այն անձը, ով զրկում է այրիներին եւ որբերին:

Ի՞նչ տեսակ սպանութիւններ կան

Սպանութիւնները լինում են երեք տեսակ՝ սրտով, լեզուով եւ գործով: Սրտով սպանում են, երբ բարկանում են, նախանձում, չարութիւն ունեն, նենգ են ու ոխակալ: Լեզուով՝ երբ խառնակում են, հայհոյում, շողոքորթում, անիծում: Իսկ երբ ծեծում են, բայց ոչ՝ մահու չափ, փեսրում են մազերն ու մօրուքը, ապա դա սպանութիւն է գործով: Ահա ինչու է օրէնքն ասում. «*Մի՛ սպանիր*» /Ելք 20:13/:

Ինչպէ՞ս է դրսեւորւում գողութեան մեղքը

Այս մեղքը տարբեր կերպ է դրսեւորւում: Եթէ մարդն ինչ-որ բան է թաքուն դուրս բերում օտար տնից, ապա նա գող է: Գող է համարւում նաեւ նա, ով խաբում է առեւտրում, այսինքն՝ երբ խաբում է գնի եւ կշռի մէջ: Ով իր արուեստում պակասեցնում է նիւթերը եւ այլն, նա էլ է գող: Այսպիսիք գաղտնի են խարդախում, այդ պատճառով էլ գողեր են կոչւում: Իսկ ովքեր ակնայայտ հաւաքում են ճամբէքին, նրանք արդէն աւազակներ են: Եւ ինչպէս բռնակալներն ու իշխանները, ովքեր անիրաւօրէն են վարւում աղքատների հետ, թալանողներ են յորջորջւում, նոյնպէս եւ ծախու դատաւորներն են համարւում թալանողներ: Նաեւ նա, ով արծաթն ու սնունդը տոկոսով է տալիս, թալանող է: Իսկ նա, ով չի վճարում իր պարտքերը եւ աշխատողներին չի վարձատրում, գողութիւն է անում, զրկում է եւ թալանում:

Իսկ ո՞րը չի համարւում գողութիւն

Գողութիւն չի համարւում, երբ գողանում են մարդասպանի սուրը, որպէսզի սա ոեւէ մէկին չվնասի, քանզի դա զգուշութիւն է: Հաւասարապէս գողութիւն չէ նաեւ, երբ մարդ, սովամահ լինելով, հաց է գողանում, որ յագենայ, քանզի դա կարիք է: Ինչպէս նաեւ, երբ դա լինում է Աստուծոյ օրհնութեամբ, ինչպէս օրինակ՝ հրեաների դէպքում, ովքեր, վերցնելով ոսկին եգիպտացիներից, չվերադարձրին, քանզի իրենց աշխատանքի դիմաց վարձատրութիւնը մնացել էր նրանց մօտ: Տէրը դա արեց ոչ միայն վարձի համար, այլեւ, որ հրեաները չցանկանան վերադառնալ Եգիպտոս:

Ինչպէ՞ս քաւել գողութեան մեղքը

Եթէ նոյնիսկ գողը զղջայ արածի համար եւ խոստովանուի, ապա դա քիչ է, քանզի հարկ է տիրոջը վերադարձնել գողացածը, եթէ վերջինս ողջ է: Եթէ ողջ չէ, պէտք է տալ հարազատներին, իսկ եթէ հարազատներ չկան, պէտք է տալ աղքատներին կամ եկեղեցուն: Իսկ այնուհետեւ՝ մեղքը քաւել պահքով եւ աղօթքով:

ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՀՈՒԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է մահը

Մահը հոգու բաժանումն է մարմնից, ինչպէս եւ դրանց միութիւնը կեանքն է մարդու համար:

Ի՞նչ տեսակի է լինում մահը

Երկու տեսակի: Մահ բանական (հոգեւոր) եւ զգացական, ինչպէս եւ մեր կեանքը:

Ինչպէ՞ս է տեղի ունենում բանական մահը

Երբ առաքինութիւնների շնորհիւ մեռցնում ենք մարմինը (կրքերը), իսկ մեղքերով՝ հոգին: Քանզի մարմինը մեռցնելիս, զօրանում է հոգին, եւ մարդը դառնում է հոգեւոր: Իսկ հոգին մեռցնելով՝ մարդը դառնում է անբան եւ շնչաւոր:

Ի՞նչ տեսակի է լինում զգացական մահը

Չորս տեսակի՝ 1. բնական, 2. պատահական, 3. Կամաւոր եւ 4. Աստուծոյ Նախախնամութեամբ:

Ինչպէ՞ս են արտայայտւում մահուան այս տեսակները

1. Բնական մահը գալիս է, երբ մարդն արդէն ծերացել է: 2. Պատահական մահը գալիս է պատահաբար՝ վթարներից, դժբախտ պատահարներից, գազաններից եւ աւազակներից, վախից եւ տանջանքներից: 3. Կամաւոր մահը լինում է երկու տեսակի՝ բարի եւ չար: Չար է լինում, երբ մարդն ինքնասպանութիւն է գործում կամ գիտակցաբար կործանում է հոգին մեղքերով: Իսկ բարի, երբ մարդը յանուն Քրիստոսի պատրաստ է նահատակութեան պսակն ընդունել, ինչպէս նաեւ, երբ

մարմինը մեռցնում է առաքինութիւններով: 4. Մահն Աստուծոյ Նախախնամութեամբ լինում է մարդու բարիքի համար: Օրինակ, երբ մահանում է նորածինը, որպէսզի հետագայում նա մեղքերի մէջ չընկնի եւ չկործանի իր հոգին: Երբ արդարն է մահանում, որպէսզի հանգիստ գտնի տանջանքներից եւ չարչարանքներից: Երբ անօրէն մարդը մահանում է առանց ապաշխարութեան, որպէսզի նրա մեղքերը չբազմապատկուեն, եւ նա մարդկանց չվնասի:

Ինչո՞ւ են ոմանք դժուար աւանդում իրենց հոգիները

Երեք պատճառով 1. Մարդը ֆիզիքապէս ամուր է լինում: 2. Թոյլ ցաւերի պատճառով՝ հիւանդութեան իւրայատկութիւններ եւ մարմինի վիճակ: 3. Աստուծոյ նախախնամութեամբ:

Նման բան պատահում է եւ՛ բարի մարդկանց հետ, եւ՛ չար:

Մահամերձ մարդը տեսնու՞մ է արդեօք հանդերձեալ կեանքը

Եւ՛ արդար մարդը, եւ՛ մեղաւորը տեսնում են: Արդարը տեսնում է այն, ինչ պատրաստուած է նրա համար, եւ նրա հոգին ցնծում է: Իսկ մեղաւորը տեսնում է արդարների համար պատրաստուած երանելի կեանքի բարիքները, որոնցից նա զրկուել է եւ չարչարանքները, որ սպասում են նրան Դատաստանից յետոյ: Այդ պատճառով էլ նա զարհուրում է եւ չի ցանկանում մահանալ:

Նմա՞ն են արդեօք մեղաւորի եւ արդար մարդու մահերը

Ոչ, նման չեն: Արդար մարդու մահը բարի է, քանզի նրա հոգին կը հանգչի Տիրոջ մէջ, իսկ մեղաւորինը՝ չար, քանի որ նա ապրում է մեղքերի մէջ եւ յետոյ տանջուելու է յաւիտենականութեան մէջ:

Ո՞վ է գալիս մարդու հոգու ետեւից

Աստուծոյ հրեշտակը:

Արդեո՞ք դեւերն իշխանութիւն ունեն մարդու հոգու վրայ

Ոչ, չունեն: Հրեշտակը, որ գալիս է մարդու հոգու ետեւից, քշում է դրանց եւ թոյլ չի տալիս, որպէսզի դրանք մօտենան հոգուն: Սակայն մեղաւորների հոգիներին ցոյց են տալիս չարչարանքները, յաւիտենական կրակը, ապամների կրճտումը եւ դրանով իսկ վախեցնում են նրան:

Ու՞ր է Հրեշտակը տանում մարդու հոգին

Արդարների հոգիները տանում է Երկնային օթեւաններ, որոնք եւ խոստացել էր Տէրը. «*Իմ Հօր տան մէջ բազում օթեւաններ կան. թէ չէ ես ձեզ կ՚ասէի, թէ գնում եմ ձեզ համար էլ տեղ պատրաստելու. ու եթէ գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձեալ կու գամ և ձեզ կը վերցնեմ ինձ մօտ, որպէսզի, ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ լինէք*» /Յովհ. 14:2-3/: Իսկ այն քրիստոնեաների հոգիները, որոնք չլրացրեցին արդարութեան գործերը եւ չհասան կատարելութեան, նաեւ մեղաւորների հոգիները Հրեշտակը տանում է հոգիների յատուկ կայան, ուր նրանք պէտք է սպասեն Դատաստանին:

Որտե՞ղ են գտնւում հոգիների օթեւաններն ու կայանը

Օթեւանները հենց Երկնային Երուսաղէմն է. «...*բայց դուք մօտեցել էք Սիոն լերանը և կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնային Երուսաղէմին, հրեշտակների բիւրաւոր բանակներին, երկնքում գրուած անդրանիկների հանդիսաւոր ժողովին, բոլորի դատաւոր Աստծուն, կատարելութեան հասած արդարների հոգիներին*» /Եբր. 12:22-23/: Եւ նրանք ծառայում են Աստուծոյ Գահի առաջ. «*Այդ պատճառով նրանք կանգնած Աստուծոյ աթոռի առաջ՝ զօր ու գիշեր պաշտում են նրան իր տաճարի մէջ: Նա, որ նստում է աթոռի վրայ, բնակւում է նրանց մէջ: Ո՛չ քաղց են զգալու, ո՛չ էլ ծարաւելու են. և նրանց չի վնասելու ո՛չ արեգակը, ո՛չ էլ տօթը: Գառը, որ իր աթոռի մէջտեղում է, պիտի հովուի նրանց ու պիտի առաջնորդի նրանց դէպի կեանքի աղբիւրը կենդանի ջրի, քանզի Աստուած նրանց աչքերից սրբեց ամէն արտա-*

սուք» /Յայտն. 7:15-17/: Այդ արդարները Դատաստանի չեն գա-լիս:

Իսկ հոգիների կայանը գտնւում է Երկնային Երուսաղէմի եւ Երկրի միջեւ, ուր հոգիները սպասում են գալիք Դատաստանին:

Արդեո՞ք հոգիների կայանում գտնուող մարդկային հոգիների վիճակը միանման է

Ոչ, միանման չէ: Այն քրիստոնեաները, ովքեր ապրել են արդար եւ մահացել զղջման մէջ, սակայն մեղքերի պատճառով դեռ չեն հասել կատարելութեան, ուրախութեամբ սպասում են Դատաստանին եւ արդարացման ողորմածութեանը: Այն քրիստոնեաները, ովքեր մահացել են մեղքերի մէջ եւ անզեղջ, ահով են սպասում պատժի Դատաստանին: «*Արդ, երբ որ մարդու Որդին գայ իր փառքով և բոլոր հրեշտակները՝ իր հետ, այն ժամանակ Նա պիտի նստի իր փառքի գահի վրայ, ու նրա առաջ պիտի հաւաքուեն բոլոր ազգերը, և Նա նրանց միմեանցից պիտի զատի, ինչպէս մի հովիւ, որ զատում է ոչխարները այծերից: Եւ ոչխարները իր աջին պիտի կանգնեցնի, իսկ այծերը՝ ձախին*» /Մատթ. 25: 31-33/:

Իսկ մարդիկ, ովքեր չեն ընդունել Քրիստոսին, Դատաստանին նոյնպէս չեն գայ, քանզի արդէն դատապարտուած են. «*Ով նրան հաւատում է, պիտի չդատապարտուի, ով նրան չի հաւատում, արդէն իսկ դատապարտուած է, քանի որ Աստուծոյ միածին Որդու անունը չհաւատաց*» /Յովհ. 3:18/, նրանք նոյնպէս ահի մէջ սպասում են յաւիտենական պատիժների:

Դրա օրինակ կարող է ծառայել առաքինի Յովսէփի հետ տեղի ունեցած դէպքը, ով, ընկնելով զնտանը, մեկնում էր փարաւոնի ծառաներ տպակառապետի եւ մատակարարի երազները (տե՛ս Ծնն. 40 գլ.): Նրանցից մէկը ուրախութեամբ սպասում էր փարաւոնի ողորմածութեանը, իսկ միւսը ահով՝ մահապատժի:

Արդեո՞ք մարդկանց հոգիներն այժմ փառքի եւ պատժի մէջ են

Նշենք, որ փառքը լինում է երկու տեսակի՝ գործերի եւ հատուցման: Այժմ, գործերի փառքն է՝ ուրախութեան մէջ սպասումը, իսկ յարութիւնից յետոյ մարդիկ կ'արժանանան հատուցման փառքին: Նոյնպէս եւ պատիժն է լինում երկու տեսակի՝ գործերի եւ հատուցման: Պատիժ գործերի պատճառով, այսինքն՝ այժմեան պատիժը ահով սպասումն է մեռելներից յարութիւն առնելուց յետոյ սպասուելիք հատուցման պատժի:

Այդ դէպքում ինչո՞ւ է Յայտնութեան մէջ ասւում ճերմակ հագուստի եւ դժոխքի մասին. «*Եւ դրանից յետոյ տեսայ մի մեծ բազմութիւն, - որին թիւ չկար, - բոլոր հեթանոսներից և բոլոր ազգերից, բոլոր լեզուներից և բոլոր ժողովուրդներից, որոնք կանգնած էին աթոռի առաջ և Գառան առաջ՝ իրենց վրայ սպիտակ զգեստներ գցած և արմաւենու ճիւղեր իրենց ձեռքերին*» **/Յայտն. 7:9/:**

Սա ասւում է ոչ թէ հատուցման փառքի մասին, այլ գործերի փառքի, որն ունեն բոլոր արդարները: «*...մահն ու դժոխքն էլ՝ տուեցին իրենց մեռելներին. իւրաքանչիւրը դատուեց ըստ իր գործերի*» /Յայտն. 20:13/: Դժոխքը մեղաւորների վիճակն է, ովքեր իրենց գործերի պատիժն են կրում, այդ տեղը Երկնային Քաղաքի Գահի ձախ կողմում է. «*...ու նրա առաջ պիտի հաւաքուեն բոլոր ազգերը, նա՝ նրանց միմիեանցից պիտի զատի, ինչպէս մի հովիւ, որ զատում է ոչխարները այծերից: Եւ ոչխարները իր աջին պիտի կանգնեցնի, իսկ այծերը՝ ձախին*» /Մատթ. 25: 32-33/: Դրա օրինակը աղքատ Ղազարոսի մասին առակն է. «*Երբ աղքատը մեռաւ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը. Մեծահարուստն էլ մեռաւ և թաղուեց*» (տե՛ս Ղուկ. 16): Այսինքն՝ նրանք հատուցմանն են սպասում յարութիւնից յետոյ:

Ճանաչո՞ւմ են արդեօք մահացածների հոգիներն իրար

Այո, ճանաչում են, ինչպէս մեծահարուստը ճանաչեց Ղազարոսին:

Գիտե՞ն արդեօք հանգուցեալները, թէ ինչ է կատարւում երկրի վրայ

Արդարները գիտեն եւ աղօթում են կենդանի մարդկանց համար, իսկ մեղաւորներն իրենք չգիտեն, նրանց յայտնում են Հրեշտակները կամ դեւերը:

Արդեօ՞ք հանգուցեալների հոգիները յայտնւում են կենդանի մարդկանց

Արդարները, որպէսզի օգնեն ապրողներին, յայտնւում են անձամբ եւ երազում, եւ իրականում, երբ որ ցանկանում են եւ ում որ ցանկանում են: Ոչ կատարեալ քրիստոնեաները յայտնւում են Հրեշտակների միջոցով, կամ էլ Հրեշտակներն իրենք՝ նրանց տեսքով, յայտնւում են կենդանի մարդկանց եւ խնդրում աղօթքներ: Իսկ մեղաւորների հոգիները չեն կարող յայտնուել:

ՆԵՌԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է նշանակում կապել սատանային

Մինչեւ Տիրոջ գալը սատանան խաբում էր մարդկանց, տանջում նրանց հոգիները կենդանութեան օրօք՝ տարբեր կերպերով եւ կուռքերի պաշտամունքի միջոցով, իսկ մահուանից յետոյ՝ նաեւ դժոխքում, քանի որ իշխանութիւն ունէր մարդկանց հոգիների վրայ: Իսկ Քրիստոս ազատեց մարդկանց սատանայի իշխանութիւնից՝ կապելով նրան. «*Կամ ինչպէ՞ս կարող է մէկը մտնել հզօր մի մարդու տունը և յափշտակել նրա գոյքերը, եթէ նախ չկապի հզօրին և ապա նրա տունը կողոպտի*» /Մատթ. 12:29/, «*Հիմա՛ է այս աշխարհի դատաստանը, հիմա՛ է, որ այս աշխարհի իշխանը դուրս կը նետուի*» /Յովհ. 12:31/, «*Իշխանութիւններին և պետութիւն-*

ներին զինաթափ արեց, հրապարակաւ խայտառակեց՝ նրանց պարտութեան մատնելով Քրիստոսի միջոցով՝ նրա յարութեամբ» /Կող. 2:15/, «*...դրա համար էլ ասում է. «Ելաւ բարձունքը, գերիների բազմութիւն գերեվարեց և մարդկանց պարգևներ տուեց»* /Եփես. 4:8/, «*Արդ, որովհետև զաւակները հաղորդակից եղան արեան և մարմնին, ինքն էլ մարդկային բնութեամբ մասնակից եղաւ նրանց, որպէսզի իր մահով կործանի նրան, որ մահուան իշխանութիւն ունէր, այսինքն՝ Սատանային, ազատի նրանց, որ, մահուան երկիւղով, միշտ գերութեան վիճակում էին»* /Եբր. 2:14-15/, «*Եւ այն հրեշտակներին, որ չպահեցին իրենց իշխանութիւնը, այլ լքեցին իրենց բնակութեան տեղը, յաւիտենական կապանքներով խաւարի մէջ պահեց դատաստանի մեծ օրուայ համար»* /Յուդա 1:6/:

Ի՞նչ է նշանակում կապել 1000 տարով

1000 տարին նշանակում է կատարեալ թիւ, եւ պարտադիր չէ 1000 տարին հասկանալ ուղիղ իմաստով: Դա Քրիստոսի առաջին գալուստից մինչեւ երկրորդ գալուստ ընկած ժամանակահատուածն է:

Իսկ ո՞վ է նեռը, արդեո՞ք հենց ինքը՝ սատանան

Ոչ, սատանան չէ, այլ անօրէնութեան մարդը, որը չունի ո՛չ բնական, ո՛չ գրաւոր եւ ո՛չ էլ աւետարանական օրէնքներ: Հակառակորդն է եւ կործանիչը բարի գործերի, ճշմարտութեան, սուրբ հաւատքի: Նա հակառակուելու է խաչին, եկեղեցական արարողութիւններին, սրբութիւններին, աղօթքին, պահքին եւ այլն:

Ումի՞ց է լինելու նեռը եւ ինչպիսի՞ն է լինելու

Լինելու է Դանի ցեղից՝ ծնուած պոռնկից: Դեռ մօր արգանդում նրա վրայ կ'իջնի չար ոգի, եւ այդ պատճառով էլ կը կոչուի սատանայի որդի: Հասուն տարիքում կու գայ Երուսաղէմ, որտեղ կը թլփատուի եւ իրեն որպէս Քրիստոս կը ներկայացնի, իսկ հրեաները նրա համար տաճար կը կառուցեն: Կը լինի հեշտասէր եւ կանանց

կրքոտ սիրահար, սակայն իրեն կը ներկայացնի որպէս կոյս եւ սուրբ, որպէսզի խաբի շատերին: Կը լինի անպատկառ եւ ամբարտաւան, կը հակառակուի Աստծուն, կը հայհոյի Նրա անունը եւ մարդկանց կը սփիպի իր պատկերին երկրպագել: Ինչպէս Քրիստոսի մէջ «*էբնակւում Աստուածութեան ամբողջ լիութիւնը մարմնապէս*» /Կող. 2:9/, այնպէս էլ նեռի մէջ կը բնակուի ամէն տեսակի պղծութիւն եւ չարիք, քանզի նրա մէջ սատանան կը հաւաքի ողջ չարութիւնը, բոլոր մեղքերը եւ կախարդութեան բոլոր տեսակները, որպէսզի խաբի մարդկանց:

Մարդկանց նա ե՞րբ կը բացայայտուի

Նրան զսպողը կը լինի Հրեշտակը «...*բայց այդ պիտի չյայտնուի մինչև այն ժամանակ, երբ մէջտեղից կը վերացուի նա, որ այժմ նրան ետ է պահում*» /Բ Թեսաղ. 2:7/, այսինքն, ոչ ոք նրան չի իմանայ, քանի դեռ նա չի յանդգնել իրեն որպէս Աստուած ներկայացնել («...*որ նա նստի Աստուծոյ տաճարում և ինքն իրեն ցոյց տայ, թէ Աստուած է*» Բ Թեսաղ. 2:4), այնժամ էլ Հրեշտակը նրանից կը հեռանայ, եւ բոլորը կ՚իմանան, որ նա է ծովից դուրս եկող գազանը (տե՛ս Յայտն. 13:1):

Ի՞նչ է լինելու նրա անունը

Եբրայերէն նրա անունը արնավիմէ է, որ նշանակում է «ուրանում եմ»: Յունարէն՝ անտեւիոս – հակառակորդ: Լատիներէն՝ տիտանոս – աժդահայ /հսկայ/: Եւ հարկ է իմանալ, որ նրա անունը ջնջուած է Սբ. Գրքից, եւ այդ պատճառով նրան անուանում են տարբեր կերպերով: Տէրը նրան անուանում է գարշանք եւ սուտ քրիստոս, Յայտնութիւնում՝ գազան, Յովհաննէսն անուանում է հակաքրիստոս (հայերէն տարբերակով՝ նեռ), Պօղոսը նրան անուանում է մեղքի մարդ, կորստեան որդի:

Ի՞նչ է նշանակում նրա անուան համարը Յայտնութեան 13-րդ գլխում

Գրաբարում 600, 60, 6 թուերից իւրաքանչիւրը համապատասխանում է այբուբենի մի տառի՝ **600 - Ու, 60 - Կ, 6 – Ջ,** եւ նշանակում են «**Ուրանամ կամաւ զԱրարիչն երկնի եւ երկրի**»: Եւ այդ կնիքը դնելու են ճակատին եւ աջ ձեռքին:

Ի՞նչ է նշանակում աջ ձեռքին եւ ճակատին այդ թիւը գրելը

Սբ. Տաթեւացին ասում է, թէ ինչպէս արքաների գիրն առանց կնիքի ոչինչ է, այնպէս էլ Երրորդութեան անունով մկրտուածն ունի կնիք: Սակայն Երկնային Թագաւորի այդ գիրն էլ ընդունելի չէ, եթէ չկայ եւս 6 կնիք, այսինքն՝ ողորմածութեան 6 տեսակները, որոնց մասին եւ կ'ասի Տէրն իր ընտրեալներին. «*...եկէ՛ք Իմ Հօր օրհնեալներ...քանզի ձեր գիրը բարի է և կնքուած է վեց կնիքով, որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք տուիք...*», իսկ մեղաւորներին կ'ասի. «*...գնացէ՛ք ինձնից անիծեալներ, քանզի ձեր գիրը կնքուած չէ վեց կնիքով, որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք չտուիք...*»: Այսպիսով, եթէ մարդը չունենայ այդ վեց կնիքները, ապա կ'ունենայ նեռի ուրացման կնիքը: «*Քանզի երբ գայ նեռը, կը դնի ուրացման կնիքը աջ ձեռքին և ճակատին*», - ասում է Սբ. Տաթեւացին: Աջ ձեռքի վրայ՝ բարի գործերի դէմ՝ եւ մարդը կ'ուրանայ ողորմածութեան բարի գործերը, այսինքն՝ այլեւս ողորմածութեան գործեր չի անի, իսկ ճակատի վրայ՝ մկրտութեան դէմ, քանզի կ'ուրանայ Քրիստոսին եւ կը սկսի մեղքեր գործել յանդգնութեամբ: Եւ ինչպէս քրիստոնեաները ամէն Աստուծոյ օր հրաժարւում են սատանայից եւ խոստովանում են Սբ. Երրորդութեանը, այնպէս էլ սրանք, ամէն անգամ ինչ-որ բան գնելիս, հրաժարուելու են Քրիստոսից եւ երկրպագելու են նեռի պատկերին:

Ի՞նչ է նշանակում «կերտեցին գազանի արձանը»

«*...եւ մոլորեցնում էր երկրի վրայ բնակուողներին այն նշաններով, որ թոյլատրուած էին, որ նա կատարէր*

գազանի առաջ: Երկրի բնակիչները նրան ասացին. «Կերտի՛ր արձանն այն գազանի, որ կենդանի մնաց սրի վէրքերից» /Յայտն. 13:14/: Սա նշանակում է, որ կերտելու են նրա արձանը եւ երկրպագելու են նրան: Ինչպէս նաեւ, եթէ մարդը գտնւում է ինչ-որ մեղքի մէջ, ապա Աստուծոյ այն պատկերը, որ տրուել էր նրան, փոխւում է գազանի պատկերի, ինչի մասին էլ Սբ. Տաթեւացին ասում է. «*...եթէ դու հեշտասէր ես և կնամոլ, ապա քո մէջ ծիու կամ էշի պատկերն է, ոչ թէ՝ Աստուծոյ, եթէ հպարտ ես՝ առիւծի, եթէ ոխակալ՝ ուղտի, եթէ որկրամոլ՝ խոզի, եթէ նենգ ես ու ստախօս՝ օձի և աղուէսի, եթէ գող ես՝ մկան*» եւ այլն:

Ինչպէ՞ս է նեռը մոլորեցնելու մարդկանց

Նա տարբեր կերպերով է խաբելու մարդկանց եւ մոլորեցնելու նրանց, որպէսզի իրեն երկրպագեն: Սակայն մենք կը նշենք նրա հիմնական մոլորութիւնները.

1. Ջինուելու է Եկեղեցու դէմ՝ խոչընդոտելով ուղղափառ վարդապետութեան քարոզչութիւնը, ունենալով կեղծ մարգարէներ, առաքեալներ եւ վարդապետներ, քարոզելու է կեղծ վարդապետութիւն, որպէսզի խաբի շատերին, ինչը եւ երեւում է այսօր՝ աղանդաւորական քարոզիչների եւ քարոզների շատացմամբ:

Այսօր, բոլոր աղանդները միահամուռ կերպով պնդում են, թէ 1000-ամեայ Արքայութիւնը պէտք է շուտով գայ, եւ թէ իրենք բոլորը Քրիստոսի հետ միասին պէտք է «թագաւորեն» 1000 տարի այս երկրի վրայ: Այժմ պարզ է՝ ում արքայութիւնն են նրանք քարոզում եւ դրանով իսկ պատրաստում մարդկանց նեռի գալստեանը, քանզի, երբ նա գայ, բոլորը նրա մէջ կը տեսնեն իրենց «փրկչին» եւ կ'երկրպագեն նրան, որպէսզի թագաւորեն նրա հետ:

Բացի այդ, աղանդաւորները չեն ընդունում խաչը, խաչի նշանը, պատարագները, եկեղեցական աղօթքները եւ այլն, իսկ երբ գայ նեռը, կը հակառակուի խաչին, եկեղեցական արարողութիւններին, սրբութիւններին, աղօթքին, պահքին եւ հենց դրանով էլ կը խաբի նրանց:

Սբ. Տաթեւացու խօսքով՝ նեռի գալուստից առաջ սատանան չար ոգու միջոցով մարդկանց խօսել կու տայ այլ լեզուներով, ինչը մենք տեսնում ենք այսօր խարիզմատական աղանդների միջավայրում:

2. Հրաշքներ է գործելու, սարեր եւ ծառեր է շարժելու, բժշկութիւններ է կատարելու, ինքն իրեն ցոյց է տալու մեռած, իսկ երեք օր յետոյ յարութիւն է առնելու, եւ այդ ամէնը՝ կախարդութեան եւ սատի միջոցով. «*Նրա՝ Անօրէնի գալուստը Սատանայի ներգործութեամբ է, ամենայն զօրութեամբ, նշաններով, խաբեբայական զօրաւոր գործերով*...» /Բ Թեսաղ. 2:9/:

3. Գանձերի միջոցով հարստանալու հնարաւորութիւն կը տայ հարստութիւն սիրողներին, ագահներին, ժլատներին եւ անգութներին, քանզի ինքն էլ կը գտնի գանձ եւ կը հարստանայ: Իսկ փողը անսահմանափակ իշխանութիւն է, եւ այսօր մենք տեսնում ենք, թէ ինչպէս են շատերը հարստանում մեր աչքերի առաջ: Սբ. Տաթեւացին ագահին համեմատում է ջրգողութեամբ հիւանդ մարդու հետ, ով ինչքան խմի, աւելի է ծարաւում, իսկ դա հենց արմատն է այն ամբողջ չարիքի, որը մատնեց Քրիստոսին, այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ նեռի ժամանակներում փողասէրները կ'երկրպագեն նրան եւ կ'ուրանան Քրիստոսին: Այդ իսկ պատճառով Տէրը զգուշացնում էր մեզ, թէ հնարաւոր չէ ծառայել Աստըծուն եւ մամոնային, իսկ Պօղոսի խօսքով ագահութիւնը նոյնն է, ինչ կռապաշտութիւնը (տե՛ս Կող 3:5):

4. Իսկ նա ով չընդունի նրան, ուժով կը սպիպի, որ երկրպագի իրեն:

Որքա՞ն ժամանակ է երկրի վրայ թագաւորելու նեռը

Միայն երեք եւ կէս տարի նա կը թագաւորի երկրի վրայ, եւ նրա գահը կը լինի Երուսաղէմում, եւ դրանք կը լինեն մեծ վշտի օրեր, որից յետոյ էլ կը գայ մեր Տէրը՝ զօրութեան եւ փառքի մէջ՝ նախապէս սպանելով նրան Ձիթենեաց լերան վրայ:

Ի՞նչն է օգնելու վերջին ժամանակների քրիստոնեաներին

1. Հենց Տիրոջ խօսքերը, որ նախապէս զգուշացրեց մեզ. «*...որովհետև սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն և մեծամեծ նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցոյց տան՝ Աստուծոյ ընտրեալներին անգամ մոլորեցնելու աստիճան, եթէ հնար լինի: Ահա ձեզ առաջուց ասացի: Ապա եթէ ձեզ ասեն՝ ահա՛ անապատի մէջ է, չելլէք, կամ թէ՝ ահա՛ մառանում է, չհաւատաք*» /Մատթ. 24:24-26/:

2. Առաքինի կեանքը եւ ճշմարիտ վարդապետութիւնը կ'օգնեն քրիստոնեաներին: Առաքեալն ասում է, որ կը դատապարտուեն բոլոր նրանք, ովքեր չհաւատացին ճշմարտութեանը եւ սիրեցին անօրէնութիւնը (տե՛ս Բ Թեսաղ. 2:10-12): Իսկ նրանց, ովքեր հաստատուած են հաւատքի, ճշմարիտ վարդապետութեան մէջ եւ առաքինի կեանք ունեն, նեռը չի կարողանայ յաղթել, այլ միայն նրանց, ում հաւատն անկատար է, ովքեր անգէտ են վարդապետութեան մէջ, սիրում են հարստութիւններ եւ վախկոտ են: Իսկ Սբ. Ոսկեբերանն ասում է, թէ նա, ով ճշմարիտ հաւատք ունի, սակայն չունի առաքինի կեանք, նա փրկութիւն չի գտնի եւ հակառակը:

3. Այն օրերին օգնութիւն կը լինի նաեւ օրերի կրճատումը, այսինքն՝ տարին կը թռչի ինչպէս ամիսը, ամիսն՝ ինչպէս շաբաթ, շաբաթն՝ ինչպէս օր: Կը կրճատուեն նաեւ նեռի օրերը, որոնք կը լինեն մեծ վշտի օրեր, եւ այդ օրերի քանակը կը լինի 1275, այսինքն՝ երեք եւ կէս տարի:

4. Օգնական կը լինեն Ենովքն ու Եղիան, ովքեր, գալով Երուսաղէմ (նրանք Յայտնութեան 11-րդ գլխի երկու վկաներն են), կը դիմակազերծեն նեռին եւ կ'ամրացնեն հաւատացեալների սրտերը: Ինչպէս Քրիստոսի առաջին գալստեան ժամանակ նախակարապետը Սբ. Յովհաննէս Մկրտիչն էր, այնպէս էլ երկրորդ գալստեան ժամանակ այդ երկու վկաները կը լինեն: Նեռը կը սպանի նրանց, երեք օր յետոյ նրանք յարութիւն կ'առնեն եւ փառքով կը համբարձուեն երկինք: Իսկ երբ նեռը տեսնի, որ ինքը խայտառակուել է, կը բարձրանայ Ձիթենեաց լերան վրայ, որպէսզի նոյնպէս համբառնի երկինք, եւ այստեղ նրան «*Տէր*

Յիսուս պիտի կործանի իր բերնի շնչով և պիտի ոչնչացնի իր յայտնութեամբ իր գալստեան ժամանակ» /Բ Թեսաղ. 2:8/:

Ի՞նչ տեղի կ'ունենայ այնուհետեւ

Այնուհետեւ երկնքնում կը յայտնուի մարդու Որդու նշանը (տե՛ս Մատթ. 24:30), այսինքն՝ Խաչը, եւ կ'երեւայ 45 օր՝ մինչեւ երկրորդ գալուստը: Այդ օրերին կը լինեն խաղաղութիւն եւ անդորր Եկեղեցու համար եւ ուրացածների ապաշխարութեան ժամանակ, հրեաները հաւատքի կու գան ի Քրիստոս, քանզի ոչինչ չի խանգարի եւ չի գայթակղեցնի մարդկանց: Իսկ նեռի ծառաները, նրա կործանումից յետոյ, տեսնելով, որ իրենց հետ ոչինչ չպատահեց, կ'ուրախանան, կ'ուտեն եւ կը խմեն, կին կ'առնեն՝ ինչպէս Նոյի ժամանակներում, եւ կ'ասեն. «*...խաղաղութիւն և ապահովութիւն*», «*...այն ժամանակ յանկարծակի կը հասնի նրանց կործանումը, ինչպէս լինում է յղի կնոջ երկունքը*» /Ա Թեսաղ. 5:3/:

ՄԵՌԵԼՆԵՐԻՑ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է նշանակում առաջին եւ երկրորդ յարութիւն (Յայտնութիւն, 20-րդ գլուխ)

Յարութիւնը լինում է երկկերպ. հոգեւոր (առաջինը) եւ մարմնաւոր (երկրորդը): Առաջին յարութիւնը այն է, երբ հոգին է յարութիւն առնում, եւ դա տեղի է ունեցել Քրիստոսի առաջին գալստեան շնորհիւ. «*...մինչ մեռած էինք մեր մեղքերի մէջ, մեզ կենդանացրեց Քրիստոսով (որովհետև շնորհով փրկուեցինք): Նրա հետ յարութիւն տուեց մեզ և նրա հետ նստեցրեց երկնքում Քրիստոս Յիսուսով*» /Եփես. 2:5-6/: Առաջին յարութիւն է նաեւ արդարի հոգու կանգնելը Երկնային Գահի առաջ: Մարմնաւոր, այսինքն, երկրորդ յարութիւնն այն է, երբ յարութիւն կ'առնի մարմինը, այսինքն՝ հոգին կը միաւորուի մարմնի հետ:

Ի՞նչ է նշանակում առաջին եւ երկրորդ մահ (Յայտնութիւն, 20-րդ գլուխ)

Առաջին մահը երկկերպ է՝ հոգեւոր եւ մարմնաւոր: Հոգեւոր մահը մեղքի հետեւանք է, ինչի մասին ասում է Առաքեալը. «...*քանի որ մեղքի վարձը մահն է*» /Հռոմ. 6:23/: Իսկ մարմնական մահը հոգու անջատումն է մարմնից: Երկրորդ մահը նոյնպէս երկկերպ է՝ վախը յաւիտեան պատիժներից եւ յաւիտենական պատիժներ ու մահ:

Ի՞նչ է նշանակում թագաւորել Քրիստոսի հետ 1000 տարի (Յայտնութիւն, 20-րդ գլուխ)

1000 տարին, ինչպէս եւ ասուել էր, Քրիստոսի առաջին եւ երկրորդ գալստեան միջեւ ընկած ժամանակահատուածն է: Իսկ Քրիստոսի հետ այս կեանքում թագաւորել նշանակում է թագաւորել յոյսով, իսկ հանդերձեալ կեանքում՝ հոգով: Իսկ մեռելներից յարութիւն առնելուց յետոյ թագաւորելու են յաւիտեան:

Ի՞նչ են նշանակում Առաքեալի՝ «*Քրիստոսով մեռածները առաջինը յարութիւն պիտի առնեն. ապա և մենք, որ կենդանի մնացած պիտի լինենք*» խօսքերը» /Ա Թեսաղ. 4:15,16/

Մեռածներն ընդամէնը պէտք է յարութիւն առնեն, իսկ կենդանի մնացածները՝ նախ մեռնեն, ապա յարութիւն առնեն. «*Եւ ինչպէս որ մարդկանց սահմանուած է մէկ անգամ մեռնել և այնուհետև՝ դատաստան*» /Եբր. 9:27/, սակայն այս ամէնը կը լինի մէկ ակնթարթում:

Ինչպէ՞ս են յարութիւն առնելու մարմինները, որ այրուել են, կենդանիները խժռել են կամ հողի են վերածուել

Այն, ինչ անհնար է մարդու համար, հնարաւոր է Աստուծոյ համար (տե՛ս Մարկ. 10:27):

Ինչպիսի՞ փոփոխութիւններ կը կրեն արդարները յարութիւնից յետոյ

Արդարները յարութիւնից յետոյ կը զարդարուեն եօթ զարդարանքներով՝ երեքով՝ հոգին եւ չորսով՝ մարմինը, քանզի մեր հոգում գոյութիւն ունի երեք թերութիւն՝ տգիտութիւն, մոռացութիւն եւ տրտմութիւն, եւ չորս մարմնական թերութիւններ. 1. մահկանացիութիւն եւ չարչարելիութիւն, 2. աղտեղութիւն եւ սեւութիւն, 3. ծանրութիւն եւ ծուլութիւն, 4. թանձրութիւն եւ կոպտութիւն: Եւ այս բոլոր թերութիւնները յարութեան ժամանակ կը վերացուեն:

Այսպիսով՝ կ'անհետանայ տգիտութիւնը, եւ մարդիկ կ'ունենան լուսաւոր իմացութիւն, երբ կը տեսնեն Աստծուն դէմ առ դէմ. «*Այժմ՝ տեսնում ենք աղօտ, ինչպէս պատկերը հայելու մէջ. իսկ այն ժամանակ պիտի լինի դէմառդէմ: Այժմ՝ խելամիտ եմ փոքրիշատէ, իսկ այն ժամանակ կը գիտենամ՝ ինչպէս որ նա ճանաչեց ինձ*»: /Ա Կորնթ. 13:12/: Կ'անհետանայ նաեւ մոռացութիւնը, քանզի մշտապէս կը տեսնեն Նրան. «*...նրանք տեսնում էին նրա երեսը, և նրա անունը գրուած էր իրենց ճակատների վրայ*» /Յայտն. 22:4/, իսկ երբ տեսնեն, կը չքուի նաեւ տրտմութիւնը. «*Դուք էլ այժմ տրտմութիւն ունէք, բայց ես դարձեալ ձեզ պիտի տեսնեմ, ու ձեր սրտերը ուրախ պիտի լինեն. և ձեր ուրախութիւնը ոչ ոք ձեզնից պիտի չխլի*» /Յովհ. 16:22/: Կը դառնան անմահ եւ անապական. «*...քանի որ այլևս մեռնել անգամ չեն կարող, որովհետև հրեշտակներին հաւասար են և Աստուծոյ որդիներ*» /Ղուկ. 20:36/ եւ «*...որովհետև պէտք է, որ այս ապականութիւնը անապականութիւն կրի, և այս մահկանացու գոյութիւնը կրի անմահութիւն*» /Ա Կորնթ. 15:53/: Կ'անհետանան աղտեղութիւնն ու սեւութիւնը, քանզի կը շողշողան ինչպէս Արեւը. «*Այն ժամանակ արդարները երկնքի արքայութեան մէջ կը ծագեն ինչպէս արեգակը*» /Մատթ. 13:43/: Մարմինները թեթեւ կը լինեն եւ բարի գործեր անելուն արագահաս, եւ ուր հոգին ցանկանայ, այնտեղ կը լինի եւ մարմնով. «*քամին ուր ուզում է՝ փչում է*» /Յովհ. 3:8/: Կը լինեն թափանցիկ, եւ ինչպէս Արեւի շողն անցնում է օդի միջով, այնպէս էլ նրանց համար

խոչընդոտներ չեն լինի: Եւ ինչպէս Քրիստոս, Ով յարութիւն առաւ, քարով կնքուած, գերեզմանից, իսկ յարութիւնից յետոյ, աշակերտներին յայտնուեց փակ դռների միջով (տես՝ Յովհ. 20:19), այնպէս էլ արդարների մարմինները կը հասնեն մինչեւ հրէ երկինքներ: Այսպիսով՝ հոգու եւ մարմնի վերոթուարկեալ զարդարանքները կ'ունենան միայն արդարները. «*Ես պիտի հրճուեմ Տիրոջով, որովհետեւ նա ինձ փրկութեան զգեստ և ուրախութեան պատմուճան հագցրեց, որպէս փեսայի՝ պսակ դրեց իմ գլխին և որպէս հարսի՝ զուգեց ինձ զարդով*» /Ես. 61:10/:

Ինչպիսի՞ փոփոխութիւններ կը կրեն մեղաւորները յարութիւնից յետոյ

Յարութիւնից յետոյ մեղաւորները չեն ունենայ այդ ամէնը, քանզի մեղաւորների հոգիները գտնւում են անգիտութեան խաւարի եւ յաւիտենական տրտմութեան մէջ եւ հեռացած են Աստծուց: Նրանց մարմինները կը դառնան աւելի կոպիտ, ծանր եւ անմաքուր: Նրանք կը տենչան մեռնել, սակայն չեն կարողանայ եւ յաւիտեան կը տանջուեն:

Ի՞նչ ընդհանուր բան է սպասւում արդարներին եւ մեղաւորներին

Հանդերձեալ կեանքում արդարների եւ մեղաւորների համար կայ երկու ընդհանուր բան՝ յարութիւն եւ անմահութիւն, իսկ մնացած ամէն ինչը տարբեր է լինելու, ինչպէս եւ ասուեց: Արդարներին՝ փառք ու պսակ, Արքայութիւն եւ հանգիստ, իսկ մեղաւորներին՝ տանջանք եւ մահ, խաւար եւ կրակ, լաց եւ ատամների կրճտում եւ այլն:

Արդեո՞ք բոլոր մարդիկ յարութիւն կ'առնեն

Այո, բոլորը յարութիւն կ'առնեն, քանզի յարութիւնն ու անմահութիւնը բանական հոգու համար են: Իսկ քանի որ իւրաքանչիւր մարդ ունի բանական հոգի, ուրեմն նշանակում է, որ բոլոր մարդիկ յարութիւն կ'առնեն եւ

կը մնան անմահ: Այդ պատճառով նոյնիսկ նրանք, ովքեր մօր արգանդում սպանուել կամ մահացել են, եթէ արդէն ունէին բանական հոգի, յարութիւն կ'առնեն, ինչպէս բոլորը:

Քանզի «...*կու գայ ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կը լսեն նրա ձայնը և դուրս կու գան. ովքեր բարի գործեր են արել՝ կեանքի յարութեան համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի յարութեան համար*» /Յովհ. 5:28-29/, կամ, ինչպէս ասում է Պօղոս Առաքեալը. «...*քանզի մենք բոլորս Քրիստոսի ատեանի առաջ պիտի ներկայանանք, որպէսզի իւրաքանչիւրն ստանայ, ինչ որ արել է աւելի առաջ իր մարմնով՝ թէ՛ բարի և թէ՛ չար*» /Բ Կորնթ. 5:10/:

Ի՞նչ պատիժ է սպասում չծնուած, սակայն մօր արգանդում սպանուած մանկանը: Չէ՞ որ նա չի հասցրել մեղանչել

Պատիժ կրում են գործած մեղքերի համար, իսկ Երկնային Արքայութիւն ժառանգում են, եթէ մկրտւում են: Ուստի, եթէ մանուկը մահանայ չմկրտուած, ապա նա չի տանջուի, սակայն կը մնայ խաւարում, քանզի սրբուած չէ Ճշմարտութեան Լոյսով:

Իսկ ի՞նչ կը լինի, եթէ մահանայ մկրտուած մանուկը

Եթէ մանուկը մահանայ մկրտուած, ապա նա կը ժառանգի Երկնքի Արքայութիւնը, սակայն չի ժառանգի պսակ, քանզի պսակը պարգեւ է առաքինութիւնների համար, որ նա չունի:

Ի՞նչ տարիքում են յարութիւն առնելու մարդիկ

Մարդիկ, երբ յարութիւն առնեն, չեն լինի ո՛չ երեխայ, ո՛չ ծեր, քանզի ծերն ու երեխան անկատար են, այդ պատճառով յարութիւն կ'առնեն երիտասարդ՝ կատարեալ տարիքում: Եւ ինչպէս Ադամն էր ստեղծուել երեսունամեայ, եւ Քրիստոս յարութիւն առաւ այդ տարիքում, այնպէս էլ բոլոր մարդիկ յարութիւն կ'առնեն այդ տարիքում, ինչի մասին ասում է նաեւ Առաքեալը. «...*ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը*» /Եփես. 4:13/:

Յարութիւնից յետոյ կարելի կը լինի՞ փարբերել տղամարդուն կնոջից

Յարութեան մէջ չի երեւայ՝ կին է, թէ՝ տղամարդ, քանզի արդարները ծածկուած կը լինեն լուսաճաճանչ հագուստով: Եւ չեն ճանաչի միմեանց անուններով, ինչպէս դա ընդունուած է այժմ մեր միջավայրում, այլ՝ գործերով եւ փառքի պսակներով:

Յարութիւնից յետոյ արդեո՞ք ուտելու են եւ խմելու են

Յարութիւնից յետոյ ո՛չ ուտելու են, ո՛չ խմելու. «*Աստծու արքայութիւնը ուտելիք և ըմպելիք չէ, այլ՝ արդարութիւն և խաղաղութիւն և խնդութիւն Սուրբ Հոգով*» /Հռոմ. 14:17/, ինչպէս նաեւ չեն ամուսնանալու, ինչպէս կարծում են իսլամի հետեւորդները, հրեաներից ոմանք, օրինակ՝ սադուկեցիները, ինչպէս նաեւ հերետիկոսներից ոմանք: Այդպիսիներին էլ հենց նախատում է Քրիստոս. «...*իսկ նրանք, որոնք արժանի կը լինեն այն աշխարհին հասնելու և մեռելներից յարութիւն առնելու, ո՛չ կին են առնում և ո՛չ էլ մարդու են գնում*» /Ղուկ. 20:35/:

Այդ դէպքում ինչու՞ Տէրն Իր յարութիւնից յետոյ կերակուր ճաշակեց

Նա ճաշակեց, որպէսզի հաստատի Իր յարութիւնը: Իսկ ընդհանուր յարութիւնը գաղտնի չի լինի, ինչպէս Քրիստոսինը, դրա համար էլ կարիք չկայ մարմնաւոր սննդի, քանզի այնտեղ սնունդը կը լինի հոգեւորը եւ աստուածտեսութիւնը, որն ամէն ինչից քաղցր է: Այնուհետեւ՝ Քրիստոս յարութիւնից յետոյ յայտնուեց զգեստներով եւ վէրքերով, ինչը չի լինի յաջորդ կեանքում, քանզի յարուցեալների համար հագուստ կը լինեն իրեն գործերը՝ բարի, թէ չար: Եւ վէրքերը, որ ունէինք այստեղ, այնտեղ կ'ապաքինուեն, եւ մարմնի բոլոր պակասող մասերը կը վերականգնուեն:

Ի՞նչ փարերքներ եւ նիւթեր կը մնան մեռելների յարութիւնից յետոյ

Անմարմիններից կը մնան Հրեշտակները, դեւերը եւ մարդկանց հոգիները: Մարմնեղեններից կը մնան երկնային մարմինները, չորս փարերքները եւ մարդկանց մարմինները: Մնացածները կը փարրալուծուեն իրենց փարերքների մէջ: Կը մնայ նաեւ Խաչը, որի վրայ խաչուել էր Տէրը: Եւ դա կը լինի ոչ թէ բնութեամբ, այլ՝ հրաշքով:

Արդեո՞ք կենդանիները յարութիւն կ'առնեն

Ոչ, ինչպէս եւ յարութիւնից յետոյ բուսական աշխարհն էլ չի լինի: Քանի որ կենդանիներն ու բոյսերը ստեղծուել էին մարդու մարմնեղէն կեանքը պահպանելու համար, յարութիւնից յետոյ սննդի եւ ըմպելիքի կարիք չի լինի:

Արդեո՞ք փարերքները եւ երկնային մարմինները կը նորացուեն եւ ինչպէ՞ս

Այո, քանի որ դրանք, մարդկանց մեղքերի պատճառով, ապականութեան ենթակայ էին դարձել, կարիք ունեն նորացուելու: Տիրոջ գալուստից առաջ ամէն ինչը կը մաքրուի կրակով. «*Իսկ այժմ երկինք և երկիր պահուած են այդ խօսքով, վերապահուած են կրակին դատաստանի օրուայ և ամբարիշտ մարդկանց կործանման օրուայ համար: Բայց Տիրոջ օրը պիտի գայ ինչպէս մի գող, երբ երկինքը պիտի անցնի, չքանայ շառաչիւնով, և տարերքը, հրով կիզուած, պիտի լուծուի, և երկիրն ու ինչ գործեր, որ կան նրա վրայ, յայտնի պիտի լինեն: Եւ քանի որ այս ամէնն այսպէս պիտի լուծուի, ուրեմն, ինչպիսի՜ մարդիկ պէտք է լինէք դուք. սուրբ վարմունքով, աստուածապաշտ ընթացքով՝ սպասելով և հասնել ջանալով Տիրոջ օրուայ գալստեան, երբ հրավառ երկինքը պիտի չքանայ, և տարերքը հրկիզուելով, պիտի հալուի: Բայց մենք, Աստուծոյ խոստման համաձայն, աչքներս յառած՝ սպասում ենք նոր երկնքի ու նոր երկրի, որոնցում արդարութիւնն է բնակւում*» /Բ Պետր. 3:7, 10-13/:

Ի՞նչ է նշանակում «*...արեգակը պիտի խաւարի, և լուսինը իր լոյսը պիտի չտայ, աստղերը երկնքից պիտի ընկնեն, և երկնքի զօրութիւններ պիտի շարժուեն*» /Մատթ. 24:29/

Սա խօսում է երկնային լուսատուների նորացման մասին, ինչի մասին արդէն վերը ասուեց, եւ այն մասին, որ այլեւս երկնային մարմինների լոյսի կարիքը չի լինի, քանզի «*...քաղաքին պէտք չէին արեգակ ու լուսին, որպէսզի լուսաւորեն այն, քանզի Աստուծոյ փառքն էր լուսաւորում քաղաքը ամէն ժամ, և Գառը ճրագ էր նրա մէջ*» /Յայտն. 21:23/:

Ի՞նչ կրակով է Տէրը մաքրելու այս աշխարհը

Ըստ Տիրոջ խօսքի՝ կրակի ողջ փարերքը, հրէ ծովը եւ Երկրի վրայի ամբողջ կրակը կը հաւաքուի մի տեղ եւ կ'այրի ամէն ինչ Երկրի վրայ եւ օդում: Կենդանական եւ բուսական աշխարհները, լեռները, բլուրները եւ ապրող մարդկանց:

ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏԵԱՆ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ են նշանակում Տիրոջ «*Ես գալիս եմ շուտով*» խօսքերը / Յայտն. 22:20/

Սա ասում է Տիրոջ արագ գալուստի մասին, քանզի «*Տիրոջ համար մէկ օրը՝ ինչպէս հազար տարի է, հազար տարին՝ ինչպէս մէկ օր: Տէրը չի ուշացնի իր խոստումը, ինչպէս կարծում են ոմանք, թէ ուշացած է, այլ համբերատար է ձեր հանդէպ. քանզի չի ուզում, որ ոևէ մէկը կորստեան մատնուի, այլ ուզում է, որ ամէնքը ապաշխարեն*» /Բ Պետր. 3:8-9/:

Ինչպիսի՞ն են լինելու Տիրոջ գալստեան նշանները

Նշանները շատ են: «*Եւ արքայութեան այս Աւետարանը պիտի քարոզուի ամբողջ աշխարհում՝ ի վկայութիւն բոլոր հեթանոսների, և ապա պիտի գայ վախճանը*» /Մատթ. 24:14/; «*...որովհետև ինչպէս փայլակը, որ ելլում է*

արևելքից և երևում է մինչև արևմուտք, մարդու Որդու գալուստը այնպէս կը լինի» /Մատթ. 24:27/, «*...երկնքի վրայ մարդու Որդու նշանը պիտի երևայ*», այսինքն՝ **Խաչը** /Մատթ. 24:30/, «*Տէրն ինքը, ազդարարութեան նշանով, հրեշտակապետի ձայնով և Աստուծոյ շեփորով պիտի իջնի երկնքից*» /Ա Թեսաղ. 4:15/:

Նախ կու գայ նեռը. «*Ես եկայ իմ Հօր անունով, և ինձ չէք ընդունում: Եթէ ուրիշ մէկը գայ իր անունով, նրան կ՚ընդունէք*» /Յովհ. 5:43/, «*...որովհետև այն օրը չի գալու, եթէ նախ ապստամբութիւնը չգայ, և չյայտնուի անօրէնութեան մարդը՝ կորստեան որդին*» /Բ Թեսաղ. 2:3/: Կը յայտնուեն բազում սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ. «*...սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն և մեծամեծ նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցոյց տան՝ Աստուծոյ ընտրեալներին անգամ մոլորեցնելու աստիճան, եթէ հնար լինի*» /Մատթ. 24:24/:

Տէրը կու գայ կրակով. «*Իսկ այժմ երկինք և երկիր պահուած են այդ նոյն խօսքով, վերապահուած են կրակին դատաստանի օրուայ և ամբարիշտ մարդկանց կործանման օրուայ համար: Բայց Տիրոջ օրը պիտի գայ ինչպէս մի գող, երբ երկինքը պիտի անցնի, չքանայ շառաչիւնով, և տարերքը, հրով կիզուած, պիտի լուծուի, և երկիրն ու ինչ գործեր, որ կան նրա վրայ, յայտնի պիտի լինեն*» /Բ Պետր. 3:7,10/:

Քրիստոնեաները կը հաւաքուեն Տիրոջ մօտ. «*...նրանց հետ միասին պիտի յափշտակուենք-տարուենք ամպերի վրայից Տիրոջ առաջ օդում և այդպէս, մշտապէս Տիրոջ հետ պիտի լինենք*» /Ա Թեսաղ. 4:16/: Եւ այնժամ կը սկսուի Դատաստանը. «*...մարդու Որդին գալու է իր Հօր փառքով՝ իր հրեշտակների հետ միասին. այն ժամանակ իւրաքանչիւրին կը հատուցի ըստ իր գործերի*» /Մատթ. 16:27/:

Ե՞րբ է լինելու Դատաստանը

Թէ երբ Տէր Յիսուս Քրիստոս կու գայ մեզ դատելու, անյայտ է, այդ պատճառով պէտք է ապրել այնպէս, որ միշտ պատրաստ լինենք դրան: «*Արթո՛ւն կացէք, որովհետև չգիտէք ո՛չ օրը և ո՛չ էլ ժամը, երբ կու գայ մարդու Որդին*» /Մատթ. 25:13/:

Ե՞րբ կը սկսի Դատաստանը

Կէսգիշերին, երբ Տէրը հարուածեց եգիպտացիների առաջնեկներին, երբ Տէրը քանդեց դժոխքի կապանքները եւ ինչպէս ասւում է առակի մէջ, «*Եւ կէսգիշերին ձայն լսուեց՝ ահա՛ փեսան գալիս է, նրան դիմաւորելու ելէ՛ք*» /Մատթ. 25:6/:

Որքա՞ն ժամանակ կը տեւի Դատաստանը

Դատաստանը կը լինի յաւիտենականութեան մէջ, ուր չի լինի ժամանակի հասկացութիւն, քանզի լուսատուների շարժումը կանգ կ'առնի:

Որտե՞ղ է տեղի ունենալու Դատաստանը

Տէրը եւ Առաքեալները կը բազմեն գահերին, որոնք կը լինեն օդում, եւ կը դատեն մեղաւորներին Երուսաղէմում՝ Յովսափատի ձորում, ինչպէս ասում է Յովէլ մարգարէն. «*Թող ելնեն ու գնան բոլոր ազգերը Յովսափատի ձորը, քանի որ այնտեղ պիտի նստեմ՝ դատելու բոլոր ազգերին*» /Յովէլ 3:12/:

Ի՞նչ են նշանակում «*...ոչխարները իր աջին պիտի կանգնեցնի, իսկ այծերը՝ ձախին*» խօսքերը /Մատթ. 25:33/

Աջ կողմը նշանակում է Տիրոջ կողքին, այսինքն՝ Դատաստանի ժամանակ օդում՝ Գահի կողքին, իսկ ձախ կողմը՝ երկրի վրայ, այսինքն՝ Յովսափատի ձորում, քանզի մեղաւորները չեն կարողանայ բարձրանալ Տիրոջ մօտ:

Ո՞վ է դատելու

Ինքը՝ Տէր Յիսուս Քրիստոս, Առաքեալները, Մարգարէները եւ Սրբերը: Ինչպէս նաեւ մեղաւորներն իրենք դատապարտելու եւ մեղադրելու են միմեանց:

Ո՞վ է առանց Դատաստանի դատապարտուելու յաւիտենական կորստեան

Բոլոր նրանք, ովքեր չընդունեցին Քրիստոսին. «*...ով նրան չի հաւատում, արդէն իսկ դատապարտուած է, քանի որ Աստուծոյ միածին Որդու անունը չհաւատաց*» /Յովհ. 3:18/:

Ո՞վ է Դատաստանից եւ քննութիւնից յետոյ դատապարտուելու յաւիտենական կորստեան

Այն քրիստոնեաները, ովքեր խօսքով են քրիստոնեայ, իսկ գործով՝ ոչ: Նրանք, ովքեր մեղանչել են եւ մահացել առանց ապաշխարութեան: Այդպիսիներին Տէրը կ'ասի. «*Անիծեալնե՛ր, գնացէք ինձնից յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի և իր հրեշտակների համար*» /Մատթ. 25:41/:

Ո՞վ է փրկուելու առանց Դատաստանի

Մարգարէները, Առաքեալները եւ Սրբերը: Նրանք, ինչպէս եւ ասուեց, դատելու են բոլորին:

Ո՞վ է Դատաստանից եւ քննութիւնից յետոյ փրկուելու

Բոլոր ա՛յն քրիստոնեաները, ովքեր, ապրելով անգամ արդար կեանքով, մեղքեր են ունեցել, սակայն մահացել են ապաշխարելով: Այդպիսները կը փրկուեն Տիրոջ ողորմածութեամբ, Ով նրանց կ'ասի. «*Եկէ՛ք իմ Հօր օրհնեալնե՛ր, ժառանգեցէ՛ք աշխարհի սկիզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը*» /Մատթ. 25:34/:

Արդեո՞ք արդարներն ու մեղաւորները միանման կը տեսնեն Տիրոջը

Ոչ, նրանք չեն կարող միանման տեսնել Տիրոջը: Արդարները կը տեսնեն Նրան, ինչպէս Առաքեալները Թաբոր լերան վրայ, երբ Նա փառքի մէջ պայծառակերպուեց նրանց առաջ. «...*և նրանց առաջ պայծառակերպուեց. և նրա դէմքը փայլեց ինչպէս արեգակը. և նրա զգեստները*

դարձան սպիտակ ինչպէս լոյսը» /Մատթ. 17:2/: Իսկ մեղաւորները չեն տեսնի Նրա փառքը եւ Աստուածութիւնը, քանզի անարժան են տեսնել եւ չեն կարողանայ դիմանալ Նրա փառքին:

Կը տեսնե՞ն արդեօք մեղաւորները արդարների փառքը

Մինչեւ Դատաստանը նրանք կը տեսնեն, սակայն ոչ թէ կ'ուրախանան, այլ կը տրտմեն նախանձից: Բայց Դատաստանից յետոյ, անարժան կը լինեն տեսնել անգամ արդարների փառքը:

Ինչպիսի՞ չարչարանքներ են սպասւում մեղաւորներին

Յաւիտենական կրակի ծով եւ ցուրտ: Նրանց սպասում է «*...լաց և ատամների կրճտում*» /Մատթ. 24:51/: Որդեր, որոնք չեն սպկում, այսինքն՝ խղճի տանջանք. «*ուր նրանց որդը չի մեռնում, և կրակը չի հանգչում*» /Մարկ. 9:45/: Խաւար, ինչը բարու եւ Ճշմարիտ Լոյսի բացակայութիւնն է: Ինչպէս նաեւ ամօթ՝ մեղքերի պատճառով, բազում դեւեր եւ սատանան, որոնք յաւերժ պիտի տանջեն նրանց եւ հանգիստ չտան:

Կը տեսնե՞ն արդեօք արդարները մեղաւորների տանջանքները

Այո, կը տեսնեն, սակայն չեն տրտմի, քանզի Արքայութեան մէջ տրտմութիւն եւ արտասուք չի լինի. «*...և պիտի սրբի նրանց աչքերից ամէն արտասուք. և այլևս մահ չկայ. ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցաւ և ո՛չ չարչարանք, քանի որ առաջինն անցաւ*» /Յայտն. 21:4/:

Արդեո՞ք կ'աղօթեն մեղաւորների համար

Մինչեւ Դատաստանն աղօթել են, իսկ այնուհետեւ՝ ոչ, քանի որ նրանք արդէն դատապարտուած են եւ պատժուած, եւ իմաստ չի ունենայ նրանց համար աղօթելը:

Քանի՞ բնակավայր կը լինի Դափասպանից յետոյ

Կը լինի երկու վայր՝ Արքայութիւնը եւ դժոխքը: Արքայութիւնը փրկուածների եւ Հրեշտակների համար, իսկ դժոխքը՝ դեւերի եւ մեղաւորների: Սակայն ինչպէս Արքայութեան մէջ, այնպէս էլ դժոխքում կը լինեն բազում օթեւաններ՝ կախուած առաքինի կեանքի համար պարգեւներից եւ մեղքերի համար պատիժներից:

Որքա՞ն փրկուածներ կը լինեն Արքայութեան մէջ

Այնքան, որքան Հրեշտակներ ընկան երկնքից, այսինքն՝ անթիւ-անհամար բազմութիւն:

Ի՞նչ են նշանակում փրկուածների փառքն ու խնդութիւնը

Դա Յաւիտենական Կեանքն է, անսպառ երանութիւնը, Տէր Աստծուն տեսնելը. «...*նրանք տեսնում էին նրա դէմքը, և նրա անունը գրուած էր նրանց ճակատների վրայ: Եւ այնտեղ գիշեր չկար. այնտեղ ոչ մի կարիք չկար ճրագի և արևի լոյսի, քանզի Տէր Աստուածը լուսաւորում էր նրանց. և նրանք պիտի թագաւորեն յաւիտեանս յաւիտենից*» /Յայտն. 22:4-5/: Այն ամէնը, ինչ մարդուն անհնար է պատկերացնել, Աստուած պատրաստել է արդարների համար. «*Ինչ որ աչքը չտեսաւ, և ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկաւ, Աստուած այն պատրաստեց իր սիրելիների համար*» /Ա Կորնթ. 2:9/:

= ՎԵՐՋ =

Փառք, պատիւ եւ գոհութիւն Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Որ Իւրով առատ գթութեամբ, ամենաքարի կամեցողութեամբն եւ կարողութիւն անարժանութեան մերում, գրել, կազմել, տպել եւ յանգ հանել կպատրաստական հոգեշահ գիրքս կայս ի փառս Իւրոյ մեծի քարեբարութեանն եւ յօգուտ մանկանց եկեղեցւոյ:
Որում գոհութիւն եւ երկրպագութիւն յաւիտեանս. ԱՄԷՆ:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԿԱՐՃ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

«Աղօթքը խօսք է առ Աստուած և մտքի բարձրացում առ Աստուած»
/Սբ. Տաթեւացի/

Այլ գործերից առաւել աղօթքին ժամանակ էին տրամադրում ոչ միայն քրիստոնեաները, այլեւ հեթանոսները, ինչը երեւում է նրանց շատախօսութիւնից: Սակայն այսօր մարդիկ ծուլանում են աղօթքի մէջ եւ զբաղուած են բազում այլ գործերով, այդ պատճառով աղօթքը կատարում են ոչ թէ ինքնակամ, այլ վճարում են տուգանքի նման: Շատերը չգիտեն անգամ ինչպէս աղօթել, եւ թէ ինչպիսի աղօթք է հաճելի Աստծուն. կան նաեւ այնպիսիք, որ առհասարակ չեն աղօթում: Եւ այն բարիքի մասին, որ Աստուած տուել է, մարդիկ մոռանում են. յիրաւի՝ աղօթքը ճշմարիտ բարիք է, որից մարդ կարող է բազում օգուտ եւ շահ ունենալ:

Աղօթքով մենք ներկայանում ենք Աստծուն եւ կարգաւորում ենք մեր բոլոր գործերը, քանզի բոլոր գործերում մարդ կարիք ունի օգնականի: Իսկ երբ աղօթում ենք, Աստուած Ինքն է օգնական: Աղօթքը մխիթարանք է սրտի համար, նրանով խաղաղութեան եւ հանգստութեան մէջ մենք պառկում ենք քնելու, իսկ առաւօտեան՝ հանարձակութեամբ վեր ենք կենում:

«Երբ կարդում ես սուրբ գրքերը, այնժամ Աստուած է խօսում քեզ հետ, իսկ երբ աղօթում ես՝ դու ինքդ ես խօսում Աստուծոյ հետ»:

Աղօթքն առողջացնում է հիւանդներին եւ երկարացնում է կեանքը, փրկում է բանտից, յաղթում է պատերազմներում: Նրանով հալածում ենք դեւերին եւ փրկւում ենք սատանայի հնարքներից: Այն լուսաւորում է միտքը, բացում եւ փակում է երկնքի դռները: Երբ աղօթում ենք մերձաւորի համար, մաքրւում ենք հպարտութիւնից եւ ատելութիւնից: Բարկութեան կիրքն է հանգչում, երբ աղօթելով խաչակնքւում ենք, եւ այլն: Եւ ո՞վ կարող է առանձին-առանձին թուարկել աղօթքի ողջ օգուտն ու շահը: Օգուտն ու շահը շատ են, ուստի, հնարաւոր չէ ամբողջը թուարկել:

Ափսոսանքով նշենք, որ շատ նորադարձներ կարծում են՝ որ իրենց խնդրանքը լսելի դարձնելու համար պէտք է երկար աղօթեն (նրանք չեն հասկանում, որ աղօթքի արդիւնաւէտութիւնը ոչ թէ քանակի մէջ է, այլ՝ որակի): Այդ պատճառով նրանք դիմում են իրենց «ուժերից վեր սխրանքի»՝ ժամերով կարդում են (նոյնիսկ առանց հասկանալու) գրաբարով բազում երկար աղօթքներ՝ երբեմն տւեալ խնդրանքի հետ կապ չունեցող, ինչը վերջ ի վերջոյ բերում է յուսահատութեան եւ աղօթքն ընդհանրապէս թողնելուն: Դրա պատճառը բացակայութիւնն է այն ամուր հիմքի, որի վրայ ինչպէս սուրբ հայրերի գրած աղօթքներով, այնպէս էլ սեփական բառերով յաջորդիւ պէտք է կառուցեն «աղօթատունը»:

Ուստի, սիրելի՛ հաւատացեալ, նախքան երկար աղօթքներ «հանել-կարդալը» (դա անհրաժեշտ է, բայց՝ իր ժամանակին), փորձի՛ր ամուր հիմք դնել, որը **ՀԱՒԱՏՔՆ** է: Եթէ ցանկանում ես աղօթքով որեւէ բարիք խնդրել Աստծուց, ապա մինչեւ աղօթելն ինքդ քեզ պատրաստի՛ր անտարակոյս, ամուր հաւատքի եւ նախապէս միջոցնե՛ր ձեռնարկիր երկմտանքի եւ անհաւատութեան դէմ: Վատ է, երբ հենց աղօթքի ժամանակ սիրտդ տկարանում եւ չի մնում հաւատքի մէջ. այնժամ մտքովդ էլ չանցնի, թէ կը ստանաս ա՛յն, ինչ թերահաւատութեամբ խնդրել ես Աստծուց, քանզի դու անարգել ես Աստծուն, իսկ անարգողին Աստուած չի բաշխում Իր շնորհները: «*Ամէն ինչ,*- ասաց Տէրը,- *որ կը խնդրէք հաւատքով աղօթքի մէջ, կը ստանաք*» (տե՛ս Մատթ. 21:22), հետեւաբար, եթէ խնդրէք առանց հաւատքի կամ թերահաւատութեամբ, չէք ստանայ: «*Եթէ հաւատք ունենաք և չերկմտէք,* - նաեւ ասում է Նա,- *ապա սարեր էլ կարող էք շարժել*» (տե՛ս Մատթ. 21:21): Նշանակում է՝ եթէ երկմտէք եւ չհաւատաք, ապա չէք անի այդ: Այդ պատճառով էլ Յակոբոս Առաքեալն ասում է. «*Միայն թէ նա հաւատո՛վ թող խնդրի և թող չերկմտի, որովհետև, ով երկմիտ է, նման է ծովի հողմակոծ և տարուբերուող ալիքներին: Այդպիսի մարդը թող չակնկալի Աստծուց որևէ բան ստանալ, քանի որ երկմիտ մարդը իր արած բոլոր քայլերում անհաստատ է*» /Յակ. 1:6-8/:

Սիրտը, որ կասկածում է, թէ Աստուած կարող է շնորհել խնդրուածը, պատժւում է երկմտութեան համար. այն ցաւագնօրէն տանջւում եւ նեղւում է երկմտութիւնից: Աղօթելիս պէտք է այնպէ՛ս հաւատալ աղօթքի ուժին, որ այդ բառերը չառանձնացնենք գործից: Պէտք է հաւատալ, որ, ինչպէս ստու�ը՝ մարմնին, այնպէս էլ խօսքին հետեւում է գործը, քանի որ

Աստուծոյ մօտ խօսքն ու գործն անբաժան են, քանզի Նա հրամայեց, եւ արարուեց (տե՛ս Սաղմ. 148:5): Եւ դու նո՛յն կերպ հաւատայ. Ա՛յն, ինչ ասել ես աղօթքում, ինչ խնդրել ես, դա էլ կը լինի: Դու փառաբանեցիր, եւ Աստուած ընդունեց փառաբանութիւնը, շնորհակալութիւն յայտնեցիր Տիրոջը, եւ Աստուած ընդունեց քո շնորհակալութիւնը: Դժբախտութիւնն այն է, որ մենք թերահաւատ ենք եւ խօսքը բաժանում ենք գործից, ինչպէս մարմինը՝ հոգուց, ինչպէս ձեւը՝ բովանդակութիւնից, ինչպէս ստուերը՝ մարմնից. եւ աղօթքի ժամանակ լինում ենք ինչպէս կեանքում՝ շնչաւոր, որ հոգի չունենք (Յուդա 1:19), այդ պատճառով էլ մեր աղօթքներն անպտուղ են:

Իսկ քո հաւատքի ամրապնդմանը, սիրելի՛ հաւատացեալ, կ'օգնեն կարճ եւ յաճախակի աղօթքները: Մի՛ մտահոգուիր, թող այդ աղօթքներն սկզբում կազմուած լինեն քո անկեղծ խօսքերից (խնդրի՛ր յստակօրէն այն, ինչ ցանկանում ես՝ երեխայի նման), կարեւորը, որ դրանք գան սրտի խորքից, լցուած լինեն ջանքով եւ հաւատով: Քանզի «*...և՛ Քրիստոս, և՛ Պօղոսը պատուիրում էին աղօթել կարճ, բայց յաճախ՝ փոքր ընդմիջումներով*, - նշում է Սբ. Ոսկեբերանը,- *եթէ դու սկսես ծաւալուել բառերի մէջ, ապա յաճախ կը դառնաս անուշադիր և սատանային աւելի շատ ազատութիւն կը տաս քեզ մօտենալու, տապալելու և շեղելու միտքդ նրանից, ինչ ասում ես: Իսկ եթէ յաճախակի աղօթես, հեշտութեամբ կարող ես զգօն լինել և աղօթել ամենայն ուշադրութեամբ: Նոյնն անում էր և Աննան. շատախօս չէր բառերի մէջ, սակայն յաճախ էր ծնկի գալիս Աստուծոյ առաջ: Իսկ երբ քահանան փակեց նրա բերանը, քանզի նայում էր նրա շրթունքներին, իսկ նրա շրթունքները միայն շարժւում էին, և նրա ձայնը չէր լսւում (Ա Թագ. 1:12-13), նա ստիպուած էր ենթարկուել քահանային և դադարեցնել աղօթքը:*

Այսպիսով՝ արգելափակուած էր նրա ձայնը, սակայն արգելափակուած չէր նրա համարձակութիւնը, ընդհակառակը, սիրտն աւելի ուժգին էր աղաղակում նրա ներսում: Եւ աղօթքը յատկապէս սա է, երբ աղաղակը բխում է ներսից. յատկապէս այդպէ՛ս է բնորոշ տառապեալ հոգուն, արտայայտելու իր աղօթքը, ոչ թէ ձայնի լարումով, այլ սրտի ջերմութեամբ: Այդպէս էր աղօթում Մովսէսը: Նա ոչինչ չէր ասում, սակայն Աստուած ասաց նրան. «Ինչո՞ւ ես աղաղակում ինձ» (Ելք 14:15):

Մարդիկ լսում են միայն ձայնը, իսկ Աստուած այդ ձայնից առաջ լսում է ներքին աղաղակը: Ուստի՝ կարելի է լսելի լինել առանց բառ անգամ ասելու. կարելի է լինել ե՛ւ հրապարակում,

Եւ մտովի աղօթել մեծ ջանադրութեամբ, եւ ընկերների հետ նստած ժամանակ, եւ քո գործով զբաղուելով դիմել Աստծուն հոգու մեծ աղաղակով, ներքին աղաղակով, որ լսելի չէ ներկաներից ոչ ոքի»:

Այսպիսով, Սբ. Ոսկեբերանի խօսքով ընթանալով՝ դու աստիճանաբար ձեռք կը բերես մշտական, ուշադիր աղօթքի հմտութիւն եւ կը սիրես հենց աղօթքը: Իսկ այնուհետեւ, ունենալով ճշտօրէն դրուած հիմք՝ աստիճանաբար կը վարժուես Սուրբ Հայրերի աղօթքներին, քանզի «...*քիչ բանի մէջ հաւատարիմը շատի մէջ էլ հաւատարիմ է, իսկ քչի մէջ անիրաւը շատի մէջ էլ անիրաւ է*» (Ղուկ. 16:10):

Թող չթուայ յանկարծ, թէ սրանով մենք ժխտում ենք Սուրբ Հայրերի կողմից գրուած աղօթքների կարեւորութիւնը: Մենք մեր փորձով գիտենք, որ նորադարձը, ով իր ամբողջ կեանքն ապրել է առանց այդ աղօթքների եւ հոգեւոր կեանքի, հաւատքի գալուց յետոյ «յարձակւում» է ամէն տեսակ հոգեւորի վրայ՝ անխտիր «ճաշակելով» ամէն ինչ եւ մեծ քանակութեամբ՝ հոգեբանօրէն փորձելով լրացնել բաց թողածը: Ո՞վ չգիտէ՝ նման նախանձախնդրութեան հետեւանքն ինչ է: Նոյնիսկ այն մարդուն, ով երկար ժամանակ չի կերել եւ չի խմել, բժիշկներն արգելում են միանգամից ծանր եւ մեծ քանակութեամբ սնունդ ճաշակել, քանզի դա կարող է հանգեցնել մահուան:

Բացի այդ, սիրելի՛ հաւատացեալ, շատ անգամ դու «*երկարամեայ փորձառութեամբ հաւատացեալներից*» կը լսես այսպիսի խօսքեր. «*արժանի չեմ աղօթելու*» կամ «*մեղաւոր եմ, այդ պատճառով Աստուած չի լսում ինձ*» եւ այլն: Դա խօսում է նրանց կեղծ խոնարհութեան եւ թերահաւատութեան մասին: Եւ այդ խօսքերը, ցաւօք սրտի, վարակիչ հիւանդութեան նման արագ տարածւում են նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու հաւատացեալների շարքերում՝ անպտուղ դարձնելով նրանց աղօթքները:

Այդ պատճառով մենք նախապէս ցանկանում ենք քեզ պատուաստել այդ հիւանդութեան դէմ Սբ. Ոսկեբերանի խօսքով. «*Բայց դու անարժա՞ն ես: Արժանի՛ դարձիր քո անդադրում լինելով: Իսկ որ իրապէս անարժանն էլ կարող է արժանի դառնալ անդադրում աղօթքի միջոցով, որ Աստուած աւելի շուտ ունկ է դնում այն ժամանակ, երբ մենք ինքներս ենք աղաչում նրան, այլ ոչ՝ ուրիշների միջոցով, և որ յաճախ Նա յապաղում է տալ ոչ թէ՝ մեզ յուսահատութեան մատնելու և դատարկածեռն թողնելու համար, այլ՝ որպէսզի դառնայ մեզ առաւել մեծ բարիքներ*

շնորհելու Մեղաւորը, այս երեք ճշմարտութիւնները ես կը փորձեմ ձեզ բացատրել այսօրուայ կարդացած առակով:

Մի քանանացի կին մօտեցաւ Քրիստոսին՝ աղաչելով Նրան իր դիւահար աղջկայ համար և, ամբողջ ուժով կանչելով, ասաց. «Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, Դաւթի՛ Որդի, աղջիկս չարաչար դիւահարւում է» /Մատթ. 15:22/: Մի կին, որ օտար ցեղից էր, օտար երկրից և Յուդայի քաղաքացի չէր: Ուրիշ ի՞նչ էր նա, եթէ ոչ՝ շուն, և արդեօ՞ք անարժան չէր ստանալ իր խնդրածը: «Լաւ չէ, - ասաց Տէրը, - մանուկների հացն առնել ու շներին գցել» /Մատթ. 15:26/: Սակայն, կինն էլ արժանի դարձաւ իր անդրդուելիութեան շնորհիւ. քանզի նրան ևս, որ շուն էր, Նա ոչ միայն բարձրացրեց մինչև մանուկների ազնուազարմութեան, այլ նաև արձակեց բազում գովեստներով՝ ասելով. «Ո՛վ կին, մեծ է քո հաւատը, թող քեզ լինի՝ ինչպէս որ կամենում ես» /թիւ 28/: Եւ եթէ Քրիստոս ասաց՝ «քո հաւատը», այդ կնոջ հոգու մեծութեան ուրիշ ապացոյց այլևս մի՛ փնտռիր:

Տեսնո՞ւմ ես արդեօք, թէ ինչպէս անարժան կինն արժանի դարձաւ իր ջանադրութեան շնորհիւ: Ուզո՞ւմ ես արդեօք իմանալ նաև, որ մենք աւելի մեծ յաջողութեան ենք հասնում, երբ ինքներս ենք խնդրում Աստծուն, այլ ոչ, երբ ուրիշներն են այդ անում մեր փոխարէն: Երբ կինը աղաղակում էր, աշակերտները մօտենալով ասում են. «Արձակի՛ր նրան, որովհետև մեր ետևից աղաղակում է» /թիւ 23/: Իսկ Քրիստոս ասում է նրանց. «Այլ տեղ չեմ ուղարկուած, եթէ ոչ Իսրայէլի տան կորուսեալ ոչխարների մօտ» /թիւ 24/: Իսկ երբ կինն ինքը, շարունակելով աղաղակել, մօտեցաւ և ասաց. «Այո՛, Տէ՛ր, որովհետև շներն էլ կերակրւում են իրենց տիրոջ սեղանից ընկած փշրանքներով» /թիւ 27/, այնժամ Նա նրան շնորհ արեց՝ ասելով. «Թող քեզ լինի՝ ինչպէս որ կամենում ես»: Տեսնո՞ւմ ես արդեօք, թէ ինչպէս Նա, երբ աշակերտներն էին խնդրում, մերժեց, իսկ երբ կինն ինքը կանչելով շնորհ խնդրեց, ունկ դրեց նրա խնդրանքին:

Աշակերտներին Նա ասում է. «Այլ տեղ չեմ ուղարկուած, եթէ ոչ Իսրայէլի տան կորուսեալ ոչխարների մօտ», իսկ քանանուհուն՝ «Մեծ է քո հաւատը, թող քեզ լինի՝ ինչպէս որ կամենում ես»: Նոյնպէս և մինչ այդ՝ խնդրելու սկզբում, Նա ոչինչ չէր պատասխանում, սակայն այնուհետև, երբ կինը մէկ անգամ, երկու անգամ, երեք անգամ խնդրեց, Նա բաշխեց շնորհը՝ այդպիսի աւարտով մեզ սորուեցնելով, որ Նա բաշխումն ուշացնում է ոչ թէ նրա համար, որ մերժի կնոջը, այլ որպէսզի մեզ բոլորիս ցոյց տայ նրա համբերատարութիւնը: Եթէ Նա յապաղէր

կնոջը մերժելու համար, ապա չէր տայ նաև յետոյ, բայց քանի որ Նա ցանկանում էր բոլորին ցոյց տալ կնոջ իմաստնասիրութիւնը, Նա լռում էր:

Քանզի եթէ Նա տար անմիջապէս և հենց սկզբից, մենք չէինք իմանայ այդ կնոջ արիութեան մասին: «Բա՛ց թող նրան,- ասում են աշակերտները,- քանի որ աղաղակում է մեր ետևից»: Իսկ Քրիստոս ի՞նչ է ասում: «Դուք լսում էք ձայնը,- ասում է Նա,- իսկ ես տեսնում եմ հոգին. ես գիտեմ՝ նա ինչ ունի ասելու. ես չեմ ցանկանում նրա հոգում թաքնուած գանձը անյայտ թողնել, այլ սպասում եմ և լռում, որպէսզի բացեմ այն, ցոյց տամ և յայտնի դարձնեմ բոլորին»:

Ուստի, այս ամէնն իմանալով՝ թեկուզ մեղաւոր լինենք և ստանալու անարժան, չյուսահատուենք, այլ վստահ լինենք, որ հոգու հաստատակամութեամբ մենք կարող ենք արժանանալ մեր խնդրածին: Եւ նոյնիսկ եթէ մենք անպաշտպան և միայնակ լինենք, չյուսահատուենք, այլ գիտենանք, որ մեծագոյն բարեխօսութիւնն այն է, որ ինքներս մեծ ջանքերով մօտենանք Աստծուն: Եւ եթէ Նա յապաղում է և ուշացնում շնորհը, չյուսալքուենք, այլ վստահ լինենք, որ յապաղումն ու յետաձգումը նշան են Նրա հոգատարութեան և մարդասիրութեան: Եթէ քանանացի կնոջ նման, այդպիսի համոզմամբ, սգացող ու բոցավառ հոգով և բարի ցանկութեամբ, նոյնպէս և մենք մօտենանք Նրան, ապա թէկուզ և շուն լինենք, թէկուզ և որևէ վատ բան արած լինենք, կը մաքրուենք մեր արատներից և այնպիսի համարձակութիւն կը ստանանք, որ ի վիճակի կը լինենք բարեխօսել նաև ուրիշների համար այնպէս, ինչպէս քանանացի կինը, ով ոչ միայն ինքը համարձակութեան և գովեստի արժանացաւ, այլև իր աղջկան կարողացաւ ազատել անտանելի չարչարանքներից:

Քանզի չկայ, իրաւամբ չկայ աւելի զօրաւոր բան, քան ջերմ և անկեղծ աղօթքը: Այն ազատում է ներկայ աղէտներից, ազատում է նաև ապագայ տանջանքներից: Հետևաբար, որպէսզի մենք հեշտութեամբ անցկացնենք այս կեանքը և համարձակութեամբ հեռանանք այն կեանքից, պէտք է անդադար աղօթենք մեծ ջանադրութեամբ և նախանձախնդրութեամբ»:

Իսկ եթէ այնուամենայնիւ չգիտես՝ ինչ բառերով աղօթել, ապա այդ փարակուսանքին պատասխանենք հենց Տիրոջ խօսքերով. «*Եւ արդ, դուք այսպէս աղօթեցէ՛ք...*» /Մատթ. 6:9/

ՀԱՅՐ ՄԵՐ, ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ,
ՍՈՒՐԲ ԵՂԻՑԻԱՆՈՒՆ ՔՈ:
ԵԿԵՍՑԷ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ՔՈ,
ԵՂԻՑԻՆ ԿԱՄՔ ՔՈ,
ՈՐՊԷՍ ՅԵՐԿԻՆՍ ԵՒ ՅԵՐԿՐԻ:
ՁՀԱՅ ՄԵՐ ՀԱՆԱՊԱՁՈՐԴ ՏՈՒՐ ՄԵԶ ԱՅՍՕՐ:
ԵՒ ԹՈՂ ՄԵԶ ՁՊԱՐՏԻՍ ՄԵՐ,
ՈՐՊԷՍ ԵՒ ՄԵՔ ԹՈՂՈՒՄՔ ՄԵՐՈՑ ՊԱՐՏԱՊԱՆԱՑ:
ԵՒ ՄԻ՛ ՏԱՆԻՐ ԶՄԵԶ Ի ՓՈՐՁՈՒԹԻՒՆ,
ԱՅԼ ՓՐԿԵԱ ԶՄԵԶ Ի ՉԱՐԷ:
ՁԻ ՔՈ Է ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՕՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՓԱՌՔ ՅԱՒԻՏԵԱՆՍ . ԱՄԷՆ

Ուսպի, սիրելի՛ հաւատացեալ, առաջին աղօթքը, որ դու պէտք է անգիր սովորես, թող լինի «Հայր Մեր» աղօթքը: Իսկ թէ ինչու սովորել այդ աղօթքը, պատասխանում է Սբ. Տաթեւացին. «*Վարդապետներն ասում են, որ այս աղօթքն ազնուազարմ է ու գովելի երեք պատճառով: Նախ և առաջ, քանի որ այն հաստատուել է հենց Քրիստոսով: Եւ եթէ պէտք է սովորել ու ասել այն աղօթքները, որոնք հաստատել են մարդիկ, ապա որքա՜ն առաւել պէտք է սովորել ա՛յն աղօթքը, որն Իր բերնով սովորեցրել է մեզ Աստուած: Երկրորդ, քանզի [այս աղօթքը] հակիրճ է և գեղեցիկ, և ոչ ոք չի կարող չսովորել այն՝ պատճառաբանելով՝ [թէ այն] երկար է: Երրորդ, քանզի անհրաժեշտ է և օգտակար: Քանզի ամենայն ինչ, որ մեզ պէտք է՝ հոգևոր լինի, թէ՝ մարմնական, խնդրւում է այս աղօթքով*»:

ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ ՎԱՄՆ
ԽՆԴՐԵԼՈՅ ԶՇՆՈՐՀՍ ԵՒ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԻՉ ԱՆՃԱՌԵԼԻ ԵՒ ԱՂԲԻՒՐ ՃՇՄԱՐԻՏ ԼՈՒՍՈՅ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ. ՀԵՂ Ի ՄԻՏՍ ԻՄ ԶՆՇՈՅԼՍ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ՓԱՐԱՏԵՑՈ ՅԱՆՁՆԷ ԻՄՄԷ ԶՄԷԳ ԵՒ ԶԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ: ԴՈՒ, ՈՐ ԶԼԵԶՈՒ ՏՂԱՅՈՑ ԴՆԵՍ ՊԱՐԶԱԽՕՍ, ՎԱՐԺԵԱ ԶԼԵԶՈՒ ԻՄ ԵՒ ԼԻՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ՇՆՈՐՀԱՑ ՔՈՅ ԶՇՐԹՈՒՆԸՍ ԻՄ: ՏՈՒՐ ԻՆՁ ԶՕՐՈՒԹԻՒՆ՝ ԻՄԱՆԱԼՈՒ, ԶԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ՝ ՊԱՀԵԼՈՒ. ԶԿՈՐՈՎԱՏՈՒԹԻՒՆ ՄԵԿՆԵԼՈՅ. ԶԴԻՒՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ՝ ՈՒՍԱՆԵԼՈՅ ԵՒ ԶԱՄԵՆԱՌԱՏ ՇՆՈՐՀԱԽՕՍԵԼՈՒ: ԿԱԶՄԵԱԼ ՀԱՐԴԱՐԵԱ ԶՄՈՒՏՍ ԻՄ, ՈՒՂՂԵԱՅ ԶԳՆԱՅՍ ԻՄ ԵՒ ԿԱՏԱՐԵԱՅ ԶԵԼՍ ԻՄ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ Ի ՏԷՐ. ԱՄԷՆ

ԴԱՍԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

Ա. յ (Յ) - ն բառասկզբում, ինչպէս նաեւ բարդութեան եւ ածանցման մէջ արտասանւում է - «Ղ», օրինակ՝ **յ**աղթել, ան**յ**աղթ, **յ**ատուկ, առանձնա**յ**ատուկ:

Բ. Բառավերջում - **ա** (Ա) եւ **ո** (Ո) ձայնաւորներից յետոյ գրւում է - **յ** (Յ), բայց չի արտասանւում, օրինակ՝ տղա**յ**, ակամա**յ**, մեծարգո**յ**, երեկո**յ**, մեղա**յ**: Բառավերջի **յ** (Յ) - ն արտասանւում է մի քանի միավանկ բառերում՝ **բայ, գոյ, խոյ, հայ, ճայ, Նոյ, վայ**:
Բառավերջում - **ա** (Ա) եւ **ո** (Ո) ձայնաւորներից յետոյ **յ** (Յ) - ն չի գրւում՝ **ա).** բայերի հրամայական եղանակի եզակի երկրորդ դէմքում՝ ասա՛, գնա՛, կեցո՛ (գրաբարեան ձեւ).
բ). **սա, դա, նա** դերանունների ուղիղ եւ թեք ձեւերում, **դու** անձնական դերանուան սեռական հոլովում - **քո**.
գ). ահա, ապա, հիմա բառերում.
դ). յատուկ անունների ուղիղ ձեւերում՝ Աննա, Յուդա, Եղեսիա, Կեսարիա եւ այլն:

Գ. ւ (Ի) տառը գրւում է երկու ձայնաւորների միջեւ եւ բառավերջում **Ա, Ե, Ի** ձայնաւորներից յետոյ, ինչպէս նաեւ՝ **ւո (ԻՈ)** եւ **ւու (ԻՈՒ)** կապակցութեան մէջ, եւ արտասանւում է - «Վ», օրինակ՝ ա**ւ**ազ, առա**ւ**ել, հա**ւ**, տերե**ւ**, անի**ւ**, հոգ**ւ**ոյ, լրատ**ւ**ութիւն, հագնւում է:
Ի (**ւ**) - ն տառով ոչ մի բառ չի սկսւում:

Դ. (Ե) - տառի փոխարէն բառավերջում միշտ գրւում է - (**Է**), օրինակ՝ ափս**է**, ոոպ**է**.
իսկ բառամիջում (**Է**) գրւում է ա՛յն դեպքում, երբ կարող է լինել **Է → Ի** հնչիւնափոխութիւն, օրինակ՝ մ**է**գ - միգապատ, նու**է**ր - նուիրական:
Մի շարք բառերում գրուող (**Է**) - ն պէտք է ուղղակի յիշել (գրաբարեան **Է → Ե** հնչիւնափոխութիւն):

Ե. ՈՒ - ն բառամիջում ձայնաւորից առաջ «Վ» է արտասանւում, օրինակ՝ Աստ**ու**ած, ար**ու**եստ, ք**ու**է:

Զ. Յ (յ), Ի (ւ) ձայնորդների եւ **Ա (ա), Ե (ե), Ի (ի), Ո (ո)** ձայնաւորների կապակցութեամբ կազմւում են երկբարբառներ եւ եռաբարբառներ: Հայերէնի երկբարբառներն ու եռաբարբառներն են՝ **այ, ոյ, աւ, իւ, եւ, եաւ, եայ, ւոյ**:

Ոյ երկբարբառը բաղաձայնից առաջ արտասանւում է «**ույ**»՝ լ**ոյ**ս, կ**ոյ**ս, յ**ոյ**ս:

Իւ երկբարբառը բաղաձայնից առաջ արտասանւում է «**յու**»՝ հ**իւ**թ, ս**իւ**ն, ար**իւ**ն:

Եւ երկբարբառը արտասանութեամբ նոյնացել է **Իւ** երկբարբառին եւ գրութեան մէջ հիմնականում արտայայտւում է **Իւ** -ով: Գրաբարում պահպանւում են այդ երկբարբառների գրութեան զուգահեռ ձեւեր՝ ալեւր = ալիւր, հարեւր = հարիւր, եղջեւր = եղջիւր:

Եա երկբարբառը արտասանւում է «**յա**»՝ պատեան, եղ**եա**մ:

Աւ երկբարբառը բաղաձայնից առաջ արտասանւում է «**օ**» եւ փոխարինուել է «**Օ**» տառով (մեսրոպեան այբուբենում «**Օ**» տառ չի եղել)՝ **աւ**ձ = օձ, կար**աւ**տ = կարօտ, կ**աւ**շիկ = կօշիկ:

Բացառութիւն են կազմում՝ աղաւնի եւ նաւթ բառերը, որոնցում **Աւ -** ը արտասանւում է «**ավ**»:

Ծանօթութիւն.

> **աւ, եւ, իւ** կապակցութիւնները **Ս** եւ **Ղ** յօդերից, ինչպէս նաեւ գրաբարի յոգնակի **Ք** եւ **Ս** մասնիկներից առաջ արտասանւում են «**ավ**», «**եվ**», «**իվ**»՝ պարգ**եւս**, հով**իւդ**, կաք**աւք**:

Եաւ, եայ, ւոյ եռաբարբառները գործածւում են միայն գրաբարեան ձեւերում:

Եաւ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանւում է «**յօ**» եւ ընդհանրապէս գրւում է «**եօ**» տառերով՝ ընտան**եօ**ք (ընտանեաւք), կղզ**եօ**ք (կղզեաւք):

Եայ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանւում է «**յայ**»՝ պաշտօն**եայ**ք, հր**եայ**ք:

Բառավերջում՝ «**յա**»՝ պաշտօնեայ, հրեայ:

Իոյ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանւում է «**վույ**»՝ հոգ**ւոյ**ն, պատան**ւոյ**ն:

ԴԱՍԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ԴԺՈՒԱՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱՌԵՐ

Բառամիջում գրուող «Օ»՝

Ակօս, աղօթք, աղօտ, ամօթ, անօսր, առաւօտ, արդեօք, արտօնել, արտօսր, արօտ, արօր, բօթ, գործօն, գօս, գօտի, դրօշ, դօղօշ, դօղ, եօթ, զարթօնք, զբօսանք, զգօն, զօդել, զօրանալ, զօրք, թափօր, թնդանօթ, թօթափել, թօշնել, իրօք, խօլ, խօսել, ծանօթ, ծղօտ, ծնօթ, կարօտ, կտրօն, կրօն, կօշիկ, համառօտ, հեստազօտել, հզօր, հօտ (ոչխարի), ձօն, ղօղանջ, ճօճել, մօտ, մօրուք, յօդ, յօդուած, յօժար, յօնք, յօշոտել, յօրանջել, յօրինել, նարօտ, նօսր, շօշափել, պաշտօն, պարեգօտ, Պօղոս, սօսափիւն, սօսի, տնօրէն, տօթ, տօն, ցօղ, քօղ, օրօրել:

Բառամիջում գրուող «Է»՝

Շեղագիր բառերը **Է → Ե** հնչիւնափոխութեան չեն ենթարկ-ւում (գրաբարեան **Է → Ե** հնչիւնափոխութիւն)՝

Անշէջ, ապաւէն, առնէտ, ասպարէզ, արդէն, արժէք, բուէճ, գահավէժ, գէթ, գէշ, գէջ, գէտ (գիտակից), գէր, գոմէշ, դէզ, դէմք, դէպի, դէտ (դիտող), դիւրամէտ, եղէգ, երէց, զէնք, ընդդէմ, թէեւ, թէկուզ, թէպէտ, թէյ, ժապաւէն, խէժ, խլէզ, խէթ, ծէս, ծուէն, կէտ, հանդէպ, հանդէս, հէն (աւազակ), հէնց, հրէշ, հրաւէր, ձէթ, մէգ, մէզ, մէկ, մէջ, յաւէտ, նուէր, շահէն, շէնք, որպէս, չէզոք, պանթէոն, պատնէշ, պատուէր, պատճէն, պարտէզ, պեպէն, պէս, սէգ, ստէպ, վէմ, վէպ, վէս (ժպիրի, ամբարտաւան), վէտ (ալիք, կոհակ), վէրք, վրէժ, տէգ, տէր:

Է-ով են գրւում նաեւ՝ - եղէն, - աւէտ, - երէն, - էն, - էք, - կէն, - օրէն ածանցները: Օրինակ՝ հր**եղէն,** ամա**նեղէն**, հոտ**աւէտ**, հայ**երէն**, արդ**էն**, երբ**էք**, ծակոտ**կէն**, փաստ**օրէն**:

Է-ով են գրւում մի շարք յատուկ անուններ՝ - Անդրէաս, Իսրայէլ, Մովսէս, Յովսէփ, Յովհաննէս, Ներսէս, Խորէն, Մատթէոս եւ այլն:

Յ-ով սկսող բառեր՝

Յագենալ, յաճախակի, յախուռն, յածանաւ, յաղթել, յախճապակի, յաճախ, յամառ, յայսմաւուրք, յայտնի, յանգ, յանգեցնել, յանդգնել, յանդիմանել, յանկարծ, յանձնաժողով, յանձնել, յանցանք, յապաղել, յապաւել, յաջող, յաջորդ, յառել, յատակ, յատկանիշ, յատկապէս, յատուկ, յարաբերական, յարալեզ, յարակատար, յարգանք, յարդարել, յարել, յարկ, յարձակում, յարմար, յաւակնել, յաւելուած, յաւերժ, յաւէտ, յաւիտեան, յափշտակել, յեղաշրջել, յենարան, յեսդարձ, յեսդոյք, յերիւրանք, յիմար, յիշել, յիսուն, յիրաւի, յղանալ, յղկել, յոբելեան, յոգնած, յոգնակի, յոխորտալ, յողդողդ, յոյզ, յոյժ, յոյն, յոյս, յոպոպ, յոռետես, յովազ, յորդ, յորդոր, յորձանք, յորջորջել, յուզել, յուլիս, յուղարկաւորութիւն, յունիս, յունուար, յուշատետր, յստակ, յօդ, յօժար, յօնք, յօշոտել, յօրանջել, յօրինել:

ՅԱՆՔ

Նախաբան 3
Ներածութիւն 5
Մի Աստուած. Սուրբ Երրորդութիւն 19
Արարչագործութիւն 27
Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ 37
Բանի մարդեղացման մասին 51
Սուրբ Հոգի 64
Եկեղեցի 67

Սուրբ Խորհուրդներ 76

1. Մկրտութիւն 76
2. Դրոշմ 81
3. Հաղորդութիւն 85
4. Ապաշխարութիւն 97

Աղօթքի մասին 108
Պահքի մասին 115
Ողորմութեան մասին 119

5. Պսակ 130
6. Ձեռնադրութիւն 136
7. Կարգ հիւանդաց եւ վերջին օծում 142

Աստուծոյ Օրէնքը եւ Տասը Պատուիրանները 146

Առաքինութիւնների մասին 167

Հաւատքի մասին 168
Յոյսի մասին 171
Սիրոյ մասին 173
Արդարութեան մասին 180
Խոհեմութեան մասին 185
Արիութեան մասին 188
Ողջախոհութեան մասին 189

Մեղքերի մասին 194

Մահացու մեղքերի մասին 196
Հպարտութեան մասին 196
Նախանձի մասին 198
Բարկութեան մասին 201
Ծուլութեան մասին 203
Ագահութեան մասին 204
Որկրամոլութեան մասին 206
Բղջախոհութեան մասին 209

Ներելի մեղքերի մասին 213
Մեղանչական մտքերի մասին 214
Այլ մեղքերի մասին 215

Վախճանաբանութիւն 225

Մահուան մասին 225
Նեռի մասին 230
Մեռելներից յարութեան մասին 237
Երկրորդ գալստեան եւ դատաստանի մասին 244

Յաւելուած 250

Կարճ աղօթքի մասին 250
Աղօթք Սրբոյ Գրիգորի Տաթեւացւոյ 256
Դասական լեզուի ուղղագրութեան օրէնքներ 257
Դասական լեզուի դժուար ուղղագրութեան բառեր 259



«Սիրտք մեր բուրվառ է, եւ աղօթքն խունկ, եւ հուրն ջերմ սէրն նիւթ բուրվառին» Սբ. Տաթեւացի